

եղերքն է, և աւելի մօտ է Պաշքէնա գիւղին: — Երանոսէն գէպի արեւմուտք բարձր լեռան վրայ կը գտնուի Ս. Յովնանէս աւանը ուխտասեղանն որ ի հնուէն Սարկոստի անապատ կոչուած է և Մաքենեաց վանքի թեմական գիւղերու կարգին մէջ յիշուած Սիմէոն կաթողիկոսէն: Ռիտատեղեղոյս մատուր շատ հրաշագործ է և ամէն հաւատքով զխնդ կ'անողջանայ, մատրանս եկամուտը յատկացուած է Երանոս գիւղի գրգրոցին: Մատուէն վեր ուրիշ մատուտ մը ևս կայ Սօֆիոս անուամբ, և այս պատճառաւ ժողովուրդը այս երկու մատրանց սուրբերը կը համարի բոլոր և եղբայր: — Երանոսի եկեղեցոյն մէջ կան երկու ձեռագիր աւետարաններ, մին գրուած Տաթևու Շէնհեր գեղը 1551 թուին, ինչպէս կը յայտնէ յիշատակարանն: Եկեղեցոյ շուրջը կան ընդհանրապէս ժՁ գարու վերաբերեալ արձանագրութեամբ խաչքարեր: — Գեղարքուեր, 504-507:

ԵՐԱՇԽԱՒՈՐ. Տես ՍԲԱՆՁԵԼԱԳՈՐԾ:

ԵՐԱՇԽՈՒՏ. — Հին գիւղս կը յիշուի ի պատմութեան, սրուն համապատասխան կը կարծուի ըլլալ Թորթումի Խաչատ գիւղը:

ԵՐԱՊՈՒՆ. — Գիւղ Հանոյ (Կիլիկիա). ունի 100 տան շափ Հայեր, կարօս վիճակի մէջ:


ԵՐԱՍԽ, ԱՐԱՅՍ կամ ԱՐԱՋ. Գ.Պ. ARAS, ARAXES. Թ. ۱۰۱۱ կամ ۱۰۱۲. Վ. ۶۳۳. Բ. Аракс. — Կանաւոր և բնիկ մեծ գետ Հայաստանի, որ այսպէս կոչուած է մեր Արմայիս նահապետի թոռանը Արաստին անունով: Յոյն մասնագիրները կը կոչեն Արաքսիս, Հսովմայեցիք Արաքս, իսկ Արաբացիք կրճատելով Ռաս կամ Ռոս: Գիտաններէն ոմանք կ'ապացոյցանեն և կը համարին Երասխր Մովսէսի յիշած Գեհնո գետը, որ երբայեցերէն սաստիկ յորձանքներով վազող բնէ է: Սիկզրն կ'անուս Բարձր Հայոց Մանանդի գաւառի կողմերը, Կարնոյ լեռանց կողերէն. զլիաւոր օժանդակն կը բղխէ Կարնէն գրեթէ 40 հազարամետր հեռու հարաւային կողմը Բիւրակն կամ Սրբմանց (Պիւն-կեօր-տաղ) լեռնէն և կը կոչուի Մուրց կամ Պիւնկեօր-տա: Չախ կողմէն կ'ըն-

դունի Հասանդալայու ջուրը՝ որ կը բղխէ Կարնոյ գաշաի արեւելեան սահմանը կազմող բարձրաթիւններէն: Կախ կ'ոտոզէ Երասխ Այրարատայ Բասեն գաւառը և ընդհանրապէս գէպի արեւելք վաղելով կ'անցնի Գարեղէնք, Արշարունիք (կամ իւր անուամբ Երասխաձոր), Ճակատք, Արագածոտն գաւառներէն, յետոյ գէպի արեւելեան հարաւ գիմելով կ'անցնի Ոստան, Ռերծ-Արած և Շարուր գաւառներէն և առաջ կ'երթայ գծելով Սիւնեաց հարաւային սահմանն: Կովստական գաւառի հարաւային ծայրէն կը շեղի կ'ընթանայ գէպի արեւելահիւսիս ու կը մտնէ Արցախի գաշար. աեղ աեղ կը հասի սրբութեաց և յետոյ կը խանուի Կուր գետոյն հետ և ապա բաժնուելով և ճիւղատրուած կը թափի Կասպից ծովը: Երասխ ունի բազմաթիւ մեծ ու փոքրիկ օժանդակներ: Այրարատայ մէջ նախ վերոյիշեալներէն գառ կ'ընդունի Կարնոյ և Տայոց լեռներէն բղխածները տասնի չափ, և յետոյ ձախ կողմէն Ազապ-տա, Արտոսոյ շայ, Խաւի շայ, Ախուշրեան, աջ կողմէն ալ աւելի մանր գետակներ: Բասենի արեւելեան կողմէն մինչև Ախուրեանի խանուրդը՝ Երասխ երկու կողմերէն լեռներու մէջ զսպուած՝ կ'ընթանայ նեղ հովտէ մը, այդ պատճառաւ նոյն երկիրը կոչուած է յատկապէս Երասխաձոր: Իսկ Ախուրեանը ընդունելէ վերջ՝ ընչ մ'ալ առաջ երթալով նեղ ձորերէ և գոտնալով գէպի հարաւ կ'ընէ Այրարատայ լայնածաւալ գաշար: Այս գաշաին մէջ, երեք հազար տարիներէ աւելի շարունակաբար վաղելով, և իւր զիմաց որ և է արգելք չգրանելով, և մանաւանդ հանդիպելով կակուղ և աւազուտ երկրի իւր անկողինը փոփոխեր է, որով մեր պատմութեան մէջ բաւական միտմիտն և շփոթմանց պատճառ եղած է Գ և Ե գարուց մասնագիրներէն սխեալ մինչև ցայժմ: Իւր անկողնոյն փոփոխման պատճառ կը համարուին նաև երկրաշարժները: Պատմութենէն և զանազան բնիչներէ մեզ ծանօթ է որ Երասխ շատ մղաններով հիւսիսէն հարաւ խտարեր է հեռանալով Հայոց հին մայրաքաղաքներէն Արմաբէն, Վազարշապատէն և Արտաշատէն, որոց մօտէն կ'անցնէր երբեմն և յատուկ կամուրջներ



ունէր. այս պատճառաւ մեր թագաւորները երկու և երեք անգամ ստիպուեցան փոխել արքունիքը և հաստատել զարձնալ զետոյս կամ ուրիշ ջրոց եզերքները: Ուստի անկաշ ընդ և զետոյս ալիմեան ընթացից և Հին

գաշատի շինութեան պատճառը յիշած ժամանակ, Ա զարու վերջերքը, ինչպէս նաև Գունայն Գ զարու կիսուն: — Ախտրեանէն վերջ Երասի Արարատեան գաշտին մէջ ձախ կողմէն կ'ընդունի Արագածու կողերէն հո-



• Ճեղքումով հողորով • 281 • Երասիայ քաղաքը •

բազաբաց կամ անոնց տերակաց զրից համեմատ հաւաստել մեր Հին պատմաց Ալլանթիմանգեղոսի, Կարեան, Խորենացոյ և Դազարու խօսքերը կամ նկարագրութիւնները: Խորենացին ևս երկու անգամ կը վըկայէ Երասիի տեղափոխութեանը, Երուան-

բնուշխ • բառարան

սող ջուրերը, որանցմէ նշանաւոր է Մեծաւ մօր կամ Սևաւ չուր (Գարսա-սու) բառածը: Քասաղ գետը կամ Կարբայ չուր բառածը, որ բազմամիւ վտակներով առատացած՝ անցնելով վաղարշապատի արեւմտեան կողմէն և ընդ մը գէպի հարաւային տրեւելը հոս-



լով կը խոսնուի Երասիի հետ: Գրեթէ Քասաղի զուգահեռական ընթացքով արևելակողմէն կը հոսի Հրազդան գետը, որ այժմ Զեկիի և Երեւանայ շուրջ եւս կը կոչուի ու կը թափի յԵրասի Քասաղի բերանէն բիշ հետու: Ոստան գաւառի մէջ Երասի կ'ընդունի Ազատ գետը կամ Գաւեոյ շուրջուածքը: Ազատ գետէն վերջ կ'ընդունի կարգաւ Վեռի, Չանախի և այլ գետակներ իւր ձախակողմէն. Շարուր գաւառի մէջ կ'ընդունի նաև Սիւնեաց Արփա գետը, որ Այրարատ աշխարհի մէջ Երասիայ ձախակողմեան օժանդակներէն վերջինն է: Դոյն աշխարհի մէջ Երասիայ աջակողմեան օժանդակներն, ինչպէս բսինք, աւելի փոքր և անընշան գետակներ են, որոնցմէ մէկ բանին յիշենք. Կապրոյս գետ, Զարարան, Վարդամարց, Գիւնոյ գետ, Գարա-տու, Տամբատ: — Երասի Այրարատէն գուրս կ'ընկնուի և Սիւնեաց Կախճաւան, Երնջակ, Գողթն, Արեւիք, Կախական և Բաղք գաւառներու հարաւ արեւմտեան, հարաւային և հարաւ արեւելեան սահմանները ոտոզած փամանակ, հիւսիսային կամ ձախ կողմէն կ'ընդունի Սիւնեաց աշխարհի բազմաթիւ գետերն ու գետակներ, որոնցմէ զբխաւորները կարգաւ յիշենք, զանց ընկնուի փոքրագոյնները, և են. Կախճաւանու գետ, Երեւակայ գետ, Կիլիան չայ, Տեւեխ գետ, Որդաւատայ գետ, Մեղրայ գետ, Պատուտ գետ, Չաւրեղորայ գետ, և Բարկոշատայ ու Հանգարու հօգորագոյն գետերը: Երասի իւր այս շրջանին մէջ աջակողմէն եւս կ'ընդունի գետեր և գետակներ՝ բայց ոչ այնչափ բազմաթիւ, որոնցմէ յիշենք Տրմուտ, Ար-չայ, Կրասոյ շուրջ, Ալբանա, Գրբրտու, Տերխախ-Բուտ, և այլն: Սիւնեաց աշխարհէն մանկելով Արցախի մէջ, հսն եւս աջ ու ձախ կողմերէն կ'ընդունի գետեր ու գետակներ: Հարձընք գաւառէն կ'ընդունի ձախ կողմէն Հագարագետ և Վաղաղիկ, իսկ Յարարի շուրջ և Դոզուր վտակն Բերդաձոր գաւառէն: Երասիի նոյնպէս ձախ կողմէն կը խոսնուին Թաղլարի և Գողայ վտակներն՝ որոնք իրարու հետ միանալով Դոզուր-չայ կը կոչուին: — Երասի նշանաւոր սահանք մը ունի Սիւնեաց աշխարհի Գողթն գաւառի հարաւ արեւելեան կողմը,

Որդաւոր մաս: Խորենացոյն հետեւեալ սողերը հասնական կը թափ կարծելն թէ այս նշանաւոր սահանքը կ'ակնարկեն. «... ուր գետն Երասի հասեալ զքարանձաւս լեռանց անցանէ ընդ խոխոմն ձիգս և նեղս, ահագին զղչմամբ իջանէ ի գաշան»: Յովհանն կաթողիկոս կը յայտնէ թէ յատուկ Քարաւազ անունն ստացած է այդ սահանքն. «Մինչ ի գաշտ ինչ՝ ընդ որ հատեալ անցանէ գետն Երասի յորձանուտ խոխոջիք վազս առեալ, և թափ անկեալ ընդ նեղ և ընդ նուրբ խոխոմն քարանձաւի միոյ՝ որ այժմ՝ ի բազմաց Քարաւազ անուանի»: Այս գաշտը որով և քարաւազը Սիւնեաց մէջ լինելուն ազապոյց են Խորենացոյն անմիջապէս յարած հետեւեալ խօսքերը. «Աստ բնակեալ Սիւակ ընտ շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք»: Դոյնը աւելի որոշակի կը նշանակէ Սամուէլ՝ բնկելով. «Ծնանի Գեղամ և զՍիւակ. և սահմանս հաստանէ նմա ի ծովն ընդ արեւելս կոյս, ընդ որ անցանէ գետն Երասի յորձանուտ խոխոջիք ի գաշան՝ որ կոչի Քարաւազ. և աշխարհն այն անուանի Սիւնիս»: Քարաւազիս վրայ զրեւու զանց բրած չեն նաև օտարազգի մատենագիրները, որոնց մէջ է նաև Ստրաբոն և Պոմպոնիոս: Որդաւառն վար Երասիի մակերեւոյթը կասկեց ծովու մակերեւուածէն բարձր է 1940՝ անկէջ առաջ երթալով երկիրը կամայ կամայ կը ցածնայ, մէջը ամփոփելով կաւաքարուտ սեւազոյն ապտաճներ և ուրիշ սեռակ ազալեր քարեր, որոնց ստորոտէն զրեթէ գետոյն արագընթաց ալեաց մօտէն կ'անցնի Մեղրիի նեղ և ահաւոր ճանապարհը: Ինք կամ սասը միգնի չափ ընթացքէն վերջ, գետոյն հունը գետ աւելի կը նեղնայ և ձախակողմէն կը բարձրանան պորփիրէ կատարներ՝ զանազան ձեւերով բնական բուրդեր և կաթնոյններ՝ բաշտովին լեռի և մերի: Աւելորդ չենք համարիր հոս գնել Տիւպուայի Երասիայ այս քարաւազին նկատմամբ բրած նկարագիրը՝ Հ. Ալիշանէն թարգմանուած. «Չայսպիսի խոչ և խոթ գտեալ Երասիայ՝ ստատկացոցանէ զոյթ հոսանացն, զի ոչ եւս են կաւային և կրային սեւա գալլախտուտ հեր-



ձոտեալ զանդուածք զիրամղիւիք, այլ կոշկոտք մեծամեծք իբրև գոտնս, ընդ որս հարկ է ջուրցն յանձկութեան անդ յասակին՝ փրփրել և վազս անուռ: Զմի ի կոշկոտոց այսի ցուցեալ Շահ Արասայ առ զբանիկսն շողմարարս՝ ասէր. Ահա այդպէս արժան է զգէժ ունել թշնամուսն: — Գիւրին է աննել զայր, պատասխանեաց սմն ի նոցանէ, զայսպիսի ունելով պատուարս. և մասնանիշ ցուցանէր զստուարատարր զանդուածսն՝ որ շրջապատեն զքարալագան: — Չիբ ուրեք անսանել վայր խոժոռագոյն և ամեհագոյն բան զշրջապատեալս այս զժոխածե ջրովք. յազոտապայծաս երեսս արեւմտեան ափանցն՝ թանձր և ուղղաձիգ ստուերք կերպարանն ձեռս անկիւնաւորս և պատասուածս երկայնս զորշագոյն և ժանդագոյն ժայռից, զորոց հազիւ սակաւ ինչ բուսակ ծածկէ զմերկութիւն. կարկառք թաւալեալք և կուտակեալք՝ ամբարտակ իմն ահրնիկէց կանգնեն ի գետեզերն, և ի միջոյ վիհիցն վերաձգին թուփք ինչ հանապազ ողողեալք ի ցայռից խոնաւակն փոշոյ, զոր հոսանք զետոյն վերացուցեալ ցնդեն և ընուն զայերս: Խակ միւս գետափն խրթնագոյն և առապարագոյն՝ ստուերանայ ստուերակարկատ սեւասարաս ուսովք լերանց, որք թուին ջանալ պինդ ունել զհաստուածսն մերձ ի տապալել»: Տիւպուս այդպէս նկարագրելէ վերջ, կը համարի թէ գետինը և գետը Որլուտասէն մինչև մեծ Քարալագը 800 սանաչափ կը խոնարհի. Քարալագը կը համարի մօտ 100՝ վար թափող, իսկ Մեղրիի մեծ սահանքը 400՝, ամբողջ 1300՝, և անկէց մինչև բնթացից աւարտումը 1200՝. բայց այս թիւերը չափազանց կամ անստոյգ են, որովհետև նոյն ժամանակները սակաւին չափուած չէին այս կողմերը: Մեր (թ. 281) պատկերը ըստ Տիւպուսյի կը ներկայացնէ Երասխայ քարափաղը, որուն տեսեան վրայ սքանչաւնալով Տնկիերի սահանքէն թէև փոքր, բայց զեղիցկազոյն կը համարի: — Հին ժամանակ զանազան կամուրջներ կային Երասխայ վրայ. Արտաշատի և Վաղարշապատու մօտ եղած կամուրջները կը յիշէ Աղաթանգեղոս հետեւեալ ասողբոս մէջ. « Հասեալ ի խելս կամրջացն առ զրունս Արտաշատ քա-

ղաքի. զի գեան Երասխ յարուցեալ զայր զարիւ և զարիւ, սասնահալ ջրակուտակ ձինասոյղ ձինախաղաղ բազմութեամբ յաւարս խրոյ պղտորութեանց. կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջ Մեծամօրի կոչեն. և ածապարէին հասանել յասաջ ի խելս կամրջի Արտաշատու, ի կիրճս ճանապարհացն արգելին զնոսա, ի մէջ արարեալ զնոսա Տափերակե կամրջացն զետալէժս անէլին զնոսա»: Տափերայ կամուրջն կը յիշէ նաև Բուզանդ. « Իբրև լուս արբայն, ընդ ասաջ երանէր նմա ի գաշան յայնկոյս գետոյն Տափերե կամրջի ամենայն բանակօքն բազմութեամբք. անցեալ ընդ կամուրջն Տափերեայ, մտեալ ի քաղաքն մեծ յԱրտաշատ, յեկեղեցին զաննային»: Նոյնը Շապուհ Պարսից թագաւորի Արտաշատի բանդելն պատմելէ վերջ կ'ըսէ. « Եւ անցուցին (զգերիսն) ըստ Տափերե կամուրջ, և անէին համար գերոյն, ի մէջ շերտափակ զօրացն պատէին»: Բուզանդի այս խօսքերէն յայտնի է թէ Աղաթանգեղոսէն յիշուած Արտաշատի կամուրջը՝ է նոյն Տափերայ կամուրջը, ձգուած Երասխայ վրայ Արտաշատի մօտ, զոր կը յիշէ նաև Տակիտոս և մերս Վազար Փարպեցի. « Սասանիկ և բազում այլրնախր զօրօք զիմեալ անցանէր (Պարսից զօրավարը) ստիպով ընդ կամուրջ գետոյն Երասխայ. և ի զիւզաքաղաքին՝ որ կոչի Արտաշատ՝ բնակէր այն օր»: — Այս կամուրջներու քարաշէն կամ փայտաշէն բլլալուն համար որոշ բան մը գրուած չէ. բայց կը պատմուի թէ հին ժամանակները Երասխայ վրայ քարաշէն կամուրջներ ձգուած էին, և Վիրգիլիոսի ըսածի համեմատ, Աղեքսանդրի և Հոսովմայեցոց շինած կամուրջները քարուքանդ կը լինէին Երասխայ սրբնթացութեան ասջև. որչափ շինէին նա կը քակէր անյապազ. այս պատճառաւ կամուրջի ընտելերոյ անուանեցին Երասխը: Հասանդալէի կողմանց բնակիչք աւանդարար կը պատմեն, թէ այժմեան Չօպան Քեօփրիւսի ըսուած կամուրջի տեղը, քանի անգամ որ կամուրջներ շինած են, անհամբեր Երասխը զլորեր, քանդեր ու տարեր է: Յետոյ հայ հովիւ մը հնարքով մը յաջողած է այժմեան կամուրջի հիմնա-



քարինքը ձգել, որուն վրայ տեղացիք կրքացած են զիրութեամբ կամուրջը շինել եօթն քարաշէն կամարներով. ահա այս պատճառաւ կոչուեր է Հովուի կամարը՝ և այլազգիներէն Չօզան ֆեօփրիսիաւս — Մեր պատմիչներէն կը յիշուին տեղ տեղ Երասխայ հուները կամ ծանծաղ տեղերը. որ տեղերէն կարելի է զիրութեամբ առանց նաւակի անցնիլ: Ղազար կը յիշէ Արասշատի մօտ եղած հունը. «Եւ հասեալք յեղը զետայն սաստկապէս ըստ ժամանակի իւրոյ պղտորութեան, և զկամուրջն Արասշատու գոին աւերեալ, և էր ինչ որ ի տեղեացն բնակչաց, և էր ինչ որ ի սաստկութենէ ջուրցն զիմեցմանց, և տարակուսեալ զօրքն ինպէն տեղիս անցից և ոչ գտանէին. . . իսկ քաջ զօրավարն Հայոց Վահան Մամիկոնեան մերձեալ ի տեղի մի յեղը զետայն, և աեանադրեալ զինքն նշանաւ խաչին սրբոյ կենսատուի ի ջանէր ի գետն. և ոչ ընդ յոյժ տեղի ծանծաղ անցանէր խաղաղութեամբ ընդ ջուրն, որ և տեղին ամենայն գնդին լինէր ճանապարհ անցից անհոգութեամբ»: Չուզա քաղաքին մօտ ուրիշ հուն մ'ալ կը յիշէ Ղեւոնդ (Գլ. Բ). «Առնուին ի գերութիւն. . . զգաստակերտս Նախճատանու . . . և զայլս գերի վարեալ կանամբք և մանկտեաւ, անցուցանէին ընդ գետն Երասխ, ընդ հունն Չուզայու»: Չուզայի նկարագրութեան մէջ պիտի հանդիպինք սրտառուչ և ողբալի գէպքի մը, թէ՛ ինչպէս Շահ Արասի գերեվարութեան միջոց բազմամիւ Հայեր Երասխայ մէջ ինկղուեցան: — Երասխայ ջուրը պատուական է և շատ առողջարար ու բոյսերու օգտակար: Մէջը գտնուած ձկները ուրիշ գետերու ձկներէն աւելի համեղ են. զլիաւոր ձուկն է ձաւաւ կոչուածը երկայն և սպիտակ, Բասենու կոզմերը կը գտնուի. մեծութիւնը մինչև երկու կանգունի կը հասնի և ուրիշ ամէն ձկներէ աւելի համեղածաշակ է: Ճանապէս աւելի մեծ երկայն և նորը է յօգ բուսածը, այս ձուկը Եփրատի մէջ եւս կը գտնուի և մեծութեանը համար կեա կը կոչուի: Գեղիկ սրտաբուսածը մինչև մէկ օխայ կը կշռէ և Եփրատի մէջ Գեղիկ կը կոչուի: Մորդ բնաւոր ձուկը, որ Եփրատի մէջ Մոխ կը կոչուի, մինչև մէկ օխայ կը կշռէ: Կարմրախեա (Արսպարդը), այսպէս կոչուած է մերթի գունին համար. այս ձուկը պատուական կերակուր բլլալէ զատ, զեղ է նաեւ ջիւղերը ըստիւ համար՝ կապելով զայն կարկամած անգամին վրայ. տեղ տեղ կը գործածեն նաեւ իբրև զեղ ամէն տեսակ վէրքերու: Այս ձուկը առատ կը գտնուի մանաւանդ Թէքրմանի մէջ, ուր Երասխայ ձորփորը ապտոտուա է, վասն զի կարմրախեար ապտոտուա տեղեր կը սիրէ: Գետն կ'ենէ նաեւ Սազան և ուրիշ բնաբ ձկներ: Աստապատի զիմաց կը գտնուի սպիտակ միտիայ՝ զոր բնակիչը կը կոչեն Արակուչ, բայց ուտելու սովորութիւն չունին: — Հնախ. Հայաստ. Ա. 109—121: Այրարատ, 4—6: Սխալան 321—322: Տիպարա, Գ. 43, են.: Նոր Հայաստան, 24—27: Եւ այլն:

ԵՐԱՍԻԱՉՈՐ. Տես ԱՐԳԻՐՆԵՐ:

ԵՐԳԵՎԱՆԵՔ ԿԱՄ ԵՐԳԵՎԱՆԵՅ ԲԵՐԻ. — Հին և ամար բերդ կը յիշէ Կիրակոս պատմիչ Արցախի Փառխոս գաւառի մէջ՝ Ղուլալի զիւզի զիմաց: ԺԳ վարու սկիզբները Չաքարէ և Խանէ քաջ իշխանները այս ամրոցը Պարսից ձեռքէն աօին: Հոս շատ անգամ ամրացեր և պաշտպանուեր են Ղուլալի զիւզի և շրջակայ բնակիչները ԺԷ վարու վերջերը և ԺԸ սկիզբները: Բերդիս բուրգերէն ստացեր է մերձակայ զիւզն Ղուլալի անունը, որովհետև զուրտ տանկերէն կը նշանակէ բուրգ կամ աշտարակ: — Անշուշա ի հնումն Երգեվանք անուամբ վանք մի եւս կար, որուն անուամբ թերեւս կոչուեր է բերդս: Գեր. Բարխուդարեան Փառխոս գաւառի բերդերու վրայ գրած միջոց, այս բերդիս վրայ յատուկ բան մը ըսած չէ. կարելի է որ ուրիշ անուամբ նկարագրած է զայն:

- ԵՐԳԻՐՆԱ. Տես ԱՐԳԻՐՆԱ:
- ԵՐԳԵՉ. Տես ՎԱՅՈՅ ՉՈՐ:
- ԵՐԻՄՆԻԿ. — Գիւղ Խարրերդի. 60 տուն հայ կայ: Ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը և նոյն անուամբ վարժարան մը՝ 50 աշակերտներով: Հոգաբարձ են:
- ԵՐԳԻՐԲ. Տես ԿՈՎԱԿԱՆ:
- ԵՐԵՄԻ ԿԱՄ ԵՐԵՄԻ. Տես ԵՐՄԻԿ:
- ԵՐԵՄԷՍ. — Սինեաց Աղահէճը գաւառի



վասկներէն մին, որ կը յիշեցնէ Ծղուկի  
 Երեմի գիւղը, որուն սահմանաց մօտ է:  
 ԵՐԵՐԻ. Տես ՍՈՂԻ:  
 ԵՐԵՐԻՆ. Տես ՎԱՅՅՈՅ ՁՈՐ և ԷՐԷՐԻՆ:

յակապ՝ բայց այժմ աւերակ եկեղեցիով մը,  
 որուն կոթածոյ կարմրադոյն քարերու և  
 գմբէթի ձևին նայելով՝ այլազգիները տուած  
 են Գղը Գառլ անունը: Եկեղեցւոյն երկայ-

ՔՅԱՆՈՒՄԱՅԻԹԿԱԿԱԿԱԿԱ  
 Ղ.Տ.Կ:ԱՐԷԱԿԱԿԱԿԱԿԱԿԱ  
 ԴՈՒՄԱՐԱԿԱԿԱԿԱԿԱԿԱ  
 ՏԱՆԱՍԿԱԿԱԿԱԿԱԿԱ  
 ԱՐԿՈՐԱԶԱԿԱԿԱԿԱԿԱ  
 ԱԿԱՅՈՐԴԷՅՅՐԴԱՍՄԱԿԱԿԱ  
 ՉԿՏԱԿԱԿԱԿԱԿԱԿԱԿԱ  
 ԱԳՐՈՅԱԿԱԿԱԿԱԿԱԿԱ  
 ԱՅԿԱՏԻՔՈՒԿԱԿԱԿԱԿԱ  
 ՂԱԶԿԱԿԱԿԱԿԱԿԱԿԱ  
 ԱՄՆԱԿԱԿԱԿԱԿԱԿԱԿԱ  
 ԱՅԿԱՏԻՔՈՒԿԱԿԱԿԱԿԱ  
 ՂԱԶԿԱԿԱԿԱԿԱԿԱԿԱ  
 ԱՄՆԱԿԱԿԱԿԱԿԱԿԱԿԱ

ԵՐԵՐՆԱՅ Ս. ՍԱՀԱԿ. Տես ՍԱՀԱԿ(Ս):  
 ԵՐԵՐՈՒԱՅ ԳԻՒՂ, կամ ԵՐԵՐՈՒԲ. — Այ-  
 բարատայ Շիրակ գաւառի արևելեան մա-  
 սին մէջ, Ախուրեանի աջ կողմը կայ այս  
 անուամբ ամայի գիւղատեղի մը՝ երբեմն հս-

նութիւնն է 23 մետր և լայնութիւնն 14մ.  
 չորս անկիւնները ունի փոքրիկ մատուռներ  
 կամ սենեակներ, և բաց ի արևելեան կող-  
 մէն, միւս կողմերը ունի սինազարդ դաւիթ-  
 ներ՝ ձեղաններ կործանած: Կը տեսնուին

282. Երեւոտաց եկեղեցւոյն արձանագրութիւնը:



տասն պատահանաց տեղեր և երեք գոներ. աւագ դուռը արեւմտեան կողմէն. հարաւային գոներէն միոյն արաւաքին կողմը արձանազրբուած է 1038 թուականաւ կարեւոր յիշատակարան մը (թ. 282): Գիւղին մէջ և Ախուրեանի եկեղբը կան բարաշէն բնակութիւններու աւերակներ, զերեզմաններ և խաչքարեր, որոնք նորանոր ընտելեանց կը կարօտին:

ԵՐԵՐՈՒՆՔ. — Այս անուամբ կրկին հին գիւղեր կը յիշուին Սիւնեաց վայոց ձոր գաւառի մէջ: — Այս անուամբ լեւ եւ կայ:

ԵՐԵՐՈՒՆՔ. — Կը յիշուի այս անուամբ գիւղ Այրարատայ Արագածոսն գաւառի Սալմաստավանից արձանազրբութեան մը մէջ:

ԵՐԵՐՈՒՆՔ. Տե՛ս ԵՐԵՐՈՒՆՅ ԳԻՒԼ:

ԵՐԵՐՈՆ. — Երբեք անունն այսպէս եւս գրուած է:

ԵՐԵՒԱՆ. ԳԿ. ERIVAN. Ռ. Эривань. Պրսկ. انج کھام انججہ. — Գլխաւոր և իւր պատմական գէպերովն նշանաւոր բնրկաբաղար համանուն կուսակալութեան և գաւառին. ըստ հին աշխարհագրական բաժանման կը գտնուի Այրարատայ կոտայք գաւառի հարաւային մասի մէջ: Հրազդան և Գրբղպուլայ գետերու մէջտեղն է, Փարիզու միջօրէի 40° 10' 16" լայնութեան և 42° 10' 5" երկայնութեան ներքոյ, պասալեան սարահարթի մը վրայ, ծովու երեսէն մօտ 3000' բարձր, Էջմիածնի արեւելեան կողմը 10 մղոն հեռու: Երեւան փոխանկած է մեր Հայկականց, Արշակունեաց և Բագրատունեաց փառապանծ մայրաքաղաքներու: Հիմնարկութեան կամ սկզբնաւորութեան պատմութիւնն մեզ անյայտ կը մնայ. անհաւան կը թուի բլլալն հին Երուանդաւան, ինչպէս սմանց թուեցաւ, կամ Երուանդ Բն ուրիշ գաստակերտներէն մին: Չենք կարող հաստատել նաեւ այն աւանդութիւնը, որով սամիկն կը համարի, թէ համաշխարհական ջրհեղեղէն վերջ առաջին անգամ երևցած բլլայ բաղաբիտ տեղն, և անտի առած Երեւան անունը: — Մեր հնագոյն մասնաւոր գրքներէն չի յիշուի մինչև Է. դարը, յորում Աբրահամ կաթողիկոսի ժողովոյն մէջ կը նշանակուի իրրեւ նշանաւոր աւան, վասն զի պատուաւոր վաներեցիներու շարքին մէջ


կը յիշուի նաեւ ասորք՝ Գաւիր անուամբ: Քիչ տարիներ վերջը 642-3 թուին, Արաբացոց արշաւանաց սկիզբը կը յայտնուի նաեւ տեղոյս բերդն, վասն զի «Եկին ժողովեցան ի յԵրեւան (կ'ըսէ Սերիոս), և մարտեան ընդ Բերդիկ և ոչ կարացին առնուլ»: Նոյնպէս ըիչ տարիներ վերջը (658) ուրիշ նշանաւոր կոխ մը սնեցած են Աբարացիք Երեւան քաղաքապիղի մէջ. բայց ցաւալին այն է, որ բոլոր պատմիչները համառօտ յիշելով նախորդ պատմիչներու կը գրկեն, որոնք չգտնուելուն, մեղ մանրամասնութիւնք անծանօթ կը մնան: Անտեղի չէ բանասիրի մը այն կարծիքն, թէ Արաբացիք քաղաքն նուաճելով՝ իրենց ամուր ապաստան շինած են, Այրարատայ ուրիշ բերդերու նուագումն վերջ: Ժեշ գարու կիսուն թովմա Մեծօրիցին հոս գալով, գիւղաքաղաք կ'անուանէ, իսկ անոր ժամանակակիցն կրիցապոյն՝ Գրբղպր Մերենց, յիշելով տեղոյս պատահարը 1388ին Լէսկիթիմուրի հրոսակաց արշաւանաց միջոց, կ'ըսէ.

«Էւ յԵրեւան մեծ առանիկ»

Այս հինգ հարիւր կոտորեցին»:

Կամաց կամաց բարգաւաճելով քաղաք դարձեր է և կը թուի թէ Լէսկիթիմուրի հարուածներէն վերջ իշխանանիտա եղած է թուրք առհմբու, որոնցմէ առաջին կը յիշուի 1440 թուին Եւպրայ բեկ: Սա կը թուի լինել Աղգօյունլու սոհմէն և հաւանօրէն եզրօրորի անոնց Գարա Օսման սոհմապետին: Ասիկէց վերջ իշխան եղեր է ուրիշ Եւպրայ բեկ մը՝ Ռեզան Հասանայ սրդին: ԺՉ գարուն սկիզբը կուսակալ գրուելով Ռեզան խան՝ շինեց Երեւանայ բերդը, որ կը թուի թէ քաղաքին անունէն առած է իւր Ռեզան խան կամ Երեւանի իշխան կոչումը: Երեւանայ պայծառութեան սկզբնաւորութիւնը և կամ իրրեւ ամուր վայր նշանաւոր գտնալն այս ժամանակէն սկսած կրնանք համարիլ, որով և ամբողջ երկու դար վէճի և կոտի պատճառ գարձաւ երկու նախանձընդդէմ աշխարհեանց (Օսմանեանց և Պարսից միջև): Աւելորդ կը համարինք մի առ մի յիշել Երեւանայ Պարսից խաները, կը բաւականանանք յիշելով միայն անոնք՝ որոնց






283. Երևանայ շրջանի Քաղս տեսարանը.



միջոց կարեւոր գէպերը պատահած են: Թօթմար Մաննա խանը՝ 1579 թուի սեպտեմբեր ամսուն մէջ, Օսմանեանց Լալա փաշայի քաղաքին վրայ եկած միջոց, ասկէ փախաւ, և քաղաքը անձնատուր լինելով, աւերեցաւ հուսակալին հոյակապ ասպարանքը: Այս գէպին ժամանակակից ոմն Յովհաննէս՝ չափական խօսքերով կը նկարագրէ քաղաքին և գաւառին աւերումն և բազմաց գերի առուելին: Յետոյ Թուրքերը հաշտութիւն բնելով՝ քաղաքս Պարսից ձեռքը թու-

աւի՝ քակել. իսկ ոմն վարդապետ Առաքել անուն, որ և յետոյ կաթողիկոս եղև, յիշատակ նորա օրհնութեամբ եղիցի, եմուս առաջի Ֆահրատին զօրապետի զօրուն, և ոչ ես թոյլ քակելոյ զեկեղեցին: Բայց վնյ ըսելեացս և պատմութեանս, զի յաւարս երևուն՝ ջորիք և երիվարք և բազում Տաճիկք յինքեանց անձանօթք՝ բնակեցան յեկեղեցիս»: Տասնամեայ կամ երկուսուսանամեայ պատերազմներէ վերջ, մեծն Շահ Աբաս իրեն թագաւորութեան սկիզբը (1590)



284. Երեւանայ կարմիր կամուրջը:

զուցին. բայց երիւ տարի վերջը զարձեալ տիրեցին Ֆէհրատ փաշայի ձեռքով, որ Թօթմարի ասպարանքի և պարտեզներու տեղը բերլ շինեց, խրամով պատեց, ջուր բերելով Գլորպուլարէն. հրանօթներով ամրացուց նաև աշտարակները և յանձնեց Չղարեան Եւուսոֆ փաշային: Այս անգամ Ծարցի Յովհաննէս վարդապետի գրածի համեմատ, «բազում եկեղեցիս քակեալ՝ զբարինս ի շինութիւն բերլին ասնէին, որք և կամեցան զմեծ եկեղեցին ես՝ որ Երկուերեսի

ինպրեց և հաշտութիւն բրաւ Օսմանցուց հետ, անոնց թողլով Երեւանը Աբարատեան բալար նահանգներովը: Շահ Աբասի պատերազմներու և աշխարհակալութեան սկիզբները երբոր սա Գալթէժը առաւ (1603), Կախճաւան գաւառի Թուրքերը փախստական հոսեկան, «և ի հարաւային կողմն բերլին Երեւանայ անակից ընդ նմին պատեցին պարիսպ և շինեցին միւս եւս բերլ, և մտին ինքեանք ի ներս պատերազմական զինուք: ... Յետ սակաւուց ինքնին Շահ Աբաս և




հաս յԵրևան, պատեալ պաշարեաց զբերդն շուրջանակի, և ամենեւին առանց խմբք վրտանդի և աշխատանաց նստեալ կայր ի վերայ նորա. քանզի զշրջակայ երկիրն ընդ իւրով հրամանաւ ունէր գրաւեալ, որ էր շէն և լի ամենայն բարեօք, ուստի լցեալ լինէր ամենայն պիտոյք բանակին Պարսից: ... Եւ մինչ նստեալ էր Շահն ի վերայ Երևանայ բերդին և պատերազմէր, յայնժամ ետ զԵրևանայ երկիրն Ամիրգիւնայ խանին, զնա կարգեաց խան երկիրն այնուրիկ: ... Բայց զօրքն Օսմանցոց որք էին ի մէջ բերդին Երևանու, որոց գլուխ էր Սալիս փաշէն և Սիւլէյման փաշէն սրդի խաբր փաշային, քաջութեամբ զգեմ կաշեալ արքային և զօրայն Պարսից պատերազմէին, և զխմակաց եղեն ամխա ութ, և յիննբորոյում ամենանն անձար մնացեալ՝ ետուն զբերդն» (1604): Յովհաննէս Մակուկեցի անուամբ մէկը, 140 տող ստանաւոր գրութեան մը մէջ ողբալով կը ստորագրէ Երևան քաղաքին և նահանգին առումը և աւերումը: Շահ Աբասէն գրուած Արարատեան աշխարհի Ամիրգիւնա կուսակալը, Զաքարիա պատմչի գրածի համեմատ, էր «այր քաջ և սրտապինդ, անաչ և աներկիւղ, շէնարար և սիրող քրիստոնէից. սա ի տիրելն իւրում Երևանայ՝ խոյն ձեռն էարկ շինութեան և մարդաշատութեան. նախ սկսաւ շինել զբերդըն. և ապա ապարանս և զայդիս և զուրաստանս և զպարակէս, և հանել զառուս և առաւելուլ զճուրան...»: Շատ անգամ ստպատակելով սա կարնոյ, Մշոյ և վանայ կողմերը՝ այն կողմերէն գերի բերածները բնակեցուց ի «զեզօրայքն որ ի մէջ Երևանայ և Էջմիածնայ են, այսինքն, Քաշար, Գօրգուճէր, Կուսակերտ, Փարսքար, և Ռապատ և այլք...: Եւ այսպէս կեայր նա քաջութեամբ և փոյթ ի շինութիւն աշխարհին Արարատեան. այլ և սիրեաց զազգս Հայոց, և միշտ գնայր ի առնու քրիստոնէից, ուսէր և բնիկէր ընդ նոսա, և կարգեաց զաւանսպետս, որ է Մէլիք» ի Հայոց: Ասոր իշխանութեան ժամանակ 1616 թուին «Էօքիւզ Անձեա փաշէն եկն ի վերայ Երևանայ, երկու ամիս և կէս նստաւ, չկատաց անուշ և յետս դարձաւ»: Ամիրգիւնա

քան տարիէն աւելի իշխելով մեծած է 1625ին վրաց պատերազմի մէջ, և ըստ ումանց զազա սպանուեր է իւր թրանսագ բեկ սրդիէն, որ յաջորդեր է Շահ Աբասի հրամանով: Բայց ասկէ առաջ՝ 1614ին մեր յիշատակարանաց մէջ կը յիշուի Ամիրգիւնայի ուրիշ սրդի մը Աբաս Գաշի անուամբ, և անկէց ալ առաջ Կաճաթի դաշի ոմն կուսակալ: Տասը տարի վերջը (1635) ըստ Առաքելի (Գլ. Ժ): «Սուլթան Մուրատ թագաւոր 700000 մարդով եկն ի վերայ Երևանայ բերդին նստաւ. թօփով ձեռնաց զբերդն մեծաւ զօրութեամբ, և յինն օրն էտա զբերդն, և զիշխան բերդին զԹահմազ Գաշի խանն՝ իւրով պարաներսիւն առաքեաց ի Ստամբուլ. 12000 քաջ պատերազմող եղ ի մէջ բերդին, և ինքն էանց գնաց ի թաւրէկ», և այլն: Բայց յաջորդ տարին (1636) «Թագաւորն Պարսից Շահ Մէֆի 100000 մարդով եկն ի վերայ Երևանայ, նստաւ երեք ամիս, բազում աշխատութեամբ և պատերազմաւ էտա զբերդն յՕսմանցոց, և զիշխան բերդին զՄաքրոզգայ փաշէն և զայլ բազում զօրս ի նոցանէ սպան... և յԵրևան կարգեաց իշխան զՔալիպ Ալի խանն»: Օսմանցոց առումէն առաջ Երևանէն անցաւ թաւառեկի գալլիացի ճանապարհորդը, որ կը յիշէ քաղաքիս Հայոց չորս եկեղեցիներ և մենաստան մը, և նորաշէն կարաւանատունը: — Այս անգամ Երևան և Արարատայ երկիրը Պարսից ձեռքը մնաց զթիւթէ 88 տարի, և իրարու յաջորդեցին այլ և այլ կուսակալներ: 1679ին Զալ խան կուսակալի օրով, որ ազգաւ վրացի էր և քրիստոնէից բարերար ու շինարար, պատահեցաւ յունիսի մէջ Այրարատայ մեծ երկրաշարժը, որ սովորաբար քաղաքիս անուամբ կը կոչուի Շարժ Երևանայ կամ Մեծ Շարժ, որով բերդը հիմէն տապալեցաւ, ըստ Զաքարիայի, նոյնպէս Հայոց երեք եկեղեցիները և Տաճկաց շատ մզկիթներ և մնիրաններ. «Խիկ խանն ի նոյն օր առաքեաց զեսպանս առ շահն և ծանոյց զաւերումն շարժին. և յետ հնգետասան աւուր եկն փութապնացն և հրաման շինելոյ բերդին և եկեղեցեացն. և մունեալին զոչէր, թէ հրաման է շահին զի քրիստոնեայք շինեսցեն զեկեղեցիսն զոր



քակեալ է... և ապա եկն մեծ իշխանն Միրզա Խպրահիմն, զոր ասէին Հասորէճան Վազրի, նստաւ յԵրեւան, և կոչեաց զմերձակայ զանորայս, զՆախշուանայ, զՊարատաւայ, և այլն, և եկին սոքա և շինեցին զբերդն երեքորմեայ, ամրագոյն քան զանայնն. և զկամարձն որ ի ներքոյ բերդին



285. Երեւանայ աշտարակը :

էր՝ ի վերայ Հուրաստան գետոյ՝ որ ասի Չանկի, զնա եւս շինեցին և բերին զՆորն ի քաղաքն Երեւան: Եւ ապա հաստատեցաւ կարգն Երեւանայ ամենայն պիտոյիւք մարմնաւորօք, որքան և իշխէր սա (Չալ) Երեւանայ»: Քաղաքիս Հին երեքականայ կամուրջը գոյութեամբ կը յիշեն Եւրոպացի ատալին ուղեւորները, ինչպէս վերոյիշեալ

Թաւեանիէ գալլիացին և Շարաէն՝ որ շարժէն քիչ ատալ անցաւ Երեւանէն, և կը նկարագրէ զայն՝ ոչ իբրեւ մեծ՝ այլ գեղեցիկ քաղաք, ինչպէս նաեւ ձուածեւ բերդն՝ մօտ 4000 քայլաչափ շրջապատով և 800 Պարսից աներով, իսկ Հայոց աները քաղաքին մէջ էին: Կը նկարագրէ նաեւ կուսակալին գեղեցիկ ապարանքը և Քեչի գալի (Սոյժից բերդ) ըստած ամրութիւնը: Բերդը ամրաձիգ մը հետո էր քաղաքէն, և այն տարածութեան վրայ կային տուներ և շուկաներ, Հայոց շատ եկեղեցիներ, սրոնցմէ զլիաւորները և հնաշէնները կը յիշէ կարաւոյիկէն և Երկրաեղբանին կամ Եպիսկոպոսարանը. միւսները նորաշէն, փոքր և ցած էին: Երկրորդին մօտ կար հին Աշտարակ մը բազմանկիւնի, բոլորագլխի, սրբատաշ քարերով ու գեղեցիկ ճարտարապետութեամբ շինուած, շուրջը աւերակներ լինելուն, Շարաէն կը կարծէ ի հնումն նայն անգր վանք եղած: Այժմ անհետացած է այս աշտարակը, հաւանօրէն մեծ երկրաշարժէն, բայց բարերազգարար գալլիացի ուղեւորը զայն զժամ լինելով, մենք ալ կը կարծանանք անոր պատկերը աստ ներկայացնել՝ որ բաւական նման է Նախճատանի մէջ ցարդ կանգուն մնացած Աթաբէկներու աշտարակին: Աշտարակի վիմանցն էր վաճառատեղին և քիչ հետո քառակուսի և ծառայատ մեծ հրապարակը՝ 400 քայլ տրամագծով: Շատ բաղնիքներ կային թէ՛ քաղաքի և թէ՛ բերդի մէջ և բաւական թուով կարաւանասաներ, սրոնցմէ գեղեցիկ և մեծագոյնն կը զնէ Շարաէն բերդի մօտ նոր շինուածը, յորում կային երեք մեծ և վաթսուս փոքր սենեակներ, բնդարձակ ախոռներ, մթն-


բանոցներ, գեղեցիկ մզկիթ մը և երկու սրճարաններ: Շարտեհ, Բ 218-210: — Այս բոլոր շինութիւնները թէպէտեւ մեծ երկրաշարժէն քայքայեցան, բայց Չաքարիա պատմի վերը գրածի համեմատ, Չալի իշխանութեան օրով և յետոյ զարձեւել նորոգուեցան: Չալէն վերջը, իբրեւ անգակալ Երեւանայ մէջ նստան, նախ Նախ-



ճաւանի խանի որդին Մուրրուզա Ղաշի (1688—90), որ կեղեքելով բնակիչները նեղեց, և ապա Մանմառ Ղաշի (1690—93), որ առաջնոյն հակառակ «բարութիւն ցուցեալ ամենայնի և արար բարութիւն և սէր առ սամիկ հարկատուքն. ի բազումս թեթեւացոյց զհարկն և զձեռամարքս ի ճանապարհաց կրարձ և զամենայն զոդս և աւազակս, և հրաման արար շինութեան եկեղեցեացն, և ի գատաստանի ճշմարտասէր և առանց կաշտաց: ... Զկնի նորա առաքեցաւ ի թագաւորէն իշխան Երեւանայ Յարգալի ոմն որ էր ի թոտանց Ամիրգունայ խանին, այր ազահ և սիշա, կոզոպառզ և գերբող և կաշտող, անիրաւ ի գատաստանի... բազմացան և զողբ ի շէնս և աւազակք ի ճանապարհս և յանդաստանս: ... Եւ էր տաղնապ մեծ յաշխարհին Արարատեան, և ի թուի Ռձիթլ (= 1700) այսպէս է զոր գրեցաք»: Մեհրալի խանի իշխանութեան օրով (1719—1724), Օսմանցիք փրեցին Երեւանայ, և գրեթէ բոլոր Հայոց աշխարհի, երկար պաշարմամբ և բուն պատերազմով: Այս պատերազմներու մէջ Հայերն ալ շատ քաջութիւններ քրած են, ինչպէս կը պատմէ մանրաման տականտն ոմն Երեւանցի: 1755 թուին թաճմազ Ղուլի խանը զարձեալ նուաճեց քաղաքս Պարսից իշխանութեան ներքոյ, և այսպէս աւելեց անկէջ վերջ գրեթէ զարմը, մինչև Ռուսներէն բոլորովին նուաճուիլը (1827): Երեւանայ վերջին այլազգի իշխան կամ սերտար եղած է Հիւսէյն խան, որ շատ հոչակուած է իւր քաջութեանց համար, բայց երբ 1827 տարւոյ հոկտ. 19ին Ռուսները Փասկելիչ զօրապետի ձեռքով քաղաքին փրեցին, Հիւսէյն Պարսկաստան գնաց և իրեն թագաւորէն անարգութեամբ, խեղճութեամբ մեռաւ, ինչպէս կ'ըսեն, զամի մը մէջ: Այս մեծ յաղթութեան և Այրարատեան երկրի նուաճման ի յիշատակ Ռուսները միտալ մը շինեցին, մէկ կողմը պատկերելով Երեւան՝ և միւս կողմը Մասիս լեռը խաչակիր գաղաթով: Երեւանը այնուհետև կոչուեցաւ Մայրաքաղաք Հայկական Նասանգի, բայց 1840էն սկսեալ այս անունն փոխանակեց Երեւանեան գաւառ կոչումը: Իսկ յաղթող և նուաճող Փասկելիչ զօրա-

պետն ալ տուին Երեւանեան կամ ըստ Ռուսաց Երեւանքի պատուանունը: Երեւան նշանաւոր եղած է գլխաւորաբար իւր ամուր բերքովը, որ մօտ միլիոն մը չորբող մասին չափ քաղաքէն հետու է հարաւային կողմը, Հրազդանայ խորածորոյն արեւելեան սարափին վրայ: Արեւմտեան կողմէն բնական ահաւոր զիրքով ամրացած լինելով պարսպաց պէտք չունի և միայն հրանոթներով զինուած է. իսկ միւս երեք կողմերը ունի խոր խրամ և կրկին պարիսպներ, ինչպէս նաև յիսնի չափ բուրգեր և երեք գոներ: Գրեթէ երեք զար արեւելքի նշանաւոր բերդերու կարգն անցած էր, բայց չէր կարող մեր գարս հրազինուց և պատերազմական արհեստին զէմ գնել: Քէր-Փարթըր անդլիացին, որ Ռուսաց զբաւումէն տասը տարի առաջ տեսած է քաղաքս, խիստ զօրաւոր կը նկարագրէ բերդին զիրքը և ահաւոր: Ամրութենէն աւելի նշանաւոր էր բնագործակութեամբը, յորում ամէն բանի կարեւոր անգեր և մթերանոցներ կային: Նշանաւոր էր նաև խաներու հոյակապ և շքեղազարդ սպարանքը: Հիւսէյն խանը շրտայլօրէն զարդարած էր այլ սպարանքը, շինելով նաև դահլճին համար փաստուր պատշգամ մը՝ Հրազդան գետոյն վրայ նաշող, ուսկից կը տեսնուէին նաև Մասիս լեռանց ձիւնապատ գագաթները և Արարատեան գաշափ լսեմ անաբանն: Ռմանք կ'ըսեն, թէ այս պատշգամէն ինքզինքը վար նետեց, վրացի զեղեցիկ աղջիկն Մարիամ, երբ իւր տարփածուն ու խօսեցեալը՝ Ալեքս, կամրջին վրայ իրեն կ'սպասէր, և ինաւելով սուսնի ծածկուել վրայ, վիրաւորուած վերցուցին. բայց յետոյ առողջանալով, սէրտաւրը զինքը շնորհեց իրեն սիրելոյն. այդ պատճառաւ պատշգամն կոչուեր է Աղջկավազը, և այս զէպքս Հաճի-Պարս կոչուած վրպատանութեան առիթ եղած է: Հայերն ալ աւելի ստոյգ կը պատմեն, թէ այլազգի նորահարս մը Հիւսէյն խանի հրամանով զեղէ մը յափշտակուած էր, որ լսելով փեսային երգը, կանանոցի պատուհանէն ինքզինքը վար կը նետէ և ձերբակալուելով փեսային հետ՝ կ'արձկուին հանդերձ պարգեւներով: Գահլճի առաստաղի մեծ մասը,





286 • Երևան • — Գաղթի պատշգամի տեսարանը •



պատերու և սիւներու երեսները ազուցուած են հայկերէններ, և զոյնպէս զեղեցիկ զարդեր նկարուած, ինչպէս նաեւ Պարսից զիւցազն շահերու և խաներու կենդանագիրները. յատակը կճասալ է: Ապարանքի մէկ կողմն էր բնարձակ և բազմաշարի կանանոցը, մօտ 200 սոր երկայն և 125 սոր լայն, չորս դահլիճներով և ամենայն շքեղութեամբ: Այս բոլոր փափկութեան և յղիւթեան շէնքերը, Ռուսներէն փոխուեցան զօրականներու անկերանոց, անոնց ցաւերու և հեծութիւնննու ըժշկութեան վայր: Ապարանքի ճոխութեան և շքեղութեան համեմատ պատրաստած էին նաեւ զեղազուարճ պարտէզներ, բուրաստաններ և այգիներ՝ զեռոյն միտ կողմը, հովանոցներով և ջրերու շաարուաններով. այս զբօսարաններու մեծ մասն այժմ լքուած և ամայացած է: Վայելչակերտ էր նաեւ Հիւսէին խանի բերդի մէջ կառուցած և գմբէթը ու ճակարակ կանաչ ու կապոյտ յարճապակիներով զարդարուած մզկիթը, որ յետոյ զինարանի փոխուեցաւ: Ռուս մըզկիթ մ'ալ կար բերդին մէջ Օսմանցիներէն շինուած 1725 թուին, զոր Ռուսները սրբելով եկեղեցոյ վերածեցին և նուիրեցին Տիրամօր: — Պարսից իշխանութեան օրով, երբեմն Երեսանայ մէջ կար Գրաւանոց, որ կը կարէին արծաթէ և պղնձէ գրամներ, ինչպէս կը վկայէ 1694ին խաւաքի ակաւնասեւ ուղեւորն Ճեմալի:

Քաղաքի և բերդի միջնավայրը կայ բնարձակ հրապարակ մը, որ ի հնուց զանազան թաղերու կը բաժնուի: Այս թաղերէն առաջինը, բերդին և զեռոյն հիւսիսային կողմն է և գրիցը համեմատ Չորագիւղ կը կոչուի և ըստ այլազգիներու Տերեքեւ. իսկ ի հնում Զարարիա Սարկաւազի համեմատ Խեկեւոյ—Չոր: Այստեղ կը բնակին Հայր և Մահմէտականք. վերին կողմն է Չորագիւղի Անապատ կոչուած վանատեղին, որ սեփական է և օթեւան Էջմիածնի կաթողիկոսներու: Նախ շինուած է Նահապետ կաթողիկոսէն, և յետոյ մեծ շարժէն վերջ՝ Յակոբ Ե՛ն, որ կար նաեւ Ս. Գեորգայանուամբ եկեղեցի: 1837 թուին վանքս ըրին Երեսանայ թեմին Գիւսանատաւը և հոս կը նստին կաթողիկոսի փոխանորդ արքեպիս-

կոպոսները: Եկեղեցիներէն մին կը կոչուի Ս. Յակոբ, ալիստաշէն և հողախառն՝ շինուած է վաճառականներէ: Ռուս իկեղեցի մ'ալ Ս. Սարգսի Զօրավարի անուամբ շինած է Նահապետ կաթողիկոսը, կաթողիկոսներու օթեւանի հարաւային կողմը. զոր հնութեանը պատճառ 1835 թուին բակել տալով Յովհաննէս Շահխաթունեան՝ վերստին շինել տուաւ բարուկիր: Ասոնց արեւելակողմն են այգիներ, ծառատունկներ և պարտէզներ: Ս. Սարգսի բակի մէջ 1860 թուին փառաւորապէս շինուած է քաղաքիս առաջնորդարանը, որուն արեւմտեան պատըզամբը զեղեցիկ տեսարան ունի:— Անապատիս կամ կախկոպտարանին մօտ ի հնումն կը բարձրանար Շարաւէի յիշած Աշարակը, որուն հետքերը փնտռելով Քէր—Փորթըր 1818 թուին, իմացաւ զիտացոյճ մը՝ թէ բիշ տարիներ առաջ կայծակնահար լինելով կործաներ է և բարերը ուրիշ շէնքերու զործածած են: Նոյն Շարաւէն ուղեւորը կը վկայէ, թէ առաջնորդարանին եկեղեցին կը կոչուէր Երկուրեւանի, որ և ուրիշ եկեղեցիներու հետ կը յիշուի 1537 թուականէն սկսեալ, Երկուրեւանի Ս. Նշան անուամբ. առկէ կը յայտնուի թէ նուիրուած էր Ս. Խաչի. թաղն ալ ժամանակ մը կոչուած է Երկուրեւանաբաղ: — Չորաթաղիս հիւսիսային արեւելեան կողմը Հրազդանի մօտ է երկրորդ թաղը Կոնյ անուամբ և ըստ այլազգիներու Թեփեպաշի, և է բնարձակ քարտա սարատափ մը՝ տարածուած զէպի հարաւ և արեւելք. հիւսիսային կողմն է Կոզեւն բլրակը, այսպէս կոչուած ԺԱ զարու առաջին կիսուն ապրող Յովնանեկու վարդապետի անուամբ: Բլրանս վրայ կայ փոքրիկ մատուռ մը 1829 թուին նորոգուած Արամայեան Մեկիր Սահակեւ, որ և թաղուեցաւ ինքը 1834ին. արեւմտեան կողմը կը տարածուին այգիներ՝ զեռոյն զարատափին վրայ: Թաղիս եկեղեցին Ս. Յովնանեկու Մկրտիչ՝ շինուած է քաղակերտ 1710ին. ունի երեք սեղան, երկու աւանդատուն և շուրջը քահանայից բնակարան: Այս թաղիս և Նոր թաղի մէջ, Ս. Յովնանեկու եկեղեցոյն մօտ, նոր տեղադրող մը կը յիշէ Ծիծեռեակ անուամբ բերդ: Կոնյ թաղի մէկ մասը կը կոչուէր և այժմ ևս





287. Երեւան. — Անապատի եկեղեցին •




կ'ըսուի Յիբրանի բաղ: Կոնզի արեւելակողմն է Նոր բաղը, որ այսպէս կոչուած է, Ռուսաց արեւելն վերջ, Ատրղաասականէն եկած նոր գաղթականներու բնակութեան պատճառաւ, վասն զի նոյն տեղը առջ Երեւանայ խաներու այգիները կը տարածուէին և կը կոչուէր Խանըղ կամ Խանրու—պաղ: Հոն էր ի հնուց Ս. Անանիայի Անապատը, հին մատուռ մը՝ շինուած սրբոյն նշխարաց վրայ՝ և շուրջը խցիկներ. որ Առաքելի (Գլ. ԻԳ) պատմութեան համեմատ ժէ. զարու սկիզբները, «էր աւերակ և անմարգարեակ, որոյ վասն ասաց խանն (Ամիրգիւնա) առ վարդապետն (Մովսէս Սիւնեցի). Տեսանէս զայս եկեղեցի որ ամայի կայ. արդ լուր ինձ և մի գնար յայլ աշխարհ, այլ արա զսա քեզ բնակութիւն, և գաղարեա աստէն, զի իրեւրաց մերձակայութեամբ և տեսութեամբ միխթարեացուք. այլ և ամենայն ժողովուրդք քաղաքականք և վաճառականք ազաչելով գնոյն խնդրէին ի վարդապետէն: Որոց հաճեալ սրբոյ վարդապետին՝ ձեռն ի գործ էարկ շինել զտեղին արդեամբք և ձեռնաուութեամբ քրիստոնէից տեղականաց և վաճառականաց, որք յօժարութեամբ տային տուրս ողորմութեան ի շինումն տեղոյն, վասն սիրոյ վարդապետին, զի բնակեցէ ի մէջ իւրեանց. վասն որոյ փութանակի շինեցին, շուրջանակի պարխպ և խցեր և զժամատուն, և սարաւթ, և զայլ առնս յաւուս. և կատարեալ զամենայն շինուածնս, բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն, կարգաւ և սահմանաւ այն, զոր կարգեցին ի մեծ անապատն: Առ որ ժողովեցան միաբանք բազումք, միայնակեացք և զորոց աշակերտք իմաստունք և սրբակացք. կային ի միասին մեծք և փոքրք սիրով հանդարտեալք ի խցի, հանապազօր կանխեալ յազօթս և յընթերցումն սուրբ գրոց: ... Ապա Մեղքիսէթ կաթուղիկոսն եկեալ ի գամբարանս սրբոյ առաքելոյն Անանիայի, ուր էր բնակութիւն Մովսէս վարդապետին, զոր անուանեցին Անապատ. և անդ օրհնեաց զնա եպիսկոպոս յաւազ երկուշարթ աւուրն»): Այս վանքի մէջ ամփոփուած են Յովհաննէս Կոզեան վարդապետի, Մեղքիսէթ և Մովսէս վարդապետաց մարմինները: Մով-

սէս վարդապետի և ապա կաթուղիկոսի գերեզմանին վրայ կայ ՌԶԹ թուականաւ աթ առողով տապանագիր: — Փիլիպպոս կաթուղիկոսը 1636ին նորոգեց այս Անապատը, որ Սուլդան Մուրատի Պարսից հետ բրած պատերազմի ժամանակ աւերած էր. «վերստին շինեաց, ոչ թէ փայտիս, այլ քարիս և բոսով, գմբեթեայ զժամատունն, զտեղանատունն, զխուցան և զայլս եւս շինուածս ամենեան»): Երեւանայ երկրաշարժէն վերջ, Նահապետ կաթուղիկոսի օրով՝ 1693 թուին, Խօջայ փառնս անուռով մէկը ընդարձակեց մատուռը՝ նոր քարակերտ շինութեամբ չորս սիւներու վրայ, հանդերձ սիւնադարձ ժամատնով և երկու տանգատներով. միջին դրան վրայ ալ զանդակատուն շինեց, ու նուիրեց Ս. Աստուածածնի, ինչպէս կը տեսնուի դրան մօտ եղած անոճ շարպարութեամբ արձանագրութիւնէն: ԺԲ զարու վերջերը (1793) տաճարը զարձեալ նորոգեց Երեւանցի ոմն Գարբիէլ՝ հարիւրապետ կոչուած, և հարաւային դրան վրայ գրեց իւր քտան սողէ բաղկացած յիշատակարանը: Ս. Անանիա առաքելոյն նշխարաց տապանք փոքրիկ խորանայարկի մը մէջ է եկեղեցոյն տակ՝ ուր կ'իջնեն աստիճաններով, և նշանաւոր ուխտատեղի է. այս եկեղեցին կը կոչուի նաեւ Զօրաւոր՝ հրաշագործ համարուած աւետարանի մը անուամբ: — Նոր թաղի արեւելեան հարաւային կողմն է չորրորդ թաղը Ծնար՝ ընդարձակ և շատ պարտէզներով. որուն մէջ Հայք երկու եկեղեցի ունին: Մին՝ Կարուղիկի, օրոցածէս է չորս սիւներու վրայ, կաթուղիկէ կամ գմբէթ ունի երկայնագիր սեղանոյն վրայ՝ որ նուիրուած է Ս. Աստուածածնի, ունի նաեւ երկու աւանդատուն, երկու փոքրիկ խորաններ՝ Ս. Յովհաննու Մկրտչի և Ս. Ստեփանոսի անուամբ, որոնք եւս առանձին կաթուղիկէ ունին. շրջապատեալ է պարսպով: Եկեղեցոյս շինութիւնն հին է զոր 1537 թուին յիշատակագիր մը նրաչափոս Ս. Կարուղիկի կը կոչէ, սակայն կ'երեւի թէ երկրաշարժէն վերջ նորոգուեր է և հին արձանագրութիւնք անյայտացեր են: Երեսուցեան արձանագրութիւն չունի, միայն արեւմտեան ճակատի մարմարին քարի վրայ գրուած է. «Յիշատակ է



Մալք Խաչո Օնանեւի սրբի Աղաւաղին թվ. 1693: Եկեղեցւոյ զանգակաւան ճակատի հարաւային զրան վրայ ալ կայ հետեւեալ նորոգութեան արձանագրութիւնը.

աբերոց Պետրոսի և Պօրոսի. կառուցուած է չորս սիններու վրայ 1690 թուին: Գրեթէ կէս դար առաջ այս եկեղեցւոյ մէջ շինուեցան Ս. Յովհ. Մկրտչի և Ս. Ստեփանոս



288 • Երեսմայ գիտար մկիկեր

«Նորոգեցաւ զաչիս սրբեամբ ժորվրոց: Երաշխատր երեսփոխան Օնան Խաչեան Օնանեւեալ թվ. 1861 Փրկչական. ծախան է 1150 մեր»: Երկրորդ եկեղեցին մեծագոյն է և ամենահարուստ, նուիրուած Ս. Ա-

սի անուամբ երկու խորաններ՝ հանդերձ կաթուղիկէներով, արգեամբ Երեսանցի վարդան կարապետեանի և Ստեփանոս Զաւաղեանցի: Եկեղեցւոյ վրայ նորոգութիւններ բրած են 1778 և 1830 թուականներուն:



Հարաւային որմի ձակատը արձանագրուած է տառջին նորոգութեան յիշատակարանը, և կը յայտնուի թէ նոյն ժամանակ Սիմէոն կաթողիկոսի հոգացողութեամբ նորոգած են զլիւստորաբար տանիքը և որմերու ու սիւներու ուրիշ խախուտ տեղերը: Եկեղեցւոյ պարսպին մէջ է քաղաքին Հայոց Գայիանան Օրիորդաց զպրոցը, որ շինուած, կարգաւորուած ու ապահովուած է աշխատութեամբ արժանապատիւ Յովսէփ Աւագ քահանայ Մեղեանցէն: — Շհարի հարաւակողմը և բերդին արեւելակողմն է Քարաւանք կոչուած թաղը, որ այսպէս կոչուած է մերձակայ քարահանքի պատճառաւ, և այլազգիներէն կը կոչուի Տեմիլգուրագ (Երկաթաբեր), երկաթային ջրոյ աղբիւրի մը համար: Այս թաղի մէջ աւելի բազմաթիւ են այլազգիք, իսկ Հայք սակաւաթիւ են և ասանձին եկեղեցի չունին: — Երեւանայ թաղերէն մին կը համարուի նաև Նորք կոչուած այգեւէտ մեծ գեղը՝ որ կը գտնուի հիւսիսային արեւելեան կողմը և թուրքերէն Չեօմլեկի կը կոչուի բրուաներու դորձարաններու համար: Այս թաղիս հայ բնակիչը 2500ը կ'անցնին, կը թուի թէ հին ժամանակ մեծ շէն մը եղած լինի, թերեւս նաև Երեւանայ բերդի զլիստոր ասանք: Եկեղեցին նախուսած է Ս. Սիմեոն ծերունոյն. հոս կը գտնուի նաև Ս. Աստուածածին անուամբ ուխտասեղի մը, ուր կը յաճախեն Երեւանցիք Չասկի երկրորդ կիրակէին: 1679 տարւոյ մեծ երկրաշարժէն կործանեցան նաև Նորքայ շէնքերը: Շահ Արաօի արշաւանքներէն և երկիրն ամայանալէ վերջ, Չաքարիս պատմիչ աղետալի գէպը մը կը յայտնէ ըսելով. «Կին մի ի Նորք գեղջէնսաէր ի գրան խրում, ի գիրկս սենելով զմանուկ գուսար իւր, և ահա գայլ մի տեսնալ ի հեռատանէ և եկեալ լմբոնէ զհանդերձից մանկանն, և քարշէր առ ինքն, և կինն ազազակէր, զրկեալ զմանուկն ոչ թողոյր ի բաց, և ի ձայնէ կնոջն եկին սմանք և հալածեցին զգայլն և զմանուկն իլեցին մեռեալ»: Հին Ս. Սիմէոն եկեղեցին նորոգած են և հոն կը կատարեն աստուածային պաշտամունք: Հոս կայ Շուղակաթ անուամբ օրիորդաց վարժարան, ինչպէս նաև սզայոց դպրոց: — Երեւանայ

թաղերէն սմանք կը կոչուին նաև եկեղեցիներու անուններով, ինչպէս Ս. Սարգսի բաղ, Չորաւորի բաղ, կը յիշուի եւս Չուսարեկեց բաղ, Հին Երեւան բաղ, Խանի բաղ, Շէն բաղ, Չուսնա-Մէլոյի բաղ, Մարտիկաց բաղ, և այլն:

Յիշատակագիր մը 1537ին, Կաթողիկէի և Երկուերեսնի Սուրբ Նշանի հետ կը յիշէ նաև Ս. Աստուածածին և Ս. Յարաչիւն անուամբ եկեղեցիներ, որոնց որ թաղի մէջ գտնուին յայտնի չէ: Թերեւս տառջինը ըլլայ Նորքայ վերայիշեալ ուխտասեղին: Ս. Թաղեոս կամ Գերսեմանի անուամբ ուխտասեղի մը եւս կայ այլազգիի մը այլի մէջ, որուն որմերը այդեաէրը անհետացընելու վրայ է: Գէորդ կաթողիկոսի հրամանաւ 1867ին հիմնարկեցին Ս. Գեորգ անուամբ ուրիշ եկեղեցի մը, որոյ շինութիւնն սակաւին կը շարունակուէր (1890ին) Երեսօխտան Համբարձում Եղիազարեանցի հսկողութեան ներքոյ, — 1684 թուին Պարսից Շահի հրովարտակով Երեւան եկաւ բարոգութեան համար Հ. Լոնժոյ, և շուտ մեռնելով իրեն յաջորդեց Հ. Ռաւ. սա եւս երկու տարի վերջ վախճանելով (1686), մեծ հանդիսով թաղուեցաւ Հայոց քահանաներու գերեզմանաց մօտ, Եղիազար կաթողիկոսի հրամանով: Ուրիշ մի քանի Յիսուսեաններ եւս եկած են քաղաքս և ԺԳ զարու սկիզբը կաթողիկոսէն ընդունուելով կը բարոգէին Հայոց եկեղեցիներու մէջ: Ասոնց մէջ առաջ ալ Հ. Գարբիէլ Շինոն վեղարար կրօնաւորը, հոս եկեղեցի մը կառուցեր է Չեյկոյի Ազարիս անուամբ մեծատան մը նպաստիւք. բայց Էջմիածնի միաբանները փակել առեւր են, և Շինոն մեռեր է 1668ին: — Երեւան մօտ լինելով կաթողիկոսական աթոռոյն, իրեն տառջնորդները կամ եպիսկոպոսները աթոռակալ կամ փոխանորդ կանուանուին, որոնց մէջ արքեպիսկոպոսներ եւս կան: Տեղւոյ սղութեան պատճառաւ զանց կ'ընենք քաղաքիս թէ՛ տառջնորդաց և թէ՛ կառավարչաց ցանկերն: Երեւանայ գաւառին գիւղերու և քաղաքի բնակչաց նոր մարդահամարն չունենալով կը դնենք 1893ին հրատարակուած միճակագրութեան համեմատ. քաղաքի մէջ կան.



Հար . . . . .	1481	տուն, 7142	հոգի
Պարտիզ . . . . .	1385	» 7228	»
Ռուսք . . . . .	88	» 313	»
Այլ և այլք . . . . .	14	» 55	»

Գումարն... 2968 տուն, 14738 հոգի:

Ռուսները բերդի մէջ ունին փառաւոր և կեղեցի մը Ս. Նիկողայոս սբանչեւագործ հայրապետի նուիրում՝ որ պաշտպան է Ռուսաց զօրքերուն: Կառուցուած է 1850ին Նիկողայոս Պօղոսեան կայսեր ի պատիւ: Քաղաքիս մէջանցը կը զանաւի կամարակապ պղիսակներս մեծ շուկայն, բազմաթիւ կըրպակներով և կարաւանատներով, որոնցմէ մեծագոյնը կը կոչուի Վրաց անուամբ Կիւրձի Քերթիսեւերայ, հոն է նաև մեծ ու հզակապ մզկիթը՝ յախճապակիէ գմբեթով, որուն բակի մէջ կայ մեծ աւաղան և մօար դպրոց, շինուած Հիսսէին Ալի խանէն, քաղաքիս Նատիրշահէն նուաճուելէն վերջ: Պարսիկները ունին նաև սրիշ քանի մը մզկիթներ, զուրկ են կանոնաւոր վարժարաններէ, միայն իրենց խօճակերը մզկիթներու խոնաւ խուցերուն մէջ դասեր կ'աւանդեն: Շուկային արեւելակողմը կայ մեծ հրապարակ մը, ուր Ռուսները կառուցած են մեծ վարժարան մը. Ռուսաց, Հայոց և Պարսից համար. այս վարժարանի աշակերտաց մէջ մեծ թիւ կը կազմեն Հայք: Հայոց եկեղեցիներն ալ ունին իրենց ծխական վարժարանները, որոնցմէ զատ Հայք ունին վեց մասնաւոր վարժարաններ՝ չորսը օրիորդական: Ս. Սարգսի եկեղեցւոյն մօտ է Հայոց թեմական ժառանգաւորաց վարժարանը, որուն յիսնամեայ յորեւանը կատարեցին 1888ին. վասն զի հաստատուած է 1837ին Էջմիածնի Սիւնհոդի հրամանով, և փակուեցաւ 1869ին, վերոսին բացուեցաւ 1877ին նոր շէնքով վերայիշեալ եկեղեցւոյ մօտ. յորեւանին ի յիշատակ ահուշները հրատարակեցին ինամըզով այս վարժարանին պատմութիւնը, որուն վերնագիրն է «1837—1887, Յիսնամեակ Հայոց հոգևոր քեւակաւ Գարսնոցի Երեւանայ». սպ. Տփղիս, 1888: — Քաղաքիս մանրավաճառութիւնը՝ ընդհանրապէս Պարսից ձեռքն է, հնավաճառութիւնը՝ Հրէից, այրեզարծութիւնն և կառավարական պաշտօնէութիւնն՝ Հայոց:

Վաճառքներ կը բերուին Նիժնի-Նովորոտէն, Տփղիսէն, Օտէսայէն և Մոսկուայէն, որոնց հետ հազարակցութեան մէջ է քաղաքս կանոնաւոր ճանապարհներով և մանաւանդ այժմ՝ նոր կառուցուած երկաթուղիով: Պարսկաստանէն, Թուրքիայէն և Եւրոպայէն շատ քիչ քանակութեամբ վաճառք կը ներմուծուի՝ մաքրատրոց բարձրութեան պատճառաւ: Երեւան ունի երեք հասարակաց պարտէզ՝ զանազան անպտուղ ծառերով զարդարուած, որոնց մէջ կան նոտարաններ և լապաներներ, ուր արք և կանայք կը զրօսնուն մինչև կէս գիշեր: Ռուսի նաև վարչական ժողովատուն, հաշարար գատարան, քաղաքապետութիւն, գաւառապետութիւն, ուստիկանատուն, հիւրանոց, պանդոկ, տպարան, գրաւաճառատուն, և այլն: Քաղաքիս Հայոց տպարանէն լոյս տեսած է Պատկ քաղաքական լրագիրը 1879ին և Առողջապահական րեքրը 1881—2: — Երեւանայ գաշաի մէջ եղած Արխերերոյ (Ղանլի-Թափայ) անունով բլրակի գագաթը հին բերդի մէջ 1891ին, Նորքցի Պ. Նազար Մատթէոսեանը գտեր է չորս սող բեւեռածե արձանաղբուրթիւն մը, զոր հնադէս Պ. Նիկողայիս 1894ին հրատարակեց ասանձին տետրակով սուտերէն ծանօթութիւններով: — Քաղաքիս խաներէն շատերը Հրազդան գետէն տուներ հանած են, այս ասուներէն գլխաւորը Մամբի՝ կը համարուի թէ հանած է Բագրատունեաց Յովհաննէս թագաւորի օրով Ապիրատ իշխանը, ինչպէս Միխիթար Ալբիվանցի պատմչի հետեւեալ խօսքերն ալ կը հաստատեն. «ՆՁե (= 1036) Ապիրատ իշխան ԺԲՌ. հեծելի (12000 ձիաւոր զօրաց սպարապետ) շինեաց զԿէշատուս և ևհան գառուն Երեւանայ»: Երեւանայ գաւառը և քաղաքը հարուստ են զանազան բերքերով և պտուղներով: Նշանաւոր են տանձն ու ինձուրը, ծիրանն, դեղձը, սերկիւիլ, սալոր, կեռաս, նուռ, թուզ, սեխ՝ որուն ահականերուն մէջ ազնուաղոյնը և համեղն է Դարմա ըսուածը: Հոչակուած են նաև Երեւանայ մեծ և քաղցր ձմերուկները և մանաւանդ խողոզն՝ որուն որթերը ձմերը հոգի ներքև կը թաղեն: Խաղողի բազմաթիւ տեսակներէն, հետեւեալ երեքը ընտրեւագոյն կը համարուին, Աւրբի՝ փոքր







Հատիկներով, անկորիզ, սակեզոյն, նուրբ կեղևով և շատ համեղ, Գիշմիշ (զինձ) մեծ ու կլոր հատիկներով ու անկորիզ, և խաբուռն-փարմազ բուսածը. առնցքէ գաս կը յիշէ Աթմանասեանց՝ Աշխարաշ, Գառաւորմակ, Սխտորակ կամ Թիորքի գոշրոշը, Երշիլու և այլ տեսակներ: Տեղւոյս պատուական գինին Էջմիածնի և Կախէթու գինիներու չի հաւասարիր. Տիւզուա՝ համովը Մատերայի և Պորթոյի գինիներուն նման կը գնէ, իսկ Թուանֆոր սրբնչեղի ածականն կուտայ Երեւանայ գինոյն: Հայք բաղաբի թագերուն անուամբ կ'որոշեն այգիները և բնաբնակոյն կը համարին Նորքի այգիները: Այս կողմանց ամէն տեսակ պիտանի բուսոց վրայ կարեւոր տեղեկութիւններ գրելով Պ. Յովհ. Աթմանասեանց՝ հրատարակիր է Երեւանայ մէջ 1881 թուին, Երեւանի եանակի բուսակառոյթիւնը վերնագրով: Օտարագիւններէն ալ գերմանացի Քոխ բժիշկը և բուսաբանը Երեւանայ նահանգի ուրիշ վիճակներէն գաս, առանձին բններ է 1837 տարոյ մոյխ ամսուն մէջ Երեւանայ սահմանները: Երեւանայ բերոց ու պտոց տոստութեան համար հասարակաց առածը կ'ըսէ. « Երեւանայ Չանգուն բերում էր տարեկան մի փութ սկի. իսկ Էջմիածնայ գետը (Քասաղը) բերում էր մի փութ արծաթ ». որ է տարեկան արքունի հարկը. բայց այժմ հարկաւ ետպատիկն ու քառապատիկը, որովհետեւ ժողովուրդը բազմացեր, և ինչպէս սովորաբար կ'ըսեն, « 12 տեսակ սերմ են ցանում Արարատեան դաշտում »: Երեւանայ բերքերէն յիշենք նաեւ ցորենն, գարի, բրինձ, կաւաւա, հաճար, բամբակ, և այլն. ինչպէս նաեւ արջու, դայի, ազուէսի ու նապաստակի մերթեր: Երեւանայ վաճառականութիւնը կը կայանայ գլխաւորապէս բամբակի և քիշմիշի առեւտուրի մէջ: Բամբակի մշակութիւնը գաւառին ու նահանգին գլխաւոր հարտութեան աղբիւրն է. մեծ քանակութեամբ կը հաւաքեն բաղաբի մէջ և անկէ կը տանին Տփղիս, Մոսկուա և ուրիշ տեղեր: Գնողները կամ արտահանողները կը լինին ըստ մեծի մասին Ազուլեցի հայ վաճառականներ, որոնք աշխան սկիզբը գալով ալստեղ, կը մնան ամբողջ ձմեռը և բամբակ կը հաւաքեն: Երեւանայ բամբակի տեսակը բաւական ազնուացաւ երբ սկսան Ամերիկայի մաքուր սերմ ցանել. այս բանին առաջին պատճառ եղած է Տաճկաստանի Սէլան Օղլի անուն հայ վաճառականը, որ բաղաբին մօտ հիմնեց բամբակ մաքրելու գործարան մը: Քիշմիշը Երեւանայ արդիւնաբերութիւն չէ, կը բերուի Պարսկաստանի Ռեմի բաղաբէն և Երեւանցիք գնելով ցքի կամ օղի կը բաշեն: Այստեղ կը պատրաստեն նաեւ թթի օղի:

Որչափ որ զեղեցիկ և առատ են Երեւանայ բերքերը և ջուրը բաւական շատ և բարձրաւած, սակայն կարելի չէ փափազելի բնակավայր մը համարել բաղաբը, իրեն ունեցած ամառան և ձմրան ծայրայեղ եղանակաց համար, վասն զի անտանելի են սոթը և ցուրտը: Թէպէտե միջին հաշուով 20 Ռէոմ. կը համարուի ամառան ջերմութիւնը, բայց սակայ շուր անգը 30° ք կ'անցնի, կը հասնի երբեմն մինչեւ 35° և բերդին սպաննելու վնասութեան համեմատ մինչեւ 38°. նոյնպէս ձմեռ ժամանակ եւս թէ և միջին առաւման կը համարուի 6-10°, բայց սակայ կ'իջնէ 20° էն ալ վար և մինչեւ 24° և 26° եւս: Երբեմն կը հանդիպին յորդահոս անձրեւներ և կ'ողողեն այգիները ու բնակարանները. ինչպէս եղաւ 1873 տարոյ օգոստ. 14ին, և շատ փնասներ հասուց, տուներ անգամ քանդելով և մեղքնելով մարդ ու անասուն: Բնակիչք ջերմ եղանակին օդափոխութիւն կ'ընեն Մաղկունեաց ձորը (Տէրէշիշէկ): Երեւանայ ոչ բարեխառն կլիմայի պատճառաւ, բնակիչք չեն բազմանար, և մանուկները փոքրիկ հասակի մէջ բազմութեամբ կը մեռնին: Գալիլի են տեղւոյս Հայք իրենց հիւրասիրութեամբ և եկեղեցասիրութեամբ. իսկ Հայոց վաս կամ ցաւալի սովորութիւն կը համարի, ազգային տեղագրոց մը, երիտասարդներու երկար ժամանակ ամուրի մնալն, օրիորդներէն գրամօթիս պահանջուիլն և ամէն տեղ սուտերէն խօսելու նորասիրութիւնն: Իրենց խօսակցութեան մէջ կը գործածեն պարսկական, թրքական, սուտական և ազաւազեալ հայկական բառեր: Արք միջահասակ են, սեւ և կապուտակն, ուժեղ, զիցցալն և ծածկա-



միտ. կանայք տղեզ, սոճոյն և նիհար են. արք կը հագնին ուռաական և ևւրպական ձեւով. կանայք շրջագգեատ, բայց զլուինին պարզ կապուած ետգմաներով, կը գործածեն նաև ապարանջան, սսկեմանեակ, ճակատնոց, մատանի և այլն: Հայք սոհասարակ ևւրպական սեղանի վրայ կը ճաշեն, կը խմեն պատուական զինի Երեւանայ անուանի խորովածի վրայ. կեանքերին հանդիսա է և կենցաղավարութեան մէջ ուրախ են:

Երեւանէն ունեցիւր ենք բաւական նշանաւոր մարդիկ, ինչպէս Սիմէոն կաթողիկոսը. 1763 թուի ապրիլ 20ին, որ վախճանելով 1780 թուի յուլ. 26ին, թաղուած է Ս. Գալիանէի վանոց տաճարի գաւթի մէջ: Ասոր օրով բացուեցաւ Էջմիածնի տպարանը և զանազան գրքեր հրատարակուեցան: Երեւանցի էր նոյնպէս Էփրեմ կաթողիկոսը՝ 9 նոյեմբ. 1810, որ վախճ. 16 յուլ. 1835, և թաղուած է Էջմիածնի միարանութեան գերեզմանատան կեղերնը: Քաղաքէս էր նաև Ռսկան վարդապետը՝ որ 1670 թուին Ամբր. թիւրամի մէջ հաստատեց Էջմիածնի անուանով Հայոց տպարան և ապեց Աստուածաշունչը և ուրիշ գրքեր: Երեւանայ Չորագեղի բնակիչ կարբեցիներէն էր և Յովհաննէս Ը կաթողիկոսը. նոյն տեղէն էր նաև հանրածանօթ վարժապետ Մեարտիք Գաթիկան թաղիաղեանցը, որ զրեց ու հրատարակեց կալկաթայի մէջ քանի մը գրքեր: Քաղաքէս էր նաև սղրացեալ Արաքսի վաղամուսիկ խմբագիրն Սիմէոն Գուլամիրեանց: Երեւանայ Հայոց մէջ իբրև անուանի կը յիշուին Գահրաման աղա Մէլիքեանց Ազամալեանց և Վասիլ Գեղամեանց, առաջինը հարստութեամբ, ազգեցութեամբ և ազնիւցեղովն ոչ միայն Երեւանայ մէջ այլ և բուրբ Ռուսիայ. ասոր բոլորը Վրաց վերջին Աղեքսանդր թագաւորին թագուհին էր, որ մեաւ 1884ին, իսկ երկրորդը անուանի է սոհմային ազնուութեամբ՝ և Երեւանայ քաղաքապետ լինելովն, որուն հայրը սուս կառավարութեանէն ստացաւ ցմահ 25 բուրլի ամուական, Գեղամեան նախարարութեան շառաիղ լինելուն պատճառաւ: — Վերջին գաւրերու մէջ, Երեւանայ սեղհական վիճակը և երկիրը կը կոչուէր Սահարափոս կամ

Սահարի փոս. ինչպէս 1603ին յիշատակագիր մը կ'ըսէ. «Եկի յերկիրն Ալթարատայ, զոր Սահարիփոս կոչեն, և այժմ Երեւան սսկն»: Իսկ այլազգիներէն կը կոչուէր Չոգուր-Սաս: — Երեւանայ աշիմեան նահանգը կամ կուսակալութիւնը ձեւացած է 1867ին, որուն մայրաքաղաքն է Երեւան, և որ կը բաժնուի եօթն գաւառներու. Երեւան, Աղեքսանդրապոլ, Կաթիջեան Կոր-Քայազղի, Սիւրմէլի, Ճարտր-Գարալազղը և Էջմիածին: Կահանդիս սահմանն են Հո.էն Տիգրիսի նահանգը, Հո.էն և Ար.էն Գանձակ, Հր.էն և Ամ.էն Պարսից Հայաստան և Թրքաց Հայաստան: Կը զանուի 38° 50' և 40° 50' հիւսիսային ըայնութեան և 40° 52' և 43° 47' արեւելեան երկայնութեան տակ: Բուր նահանգի բնակչաց թիւն է 670405 հոգի, և Հայք են 375700 հոգի ու կը կազմեն նահանգին ամբողջ ազգաբնակչութեանց մէջ բազմաթիւ տարրը: — Ալթարատ, 299-319: Ճահարառեւեակ, Բ. 134-156: Կոր Հայաստան, 252-255: Գեղարքուեի, 4-24: Փորձ, Բ. ց 230-233: Եւ այլն:

ԵՐԵՒԱՐԻ, ԵՐԵՒԱՐԻ կամ ԵՐԵՒԱՐԻ. — Տուրուերանի հին գաւառներէն մին: Սահմանակից կը կարծուի լինել Մոկաց Առուանից ձորոյն, թոյլմայի Արծրունոյ հեռեւեալ սողերէն. «Գարձեալ գայ (Գաղիկ) ի գաւառն անուանեալն Երեւարի, անու և անդ զերկրն Պաքայ և զՓարսնաց, գայ և ի ձորն Առուանից, անու և զայն ևս ամբոց, և տիրէ գաւառայն»:

ԵՐԵՒԵԼ. — Ալթարատայ վանանդ գաւառի մէջ կը կարծուի լինել նշանաւոր պատմական գաշաս, որ կ'ըսէ Քուզանդ, Արշակ Բ՛ սպարապետ վասակը պատերազմելով Պարսից Հաղարաւտիս զօրապարի հեա, շաա աւար և փիղեր աւաւ: Չորրորդ զարու վերջերն ալ Արշակ Գ և Խոսրով Գ «պատահեն միմեանց ի գաշաին որ կոչի Երեւել, և ասն պատերազմ ընդ միմեանս սաստիկ յոյժ, հարկանի զօրն Արշակայ, մեանի և սպարապետն նորա Գարա Սիւնի ի պատերազմին, և փախտական լինի Արշակ սակաւուր»: Խոր. Գ. 102:

ԵՐԵՒՈՒՄՆ կամ Ս. ՓԻՐՎԵՉ ՎԱՆԵՐ. ՏԵՍ ԱՆԵ:



ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔ կամ ԵՐԵՅ ՄԱՆԿԱՆՅ ՎԱՆՔ. — Արցախի Զրարերդ գաւառի մէջ. կառուցուած է Մաւ սարէն դէպի արեւելք խոնարհուած լեռնաբազկի մը հարաւահայեաց լանջի հարթակի վրայ, որուն սարտար սրբնիմաց կը խոխոջայ Թարթառի օժանդակ Թրդին գետակը: Տաճարը շինուած է չորս սրահերու վրայ փոքր զիւրիւր և անճաշակ սճով: Գրան ճակատակալ բարի և խորանի ճակատը ունի շինութեան վերաբերեալ արձանագրութիւններ, մին՝ ՌՂԽ և միւսն՝ ՌՃԺԳ թուին: Վանքս ունի երկու բարուկիր խուցեր: Արցախ, 232:

ԵՐԶՆԿԱ. Տես ԵԶՆԿԱՅ:

ԵՐԷԶ. Տես ԵԶՆԿԱՅ և ՍՈԳՔ:

ԵՐԷԾ. Տես ԵՂՈՒԿ:

ԵՐԷՅ. Տես ԲԱՂՔ:

ԵՐԷՅԱԳՐԱԿ կամ ԵՐԷՅԱԳԱՐԱԿ. — Գիւղ Չմշկածագու. ունի 34 տուն հայ, Ս. Խաչ աւնունով եկեղեցի և վարժարան: Հողագործ են:

ԵՐԸՆԿԱՆ. Տես ԷՐԸՆԿԱՆ:

ԵՐԸՆԶԻԼ. — Տիգրանակերտի շուրջը գրտնուած գիւղերէն մին. ունի 20 տուն հայ:

ԵՐԶԱ կամ ԵՐԷԶ. — Տուրուբերանի Աշմունիք գաւառի մէջ կը յիշուի այս անուամբ գիւղ կամ քաղաք: Գաղար Փարպեցին կը գրէ վաճանայ համար՝ «Գնայր ի սահմանս Հաշտենից, և հասեալ բնակէր ի գաւառն Արշամունեաց՝ ի գիւղն որ կոչէր Երէզ. կամեցաւ հանդէլ աւուրս երկուս: ... և հաւանեցուցեալ զարսն ի գեղջ Երիզայ.»: Իսկ Ասողիկ ալ կը յիշէ հետեւեալ տողերու մէջ. «Ելանէ (վասիլ կայսրն) ի լեռանն կոհերայ... որ ընդ մէջ Հաշտենից, Ծոփաց և Խորձենոյ, և անաուսս գայ հասանէ ի գաւառն Արշամունեաց ի քաղաքն Երիզայ»: Տես ԵԶՆԿԱՅ:

ԵՐԶԱԿ. — Կը յիշուի Տուրուբերանի Տաբօն գաւառի մէջ:

ԵՐԶԿԱՅՔ կամ ԵՐԻՍՈՅՔ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:

ԵՐԹՈՒՆԵՒՔ. Տես ԵՐՈՒԱՆՔՈՒՆԵՒՔ:

ԵՐԻ-ԳԻՒԼԵԱԹԱՂ. Տես ՄԱՐԻԱԿԵՐՏ:

ԵՐԻԺՈՒ. Տես ՎԱՅՈՅ ԶՈՐ:

ԵՐԻԿԱ. — Հին բերդ վասպուրականի Արբերանի գաւառի, Բերկրի քաղաքի սահմանաց մօտ. զոր Անաւագեցիք առած էին

Բերկրեցոց ձեռքն և Սմբատ Ա թագաւորը նորէն դարձուց իրենց, ինչպէս կը վկայէ Թովմա Արծրունին:

ԵՐԻ-ՀՈՒԱԹԱՂ. — Աւերակ գիւղատեղի Արցախի Խաչնն գաւառի մէջ, Արութիւնաւար գիւղի արեւելեան կողմը, սը կայ հանգստարան և կանգուն եկեղեցի:

ԵՐԻՇԱՏ. — Սիւնեաց Սողք գաւառի մէջ, երբեմն փոքր վիճակ մը ծանօթ էր այս անուամբ Սարգիս կաթուղիկոսի կոնդակի մէջ յիշուած:

ԵՐԻՇԱՏ կամ ԻՐԻՇԱՏ. — Վասպուրականի Արճիշահայկա գաւառի մէջ այս անուամբ գիւղ կամ քաղաք և բերդ կար, որուն աւերակները կը զննն ոմանք Ականցի հիւսիսային արեւմտեան կողմը երկու վերսահաս սպիտակ բլրակի մը վրայ: Շինութեանց հիմունքը սպիտակ քարերէ լինելով, բոլոր քաղաքի յատակագիծը յայտնի որոշ կ'երեւի, փողոցներ, հրապարակներ, տան բակ և սենեակներ: Փողոցները ուղիղ և մէկ չափով ձգուած են. քաղաքը բաժնուած է բազմաթիւ թաղերու: Աւերակացո այցելու ազգային մը կ'ըսէ. «Հայկական աւերակների մէջ առաջին անգամն էի տեսնում ես մի այսպիսի կանոնաւոր յատակագիծ սենցոյ բերդաքաղաք, որի համար մեր պատմութեան մէջ ոչինչ չէ յիշատակուած»: — Մշակ, Ժ. 121:

ԵՐԻ ՎԱՆՔ. Տես ՀԻՆ ԴԱՐԱ-ԲՈՒՂԱՂ:

ԵՐԷՅԱԳԱՐԱԿ. Տես ԵՐԷՅԱԳՐԱԿ:

ԵՐԷՅԱԹՈՒՄԻ կամ ԲԻԻՐՊԻԿ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց այժմեան Չանգեղուր գաւառի մէջ: Ունի 222 բնակիչ, բաժնուած 25 տան:

ԵՐԷՅԱՆՔ. — Կը յիշուի Շատախու մէջ:

ԵՐԷՅԱՇԷՆ. Տես ՍՈԳՔ:

ԵՐԷՅԱՎԱՆՔ. Տես ԵՐԷՅՈՒ ՎԱՆՔ:

ԵՐԷՅ ՄԱՆԿԱՆՅ ՎԱՆՔ. Տես ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔ:

ԵՐԷՅՈՒ ԻԱՄ ԵՐԷՅՈՒ ԳԻՒՂ. — Գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի, Գայրէկէն 1/2 ժամ հեռու արեւելակողմը. ունի 35 տուն հայ կաթուղի բնակիչներ: Այս գիւղս Զաջու իրիցու գիւղէն որոշելու համար, տեղացիք կ'ըսեն Ֆրանկ կամ Սե: Իրիցու գիւղ: Տես ԶԱԶՈՒԿ:



ԵՐԻՑՈՒ ՎԱՆՔ, ԵՐԻՑՎԱՆԻԿ, ԵՐԻՑԱՎԱՆՔ կամ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ. — Կը համարուի լինել Սիւնեաց Բաղը գաւառի Բարկուշաւ վիճակի մէջ: Հ. Ալիշան կ'ըսէ, անայցիբու և անձանօթ մնացած լինելով վանքս վերջին ուղեւորաց, երախապարա պէաք ենք լինել պատմչին՝ (Օրպէլեան, ԺԹ) որ վանացս վրայ հասեւեալ տեղեկութիւնները կու առայ. «Էր վանքըն այն տեղի գեղեցիկ և զարմանաարկ է վերայ բարձրաւանդակի միոջ, շինեալ եւ կեղեցի յանուն սրբոյն Կոթապետի և նորին Երիցակայ ձեռամբ և պարսպեալ մեծամեծ քարամբք, և ի ներս ի պարսպին խցիւնք թուով միայն 40. մշտնջենաւորք, խարազնազգեսաք, լուռք. որք իրբեւ զկանթեղունս մըշտաւառս և անշէջս յիւրաքանչիւր իղի հանազազ աքնութեամբ վառեալք լինէին բոցով շտորհաց Հոգւոյն: Իսկ Երիցակս այս սնեալ էր նախ բազում ամօք (է զարու վերջերը) ի Բաղը գաւառի, ի տեղի մի քարանձաւ. և ապա գնացեալ ի վանս եւրանեւոյն Գիւտայ, և անդ անցուցեալ բազում աւարս անտանելի ճգնութեամբ. և ապա օժանգալութեամբ և հրամանաւ սրբոյ Տեառն Գիւտայ՝ եկեալ ի տեղին յայն 12 կրօնաւորօք և բազում ընչիւք, զորս պարգեւեալ էր Հայրն Գիւտ, շինեաց գեկեղեցին որ կոչեցաւ Կոր Երուսաղէմ: Բայց ուրուկքն որ ի ժամանակին հաւածեալ լինէին յանվայր տեղիս, բնակեցուցեալ էր սուրբ Հօրն Գիւտայ յայնմ վայրի. որք հակառակէին շինութեան Երիցակայ, զոր լուեալ սուրբ Հօրն եկն և համողեաց գնոսա ի խաղաղութիւն. և սահմանեաց զպէտս ընձեռել ի վանիցն բոս չափոյ, և ինքն օր բոս օրէ զործակից լինէր շինուածոյն, և զճաշ շինողացն յղէր: Էւ այսպէս շինեալ տուն Աստուծոյ և կանգնեալ տեղի փառարանութեան, յարգարէ գնա ի բնակութիւն Հրեշտակակրօն անձանց»: Սիւնեաց Մուշէ կախկոտրոսի վախճանէն վերջ (519ին առեկները), աշխարհին տիկինը Մանակիս բաբս ժողովրդեան հետ հրաւիրելով համանուն Տէր Մուշէ Հայոց կաթողիկոսը, իրեն երկրին տեսաւ ինդրեց այս Երիցակը, որ յանձն չառաւ, անոր համար կաթողիկոսը գալով «ի սրահ նորա, և լի սրամտութեամբ ցատու-

ցեալ կնքեաց նշանաւ խաչին, ասէ. Ընդէր այդպէս յամառեալ կաս. զեւ գոյ ի բեղ. սոստեցէ Աստուած ի շարն, և հալածեսցէ: Յայնժամ ընդ բան սրբոյն էլ ծուխ թանձր իբր զփոթորիկ հողմոյ և վերացաւ ի տանէն. և ապա եկեալ երամք սպիտակ ազանեաց իջան ի ցուս սրահին, և մին ի նոցանէ սլացեալ եկն իջաւ ի վերայ Երիցակայ, և շրջէր ի վերայ խոշոր քոսիթային, և նուազ ձայնիս խօսէր մարդկօրէն. Արժան է, արժան է. իսկ բազմութիւնն տեսեալ զայն, մեծապէս զոչէին միարան. Արժան է, արժան է: Չայն տեսեալ սուրբ Հայրն՝ այլ սչինչ իշխեաց ընդզիմարանել, այլ ի գուճս անկեալ առաջի կաթողիկոսին արտասուածոր կականամբ տէր. Կամք Տեառնոյ լիցի և ոչ իմս. ապա տեսալ Տեառնըն զձեռանէն՝ տանի յեկեղեցին, և հանեալ ի բնմն՝ օժանէ զնա մտորապօլիս Սիւնեաց, և բերեալ նստուցանէ յաթոնս: ... Իսկ երանելին Երիցակ կալեալ զաթոնս ամ մի՝ փոխի ի վերինն Երուսաղէմ): — Վանքս և Անարոն վանահայրը կը յիշուին նաեւ Սիւնեաց նոր իշխանաց պայծառութեան օրով 843 թուին: Իններորդ զարուն վերջերը Գեորգ Սիսակեան անուն երիտասարդը, ցանկալով ներանձնական վարուց, կը թողու կինը և ծնողքը և «զգեցեալ մազեղէն խոշոր և զլլլէնս պատառոտունս, զընայր ի մեծ առաքինարանն Երիցու վանաց, առ աստուածազգեաց և սրբափայլ ճգնաւորն՝ մեծ էգոնմոսն թեոքորոս քահանայ, և նա յոյժ ուրախութեամբ ընկալաւ գնա, իսկ իմացեալ մօր նորս և կնոջն և տեսալ զհամարգի իշխանսն Սիւնի, զիմեցին ի վանսն Երիցու. և բազում և զանազան մտղթանօք ջանացին, և սչինչ կարացին գնա շարժել յայնմ կամաց... թողին գնա ի կամս իւր և գնացին»: Որ վերջը երթալով Սեւան Հ. Մաշտոց մեծ ճգնաւորի մօտ և անկէ մարգուելով, զարձաւ գործեալ Երիցու վանքը. երկրորդ անգամ եւս Սեւան երթալով և անկէ զիր աննելով Գեորգ կաթողիկոսի հրամանով քահանայ ձեռնադրուեցաւ և կը միխթարուէր Մաշտոցի թղթերով, որուն վախճանէն վերջը՝ երթեալ «բերէր զուրջանս և զկնկղուկն խոյրակերպ, և զպարե-



գօտ երանելոյն, նշան յանուն Սիւնեաց, և ինքն ընակէր յԵրիցու վանս ընդ Թէս, զորտն հրեշտակակրօն վարուք, և անդէն վախճանեալ, եղաւ սրբանեալ մարմին նորա ընդ երիցս երանեալ սուրբ հօրն Երիցակայ, ի նմին սրբարանի): — Սիւնեաց պատմութեան մէջ, աշխարհին նշանաւոր վանքերէն կը համարուի վանքս, որուն կրօնաւորներն էին խաւակրօն և մշտապաշտօն: Գաւիթ բէկի ժամանակ վանացս մօտ եղած զիւզն կոչուած է կարմիր վանք, հետեւաբար և վանքս, իսկ եկեղեցին՝ Ս. Աստուածածին: Յանկալի էր նորագոյն աեղեկութիւնը հինաւորց վանացս վրայ: — Սխալիս, 280—281:

ԵՐԻՅՎԱՆԻԿ. Տես ԵՐԻՅՈՒ ՎԱՆԲ:

ԵՐԿԱԹԱՀԱՆԲ. — Այս անուամբ բլուր մը կը յիշուի Ազնձնեաց աշխարհի մէջ:

ԵՐԿԱԹԱՀԱՍԱՅ ԼԵՌ և ՁՈՐ. — Կը յիշէ Բուզանդ Այձեաց աշխարհի մէջ. լեռս սահմանակից է Վասպուրականի Ռշտունեաց գաւառի. այս լեռնէն կը հանէին երկաթ:

ԵՐԿԱԹԱՍԱՐ. — Այրարասայ կոտայք գաւառի մէջ, Պաղնի գիւղի մօտ կը գտնուի այս անուամբ բլուր մը:

ԵՐԿԱՅՆ—ԱՐՏ. Տես ՎԱՅՈՅ ՁՈՐ:

ԵՐԿԱՅՆՈՐԿ. — Կը յիշէ Եղիշէ Հայոց աշխարհի ամուր աեղերու հետ, զորս Հայոց նախարարները վարդանայ հետ միարանած ստին Պարսից ձեռքէն:

ԵՐԿԱՅՆ կամ ԵՐԿԱՆ. — Գիւղ Երզնկայի (Քարձր Հայք). 50 տուն հայ և 10 տուն մահմեդական կայ: Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի և վարժարան մը: Հոգադորձ ու կտաւադորձ են:

ԵՐԿԱՅՆ ՄԱՆՍՈՒՐ. — Կարնոյ գիւղ, 15 տուն հայ և 20 տուն մահմեդական բնակիչներով: Հոգադորձ են:

ԵՐԿԱՆ կամ ԵՐԿԱՆ ԸՆԿՈՅՉ. — Գիւղ Չարսանձագի խողպղ գաւառակի, միայն 10 տուն հայ կայ: Եկեղեցին է Ս. Կարապետ անուն վանքը, որուն շէնքը հոյակապ է և մեծագործ. բայց քայքայուած են քանի մը մասերը: Վանացս ձեւն, ընտիր ճարտարապետութիւնն և քանդակները Եւրոպացի ուղեւորաց անգամ հիացումն պատճառներ են: Տաճարը Ս. Աստուածածնի անունով է և գրան

ճակատին վրայ կայ շինութեան յիշատակարան մը Հայոց ՆՄԻ թուականաւ: Քրդերը յափշտակած են վանացս կալուածները:

ԵՐԿԻ կամ ԵՐԿԻ. — Գիւղ Բարեղի արեւմտեան հիւսիսային կողմը, 3 ժամու հեռաւորութեամբ. ունի 56—60 տուն զուտ հայ հոգադորձ բնակիչ: Ժողովուրդն ընդհանրապէս մարմնեղ՝ չարքաշ ու ստիպն է: Գիւղին զիրքն բարձր բլլալով՝ գրեթէ բնա ջրարբի հող չունի. բայց՝ ընդհակառակն՝ ցորենը շատ ընտիր է և շրջակայ զիւղերու ցորենէն ծանր կը սերուն պատճառաւ՝ միշտ աւելի կ'արժէ և նախապատիւ է հաց շինելու համար: Գիւղս ունի նաև ջրաղացքի քար կարելու նշանաւոր քարահանք մը, որիկ կը տարուի նաև կարնոյ և մերձակայ նահանգաց բլուր ջրաղացներու համար: Կայ Ս. Լուսաւորչի անուամբ եկեղեցի մը և վարժարան՝ 45 աշակերտներով:

ԵՐԿԵՍՏ. — Գիւղ կարնոյ. ունի 10 տուն հայ և 25 տուն մահմեդական: Հայք հոգադորձ են, և ունին Ս. Հրեշտակապետ անուամբ եկեղեցի մը ու վարժարան:

ԵՐԿՈՐԵԱԿ կամ ԵՐԿՈՐԵԱԿ ԼԵՌ. — Առաջին Հայոց մէջ և կեսարիա քաղաքի մօտ է երկրագաթ լեռս, որուն այլազգիք Այխուզը (Տես) կ'ըսեն:

ԵՐԿՈՒ ԳՈՄԵՐ. — Ինձիճեան կը յիշէ գիւղս, Տուրուբերանի Տարօն գաւառի մէջ, Մշոյ արեւմտակողմն:

ԵՐԿՈՒ ԽՎՆԵՐ. — Եսյնպէս Ինձիճեան կը յիշէ այս անուամբ գիւղ Տարօնի մէջ:

ԵՐԿՏԱՍԱՆԵՅ ՎԱՆԲ. — Սիւնեաց աշխարհի վանքերէն մին:

ԵՐԿՏԱՍԱՆՅ. — Այսպէս ևս գրուած է Սիւնեաց (Արեւիք) Եկաւաստան աւանի անունն:

ԵՐԵՋԱԿ. — Սիւնեաց աշխարհի գաւառներէն մին, որ համանուն գետոյն ընթացից համեմատ երկնցած է հիւսիսէ դէպի հարաւ: Սահմանքն են արեւելքէն Գողթն, արեւմուտքէն Ճահուկ և Դախճաւան: Հարաւէն Երասխ, հիւսիսէն Ծղուկ և Ճահուկ: Օրուպէլեան պատմիչը յիշելով աշխարհին անուանի բերդերը, կը յայտնէ, թէ «մի ոմն ի կանանց նահապետացն (Սիւնեաց) Երեւելի անուն շինէ և զանհնարին ամուրն Երբն»



ջակ, յիւր անուն՝ բերդն և գաւառն կոչի Էրնջակայ, և զննն ի նմա տուն գանձու և հարկաց աշխարհին»։ Իւր ամուր զիրքովը շատ անգամներ փրկութեան և կորստեան պատճառ եղաւ. վասն զի երբեմն պատե-  
րագմի վտանգներու միջոց իւր մէջ կ'ապաս-  
տանէին իշխանները և ժողովուրդը ու կ'ա-  
գատէին. և երբեմն ալ մասնութեամբ կամ  
բոնութեամբ թշնամիներէն բերդի մէջ ամ-  
բացողները շարաշար կը պատուհասէին շատ  
արիւն թափելով, ինչպէս Յուսուփէն՝ Ա Սըմ-  
բատի ժամանակ, Լէնկթիմուրէն և ուրիշնե-  
րէ. որոնցմէ վերջապէս բոլորովին քանդուեր  
է հոչակաւոր բերդը։ — Յուսուփ բունաւորը  
բասմենի ռճրագործութիւններով գաւառէս  
մեկնեղէ վերջ, Գողթան ամիրաները Էրնջ-  
ակայ ափրեցին. յետոյ երկիրը խաղաղած  
միջոց ջանացին Սիւնեաց իշխանները գրաւել,  
և երբ ամիրաները չէին ուզել տալ, Հայք  
սկսան պատերազմով ափրել և ամիրային  
զօրաց յաղթեցին։ Այս պատճառաւ գաւա-  
ռանութեամբ կ'սպանուի Սիւնեաց նախա-  
գահ իշխանին վասակ եղբայրը, որուն մա-  
հը սղալով պատմիչը, կը մտնայ յաւելու  
պատերազմին վախճանը, արդեօք Սիւնեցիք  
ափրեցին գաւառիս թէ ոչ։

Կրօնական տեսութեամբ եւս նշանաւոր  
եղած է Էրնջակ, նախ ունենալով երբեմն  
առանձին եպիսկոպոս՝ թէև ոչ օրինաւորա-  
պէս, ինչպէս կը յայտնէ Սարգիս կաթողի-  
կոս ԺԱ զարու սկիզբները. բայց որոշ չի  
գիտցուիր երբ սկսած է գաւառիս եպիսկո-  
պոսութիւնն։ Վերայիշեալ կաթողիկոսը խա-  
փանելով գաւառիս եպիսկոպոսութիւնն՝ զայն  
Տաթևու մեծատարած թեմին հետ միա-  
ցուց. բայց զարձեալ վերջը եպիսկոպոս-  
ներ եղած են, որոնք ըստ պատմչին պա-  
րականոն էին։ Վասն զի ոմն Յովնակեկոս  
Ապրակունեցի, Սեդրաքայ երիցու որդին,  
ԺԳ զարու կէսէն վերջ, երթալով Կոստան-  
զին կաթողիկոսին «և պատրեալ զնա խա-  
բող բանիւք, ձեռնադրի եպիսկոպոս, և զայ  
յԷրնջակու վանս, յօղելով պատճառս այս-  
պիսի. թէ և այս ամոռ է եպիսկոպոսաց,  
զի զոն աստ գերեզմանք հայրապետաց. որք  
էին պատահմամբ եկեալ վասն ամբութեան  
բերդին, ի ժամանակս եպիսկոպոսացն Սիւ-

նեաց, անպ վախճանեալ։ Եւ թիկունս ա-  
բարեալ յայլազգեացն հազարապետ մի,  
բունարար յափշտակեաց զԷրնջակ գաւառ.  
վասն որոյ ելեալ եպիսկոպոսացն Տէր Սարգ-  
սի ի Նորավանից և Տէր Յովհաննէս ի Տա-  
թևոյ», կ'երթան Կոստանդնի յաջորդ Յա-  
կոբ կաթողիկոսին, եղածը կ'իմացնեն, և  
անկէջ արգելական զիր աննելով, կու տան  
Պոսշ քաջ և հզօր իշխանին՝ որ պաշտպան  
էր եպիսկոպոսին, և անկէ հրաժարականի  
ձեռագիր կ'ընդունին. յետոյ բռնելով Յով-  
հաննէս եպիսկոպոսը, վրայէն զգետար և  
կարգը կը հանեն։ — Գար մը վերջը Ս. Կա-  
րապետի վանքը նորոգուելով կը թուի թէ  
միճակին առաջնորդարան եղած է, և ոչ ե-  
պիսկոպոսարան. բայց տեղւոյն կրկին վե-  
րաշինութեանն վերջ, ԺԷ զարու կիսուն,  
զարձեալ կը յայտնուին Էրնջակայ եպիսկո-  
պոսներ, որոնք միանգամայն առաջնորդ ե-  
ղած են Ս. Կարապետի վանաց։ — Էրնջ-  
ակայ երկրորդ կրօնական նշանաւոր երե-  
ւոյթն ալ է Մխարանոյ կոչուած Հայոց  
ընկերութիւնը և անոնց կրօնաւորները, ու  
րոնք յարած էին Քարողոզաց կամ Գամի-  
նիկեանց կարդին։ Ասոնք որովհետև մա-  
սամբ մը հայկական ծէսերը փոխած էին  
լատինականի, ազգայնոց ասելի զարձան,  
և այս պատճառաւ ի սկզբան շատ անպա-  
տեհութեանց և խոտմութեանց առիթներ ե-  
ղած են, եթէ անաչառութեամբ քննենք,  
ոչ միայն լատինածէս հայ Մխարանոցաց՝  
այլ և հայածէս ազգայնոց կողմէ։ Յետոյ  
այս ընկերութիւնը հաստատուելով, Հով-  
մայ Քահանայապետի հաճութեամբ առան-  
ձին եպիսկոպոս եւս գրուելով՝ յատուկ  
գաւառ ունեցան Մխարանոցները Նախիճե-  
ւանեան անուամբ։ Այնուհետև հանդարտ-  
րէն սկսան հովուել իրենց հօտը, չորս գա-  
րէ աւելի, սակայ նեղութիւններ եւս կրելով  
ազգայիններէ ու այլազգիներէ։ Պարսից և  
Օսմանցոց բանակներէն երկիրը բոլորովին  
աւերած միջոց, ասոնք ալ գաղթեցին այլ  
և այլ հեռաւոր կողմեր։ Ասոնց միջէն ե-  
ղած են առաքինակրօն, զիտնական և զոր-  
ծունեայ մարդիկներ՝ որոնք մինչև անգամ  
Պարսից Շահերու զոնէն գետապանութեամբ  
զրկուած են եւրոպական տէրութեանց և



Հստկմայ գոները, և փոխադարձաբար: Մեր նիւթէն գուրս ելած կը լինինք, եթէ երկաւրենք մեր խօսքը այս Միտրանոզաց նկարագիրն և դարձունէութիւնն աստ զնելով, որոնց վրայ փափագողները կրնան ընդարձակ ծանօթութիւն անուել Հ. Ալիշանի Միսական գրոց 381-408 էջերու մէջ ամփոփուած և հմտութեամբ գրուած գրուագէն:

Երնջակ տարածութեամբ այնչափ մեծ չէ, վասն զի միայն զեռ մը ունի և մանր ձուրակներ, բազմաթիւ վիճակներու չի բաժնուիր, մանաւանդ որ երկրին մեծ մասը կը գրտեն լեռանց սարերը. միայն արեւելահողմը, Բրուտաձորի սահմանակից կայ զեռակ մը, որ կը ձեւանայ երկու ախոնքներէ՝ որոնցմէ մին կը կոչուի Ժարածոր: Իսկ լեռներէն յիշելու արժանաւոր են Երբակ տաղ, Տաղի տաղ և Պաղլը գոյաւ — Գաւառիս զիւղերը, Սիւնեաց ամտոռն Նին ցուցակի համեմատ, որովհետեւ Գողթան հետ խանն էին՝ հոն նշանակեցինք. իսկ հոս կը զնենք այժմեան վիճակագրութենէն մեզ ծանօթ եղածներու անուանք, սկսելով հիւսիսէն զեռոյն ընթացից համեմատ և աւարտելով զէպ ի հարաւ՝ մինչև Երասիս:

- Լեւրամաղ
- Արաւսեակ. Արաւիս
- Զուվալս
- Ղազանճի. Շահկերտ
- Թէյվալ
- Անգուր Վերին
- Միջին
- Երբին
- Շուռոթ. Շուռութ
- Գաղ կամ Կեալ Ժարածոր
- Փարաղաշտ. Փորաղաշտ
- Խօշկաշէն
- Խան-աղս
- Նորաշէն
- Խաչափարախ
- Սալիմաղ
- Պանանեար. Ապարաներ
- Քունա
- Ապրակունիք
- Գզըլճա
- Արագին

Ճամալտին-Պաշ  
 — Եախ  
 Քիւզնիւտ. Կզնուտ  
 Զուղայ  
 Միլախ կամ Միլան

Էւ Մագրա, Բերդիկ, Տարամարց կամ Թագաւորանարց, և այլ աւերակներ: Հ. Ալիշան՝ գաւառս երկը մասանց կը բաժնէ. Ժարածոր, Երեւակ առանձին և Զուղայ: — Երնջակ գաւառը Նախիջևանի մասն լինելով, անոր նման իր արգասաւոր ծոցէն յտաջ կը բերէ և ժիր մշակին կը պարզեւտեակ տեակ տաւա բարիքներ, բաց ի բանի մը լեռնային մասերէն, որոնց ցուրտ կլիմային չեն զմանար ջերմով աճեցող բերքեր: Տեղւոյս երկրագործութիւնը բաւական լաւ լինելով, կ'ստացուին առատ և մաքուր տեակ ցորեն, գարի, բամբակ, հաճար, կնջիթ, կաւահատ, սիւս, ձմերուկ, վարունդ, և այլն: Ընտիր է ծիրանը կամ գամնը, նոյնպէս տեղ տեղ նուսն ու թուզ, սալսր, զեղձ, տանձ, խնձոր, սերկեխի, ընկոյզ, կաղին, և այլն: Այլիներ շատ կան, գոյնըզգոյն զինիներով: Գաւառիս մէջ կը գտնուին նաեւ Հայաստանի դաշտաց և լեռանց մէջ գտնուած ընտանի և վայրենի անասնոց, զազանաց, թռչնոց և սողնոց գրեթէ ամէն տեսակները: Երնջակայ գաւառի մէջ ցարդ յայտնուած հանքերն են՝ սիւի, արծաթ, պղինձ, կիր, կայծքար, ջրազացաքար, ածուխ, և այլն. ինչպէս նաեւ տեղ տեղ տեակ տեսակ հանքային ջրեր:

Երնջակ զեռոյն ձախ թեւի վրայ, Նորաշէն զիւղէն երկու վերտ հետու կը գրտնուի, գաւառին հոշակաւոր և ըստ պատմւչին «աննկարիկ սմուրե» կոչուած Երեւակայ բերդը, սեղացած քարալեռան մը վրայ բարձրացած: Ամրոցիս զլիէն անցած գաւնազէտ և քստմենլի անցից յիշատակը զմարդ կը դարհուրեցնէ: Երբեմն Սիւնեաց պայազատներու հարկաց և զանձուց տուն եղած է, և յետոյ, ինչպէս կանխաւ ըսինք, շատ անգամ բազմաց արգաստանարան մինչև Ժէ գար: Պատմութեան մէջ տաջին անգամ նշանաւոր կը հանդիտանայ Յուսուփ բնաւորի պաշարմամբը և Բագրատունի Սրբ-



բառ բարեպաշտ թագաւորի սղբալի կատարածովը: Նոյն ժամանակները Սիւնեացի իշխանները և թագաւորի եղբայրը, տեղւոյս ամբուլթեան վրայ վստահացած, իրենց զանձները և զանձերէն աւելի սիրելի օրիկները հոս ապահոված էին, զգուշութեան համար կարգելով բաւական թուով պահապաններ: Անպով ստիկանը հոս զիմելով, երբ պաշարմամբ և պատերազմով չկրցաւ արիւնի, խորհեցաւ Սմբատ թագաւորի ձեռքով (ինչպէս իջուցիւր էր զինքը կամովի Արտազեկեցի ամբոցէն), այս ամբոցին ևս արիւնի. և բերպապահները թող շատլով աւանց աչքերուն զիմաց բերպին ստորաւր, անհարին տանջանքներու կ'ենթարիէ զթագաւորը, որ մեծ համբերութեամբ և սուրբ հաւատքով խոստովանական մահուամբ կը վախճանի: Անորէն ստիկանը Սմբատայ կեանքը զրաւելէն վերջ, որչափ և բերպի պաշարումն ու պատերազմը կը սաստկացնէ, առումն անհարին կը լինի, մինչև որ աւմնահաս և արագահաս նենգութեան ու մատնութեան մեքենաները թշնամին յանկարծ մերկաղէն զէպի ներս խոժել կու տան, ահարեկելով և անհարին դառնութեան սուգի մէջ համակելով մէջինները, թշնամին՝ անպիտան և սոցի մարդիկ սրով կտորելէ վերջ, առոյցները ու զեղեցիկները զերեց, նոյնպէս մեծատանց կանայքը ու մանուկները: Մինչև ժԳ զար, տեղւոյս զէպերը անձանթ իր մնան, նոյն միջոց թաթարաց կընելէն առաջ՝ Պարսից արիւնիք կամ սուլտանը, Երնջակայ բերպը, ճահուկ և անոնց սահմանները պարպեց լոյսկոյսմ (Օրբելեանցին, որուն որդիքը թաթարաց մօտ շնորհ գրան և ժառանգեցին: կը թուի թէ քրիստոնէից ձեռք մնաց ամբոցս շատ ժամանակ, վասն զի Միսրանոցները վստահարար կը բնակէին գաւառիս զիւղերու մէջ մինչև ժԳ զար, այս բանս կը հաստատէ 1358ին զարած կիսեղծ յիշատակագիր մը, բնելով. «Երնջակայ Սարգիս ի բերպ Երնջակայ, և շատ զեղեցիք տապալեաց վասն մեղաց իմոց, և զորս զերի են բերել ի բերպ... բազում աշխատութեամբ ու ընչխաբ թափեցի զգիրքս»: Ժամանակից Միսրիմար Ապարանցիի համեմատ, զոր զապար Միս-

րանոցաց ձեռքը ևս եղած է. վասն զի Մագաբիա Ղրիմեցւոյն համար կ'ըսէ, թէ հեռը ասնելով «զմանս ի յաշակերտաց Սարգիս վարդապետին ի բերպն Երնջակայ, և ևս ահացուցանել զնոսա չարչարանօք մահու, զի ուրացին զճշմարտութիւն, և ապա տարեալ զնոսա ի վանս իւր՝ լլկեաց զնոսա բազում չարչարանօք և փեսեաց զամենայն հերս նոցա»:

Քիչ տարիներ վերջ անտոիկ բերպիս վրայ հասաւ Լէնկթիմուրի հրօսակախումբը 1387 տարւոյ զարունը, առաջնորդութեամբ Մեհմեդ Տերպիշ Պերքասի. յետոյ օգնական և կան Ագրապոյի որդին թիմուր խօձայ, և ապա Միսրան Շահ՝ որ շատ ամիրներ պաշարելով նստաւ բերպի շուրջը, վասն զի պաշարուողներէն ոչ միայն ընդդիմութեան այլ և ընդդիմամարտութեան հանդիպեցաւ. որովհետև անոնց արտաքուստ օգնութեան հասան Վրաց Գէորգ թագաւորը Ալանաց (Օսից) օգնութեամբ և ուրիշ իշխաններ. թագաւորը յաղթահարեց աշխարհաւեր բնաւորի որդւոց բանակը բերպի մօտ, ազատեց անոր մէջ ապախնած թիր կամ Գաներ անուն բերպապահը, որ ըստ սմանց Պագասաուս իշխողի Ալմա ճեղայիրեանի որդին էր. բայց կը կարծուի ըլլալ Գողթան աէրը, վասն զի Վրաց պատմիչ մ'ալ զանիկա աէր ճալթաթայ կը կոչէ և կ'անուանէ թիր Սոյտան: Մեր տարեգրիներէն մին 1391ին համառօտիս կը գրէ. «Էր սուլթան Ահմաթ թի որդին Գայիթի յԱլանայ բերպն, և Վրաց թագաւորն եկն ի վերայ բերպին և էա. սուլթան Գայիթն տարաւ ի Տպղիս»: Լէնկթիմուր այս բանս լսելով և բարկացած հրամայեց ձեռով պատմել թուր և փախտական զօրախմբները, և տուգանք անուլ աւանց ձիերը և զինուորաց բաշխել. վարձատրեց իրեն Ագրապէրը թուր, որ պատերազմին մէջ սպաննած էր Շարէի Սիաի Ալի անուն իշխանը: Երնջակեցոց զիմակալութիւնն աւելց կրեք տարիէ աւելի, պաշարողներուն օգնութեան հասան Լէնկթիմուրի նորանոր զուգերը, որոնց մէջ էին նաև իրեն մէկ ուրիշ հոշակաւոր որդին Շահ-Ռուս, և Ֆիրազ Շահ և ուրիշներ. բայց ասոնք զեւ չհասած, սպասելով բերպի մէջ տակ-



վեք և նոյն խոյ մորթի և նոյն տեսակ բաներ, զորս ուրիշ բան չըլլալով կ'ուսէին, ստիպուեցան անձնատուր ըլլալ: Տարիներ վերջը, Լէնկթիմուր Աղուանից կողմերը գացած միջոց, տեսնելու եկաւ ամրոցիս՝ որ այնչափ նեղեց իւր զօրքերը, հետը բերած էր նաև իւր տիկինները ու սիրելիները. ելաւ քարալերին մինչև գագաթը, ամէն բան խնամքով քննեց և զարձաւ: — Ասոր մահէն վերջ Գարագոյնունու թուրքերը, չի գիտցուիր ինչ կերպով, յաջողեցան ձեռք ձգել բերդս թաթարներէն, և հոն ամրանալով պատերազմաւէր խոկեակեր Գարա Եռսուֆի սրբին՝ իրեն վրայ երբ Շահ-Ռուհ եկաւ (1435) և բերդը մեքենաներով պաշարեց, փակչելու հնարք գտաւ, թերևս մատնութենէ ալ կատկածելով: Խոկեակեր ուրիշ ասպատակութիւններէ և արիւնհեղութիւններէ վերջ, իրենները իրմէ զոռելով գնացին Ճիւնիշահ եղբորը մօտ, և «Ինքն մնացեալ սակաւ արամբ՝ մագապուրծ եղեալ յեղբորէ իւրմէ, գաղտագողի երթեալ յամուրն Երնջակու ձմեռն մի ըման անպ անցոյց զկեանս իւր ի բերդին, արբեցութեամբ: Խոկ եղբորն շրջապատեալ պաշարեաց զնա զօրօք իւրովք՝ մինչ ի յեղանակ զարնանային ժամանակին, ամրոցս և բնակութիւնս շինելով շուրջ զամրոցան: ... Եւ էր Աքան գարայ սրբի մի, Շահնարար անուն, միաբանեալ ինքն և մայր իւր և տասն զօրեղ զօրականս և քաջ մենամարտիկս, և ի գիշերի երթեալ զաին զնա ի քուն, արբեալ ի վինուոյ, հանեալ զուրս իւրեանց սրախողխող արարեալ սպանին զնա, ոչ գիտելով բարեկամաց նորա ... և զզուրս նորա հասեալ ետուն տանել զնա առ եղբայրն իւր Զհանշայ, որ շուրջ նստեալ պաշարէին զնա. և նորա տեսեալ ուրախութիւն մեծ արարեալ և նաւակատիս կատարեալ՝ փառս տային Աստուծոյ, զի զթշնամիս իւրեանց՝ ծնեալ սրբին ի նմանէ սիրեցեալ՝ սպան, և ոչ ինքեանք սպանին զնա. և բարձաւ չարն ի միջոյ»։ այս զէպքը հանդիպեցաւ 1437ին: Յայտնի է թէ անկէց վերջ ևս բերդը մնաց նոյն թուրքմաններու ձեռքը, բայց չի գիտցուիր մինչև երբ 1480ին տեղւոյն տիրող կը յիշուի ոմն Սեյտի Ալթիկ: ԺՉ

գարու մէջ կը յիշուի բերդս վենետկեցիներէն Ալթեմայ, Լիեճիս և Ալիկրիս անուանակոչութեամբք: ԺԽ գարու սկիզբը Շահ Աբասի Օսմանցոց վրայ ըրած արշաւանքներու միջոց, Երեւանայ կուսակալ Ամիր-գիւս Խանը (1603ին) կը նստէր Երնջակայ բերդին մէջ, և երբ լսեց Օսմանցոց Գեղամայ երկիրը ասպատակելը, անոնց վրայ զրկեց Գատարէկը և վանեց կոթայ սահմանները: Հաւանօրէն վերջին գարուց մէջ ևս զանազան զէպքեր հանդիպեցան բերդիս, որուն մէջ պահապաններ կը գնէին Եստիճաւանի կողմնակալները, մինչև որ համանուն քաղաքի հետ բերդս ալ բոլորովին ամայացաւ. բայց ամայանալուն կամ վերջին լըման զէպքը անծանօթ կը մնայ, միայն հաւանական կը թուի թէ սա ևս Շահկերտի և ուրիշ մերձաւորներու հանդոյն, Եստիր Շահի ժամանակ և անոր մահէն վերջ ամայացած ըլլայ: Վերջին Ռուս-Պարսիկ պատերազմաց ժամանակ, այստեղ ասպատաներ են Պարսից զօրքերը. անոնցմէ վերջն Ռուսաց սակաւաթիւ բանակը, մինչև որ ամբողջ երկրին տիրացան: Այս բերդս որ անձնարիւ և անստիկ համարուած է մեր պատմիչներէն և զանազան զէպքերով ալ հաւաստուած, մեր աշխարհի ամենէն նշանաւոր ամրոցներէն մին է: Երկու դժուարին ճանապարհներ ունի, մին հարաւային և միւսն հիւսիսային կողմէն. վասն զի արեւմտեան կողմէն լեռներ և արեւելքէն Երնջակ գետը կը պատսպարեն: Հիւսիսային ճանապարհը կանխաւ այնպէս շինուած է եղեր, որ մէկ ձիով կարելի է եղեր երթալ. իսկ այժմ շէնքերու փրատակներով և լիբան գլխէն թափած սալերով փակուած է. այսու հանդերձ սոքով գնացողի համար միւսէն զիւրին է. այս ճանապարհով բարձրացած ժամանակ, ուղեւորն կը տեսնէ երեք ամրապինդ պարիսպներ քարուկիր շինութեամբ. առաջնապարիսպը ըստ կիսոյն քանդուած է, միայն պահակներու տեղերը աւելի զիմացեր են. միջնապարիսպը առաջ նոյն չափ վնասուած չէ. իսկ ներքնապարիսպը զեռ մեծաւ մասամբ կանգուն մնացած ամուր և բարձր շէնք մի է. այս պարսպի բովերը կան քարուկիր և ոմանք թրծած



աղիւսէ՝ շինուած սենեակներ՝ մեծաւ մասամբ անփաստ։ Պարսպէն ներս եւս կան բազմաթիւ մեծ ու փոքր սենեակներ, շինուած քարուկրով և աղիւսով, որոնց տանիքները միայն կը սլակոխին։ Լեբան արեւմրանան հարաւային ծայրը տակաւին կը մնայ ամբողջ քարաշէն զիտարան մը։ Ուշագրութեան արժանի են բերդիս թուով ինն ջրամբարները, խրաքանչիւրը վեց բայլ լայնութեամբ՝ բսան չորս բայլ երկայնութեամբ և վեց կանդուն խորութեամբ։ Այս ջրամբարները լեռ քարէ կարուած և աւազանի վերածուած են, որոնց մէջ անձեւի և ձեան ջուրերը կը հաւաքուին յասուկ մանր փուրած ատուակներով։ Լեբան գագաթը երկու ճիւղի բաժնուած է. այցելուն մէկ ճիւղի տարածութիւնը և վրայի շէնքերը զիտակէն վերջ կը սարտաւարի միւս գագաթին կէտէլ ահուզողով, որ առաջինէն շատ բարձր է. այս ճիւղի վրայ գտնուած շէնքերը մեծ մասամբ կանդուն են. լեբան մերկ ու միայնազազ գագաթին վրայ կանդնած հոյակապ կամարները, բնդարձակ քառակուսի գահէլծը և չորս կողմի վայելուչ ճարտարարուեստ շէնքերը ցոյց կու տան իշխանական արքունիք լինելը, որով և իրաւամբ մերձակայ բնակիչները Շահ-բախար (թագաւորագահ) կ'անուանեն։ Արանշելի և զիթիշ է այս բարձրութեան տեսարանը, հարաւէն տեսնուելով Երասխը և Գարատաղի լեաները, արեւմուտքէն Ալլարատ՝ իւր բարձրաբերձ լեաներով, հիւսիսէն և արեւելքէն Սիւնեաց բարձրաւանգակները։ Հարաւային ճանապարհը չնայելով որ արդէն գժուարագնաց և տաժանեցուցիչ է, գարձեալ երեք պարխսպներով ամբացած է. առոր ներքնաբերդը, որ լեբան գլուխն է, այնպէս ամուր և անփասնոց է, որ կարծես նոր շինուած է. ալ և ձախ կողմը կան երկու գեղեցիկ և անփաստ սենեակներ։ Բերդիս ստորտար կը նշմարուին պարսպաց և պասնիշաց հետքեր, ինչպէս նաեւ գէպի հիւսիս Շահկերաթի կողմը բլրակի մը վրայ աւերակներ, որոնց մերձաբնակները կ'աւանդեն լինել բերդը պաշարողաց բանակատակին։ Բերդի մօտ կան նաեւ բազմաթիւ գերեզմաններ։

Վերոյիշեալ բերդի հարաւակողմը և ան-


կէ չորս վերտո հետաւորութեամբ կան և մնան գեռ Երնջակ քաղաքի կամ աւանի հասցի նշմարելի աւերակները։ Քաղաքս շինուած կ'երեւի կէս մը հարթ լեռնազաշտակի և կէս մը լեաներու վրայ, բայց ափսոս որ աղէտ ու հնութեան յարգը չիմացող մերձակայ խանազա գիւղի թուրք բնակիչները, անցեալ դարու երկրորդ կիսուն մէջ սակաւ առ սակաւ բանդելով աւերակները՝ տգարակներ գարձուցած են, այնպէս որ այժմ հազիւ կան ու կը նշմարուին ցան և ցիր հիմքերու մնացորդներ։ Քաղաքս տեղւոյն զիմացը լեռնազաշտակի վրայ է գերեզմանատունն, որ իւր բազմաթիւ հին գերեզմաններով քաղաքին երբեմն ունեցած բազմամարդութիւնն կը յայտնէ։ Ազգային այցելու ոմն՝ «Հնութեան ժանիքն ծախել է, կ'ըսէ, գերեզմանաց բոլոր արձանադրութիւնները, պահելով միայն ի նշան բրիտանոնէութեան մամուսպատ խաչերը, այնքան երկար գեղերելով քարերի մէջ հազիւ միայն մէկի վրայ այս գրերս որոշել կարացի բոլիւ Ռիբ»։ Յատուկ բնութեան և պեղմանց կը կարօտին քաղաքիս աւերակներն։ Գերեզմաններու մէկ մասն ալ վերոյիշեալ թուրք գիւղացիք հերկելով պաշտի վերածած են։ — Երնջակ քաղաքը պատմութեան մէջ բիշ անգամ կը յիշուի, և բարգաւաճած կ'երեւի թ և ժ գարուց մէջ։ Քաղաքիս մէջ ազգային ժողով գումարուցաւ 841ին, յորում ներկայ էին իշխաններ և կախկողոտներ, որոնք բննեցին և արգարացուցին Ովայեցի Յովհաննէս կաթողիկոսը, զոր Հայոց Բագարատ իշխանապետը, զիւրաւ մտիկ ընելով ամբաստանողներու, մերժած էր թխուէն։

Գաւառիս մէջ կը գտնուի Երնջակայ Ս. Կարապետ անուանի վանքը, Ազրախունեաց արեւմտակողմը, հարթ և գեղեցիկատեսիլ տեղւոյ մը վրայ։ Հիմնադրութեան ժամանակն որոշ յայտնի չէ. միայն կը կարծուի ժԱ գարու վերջերը շինուած ըլլալ։ Պատմութեանէն յայտնի է վանացս նորոգուիլն ժԳ գարու մէջ, այսինքն 1381ին Գրիսիցի Մազաքիա վարդապետի ձեռքով։ Նոյն ժամանակ կը յիշուի տեղւոյն փակակալ ոմն Ստեփանոս, որ վանքս բերաւ մեծանուն վար-



գապեան Կաթիկ, որ է Յովհ. Որսանցի, և շատ աշակերաներ ժողուեց, ուր մեանելով Որսանցին 1388ին թաղուեցաւ Ս. Գեորգայ վանքը: Որսանցեոյն յաջորդած է վանացս իրեն առաջնորդ իրեն աշակեր-

ներու յաջորդութեան կարգը և անունները կը ծածկուին անյայտութեան մէջ մինչև 1654 թուականը, յորում Մեղրիի Կարծաւան գիւղէն գալով Երսայի վարդապետ, Փիլիպպոս կաթողիկոսի աշակերաներէն մին, իրեն ու-



280 • Երեջակայ Ս. Կաթողիկոսի վանքը:


ար Գրիգոր Տաթևացին, որ իրեն վարդապետին շաղաքը հետևելով կը ժողուէ շատ աշակերաներ և կ'ուսուցանէ, որ և երկու տարի վերջը ժամանակի վրդովմանց պատճառաւ խոյս կու տայ Տաթևի վանքը: Գրիգոր Տաթևացիէն վերջ վանացս առաջնորդ-

սումնակից Չարարիա վ. Վաղարշապատեցւոյ վկայութեան համեմատ, «բազում աշխատութեամբ և անհանդիսաւ աքնութեամբ ի հիմանդ ի վեր նոր իմն սքանչելաստեութեամբ շինեաց զեկեղեցի Սրբոյ Կարապետին, պարսպաւն ամենայնիս և կախուածոյ



վիճօք և ձուլածոյ կրով»։ վանացս բուր-  
 զերով պարխազները հողաշէն են, խոկ եկե-  
 ղեցին՝ քարակոփ հոյակապ և զեղեցիկ, շի-  
 նուած Եսայիէն 1655 թուին, Ղազար վար-  
 զապետի օգնութեամբը. բարձր և վայելուչ  
 կաթողիկէն միայն աղիւսաշէն է։ Տաճարն  
 ունի երկու գուռն՝ արեւմտեան և հարաւային  
 կողմերէն. արեւմտեան զրան եզերքը զար-  
 զարած են նուրբ քանդակագործութեամբ և  
 կայ շինողաց յիշատակարանը։ Երկայնու-  
 թիւնն է 23 քայլ և լայնութիւնը 10. հաս-  
 տատուած է չորս մեծամեծ սիւներու վրայ  
 և կամարակապ է։ Ունի մէկ պատարագի  
 սեղան, որուն երկու կողմը կան կրկնաշարի  
 աւանդատներ կամ մատուռներ։ Չախակող-  
 մեան մատրան մէջ կը պահուին սրբոց  
 նշխարներ. ասոր յատակը աղիւսով ծած-  
 կած ժամանակ, Երեմիա վարդապետը սե-  
 սած է զազանարանի գուռն մը և ներս  
 մտնելով գտած է բաւական թուով ձեռա-  
 գիր մատեաններ, թերեւս և ուրիշ անօթե-  
 դէններ և զարդեր։ Խրաքանչիւր աւանդա-  
 տան զրան վրայ գրուած է մէկ մէկ փոքրիկ  
 զեղաքանդակ խաչքար, ամէն մէկի պա-  
 տուանդանի վրայ կան արձանագրութիւններ,  
 մին 1475 և միւսն 1605 թուականու։ Ե-  
 կեղեցոյ մէջը նկարներով զարդարուած է և  
 զեր, որուն մնացորդները սեղանոյն առաս-  
 տաղի և կաթողիկէին վրայ կը նշմարուին։  
 Արտաքուստ հիւսիսային սրմնոյն վրայ լու-  
 սամուէն վեր կայ ուրիշ խաչքար մը 1655  
 թուականու արձանագրութեամբ Եսայի վար-  
 զապետի։ Ուրիշ մեծ խաչքար մ'ալ կայ  
 վանացս մէջ (թ. 290) Խոցաղեղ անունով  
 մէկու մը արձանագրութեամբ։ — Եկեղեցիս  
 արեւմտեան կողմէն ունեցած է գաւիթ փո-  
 քրիկ քարերով և թրծած աղիւսով շինուած.  
 այժմ՝ միայն գաւթի կամարներու հիմունքը  
 կը նշմարուին. վերջին առաջնորդներէն մին  
 Երեմիա վարդապետ, հոս այս հիմանց վը-  
 բայ սկսեր է շինել կաթածոյ քարերով փո-  
 քրիկ զանդակատուն մը, զոր չէ կարողացած  
 աւարտել մահը կանխելով (1865ին)։ Եկե-  
 ղեցոյ հարաւային սրմնոյն կողմէն է զեղե-  
 ցիկ քարաշէն երկարաձև մատուռ մը՝ Սուրբ  
 Ստեփանոսի նուիրուած, որուն շինութեան  
 թուականը (1714) և շինողին՝ Շորտրեցի

Խօջայ Այվազիև յիշատակարանն, ի ներ-  
 քուստ գրուած է կարմիր ներկով կամարին  
 վրայ։ Այս Ստեփանոսի մատուռ ունի տա-  
 նեացը վրայ հաստատուած երկշարի զան-  
 դակատուն մը. առաջին քարաշէն յարկը,  
 ինչպէս 1705 թուականու արձանագրու-  
 թիւնն կը յայտնէ, յիշատակ է Նախիջև-  
 ւանցի Պարոն Աղաճալի. երկրորդ յարկն  
 շինուած է Երեմիա վարդապետի օրով թրծ-  
 ծած աղիւսով և յիշատակ է Շուշեցի բու-



290. Երեմիայ Ս. կարապետի վանաց խաչքար

րեպաշտօն կարապետ աշու Շանմուրատեա-  
 նի, որ և ունի զանդակատան արեւմտեան  
 սրմնոյն մէջ ազուցուած փոքրիկ մարմարինի  
 վրայ իրեն յիշատակագիրը։

Վանքս հոշակուած է իբրև բուսիչ օձա-  
 հարներու. հաւատքով կը գիմեն նաև այլազ-  
 գիներէն, և ստնկով աւանդատան մէջ պա-  
 հուած օրհնած հոգէն, կը գնեն խայթուա-  
 ծին վրայ։ — Հոս պահուած սրբազան մա-  
 տուքներէն նշանաւոր է Հազարփրկիչ ան-  
 սամբ խաչը՝ ոսկէզօծ պահարանի մէջ, որուն



մէջ կը կարծուի ամփոփուած Վերսաւի կոնքի մէկ մասը կամ թաշկինակը. ըստ ոմանց սա նոյն է Մարտարաւեկաց խաչին հետ. սակայ թափօրով կը ասին այլ և այլ կողմեր բժշկութեան համար, ինչպէս նաև 1878 ասարոյ սկիզբը Ազուլիս ասարին, հոն հիւանդութիւններ ճարակած միջոց: Կան նաև ուրիշ խաչեր, որոնց մէջ ամփոփուած են Ս. Կարապետի նշխարաց մատուցները, ինչպէս նաև անոր աջը և Ս. Ոսկիբերանի՝ սոկէզօժ պահարանի մէջ. խաչերէն մին նուիրած է Յակովբ կաթողիկոսը 1656 թուին: Ասոնց հետ կը պահուին նաև հին և նոր կաակարան ձեռագիր մատեաններ, որոնցմէ մին (Աստուածաշունչ) 1663ին կ'ընծայուի, ըստ յիշատակարանին, «ի Վանս Էրնջակայ, ի վայելումն հեղահոյի մեծ վարժապետին Ետայեայ, զոր յայտ աւուրս նոր նորոգեալ կոփածու վիմով և զեղեցկագան յորինուածով զսուրբ եկեղեցին սր Ս. Կարապետ վերձայնի. սր և իսկ յորդորչ եղև սուրբ գրոցս, զի անջնջելի յիշատակ կայցէ ի սուրբ ուխտս Ապրակունեաց»: Աւելորդ կը համարինք միւս գրչազրաց յիշատակարանները ևս ասա յիշել: — Անցեալ զարու կիսուն վանացս բնակարանները քայքայուած էին, միայն մնացած էր առջնորդարանը, և յետոյ Էրեմիա վարդապետը սենեակներ տեղեցուց: — Վանացս հիւսիսային պարսպի մօտ կայ բլրակ մը՝ որ միարանից զերեզմանատեղին է. պարսպաց սաւրտան ալ կան հնագոյն զերեզմաններ խոյանալու քարերով. իսկ պարսպին հարաւակողմն յայտնուեր են սենեկաձև զեանափոր զերեզմաններ՝ միայն սոկորներով: Վանքս ունի բաւական կողուածներ, ձիթահանք, ջրաղացներ. ասոնցմէ զաս նուէրներ կ'ընդունի ուխտաւորներէն, մանաւանդ վարդապետին: — Էկեղեցոյն աւրելեան կողմը բաւական խոր փորուած ջրոյ աւազան մը կայ, որ կը լիցուէր, կ'ըսեն, ջրոյ կաթնածնեամբ՝ և այդ պատճառաւ Ս. Կարապետ կ'ըսուի: Սրբազան կը համարուէր այս աւազանը, և ինչպէս կը պատմեն, ամէն կիրակիամուտ երեկոնները մտմ կը վառէին այս տեղ: Աւանդութեամբ կ'ըսեն թէ ժամանակաւ խիստ առատ և պատուական ցուրտ ջուր կը վազէր այս սուրբ աղբիւրէն,

և ցամբած է մատարարոյ մարդու մը մեղացը պատճառաւ, որ զարչ գործով անարգած է ասոր յարգը վարդապետի խաչնի՛նձագանձ բազմութեան ժամանակ: — Հեռորիւնք նայրեկեաց, 1-35, 89-100: Սիսական, 348-51. 363-65. 378-80: Էւ այլն:

ԵՐՈՒԱՆԳՊԱԿԵՐՏ. Տես ՎԱՐԱԳ:

ԵՐՈՒԱՆԳՊԱԿԵՐՏ. — Այս քաղաքայ Արշարունեաց զաւառի մէջ, Էրուանդաշատի մօտ կը գնեն ոմանք Էրուանդայ այս զատաւ կերտին վայրը: Խորնայցին ալ առանց զիրքը ճշգրտելու, հետեւեալ կերպով կը նկարագրէ. «Քաղցր է ինձ ասել և յազապս զեղեցիկ գաստակերտին Էրուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Էրուանդ, զեղեցիկ և շքնաղ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովանի մեծի ընու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, ըուստուր որպէս ական բիր. իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծագկուցաց և հստարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբրտնի զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այդեստանոյ, իրը զարեւանայց խիտ և զեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն զիր կարակնաձև՝ արդարև զև զաւուր կուսից յօնից զարեւանաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն զաշաց, ծրնօտից պարզութեան զեղեցիկութիւն. իսկ զետն բերանացեալ զարտանդօք արփանցն՝ զերկթերթիւն նշանակէ շրթունս: Էւ այսպիսի զեղեցիկութեան զիր՝ անքթթիւլի իմն զոզցես ի բարձրաւանդակ թաղաւորանխան զհայեցուածսն ունի. և արդարև բերբի և թաղաւորական գաստակերտն»:

Ինչպէս այս նկարագրէն յայտնի կը տեսնուի, Էրուանդակերտ ճոխացած էր զեղեցիկութեամբ և ոչ ամբողջութեամբ, անոր համար շուտով անբերեցիմ եղած է և պատմութեան մէջ ալ չի յիշուիր. միայն Առաքել պատմիչ (Գ) կը յիշէ ըսելով. «Էրուանդակերտն՝ որ այժմ ասի Աղչաղարայ». և անոր հետեւելով, կը գնէ նաև Բաղրամ աշխարհազրութեան մէջ, ինչպէս նաև Գևորգ՝ Օսմանեան պատմութեան մէջ: Այս Աղջաղարայ ըստածը չէ անշուշտ համանուն վիճակի բերդը և ոչ ալ կէչուանի մօտ եղած գիւղը, վասն զի ասոնք Երասխէն շատ հե-



ուս են: Ոմանք փոխանակ Ազճաղալէի՝ կը համարին Սիւրմէլիի հարաւային և Կողբայ արևելեան կողմը գտնուող Փարագալէն, բայց այս եւս Երասիւն հետև կը թուի:

բուսած տեղը: Հելուեախացի ճանապարհորդ զին այս տեղույս աւերակաց վրայ բրած նկարագիրն ալ կը համաձայնի Խորենացոյն նկարագրութեան: - Աւերակներուն մէջ կ'ը-



291. Երուսաղիմի փոփոխութիւնը • 162

Հաւանական է Տիւրուայի նշանակածը, Երուսաղայ բողոքի մտ, Ախտրեանի ձախակողմը, Հաճի Պայրամիլուի հարաւակողմը և անկէ հետև, Ռուսաց բնդարձակ աշխարհացոցին վրայ նշանակուած Գղլլ գայս

բոշաին կրկու եկեղեցիներ՝ կրկաշարժ հիմնայատակ եղած, և փողոցներու հետքեր. արևելեան կողմն ալ գանազան ձեւերով գերեզմանաքարեր, որոնք՝ ինչպէս նաև աւերակներս, յատուկ բնութեան կը կարօտին:




Եթէ ստուգիւ մեր յետին պատմիչներն ալ այս տեղս համարեցան՝ Երուանդակերտ, այն ժամանակ ժէ գարու սկիզբը Ազնազայե

նան փաշայի գալուտար, և սկսաւ Հայերը գերի տանել Պարսկաստան: — Այրարատ, 62-64: Եւ այլն: Տես ԲԱՂԻԲ:

ԵՐՈՒԱՆԳԱՅ ԳԱՒԱՌ. Տես ԵՐՈՒԱՆԳԱՇԱՏ:

ԵՐՈՒԱՆԳԱՇԱՏ կամ ՄԱՐՄԷՏ. — Այրարատայ Արշարունեաց գաւառի կամ Երուանդ Բ Թագաւորի անուամբ կոչուած Երուանդայ գաւառի մէջ կառուցուած էր Հին արքայանիսա մայրաքաղաքս, Երասխայ ձախ և Ախուրեանի աւրեմանան կողմը: Խորհնացին (Բ. 136) քաղաքիս շինութեան պատճառ և շինութեան նկարագրութիւնը հետեւեալ առղերու մէջ կը ստորագրէ. «Յաւորս սորս (Երուանդ Բ) փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյն. քանդի էր հեռացեալ գեան Երասխ, և յերկարել ձմերայնոյն, և ի գտնահոտ փշմանէ Հիւսիսայ պաղացեալ ձուրեալ վտակն, ոչ սուտեք արբուցումն բաւական թաղաւորականի գամնէր տեղոյ: Ընդ որ նեղեալ Երուանդայ, նաեւ ամրագունի եւս տեղոյ եղեալ ի խնդիր, փոխէ զարքունիսն յարեմուտս կոյս ի քարակտուր մի բլուր. զորով պատ տեալ Երասխայ ընդդէմ Ախուրեանն հոսի գեա: Պարսպէ զբլուրն, և ի ներքստոյն քան զպարխսպն ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն մինչեւ յատակս բլրոյն հաւասար գեառոյն, մինչեւ զիմեղ ջուրց գեառոյն ի փորուածն, յրմպելեաց պատրաստութիւն: Եւ զմիջնաւրերոյն ամրացուցանէր բարձր պարբուրոց, և զբունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և երանելիս երկաթիս ի ներքուտ ի վեր մինչեւ ցգունն. և ի նմա սրոզայթիս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զի բմբունեացին թէ սք գազա ելանելով զաւել կամիցի զարքայն: Եւ էր, տակն, երկղիմի. որպէս զի մինն լի-



292. Երուանդաշատի մօտ մամարձամ:


կը կոչուէր և սնէր ամբոց, ուր եկաւ, Առաքելի ըսածի համեմատ, Շահաբատ՝ ըսելով Պամանեանց սպարապետ ճէլալօղլի Սի-

աստիճանացն, որպէս զի բմբունեացին թէ սք գազա ելանելով զաւել կամիցի զարքայն: Եւ էր, տակն, երկղիմի. որպէս զի մինն լի-



ցի սպասաւորացն արքունի և ամենայն ելեւմտից ճանապարհ տունջենային, իսկ մեան գիշերային և մարդագաւաց»։ Երուանոյ՝ այս ամէն ամբողջութիւններով ու որոգայթնեւրով չկարողացաւ իր փափագին հասնիլ, վասն զի թագաւորութեան օրինաւոր ժառանգն Արտաշէս Բ, իր Այրարաջ Սմբատ սպարապետին ձեռքով, յաղթեց Երուանոյայ բանակին Երուանոյայիս կոչուած տեղը, և հալածեց բռնց գինքը մինչև իր քաղաքը, և Խորենացոյ (Բ. 102) գրածի համեմատ. «Սմբատայ գիշերոյն գհեա Երուանոյայ և կեալ՝ սակաւ վաշտկանաւ, զգուան քաղաքին պահէր մինչև ի գալն Արտաշիսի և

չութիւնները և գահը հոն փոխադրեց։ Իսկ Երուանոյայ շէնքերը՝ արքունի կալուածք և գան, զորս յետոյ մեծն Տրդատ պարպեց կամնարականաց ցեղին, որոնք իրենց իշխանական աթոռ հաստատեցին քաղաքիս մէջ։ Թէ և բիշ ժամանակ վերջը՝ Տրդատայ թսնուրդին Արշակ Բ յափշտակեց Երուանոյաշատը կամնարականներէն, բայց իրմէ զօրաւորն ալ և իր անհաշտ թշնամին Շապուհ Պարսից թագաւորը իր ձեռքէն տուաւ, և բուրբ շէնքերը կործանել տուաւ, գերի տանելով, բոս Բագանոյայ. «Երգս բոսն հազար Հայ և երգս երեսուն հազար Հրեայ, և զքաղաքն ի հիմանց տապալեալ բրեալ



293. Երուանոյաշատ :

զօրացն ամենեցուն։ Եւ ի մարտնչել բաջացն ընդ ամրոցին, անձնատարք եղին մարդիկ ամրոցին, և բացին զգուան քաղաքին։ Իսկ մի ոմն ի գինուորացն մտեալ և հար վազերը զգլտին Երուանոյայ, և ցրուեաց զուղիզն ի յատակս տանն, և այսպիսի ջախմամբ վախճանեցաւ, կալեալ զթագաւորութիւնն ամս բոսն։ Բայց Արտաշիսի յիշեալ՝ թէ խոսնուած արշակունւոյ է Երուանոյ, հրամայէ զգի նորա թագիլ մահարձանօք»։ Այսպէս Երուանոյայ մահուամբը մարեցաւ ու նսեմացաւ նաև քաղաքիս փառքը, վասն զի Արտաշէս Արտաշատը շինել վերջ, Երուանոյաշատի արքունի վայել-

յատակէին»։ Հաւանական է այս աւերումն վերջ, լքեալ և աւերակ մնացած բլլայ ճարտարարուեստ և ամուր բերդը, վասն զի ալ չի յիշուիր Հայոց ասրոցներու և զօրանիստ վայրերու կարգին մէջ։ Բայց քաղաքը վերբոսին շինուեր և զարձեալ կամնարականներու ստանն եղեր է մինչև Բ գար, կոչուելով ուրիշ անուամբ Մարմետ, որ ծագած է Մար-ամետ պարսիկ կոչումէն։ Քաղաքիս այսպէս կոչուելուն պատճառը կը յայտնէ Խորենացին Արտաշիսի և Երուանոյայ պատերազմն պատմած ժամանակ. «Եւ ինքն (Արտաշէս) չուեաց ի քաղաքն Երուանոյայ. յատաջ բոսն զմիջօրեայ հասեալ ի



գառտակերան Երուանդայ, և միաբան կոչմամբ հրամայեաց աղաղակել զօրացն՝ Մարսանար, որ թարգմանի Մարսեկե, յիշեցուցանելով զթշնամանն զօր յղէր Երուանդ առ թագաւորն Պարսից և առ Սմբատ, Մարզնա կոչելով: Յայսմ ի սոյն ձայն անուանեցաւ գառտակերան Մարսեոտ, իբր ի կամաց Արաաշխի, բանալ զանուն Երուանդայ ի տեղւոջն»: Քաղաքս սակալ խորհնացիէն և ուրիշներէ կոչուած է նաև Երուանդայ քաղաք, և ամբողջն գրից պատճառաւ՝ Երուանդաքար ևս կոչուած է: Մարսեոտ անուամբ կը յիշուի Բագնայրի արձանագրութեանց մէջ. ՎՊ գարու սկիզբը 1209ին, խաչերէս անուամբ Լօսեցի սմն Աբրահամու որդի, Ս. Աստուածածնի վանաց կը նուիրէ իրեն այլին, և Սարգիս անուամբ մէկն ալ նոյն գարուն մէջ՝ կը նուիրէ իրեն «այլին որ ի Մարսեոտ՝ ի վերայ Երասխայ»: Անահա Շիրակացին ևս երկու անգամ կը յիշէ Մարսեոտ անունն իր համարդական գրոց մէջ: Ձի գիացուի թէ երբ բոլորովին անշրքացաւ քաղաքս, բայց կը թուի վերջին գարուց մէջ, թուրքաց և Պարսից պատերազմաց միջոց: Այս կողմերս առաջին անգամ խնամքով քննած է Տիւպուա Հիւսեանացին, որ միայն Երուանդաշատը կը շփոթէ Երուանդակերտի հետ: Յանկալի էր և արժանի է քաղաքիս վայրը նորանոր քննութեանց և պեղմանց: Բերդի քարաբլրան մօտ կայ ուրիշ բլրակ մը, որ կան շատ գերեզմաններ: Մեր (թ. 292) պատկերը կը ներկայացնէ Երուանդաշատի մօտ գտնուած մահարձան մը 1425 թուականու արձանագրութեամբ: — Այրարատ, 49-61: Եւ այլն:

ԵՐՈՒԱՆԳՈՅՑ ՎԱՆ. Տես ԵՐՈՒԱՆԳՈՅՑՎԱՆ:

ԵՐՈՒԱՆԳՈՅՑ ՔԱՂԱՔ. Տես ԵՐՈՒԱՆԳՈՅՑԱՍ:

ԵՐՈՒԱՆԳՈՅՑՎԱՆ. — Այրարատայ Արշարունեաց գաւառի մէջ է նաև այս բանակավայրս Երուանդայ, որ հետո է Երուանդաշատն իբր 38 մղոն՝ հիւսիսային կողմը, ինչպէս կը յայտնէ Խորհնացին (Բ. ԽԳ) ըսելով. «Եւ ձամբարն Երուանդայ էր բացագոյն ի քաղաքէ նորին աւելի բան Գճասպարիսա (= 38 մղոն), ի հիւսիսոյ ի վերայ գետոյն Ախուրեան»: Այս անունս գրու Արաաշէս, երբ հան յաղթելով Երուանդայ,

վանեց անկէ զԵրուանդ. «Եւ անուանեաց զհսկիտն՝ ուր ի վերայ գիականոյն բանակեցաւ՝ Մարաց մարզ, (վասն զի Մարաց զօրքերով հան բանակ գրաւ Արաաշէս): Եւ զանկի ձամբարուն՝ Երուանդայ վան, որ կուշի մինչև ցայսօր ժամանակի, այսինքն և թէ յայսմ տեղոջ վաճեաց զԵրուանդ»: Տեղւոյս անունը գրուած կը գտնենք նաև Երուանդաւան:

ԵՐՈՒԱՆԳՈՅՑՎԱՐ. Տես ԵՐՈՒԱՆԳՈՅՑԱՍ:

ԵՐՈՒԱՆԳՈՒՆԻՆԻՔ ԿԱՄ ԵՐԻՓՈՒՆԻՆԻՔ. —

Վասպուրականի հին գաւառներէն մին: Գաւառիս անունն գրուած է նաև ք տառով Երուանրունիք. Թովմա Արծրունին կը գրէ Արուանրունիք: Երուանդունիք գաւառի կը համարատարտանէ Հայոց ձորը: Երկիրը հարաւէն և հիւսիսէն աննշան լեաներով պատած լինելով բնական զիրբով ձոր մը ձևացած է, սրուն բնակիչները ի հնուց Հայեր լինելով, կոչուեր է Հայոց ձոր: Գաւառիս սահմանն է արևելքէն Վերին Խոջապ, արևմուտքէն Վանայ ծովակը, հարաւէն Ռըշտունեաց և Անձեացեաց գաւառները և հիւսիսէն Վան Տոսոյ: Կլիման բարեխառն է, օդը զեղեցիկ, ջուրը լաւ և հողը արգաւանդ: Ժողովուրդը առ հասարակ երկրագործ է և մասամբ մը անասնաբոյժ. յառաջ կու գան ոչխար, գոմէշ, կով, եղ և քիչ ձի: Գլխաւոր բերքերն են ցորեն, հաճար, գարի, կորեկ, կաւաւա, սոս, բակլայ, կանձրակ, սխտոր, սոխ, շոգգամ, վուշ: Մասաստաններ շատ չունի, մանաւանդ պտղատու տեսակներէն: Գաւառիս զլխաւոր գետերն են Խոջապայ գետ և Շամիրամայ գետ: — Կիարագրական Ռեզերուրբիւն, Ա 120-122:

ԵՐՈՒՍԱԴԼԵՄ. ԳՂ. JÉRUSALEM. — Ահա

աշխարհիս միակ քաղաքն, որուն անունն սրտեր կը յուզէ, իր բազմադիմի նուիրական և անմահ յիշատակներով: Քրիստոսնայք, Հրեայք և Մահմեդականք սուրբ քաղաք կը կոչեն, ըստ Արարացոց և Տաճկաց Էջրատ կամ Քուստի Շէրիֆ. ըստ Հրէից՝ Երուշաղայիմ: Երուսաղէմ Միջերկրական ծովէն 64 և Յորդանանէն 32 հազարամետր հեռու կը տարածուի Պաղեստինու ալեմոփ լեանագաղաի բարձր բլրոց վրայ, Միջերկրա-




կան ծովէն մօտ 2400 ոտք բարձր է: Գեւախնը արեւելեան կողմն ի սկզբան մեղմ և ապա սաստիկ զտնիւյր է: Հարաւային կողմէն կը վերջանայ Էնովմայ խոր ու նեղ ձորը, որ քաղաքին հարաւային սահմանն է. արեւմտեան կողմէն զտնիւր կը վերջանայ հիւսիսային արեւմտեան բարձրաւանդակը. արեւելեան կողմէն Յովսափաթու և Կեղրոնի ձորը: Քաղաքին մէջ ևս կան երկու ձորակ կամ նեղ հովիտներ, որ քաղաքին շինանիստ մասը կը բաժնեն երեք զլխաւոր թաղի կամ բլուրի: Սիօն այս բլուրներէն բարձրագոյնը, քաղաքին հարաւարեւմտեան թաղն էր, որուն հարաւային և արեւմտեան եզրերէն կը բերէր Էնովմայ խորձորը. իսկ հիւսիս-արեւմտեան կողմէն Տիրսուպէանի աւելի նեղ ձորն՝ որ հարաւարեւելեան կողմէ կը յանգէր Կեղրոնի հեղեղատին: Ետե Տիրսուպէան կամ Պանրագործներու ձորը կը միանար Սիօնի հիւսիս-արեւելեան ստորտաին մօտ, ուրիշ ձորի մը հետ: Սիօն՝ կը կոչուէր Գաւրի քաղաք կամ Վերին քաղաք. ի հնումն պարխապներով և խորձորներով պատած էր և քաղաքին ամբողջն մասն էր, ուր էին նաև միջնաբերդը ու թագաւորին պալատը: Հին պարխապներու մնացորդները այժմ՝ կ'երևին Սիօնի հարաւային կողմը: Այրա՝ Սիօնէն աւելի ցած էր և Տիրսուպէանի ձորով կը բաժնուէր անկէ: Այրա՝ կը կոչուէր Ստորին քաղաք: Մորիս բլուրը Սիօնի հիւսիս-արեւելեան կողմն է. ի հնումն սա միացած էր Սիօնի հետ Տիրսուպէան ձորի վրայ ձգուած կամըրջով մը: Մորիս ի սկզբան փոքր բարձրաւանդակ մ'էր, բայց յետոյ ընդարձակուեցաւ տաճարին բաւելու համար և կը կոչուէր Եր քաղաք: Ասա քաղաքին վրայ համառօտ պատմական ակնարկ մը տալը կարեւոր կը համարիմ:

Արբահամու հաւատոց Աստուծոյ կողմէն փորձուելով՝ շատ կանուխ նաւերական և զաւ Երուսաղեմայ տեղը: Արբահամու ժամանակ Սաղեմ կը կոչուէր այս երկիրը. իսկ երբ Խորայեղացիք գրաւեցին՝ Յեբրուս կոչուեցաւ, և բնակիչները՝ Յեբրուսացիք: Թերետ Սաղեմ և Յեբրուս անուններէն շինուեցաւ Յեբրուսայեմ անունն և ապա փոխուելով և

զաւ Երուսաղեմ՝ որ երբայեցերէն կը նշանակէ Խաղաղութեան ստացուած կամ Խաղաղութեան նիւն: Յետո՛ւ Երուսաղեմը պաշարելով Սաղեմի կողմը առաւ և հոն գրանուող հինգ թագաւորները սպաննել տուաւ. բայց Յերուսաղեք անխախտ մնացին իրենց շինել տուած բերդին մէջ 800 տարոյ շափ, մինչև Գաւրի յարձակմամբ առաւ Երուսաղեմը՝ որ այնուհետև Քաղաք Գաւրի սկսաւ կոչուիլ: Գաւրի Յերուսաղեքը բերդին մօտ ուրիշ շատ բերդեր շինել տուաւ, որոնք իր անուամբը կը կոչուէին, և Սիօն լեռան վրայ իր պալատը կառուցանել տալով՝ հոն գրաւ Տագանակ Ռիսաին: Գաւրի մահէն վերջը, Սողոմոն որդին շինել տուաւ տաճարը, և քաղաքն ալ Սիօն լեռան կողմէն շատ ընդարձակեց: Երբ Ռոբոլամ՝ իր հօր, Սողոմոնի զահր բազմեցաւ, Սիզա կամ Սուսակիմ Եգիպտացոց թագաւորը Երուսաղեմը պաշարեց և աննելով կողոպտեց, 150 տարի վերջն ալ Խորայեղացոց Յովսաթագաւորը եկաւ քաղաքը առաւ: Ասորիք ևս Երուսաղեմի արեւցին և Բաբելոն գերի տարին Հրէից Մանասէ թագաւորը: Սեղեկիայի թագաւորութեան ժամանակ ալ, Եբրուսայեմը թագաւորը Երուսաղեմը պաշարելով կործանեց զայն, հրկեհեց Սողոմոնի տաճարը և բոլոր Հրեայ բնակիչները գերի տարաւ Բաբելոն, Քրիստոսէ 600 տարոյ շափ առաջ: Հրեայք 70 տարի վերջը, իրենց գերութենէն զանալէն յետոյ, վերաշինեցին քաղաքն, և ջանքեր բրին առաջին պայծառութեան հասցնելու համար: Աղեքսանդր Մակեդոնացին, 332ին (Ն. Ք.) արեւց Երուսաղեմի և շատ ընծաներ նաւերեց ու զոհ մատոյց հոն: Ասոր մահէն ըիշ ժամանակ վերջը, Եգիպտացոց Պտղոմէոս թագաւորը, շարաթ օր մը, յարձակմամբ Երուսաղեմը առաւ, մինչև զեռ Հրեայք, ինչպէս կ'ըսեն, կը խղճէին կուտիլ: Քրիստոսէ առաջ՝ 170ին, Երուսաղեմ՝ Անտիոքոս Եպիփանէսի բռնութեան ներքև ինկաւ, որ կործանեց քաղաքին պարխապները, անհամար մարդ սպաննեց և ժողովրդեան շատ նեղութիւններ տուաւ: Սակայն Մակարայիցիք իրենց երկիրն ազատելով թշնամեաց ձեռքէն՝ անոնց զէմ գրին: Քա



նի ւը ասորի ետքը, Արիստարուզոս և Հիւրկանոս երկու գահակից եղբայրներ, թագաւորութեան համար իրենց մէջ վիճելով՝ Հոսովմայեցւոց օգնութիւնը խնդրեցին. եկաւ Հոսովմայեցւոց Պոսպէոս զօրաւարը և Երուսաղէմի տիրեց: Ասոր մահէն վերջը կրասոս եկաւ և սաճարն ալ աւարեց: Հրէից ինքնիշխան թագաւորութենէն ճիշդ վար մը վերջը Հոսովմայեցիք տիրեցին Երուսաղէմի: Հետովդէս շատ ծախք ըրաւ քաղաքը գեղեցկացրին եւ համար և յաջողեցաւ. այս գեղեցկացած քաղաքը եկաւ Քրիստոս. բայց Երուսաղէմ մերժելով զնա և ի խաչ հանելով՝ լցուց իր անօրէնութեան բաժակը:



294. Երուսաղէմի ընդհանուր տեսարանը:

Հրէից ազգը կորաւ իր հայրենի երկրի եւրոսէն, վասն զի Տիտոս 70-71ին պաշարեց քաղաքը և յուլիսի երկրորդ օրը տիրեց մեծ ջարդ տալով ժողովրդեան և 100 հազար հոգիի շափ ալ գերի տանելով՝ անոնց կէտը Հոսովմայ մէջ ժողովրդեան առջև գազաններու կեր ըրաւ, և մնացածները աճուրդի հանելով՝ 30 հոգին մէկ զենարի վաճառեցին: 134ին, Ալլրիանոս կայսրը հոսովմէական գազժականութիւն սը հաստատեց, Տիտոսի աւերմունքէն մնացած շէնքերը բուրովին կործանելով, Գաւթի քաղաքի աւերակներու վրայ նոր քաղաք ւը շինեց և անունը Էլլիա դրաւ, և զայն հիթմանոս շատ սուսածներու նուիրելով, հրաման հանեց սր

Հրէաներէն և ոչ մին մտնէ քաղաքը, և ով որ գաղա կը մտնէր՝ Ալլրիանոս լսածին պէս սպաննել կաւ ասոր: Այժմ՝ աննուած Երուսաղէմը Ալլրիանոսի շինել սուսածն է, սր է նաև Գողգոթայ լեռը, որ հին Երուսաղէմի ժամանակ պարսպէն զուրս էր: Այն ատենէն սկսեալ՝ Էլլիա անունը այնպէս հասարակ եղաւ, որ Երուսաղէմ անունը պահուեցաւ միայն Քրիստոսնէից և Հրէից գիտնոց մէջ: Բայց մեծին կոստանդիանոսի ժամանակ Երուսաղէմ զարձեալ իրեն հին անունը ստաւ: Մեծին կոստանդիանոսի և իր ֆուլիանոս եղբորօրդոսն աւերութենէն վերջը, Քրիստոսի 613 թուականին Պարսից

Խոսրով թագաւորը Երուսաղէսը Հոսովմայեցւոց ձեռքէն անելով՝ ամենայն զօրութեամբ ջանաց ջնջել ինչ որ նուիրական էր Քրիստոսնէից համար: Հրեայք 90 հազար քրիստոսնեայ գերի գնելով՝ սպաննեցին զանազան ասնջանքներով: Հերակլ կայսրը 627ին յազմեց Խոսրով, և Երուսաղէմ զարձեալ անցաւ Հոսովմայեցւոց. Հերակլ Սխաչը վերապարձոյց յԵրուսաղէմ և ինքն անձամբ զրաւ Գողգոթայ

լերան վրայ: Ինն ասորի վերջը, Էսմէր խալիֆայն Խպն խաթմապ, որ Մէհմէա Ա օրէնսգրի երրորդ յաջորդն էր, քառասնամեայ պաշարմանէ վերջ Երուսաղէսը առաւ: Քաղաքս և սարող ճրէաստան այնուհետև մնաց Պաղտատու ամիրապետներու ձեռքը, մինչև 868 թիւը: Ասկէց վերջ Եգիպտոսի Ահմէա իշխանը տիրեց քաղաքին, և մօտ 220 ասորի Երուսաղէմ հպատակ եղաւ թուրք ու սարակիսնոս իշխողաց: — Խաչակիրները 1099ին գալով՝ քաղաքս առին, առաջնորդութեամբ կոստիբուա Պուլիոնի, որ Երուսաղէմի թագաւոր ընտրուեցաւ: Քրիստոսնեայ իշխանները սպեցին թագ գնել կոստիբուայի գլուխը,



բայց նա մերժեց բռնելով. «Քրիստոսի գլուխը փշեղէն պտակ զրած են, ես իմ գլուխս ականազարդ պտակ չեմ գնիր»։ Այս միջոցին Եզրիպտոսի իշխանն թէև շատ աշխատեցաւ կրկին առնուլ Երուսաղէմ, բայց չյաջողեցաւ։ Կոտֆրուայի յաջուրդ բանիւ էր թագաւորներէ յետոյ, Պաւլոսին Գե՛ ժամանակ ելաւ երկրորդ խաչակրաց զօրքը առաջնորդութեամբ Գալլիոյ Լուզովիկոս Գ թագաւորի և Գերմանիոյ Կոնրատոս կայսեր։ 1187ին Սալահզէամին արեւելից սուլթանը Երուսաղէմի տիրեց։ 1242ին անցաւ Գամասկոսի իշխաններու ձեռքը, և այն ժամանակ կ'իշխէր Լամիր (իշխան) Սալհէ Խամայէլ։ 1291ին Գամասկոսի իշխանները Երուսաղէսը յանձնեցին Եզրիպտոսի իշխաններուն, և մինչև 1382 մնաց ստանց ձեռքը։ 1517ին, Օսմանեան Սուլթան Սէլիմ Ա լիբը սուսապատաւարութեանց, տիրելով Եզրիպտոսի։ Ասոր որդին, Սուլթան Սիւլէյման Ա շինեց կամ նորոգեց այժմեան պարիսպը։ Այն ժամանակէն սկսեալ Երուսաղէմ կը մնայ օսմանեան աւերութեան ներքեւ, միայն 1833-34ին քաղաքին տիրեց Եզրիպտոսի Խարահիմ փառչին։ Երուսաղէմ այժմ կը վերաբերի Գամասկոսի կուսակալութեան, բայց ունի յատուկ կառավարիչ։


Երուսաղէմի նախնի պարսպաց հնագոյնը, այն է Գաւթի և Սողոմոնի, կը պատէր ոչ միայն ամբողջ Սիօն լեռը, այլ և Մորիան և Որազը։ Հարաւային կողմի պարիսպը, թագաւորաց և Քրիստոսի ժամանակ կ'անցնէր այն բլրոց զազաթէն, որ յինքեան կը պարունակէր Սելուլամի աւազանը, Որազը, թերեւս նաեւ Էնոլմայ և Կեզրոնի ձորոց մէկ մասը։ Երրորդ պարիսպը՝ զոր շինեցին Յովրամ, Եզեկիա և Մանասէ, կը սկսէր փոքր ինչ յարեւելից Հիպպիկոսի աշտարակին, որ էր Սիօնի հիւսիս-արեւմտեան սահմանին վրայ, և իրեն մէջ ունէր Ակրա և Բեզեթայի մէկ մասն, և կը միանար արեւելեան կողմի հին պարսպին հետ։ Հրէից գերութեան միջոց այս պարիսպը՝ ինչպէս նաեւ առաջինը կործանած էր. բայց յետոյ երկուքն ալ վերաշինեցան, ինչպէս կը կարծուի, գրեթէ նոյն գծի վրայ։ Երրորդ պարիսպը սկսաւ Հերալդէս, Քրիստոսի խաչե-

լութենէն մօտ աասը աարի վերջը։ Այն պարիսպը կը ձգուէր Հիպպիկոսի աշտարակէն մօտ կէս մղոն հիւսիսային արեւմուտք մինչև Փեսեփինոսի աշտարակը և կը միանար արեւելեան հին պարսպին։ — Այժմեան Երուսաղէմը, որ անտարակոյս հնոյն տեղն է, հոյսակապ պարիսպներով, բազմաթիւ աշտարակներով ու զմրէթներով՝ հետուէն արեւմտեան կողմէն նոյրդին յոյժ շրեց երեւոյթ մը կ'ընծայէ։ Ներկայ պարիսպը Սուլթան Սէլիմի որդի Սուլթան Սիւլէյմանի ձեռքով նորոգուած է 1542-1545 թուին, 20է մինչև 60 սար բարձրութեամբ, և շրջապատն է մօտ 2<sup>1</sup>/<sub>2</sub> մղոն։ Պարիսպն ունի տեղ տեղ իրարմէ ոչ հաւասար հետու բառակոսի բազմաթիւ աշտարակներ. հիւսիսային երկայնքը պաշտպանուած է վիմափոր խրամատով մը, որ այժմ կիսովին լեցուած է։ Ունի եօթն զաներ բացի գոցուած Որսմուքեան և Ոսկեայ անուն երկու զաներէն. ա. հիւսիսային կողմէն Գամասկոսի կամ Նոպոլուսի դռան (Պապ էլ Եամ կամ Պապ էլ Ամուս), զեզեցիազոյն և ամէնէն լաւ շինուած գունն է, որ Միջին դարու մէջ Ս. Ստեփանոսի դռն կը կոչուէր, մօտը զանուոյ նոյն սրբոյն եկեղեցոյն աւուամբ։ Բ. Հերալդէսի դռան (Պապ էլ Չահրէ) արեւելակողմը, սրուն վրայ տախտակեայ փեղկ մը կայ և միշտ գոց կը մնայ։ Գ. Աստուածածեայ դռան (Պապ էլ Սպաթ կամ Պապ Սիպի Մէրիէմ) արեւելեան կողմը, Աստուածամօր գերեզմանը տանող ճամբուն վրայ է. բրիտանեայք Ս. Ստեփանոսի դռն ալ կ'անուանեն, նոյն սրբոյն, ըստ աւանդութեան, զանէս բիշ մը վար տեղւոյ մը վրայ քարկոծուելուն համար։ Դ. Հաւասակողմը՝ Ալլիսոց դռան (Պապ էլ Մազարոյէ)։ Ե. Սիօնի դռան (Պապ էլ Սահիւն կամ Պապ էլ Նէպի Տալուս) հարաւային կողմը, որ կը տանի դէպի Սիօնի վերնատունը, ուր ըստ աւանդութեան կը զանուի Գաւթ մարգարէի գերեզմանն, և մեր Փրքիչայ վանքը՝ որ Կայիափայի առնն է։ Զ. Յոպպի դռան (Պապ էլ Խալիլ) արեւմտեան կողմը։ Յոպպէի ճամբով եկող տխաւորք և երոպացի ուղեւորք այս զանէն ներս կը մտնեն։ Է. Պապ էլ ձեւաթ ահուամբ նոր



մեծ գուռ մ'ալ 1891ին բայցն պարսպի հիւսիս-արեւմտեան վերին կողմը, Լատինաց վանքի մօտ: — Քաղաքին արեւմտակողմը պարսպէն գուրս գրեթէ ամբողջովին նորանոր շէնքերով, բարեգործական հաստատութիւններով, Հրէից թաղերով և պարտէզներով զարդարուած է, և կանոնաւոր ու նոր քաղաք մը դարձած ու հետզհետէ ալ շէննալու և զարգանալու վրայ է. իսկ պարբայէն ներս փողոցները նեղ են, շատ անգամ անել ու խորատորոգ. բայց բանի մը աարիէ հետէ քաղաքապետութեան ծախքով

տաւէտ ածուներով, նոճի ծառերով բաւական շքեղութիւն և պայծառութիւն ունի: Շուկաները գրեթէ ամէնքն ալ կամարակապ են, և մեծ մասամբ խաչակրաց ժամանակ շինուած: Քաղաքին այլ և այլ կողմերը կը տեսնուին Տ մզկիթաց աշտարակներ: Բնակչաց արդի թիւն կը համարուի 60000, որոնց գրեթէ կէսը հրէայ են, մնացեալին կէսը մահմէտական, և միւս կէսը այլ և այլ ծէնէ բրիտանական: Հայ ժողովրդեան թիւը 500 է, որոնց նախնիքը դադարած են հոս մեծաւ մասամբ Կիլիկիայէն, մասամբ ալ Փոքր Ասիոյ և Հայաստանի դանազան գաւառներէն: Ազգայնոց մէկ մասը միջակ հարստութեան տէր արհեստաւորներ են, մէկ մասն ալ աղքատ՝ որոնց բնակարան և հաց կը հայթհայթէ Ս. Յակոբեանց վանքը: Մահմէտականը կը բնակին քաղաքին կեդրոնը և դէպի հիւսիսային արեւելք. Հրէից թաղը թէև Սիօնի հիւսիսային արեւելեան կողմն է, բայց իրենք տարածուած են նաև քաղաքին այլ և այլ կողմերը և մանաւանդ պարսպէն գուրս նոր շէնքերու մէջ: Յոյնք, Հայք, Լատինք, Ատրիք, Խպարիք և ուրիշներ կը բնակին զլիսաւորաբար խրաքանչիւրն իրենց վանոց մօտ:



295. Երուսաղէմ. — Ս. Յակովբեանց վանքի արեւմտեան աւազ դուռը:

Երուսաղէմ սչ միայն կրօնական այլ և ազգային տեսակէտով մեծ նշանակութիւն ունի մանաւանդ մեր ազգին համար: Հայոց նախահաւատ թաղաւորի Արգարու բրիտանական թաղուհին Հեղինէ, Քրիստոսի 40-50 թուականներուն քաղաքս գալով շատ մը այլ և այլ շինութիւններէ զատ, որոնց կարգէն են Ս. Յարութեան, Ս. Կենդեան, Ս. Աստուածածնի, Ս. Համբարձման լիբան վրայ շինուած մատուռներն, շինած է նաև Գլխայիր Ս. Յակովբ Առաքելոյն՝ անուանալ Տեանն եղբայր, գերեզմանին վրայ մատուռ մը, որ հետզհետէ ազգիս բրիտանական թաղաւորաց, իշխանաց և մեծամեծաց միջոցաւ աւելնալով զանազան շինութիւններ և նորգոյթիւններ, կազմուած է այժմեան Ս. Յակովբեանց վանքը և ընդարձակ եկեղեցին, ինչպէս նաև Ս. Հրէշտակապետի և Ս. Փրփրչայ հոյակապ վանքերը: Եթմներորդ դարու վերջերը կամ Ը՛ սկիզբները Հայոց Անաստաս վարդապետէն շարադրուած համաօտ

սկսած են փողոցները կանոնաւորուիլ և կը յատակուին գեղեցիկ և միահաւասար քարերով. տուները կոփածոյ քարերէ են՝ փողոցի վրայ նայող փոքր պատուհաններով, և իրենց սաննեաց վրայ փոքր փոքր դմբէթներով: Քաղաքին գեղեցիկագոյն տեղն է Սիօն լիբան պարսպէն ներս եղած մասին վրայ կառուցուած, մեր Ազգին սեպհական Ս. Յակոբեանց վանքը, որ գեղեցիկ պարտէզներովը, բարձր նոճիներովը ու ընդարձակութեամբը կը զմայլեցնէ զիտոյցները: Մեծ մզկիթին վերաբերեալ գետինն ալ իրեն խո-



գրուած մը, կը յայտնէ Երուսաղէմի մէջ Հայոց իշխանաց կառուցած եօթանասուն վանքերու անուանք, համառօտ նկարագրութեամբ. մենք ալ հետաքրքրական կը համարինք այդ վանքերու անուններէն գէթ մէկ մասն աստ գնել. Պետրոսի վանք, Պանդայ վ. Բատիկ վ. Ս. Գեորգայ վ. Կորսովանք, Խարայ վ. Արծրունեաց վ. Չարեհաւանի վ. Մամիկոնեանց վ. Գուգարաց վ. Բղեշի վ. Սիւնեաց վ. Ընդշտունեաց վ. Խուսխուսունեաց վ. Երիցովանք, Ս. Ղեւոնդեանց վ. Անճեացեանց վ. և այլն: Մենք պիտի ջանանք այժմ, որչափ հնար է ամբողջ նկարագիր սը տալ քաղաքին ազգային հաստատութեանց վրայ, որոնք իրբև ասհմային շինուածք և իրբև պատմական յիշատակաբանք, մեր փառքը ու պատին են: Ես սկիւնք Սուրբ Յակովբեանց վանքէն, որուն մեծ գունն զեղեցիաշէն և կամարակապ է, և գունն համակ երկաթ: Դրան կամարի ճակատն արարեբէն արձանագրութիւն մը կայ, զոր շնորհած է Եղիպոտոսի սուլթաններէն Էլ-Չահիր Ապու-Մէհմէտ Սայիա Չագմագ, 954ին Հիւնրէթի (1437): Այս արձանագրութեան ձիւղ մէկ օրինակն ալ գրուելն ներս զխմացի պատին մէջ զետեղուած է. ասով արձանագրողը կ'արգիլէ այն ամէն նեղութիւնները, որոնք տեղի ունեցած են վանացս նկատմամբ, և կը վերջացնէ խօսքն ըսելով. « ով որ այլ ամէն արգիլուած նեղութիւնները ու փնտնները նորոգելու ըլլայ, անիծուի Աստուծոյ կողմէն »: Դրան ներսի կողմը, արարական արձանագրութեան ձիւղ ետեւը՝ մարմարեայ քարի մը վրայ կայ Գրիգոր պատրիարքի հայերէն արձանագրութիւնն՝ արեւմտեան պարսպի, զրանց և խուցերու շինութեան վերաբերեալ, ՌՃՂԲ թուականաւ: Ս. Յակովբայ մեծ եկեղեցին փառաւոր, ակնապարար և հրաշագար շինուածք մ'ունի, և կը փայլի լուսաւորութեամբ ու զեղեցիկ զարդերով: Երկայնութիւնն է 35 կանգուն և լայնութիւնը 25: Եկեղեցին վերջին նորոգութիւն տեսած և զարգարուած է, Եղիպայակիր Գրիգոր պատրիարքի ժամանակ, ձեռնառութեամբ իր հայրենակից Կ. Պոլսի պատրիարք Կոլոս Յովհաննիսի, ինչպէս կը վիպեն յիշատակարանք: Աւագ խորանն և

սեղանը շատ պայծառ է իւր զեղեցիկ ճարտարագործ խաչկալով. ասոր տակ թաղուած է Տեանն Եզրայր արգար ասաքելոյն մարմինը: Խաչկալին զանազան տեղերը, ոսկեղօծ և երկաթագիր աստերով քանդակուած են, երեք արձանագրութիւններ. ասաջինը՝ 1723 թուականաւ կը վերաբերի շինութեանը, իսկ երկրորդը և երրորդը կը վերաբերին նորոգութեանը: Սեղանին և զասերուն յատակը, գոյնզգոյն քարերով և ճարտարապետական հիանալի արհեստով շինել տուած է 1652ին Փիլիպպոս կաթողիկոսը, որ նոյն թուին ուխտի եկած է յԵրուսաղէմ: Մարմարեայ բեմը շինուեր է, ըստ արձանագրին, 1730ին՝ Ալեկի Երեւանեանց սարաֆ մանտեւի Սեղեւորոսի ի յիշատակ: Աւագ սեղանի աջակողմեան սեղանը նուիրուած է Ս. Կարապետի և ճակողմեանը Ս. Աստուածածնի: Հին առնները եկեղեցին ըստ երկայնութեանը աւելի փոքր լինելով աւանդութեամբ կ'ըսուի թէ, Հեթում թագաւորը ընդարձակած է, Աւագ սեղանի հետ քովի երկու սեղանները զուրս քաշել տալով: Եկեղեցւոյ աջակողմեան զասի մէջ պատրիարքական աթոռոյն քով փառաւոր և սատափազարդ կաթողիկէի եղած մեծ աթոռը, Տեանն Եզրօր է, ուր տարին անգամ մը, Ս. Ասաքելոյն օտնին օրը, ժամանակին զանուած պատրիարքը կ'ենէ և ատանց նստելու կը կայնի « Փառք ի բարձունս » երգի միջոց միայն: Աթոռոյս կաթողիկէի թէ՛ ներքին և թէ՛ արտաքին կողմերը կան ՌՃԻԹ և ՌՄԿԱ թուականաւ արձանագրութիւններ: Եկեղեցին քառակուսի քարեղէն շորս սիւներու վրայ շինուած փոքր՝ բայց շատ սիրուն և պայծառ գմբէթ մ'ունի ութ պատուհաններով: Գմբէթին մէջ ոսկեղօծ երկաթեայ վանդակ մը կայ վրայէն կանթեղներ կախուած և մէջտեղէն ազակեայ մեծ ջահ մը: Գմբէթի արտաքին բոլորաթիքը կայ 1765 թուականաւ յիշատակարան մը զանազան նորոգութեանց վերաբերեալ: Եկեղեցւոյն որմերու ներքին կողմի ամբողջ երեսները զետնէն մինչեւ երկու կանգուն բարձրութեամբ յախճապակեայ քարերով զարդարուած, և անկէ վեր երկու կարգ Յիսուսի անօրէնութեան, սրբոց և մարտիրոսաց



պատկերներով ծածկուած են սկեզոճ շքեղանակներով, երկու դասերուն մէջ եղած վարի կարգի պատկերները աջակողմը՝ կը ներկայացնեն Երուսաղէմի երեւելի պատրիարքները, իսկ ձախ կողմինները՝ Հայոց Հայրապետները՝ Համակ զգեստաւորուած: Խրաքանչիւր պատկեր իւր մէջ կը պարունակէ Շղթայակիր Գրիգոր պատրիարքի ժամանակ գանձնք յիշատակ սուուոյնիւր անունները: Եկեղեցւոյն մէջ 26 մշտադատ կանթեղներ կան, ասոնցմէ զատ կան նաեւ 200էն աւելի կանթեղներ, որոնք կը վառուին Հան-

կեղեցւոյն ձախակողմն է Էջմիածին անուամբ եկեղեցին, որուն զուար փառաւոր, կամարակապ և սխնագորոյ է: Աւագ խորանն է յանուն Ս. Էջմիածնի. Եղիազար կաթողիկոսը շինել սուած է թէ՛ եկեղեցիս և թէ՛ խաչկալն 1670ին, և յետոյ Գրիգոր Շրղթայակիր պատրիարքը նորոգած է 1725ին, և Հարաւային պատին կից խորանաձև և փոքրիկ կաթողիկէտով սեղան մը ևս կանցնած է Ս. Սինայի անուամբ, որուն ներքև երեք խոշոր նուիրական քարեր կան, մին Սինէական լեռնէն, միւսն Յարդանան գե-



296. Երուսաղէմ. — Ս. Յակովբայ տաճարի ներքին տեսքը:

դիաւոր տօնի օրեր: Այս եկեղեցին մեծամեծ ընծաներով և Ս. Աթոսը մեծ յիշատակներով ճոխացած է, բարեպաշտ և հարուստ ազնուականներէ, որոնց համար եկեղեցւոյ ձախակողման վերջին սեան վրայ գծուարընթեանի երկաթագիր յիշատակարան մը կայ ԷՃԼԵ (= 1286) թուականաւ: Անոնց բրած շինութեանց նկատմամբ, ուրիշ յիշատակարան մը ևս կայ աջակողման առջին սեան վրայ ԲՃ (= 1351) թուականաւ: Այս կրկին յիշատակարաններն այժմ պատկերաց տակ մնացած են: — Ե-

տէն և երրորդն թափորական լեռնէն բերուած է Եկեղեցւոյս երկայնութիւնը 35 և լայնութիւնը 10 կանգուն է: Գասին գլուխը պատրիարքական աթոռ մը կայ: Եկեղեցւոյս խաչկալն, բեմն, սեղանի շարժական խաչքարն և հիւսիսային պատին վրայի ուրիշ խաչքար մը, ունին յատուկ յիշատակարաններ: Էջմիածնի եկեղեցւոյն Հարաւային արեւմտեան կողմէն, պատին կից 16 աստիճաններով կանանց վերնատուն կայ, ուր կան Պայծառակերպութեան և Ընթրեաց կրկին փոքրիկ սեղաններ: Այս վերնատունը



1835ին շինուեցաւ Պարբիէլ պատրիարքի օրոյ, ինչպէս նաեւ եկեղեցւոյն ծեփերը նուրբուեցան աշխատութեամբ և ջանիք Կ. Պառի պատրիարք Ազրիանուպոլսեցի Տ. Պօղոս արքեպիսկոպոսի, որ ժամանակաւ ազգին անօրէնութեամբ կառավարիչ ընտրուած էր Ս. Աթոռոյն պարտապան եղած առնն, որ պարտքը վճարելէ վերջը բքաւ այս շինութիւնը: Վերնատունէն վար իջնելոյ՝ Ս. Էջմիածնի միջնագոնէն Ս. Յակովբայ եկեղեցին մտնելու առնն, աջակողմը՝ հայրապետաց պատկերներու կարգին, ստաափեայ միափեղկ գուռ մը կ'երևի, յորմէ 21 աստիճան պատին միջէն վեր ելնելով ձախ կողմը պատշգամով պատուհան մը կայ, որ եկեղեցւոյն դասին մէջ կը նայի, ուր երբեմն Ս. Սիօն անուամբ փոքրիկ սեղան մը կար. աջ կողմն ալ պատուհան մը կայ Ս. Էջմիածնի տանեաց վրայ նայոյ: Ասկէջ ալ Յ աստիճան վեր կայ Ս. Պօղոսի նախուած մատուռ մը, որ եկեղեցւոյն ձախակողմեան սեղանոյն վրայ է: Եկեղեցւոյն աջակողմն Ս. Էջմիածնի միջնագրան զիմացը նոյն մեծութեամբ ուրիշ գուռ մ'ալ կայ, սակայն այս գուռն այժմ՝ երկուքի բաժնուած է հորիզոնաբար. վերի մասը ամպոն շինուած է, ուր կը կարգացոյի Յայրմուտքը, վարի մասի ստաափեայ երկփեղկ գոնէն՝ որուն վրայ կայ ՌՃԾԲ թուով յիշատակարան, ներս կը մտցուի Ս. Ստեփանոսի մատուռը, որ կառուցուած է երկու բառակուսի սիններու վրայ և երեք սեղան ունի: Այգ սեղանն նուիրուած է Ս. Ստեփանոսի, աջակողմեանը՝ Ս. Լուսաւորչի և ձախակողմեանը՝ Ս. Կիրղի Երուսաղէմի հայրապետին: Վերջնոյս սեղանաբարին տակ զետեղուած է Հին մկրտութեան այն աւազանը, որուն մէջ նոյն սուրբ հայրապետը 100 հազար հրեայ մկրտած է Երեւման խաչին պատճառաւ: Մատարան երկու առաջին սեղանները, ըստ արձանագրին, շինուած են ՌՃՀԳ թաին: Այս մատարան մէջ է մկրտութեան սուրբ աւազանը, ուր կը մկրտուին ուխտաւորաց երեխայք. հոս կը զգեստաւորին ժամարարք: Մատարան հիսախային արեւմտեան կողմը երկաթեայ գուռ մը կայ, յորմէ կ'երթան մոմատուն, և այլ սեղեր ու թա-

ղեր: Ս. Ստեփանոսի զրան արեւմտեան կողմը պատին վրայ տեսնուած աէրունական պատկերը Ս. Յակովբայ բաժակարբու առաքելոյն զխաաումը կը ներկայացնէ, որուն առջեւ կճեայ սպիտակ սեղանաբար ուր կայ 10 թզաշափ երկայնութեամբ. վրան գրուած է աշտանակ մը և կախուած մշտալատ կանթեղ մը: Այս պատկերի աջ կողմն է Գլխադիր Ս. Յակովբայ մատուռն, որուն գուռն ստաափազարդ և ամենագեղեցիկ յորինուած է: Աստ ամփոփուած է առաքելոյն զլուրը,



297. Երուսաղէմ. — Գլխավոր Ս. Յակովբայ մատուռը:

զոր զխաաեց Հերովղէս Ազրիպպաս շորբորգապետը ի Կեսարիա Պաղեստինի, յամին 42 կամ 44ին, և հրեշտակի միջոցաւ աւնոր զլուրը բերուեցաւ Ս. Աստուածածնի, Յովհաննու Աւետարանչի և Տիտոն Եզրայր Յակովբայ արղարոյն զխմացը, որոնք նստած կը սպային անոր մահը: Ս. Աստուածածնի հրամանաւ աստ ամփոփուեցաւ արխնամած զլուրը և կը գտնուի մինչև ցայտօր: Մատարան երկայնութիւնն է 5 բայլաշափ և լայնութիւնը 3. սեղանն կիսապնդակ բուրաձև է ամբողջ սպիտակ կճեայ բարերով շի-



նուած, զարմանակերտ փորումներով ու քանդակներով. յառակին ալ զարդարուած է բազմազոյն կճեայ քարերով: Սուրբ փոսն՝ ուր ասփոփուած է առաքելոյն զուխը՝ արծաթապատ է և շուրջը կան վեց մշտափառ կանթեղներ: Մատուռս ունի բարձրաշէն կաթողիկէ մը, չորս փոքրիկ լուսամուտով: Այս մատրան զարդարումն բրած է 1727ին Շըզթայակիր Գրիգոր պատրիարքը. սեղանի ճեմմակ մարմարինի վրայի յիշատակարանը

ամէն տեսակ հասարակ և ընտիր զաւագաններով: Երեք խորան ունի, մէջտեղինը Ս. Յարութեան, աջակողմեանը Ս. Մինասայ և ձախակողմեանը Ս. Սարգսի: Մատրան արեւմրեան հիւսիսային անկիւնն է աւանդատան կամ զանձարանի վարագուրուած դուռը. ներսը կը պահուին եկեղեցոյ բոլոր զարդերը, անօթները և զգեստները: Ս. Մինասայ մատրան արտաքին բակին հարաւային սատափեայ երկփեղկ զրան (1737 թուա-



298. Երուսաղէմ. — Ս. Յակովբայ արտաքին գաւթին մէջ ամրաստան և եկեղեցւոյն արտաքին տեսքը:

անընթեանի է, բայց զրան՝ ՌճԶ թուակաշու յիշատակարանը անազարտ մնացած է: Ս. Գլխազրի մատուռը իւր սատափեայ դրանէն զատ գուռ մը եւս ունի արեւմտակողմը, որուն առջեւ փոքրիկ քառակուսի բակ մը կայ: Բակին հիւսիսային կողմն է, միշտ գոց և վարագուրով ծածկուած Ս. Մինասայ մատրան երկաթեայ դուռը, որ 1733 թուականաւ յիշատակարան ունի: Ս. Մինասայ մատրան ներսը յախճապակեայ պատերը զարդարուած են գեղեցիկ վարագոյրներով,

կանաւ արձանագրութեամբ) արեւմտակողմն է Ս. Մակարայ մատուռն, որուն սեղանոյն ներքեւ ամփոփուած է նոյն սուրբին մարմինը: Մատրանս հիւսիսային կողմն ալ կը ճեայ սպիտակ նեղ սեղան մը եւս կայ՝ ներքեւ ամփոփուած Ս. Լուսաւորչի մատուռը: Ս. Մակարայ զրան և հիւսիսային սեղանի վրայ կան յիշատակարաններ, մին ՌճԺԱ և միւսն ՌՖՃ թուականաւ: Այս մատրան առջեւ երկաթեայ զրապիղով բաժնուած է, որ Գլխազրի զաս կը կոչուի: Այս



գասուն մէջ եղած պատրիարքական ամօտին հետեւ փոքր զուռ մը կայ երկաթեայ փեղկով, ուրիկ մանկելով պատին մէջէն 30 աստիճաններով վեր Ս. Նշանի խորանը կ'ելնուի, ուր ժամանակաւ կը պահուէր կենաց փայտն: Այս մատրան զրան կից ուրիշ զուռ մը կայ Երկրատասան Առաքելոց նուիրուած մատուան մանկելու համար, որ թագաւորաց ազօթարան կը համարուի: Մատրանս արեւմտեան պատին վրայ շատ փոքր զուռ մը կայ, որ հին տանիք սը կը հանէ, որուն հիւսիսային կողմը Ս. Համբարձման սեղան մը կայ: Հին ժամանակէն մնացած

զայտի անուամբ: Եկեղեցին այս մեծ զոնէն զատ՝ որուն ներքին կողմը 1863 թուականաւ նորոգութեան յիշատակարան կայ, ուրիշ զուռ մ'ալ սենի հիւսիսային կողմն Գրիխայրի դռն անուամբ, ուրիկ սոյնորարտ եկեղեցականք կը մանեն: Գաւթին մէջ պատրիարքներու և եպիսկոպոսներու գերեզմանաքարեր և 22 հին խաչքարեր և արձանադրութիւններ կան, չորս կողմի պատերուն և սիւներուն վրայ զետեղուած, որոնց շատերու յիշատակարանք անրնթեանլի եղած են, իսկ կարգացուածներն են տապանաւոր Աշրահաւ Գ պատրիարքի (†1192),



299. Երուսաղէմ. — Պատրիարքարանի դահլիճը:

Ս. Համբարձման սեղանոյն բակի պատերուն վրայ զետեղուած շատ հին խաչքարեր կան, որոնց բազմաց գրերը եղծուած և անրնթեանլի եղած են: Այս վերոյիշեալ մատուաներուն մէջ տարուան մէջ սրուշեալ օրեր պատարագ կը մատուցուին: Ասիկ վերտաին եկեղեցին իջնելով և արեւմտեան զոնէն զուռս գաւթիժը, ելնելով, զրան վրայ, նկարուած պատաստանի մեծ պատկեր մը կը տեսնանք և երկու կողմն ալ ուրիշ պատկերներ: Այս զրան երկու կողմը գարակի ձեւով երկու սեղաններ կան, աջակողմեանը Ս. Գէորգայ և ձախակողմեանը Ս. Նիկիա

Գաւթի պատրիարքի († 1321), Վարդան եպիսկոպոսի († 1638), և այլն: Գաւթի հարաւային արեւելեան անկիւնը կախուած են երկաթեայ և տախտակեայ կոշնակներ, որոնց բոլ եղած զուռ վանքի մեծ գաւթիժը կը տանի. գաւթին հիւսիսային արեւմտեան և արեւելեան անկիւնները եղած աստիճանները Աքեղայ բաղ կ'առաջնորդեն. իսկ հարաւային արեւմտեան անկիւնի 30 աստիճաններով մեծ զուռն ալ վանքի Պատրիարքարանը կը տանի: Աստիճաններու կողմնակի սենեակներն Ս. Միլաւայ բաղ կը կոչուին, որ 1831-35ին Ազրիանուպոլսեցի




Պօղոս պատրիարքի ժամանակ շինուած է այս թաղի մէջ են վանքի հաշուակալութեան և թղթակցութեանց գիւանատունք: Պատրիարքարանի հոյակապ շէնքը ի հիմանց շինել ստած է Զմլխնիացի Տ. Յովհաննէս պատրիարքը 1853ին, որուն գրան վրայ կայ յատուկ յիշատակարան: Յիշելու արժանի է 21 մետր երկայն և 7<sup>1</sup>/<sub>2</sub> մ. լայն բնդարձակ սրահն՝ մէջտեղը գեղեցիկ գմբէթով. այս սրահը զարդարուած է թուրքիոյ, Աստրիոյ, Գերմանիոյ և Ռուսիոյ թագաւորաց և կայսերաց ու կայսրուհեաց արքայանուէր մեծազիր լուսանկարներով, ինչպէս նաև Յակովրոս, Յովհաննէս և Եսայի հանգուցեալ պատրիարքներու և այլ զանազան պատկերներով: — Վանացո մատենադարանի գրան վրայ կայ 1727 թուականաւ շինութեան արձանագրութիւն: Ս. Ալմտոյն տպարանը 1832 թուին այս շէնքին մէջ հաստատուած էր, և նոյն թուականին առջին զիրքը տըպուեցաւ, որ է Ալօթմամաոյց. բաւական ժամանակ վերջ մամուլն և տառեր ուրիշ տեղ փոխադրուելով, տեղը նորոգութիւն սը տեսնուել վերջ, ժամանակ մ'ալ վարժատուն եղաւ. բայց այժմ՝ կանոնաւոր մատենադարան է, ջանիք և աշխատութեամբ հանգուցեալ թաղացի Տ. Եսայի արքեպիսկոպոս պատրիարքի, որուն մէջ կան մօտ 2000 կտոր ձեռագիր հին մատեաններ: Վանացո սպազրուած գրքերու մատենադարանին և բնիքցարանի մէջ կան 1250 տետակ և 4500 կտոր մատեաններ. այս գրքերու մեծագոյն մասը ԺՉ, ԺԷ, ԺԸ գրքերու մէջ տպուած հագուազիւտ գրքերէն են, վերջին զարուց մէջ տպուած գրքերու կողմանէ ազբատ է: — Մատենադարանի արեւմտեան պատին վերջին ծայրը բաց դուռ սը կայ առանց փեղկի, ուրիշ ներս ձախ կողմն է հիւանդանոցի դուռը: Հիւանդանոցը բաւական ընդարձակ սենեակ մ'է և կը պարունակէ առանի շափ մահճակաշներ՝ հիւանդ միարունից համար: Այս սենեակը առաջ հանգերձատուն էր, որուն ձախաւը կայ ՌՃԶԳ թուականաւ արձանագրութիւն: Հիւանդանոցի գրան յիմացի դուռն կը տանի մամատունը, նոր հանգերձատունը և այլ թաղեր, իսկ ձախ կողմը բանի մը աստիճան վեր

դոնէն ներս, աջ ու ձախ, գէմ առ գէմ երկու նկարչութեան յատկացած սենեակներ կան: Այս սենեկաց միջևը եղած անցքին զիմաց, ուրիշ նեղ անցք մ'ալ կայ, ուրիշ անցնելով և բիշ մը առաջ, ձախ կողմը՝ տանիքի վրայ կը տեսնուի Հոգոյն Սրբոյ փոքրիկ մատուռն, որուն գրան ձախաւը կախուած է Հոգոյն Սրբոյ գալուստը ներկայացնող իւզաներկ պատկեր սը: — Ս. Թեոդորոսի եկեղեցին մօտ է Ս. Ստեփանոսի եկեղեցոյն. շինուած է առանց սիւնի ՉԼԵ (= 1286) թուականին հայ բարեպաշտ հարուստներու ծախքով: Ունի 23 կանգուն երկայնութիւն և 10 կանգուն լայնութիւն: Աւագ խորանը նուիրուած է Ս. Թեոդորոսի: Սկզբնական շինութենէն վերջ զանազան ժամանակներ նորոգուած է եկեղեցին: Արեւմտակողմը երկաթեայ դուռ մը ունի որ հազիւ երբէք կը զործածուի. վրան ունի ՌՅԳ և ՌՄԻԸ թուականաւ կրկին արձանագրութիւններ: Բուն դուռը հարաւայինն է, որուն վրայ եւս յիշատակարաններ կան. այս գրան առջև փոքրիկ գաւթի մը մէջ, Ս. Թաղէոսի և Սանդիսոյ կուսի սեղան սը կայ կճեայ քանդակագործ և ընտիր ձեռակերտ զանազան պատկերներով: Եկեղեցոյս աջակողմեան դասուն մէջ, գեանէն երկու կանգուն բարձրութեամբ մկրտութեան աւագանի պէս տեղ մը կայ և մէջը խաչքար սը 1590 թուականաւ արձանագրութեամբ: Ըստ աւանդութեան, այս եկեղեցին շինած է Լեւոն Գ, ի յիշատակ իր թորոս եղբորը, որուն գերեզմանն կը համարուի վերոյիշեալ մկրտութեան աւագանի տեղը: Եկեղեցոյս դասուն մէջէն Յ աստիճաններով պահարանը կ'իջնուի, ուր կայ Ս. Կարապետի փոքր սեղան մը: Աւագ սեղանի հարաւային կողմի փոքր դոնէն երկու աստիճանով վեր փոքրիկ մատուռ սը կայ, որուն սեղանը նուիրուած է Ս. Մերկեռիսի: Թէ՛ այս մատարան և թէ՛ պահարանի մէջ պատերու վրայ ազուցուած են բաւական թուով հին խաչքարեր, որոնց շատերու վրայի արձանագրութիւնները անընթեանի և զած են. տմանց թուականներն են, 1151, 1454, 1524, 1591, և այլն: — Վանքի Յորենարայ ըսուած հրապարակի տակ կը



զանուի աղօրիքն, որուն զործիքները այժմ ցրուած են և ցորենը ազալ կու տան քաղաքի շոգեշարժ աղօրեաց մէջ: Պաշրսա բաղրուածն մտա է Յորենաթաղի վերջնոյս կից է նաև ինև ախու ըսուած տեղն, որ շինուած է Պարոն Տէր Գրիգոր պատրիարքի ժամանակ 1641 թուին: Յորենաթաղի հրապարակին հարաւային կողմն է Կոր Չարտախ ըսուած փասուոր շէնքն, չորս գեղեցիկ սենեակներով, որ շինուած է 1849ին կիրակոս պատրիարքի օրով. այս տեղս կը կոչուի նաև կրօնի վրան: — Վանացս մեծ գաւթի հարաւային կողմը երկաթեայ վանդակներով պատուպարուած լայնարձակ տեղն հաստատուած է սպարանը: Այս տեղը ի հնումն ախոս էր, որ յետոյ մէկ մասը հիւրանոց և միւս մասն ալ փայտանոց եղաւ, զոր հանգերձ վրայի թաղերով շինել տուած էր Եղիազար պատրիարքը 1675 թուականին: Տ. Եսայի պատրիարքը 1866ին նուոգել տալով վարի կողմը, հոս փոխադրել տուաւ սպարանը, որ այժմ հինգ մասերու բաժնուած է. զրաշարաց տեղ, կազմարան, մամուլներու մասը, ձուլարան և ընդարձակ գրատուն. վերջին երկու մասերն, 1871 թուականին շինել տուած է Թալասցի և Աղեքսանդրեաբանակ Յակոբ Էֆ. Աշղեան, որուն յիշատակարանն զրուած է սպարանի գրան արեւելակողմն պատին վրայ: Տպարանի գրան մտա գիրք վաճառելու սենեակ մը կայ: Տպարանն ունի գեղեցիկ պարաէզ մը, որ երբեմն պատրիարքներու յատկացեալ էր և կը կոչուէր Երեսի պարաէզ: — Տպարանի արեւելեան կողմը՝ անկիւնն, երկու կամարներ կ'երեսին, որոնց վրայի սենեակները փոքր Չարտախ կը կոչուին. ձախ կողմի կիսակամարի տակէն Պաճձ բաղ կ'երթցուի, զոր 1848ին շինել տուած է կիրակոս պատրիարքը, իսկ աջակողմեան կամարի տակ և զած երկաթեայ փոքր դռնէն կ'երթցուի վանքի ժառանգաւորաց վարժարանը և Ս. Հրեշտակապետի վանքը: Այս փոքր դռնէն զուրս քիչ մը առաջ, կայ կրկնայարկ և մայրի ծառերով շրջապատուած Չամ բաղն, որ կը պարունակէ 45 սենեակներ, զոր շինել տուած է Զմիւռնիացի բազմաբղիւն Յովհաննէս պատրիարքը 1853 թուականին. գրան

ձակաւար կայ շինութեան յիշատակարանը: Այս թաղի արեւելակողմը շինուած է ժառանգաւորաց վարժարանը, որ կ'իլլցուի 10 կնեայ տատիճաններով. ներքին ձեւը խաչաձեւ է և չորս անկիւնը՝ չորս ընդարձակ գմբէթաւոր սենեակներ բանած են, և բեր թեւերուն մէջ երեքական մեծ պատուհաններ, և երկու կողմը չորսական մեծ զարաններ կան, յորս գասաւորուած են վանքի սեփհական զանազան հնութիւնները:



300. Երուսաղէմ. — Ս. Հրեշտակապետի եկեղեցին:

— Ս. Յակոբեանց ընդարձակ վանքի մէջ 20ի չափ թաղ կայ որոշեալ անուններով. այս թաղերը կը պարունակեն 450էն 500 սենեակներ: Եզրիսկոպոսաց, վարդապետաց և սարկաւազաց նստած թաղին մէջ, որ Արեղայ թաղ կը կոչուի, 46 սենեակ կայ: Այս վանքս իւր ծախքով բացած է երկու զպրոց մին՝ մանկանց և միւսն աղջկանց համար: Միաբանից ընդհանուր թիւն է 170, եզրիսկոպոս, վարդապետ, սարկաւազ, զպիր, ժառանգաւոր աշակերտ, աշխատաւոր կը-



բարբ և մայրապետը միասին: Արեղայ թաղին հիւսիսային կողմն է վանաց սեղանատունը, խոհանոցը, մատանը, և այլն. սեղանատան և խոհանոցի զբանց վրայ կան յիշատակարաններ: — Հայ ազգի պարծանք եղող հոյակապ ու փառաւոր վանքէս վերջ, համառօտ ակնարկ մ'ալ տանք, բազաքիս ազգային ուրիշ սրբազան սեղեաց վրայ: — Ս. Հրեշտակապետ՝ որ վերոյիշեալ վանքի մէկ մասը կը համարուի, գոյութեամբ ժամանակակից է Ս. Տեղեաց շինութեան և հիմնադիրը ևս կը կարծուի թէ Հեղինէն է: Միշտ պահպանուած է Ս. Յակոբեանց վանքի միաբանութիւնէն, սրանց ձեռքով զանազան անգամներ նորոգուած է: Վանաց սեղեոյն համար աւանդութիւն մը կայ և կ'ըսուի թէ Գաւիթ մարգարէն այս սեղէն սեռաւ Աստուծոյ հրեշտակը ձեռքը սուր բրուած և Էբուսաղէմի վրայ երկնցուցած: Քրիստոսի ժամանակ այս վանքին սեղն էր Աննա քահանայապետի տունը, ուր Փրկիչն մեր բանտարկուած լինելուն պատճառաւ կը կոչուի նաև Առաջին բանտ Քրիստոսի: Արարացիք վանաց Տէր-Խոյ-Չէյրուն (Վանք Չիթենեաց) անունը կու տան, իսկ Էբուսաղէքը Աննայի տան: Եկեղեցին երկու մասի բաժնուած է, առաջին մասին մէջ պատարագամատոյց սեղան մը կայ յանուն Չարչարանաց Յիսուսի Քրիստոսի, ասա է նաև մկրտութեան աւազանը 1849 թուականաւ յիշատակարանաւ: Էբրորոզ մասն է բուն եկեղեցին, չորս քառակուսի սիւներու վրայ կառուցուած, 40 սանաչափ երկայն և 28 սան. լայն: Ունի երեք սեղաններ. Աւագ սեղանը նուիրուած է Ս. Աստուածածնի և միւս երկուքը Միքայէլ և Գարբիէլ Հրեշտակապետաց: Գրիգոր Շղթայակիր պատրիարքը վերջին անգամ նորոգած է եկեղեցին 1726ին և աւանդատունն ալ մեծցրնելով մէջը Ս. Հովիթիմէ կուսին սեղան մը կանգնած է: Աւանդատան տախտակեայ զբան վրայ կայ 1649 թուականաւ յիշատակարան: Եկեղեցւոյն որմերը գետնէն մինչև երկու կանգուն բարձրութեամբ յախճապակուած են, և անկէ վեր զանազան տնօրինական պատկերներով զարդարուած. յախճապակիներն բոս 1795 թուի

յիշատակարանի մը, յիշատակ են Ատանացի մահաձախ Տէր Օհան քահանայի: Եկեղեցւոյս հիւսիս արեւմտեան կողմն, Քրիստոսի առաջին բանտի սեղը, Ս. Գլխազիր մատան ձեւով գեղեցիկ մատուռ մը կայ: — Ս. Յարութեան հոյակապ տաճարի գաւթին վրայ բացուած փոքրիկ դռնէ մը կը մտցուի Հայոց Ս. Յովնանէն: Մկրտչի մատուռը, որ փոքրիկ՝ բայց պայծառ է: Ունի երեք սեղան, Աւագն է Ս. Յովնաննու Աւետարանչի, աջակողմեանը՝ Չարչարանաց և կապանաց Քրիստոսի, իսկ ձախակողմեանը՝ յանուն Հայր Աբրահամ և Չինման խոհակայ: Մատուռ կը գտնուի Յունաց Հայր Աբրահամու վանքի ներքեւ: Աջակողմեան փոքր սեղանին մէջ է Յիսուսի չարչարանաց սիւնին մէկ մասը, որ արծաթապատ է և առջեւ մշտապէս կանթեղ մը կայ: Կիրակոս պատրիարքի ժամանակ 1849 թուականին, մատանս ներքին կողմը ամբողջապէս նորոգուեցաւ: Գրան վրայ կան քանի մը յիշատակարաններ: — Էբուսաղէմի մէջ առաջին, զլիսուոր և համայն քրիստոնէից ուխտագնացութեան միակ նպատակն համարուած սրբալոյսն է Ս. Յարսրեան հոյակապ տաճարն, որուն մէջ կը գտնուին Փրկչի Գերեզմանն ու Գողգոթայն: Աւանդութիւնը կ'ըսէ թէ՛ նախահօր Ազամին զրախուն արաքսուելէն և մահէն յետոյ Հրէաստան ընդունեցաւ անոր նշխարքն, և անոր զրուխ թաղուեցաւ այն սեղն որ կուչուեցաւ Կրանիոն (Cranion), Տեղի Գազարան, այն է Գողգոթայն: Տէրն մեր Յիսուս Քրիստոս ևս խաչուեցաւ Գողգոթայի վրայ և անոր մօտը թաղուելով՝ հրեք օրէն յարեաւ հրաշափառապէս: Յետոյ քրիստոնէութիւնն հսկայաբայլ յառաջադիմելով, Գողգոթայն և Գերեզմանն սկսան մեծ յարդ ու պատիւ բնդունիլ նորրնմայ հաւատացեալներէն: Առաջին անգամ Ս. Տեղիքը շինող և պահպանող Հայոց Աբգար թագաւորի Հեղինէ բարեպաշտ թուգուհիէն վերջը, որուն Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ շինած մատուռն Ալիսարնաւատրան կը կոչուէր, երկրորդ անգամ՝ Հեղինէի և որդւոյն մեծին կոստանդիանոսի կայսեր, և Տրդատ թագաւորի ժամանակ, արքայական ծախիւք շի-



նուեցաւ Ս. Յարութեան տաճարն ու Գերեզմանն, և բաւական ժամանակ շէն մնաց: Պարսից խոտորով լծագաւորը աւերեց 615ին, բայց բիշ աստի մէջ վերանորոգուեցաւ: 1342 թուականին փոքր նորոգութիւններ եղան և 1555ին Եւրոպական զլխաւոր Տէրութեանց նուէրներով Ս. Գերեզմանի շէնքը նորոգ կառուցուեցաւ: 1800 տարոյ սեպտ. 30ի գիշերը հրդեհելով, գմբէթը սաստիկ շատաչ ազմուկով մը փլաւ: Յոյները Բ. Գրունէն հրաման աննելով՝ այրած և փասուած տեղերը նորոգ կառուցին և շատ տեղեր յունական յիշատակարաններ աւելցուցին: Մեծ գմբէթն 1863 թուականին վերստին շինուեցաւ Օսմանեան տէրութեան խնամքով և Գաղղիոյ ու Ռուսիոյ տէրութեանց մասնակցութեամբ. ծախքը 200 հազար ֆրանկ կը հաշուեն: Այս տաճարին մէջ երեք ազգեր՝ Հայք, Յոյք և Լատինք, ուրոյն և ընկերովի իրաւունք կը վայելեն, և կրօնական արարողութիւններ կը կատարեն, իւրաքանչիւրն ըստ իւր կարգաց. իսկ խպախք և Ասորիք իրրեւ հասեակը Հայոց: Առաջին երեք ազգերը, իրենց սեփական և կեղեցիկ և մասուններէ զատ, ունին բնակութեան տեղ սոյն տաճարի մէջ: Խըպախք միայն մատուռ մը և բնակութեան սենեակ մը ունին. իսկ Ասորիք ոչինչ: Ս. Յարութեան սքանչելի տաճարին երկփեղկեայ միակ մեծ դուռը, գէպի հարաւ կը նայի և ընդհանրապէս գոց կը մնայ: Դրան բանալին, Հայոց, Յունաց և Լատինաց միարան հաւանութեամբ՝ երկու գոնապան մահմետական Աքարացոց բով կը պահուի: Հայոց, Յունաց և Լատինաց տեսուչ վարդապետները միայն իրաւունք ունին՝ գոնապանները կանչել, դուռն բանալ և փակել աւալ երբ որ ուզեն: Ի հնումն երբեմն դուռը օրերով ու շաբաթներով գոց կը մնար. բայց այժմ գրեթէ ամէն օր առաւօտ և երեկոյ, մանաւանդ սուրբ Պատարագի և հանդիսաւոր օրերուն և վերջապէս ամէն կարեւոր պարագայից մէջ կը բացուի: Գուռը բանալու և գոցելու յատուկ սովորութիւններ կան և գոնապանաց վճարմունք: Նախնեաց աւանդութեան համեմատ, Ս. Յարութեան տաճարի այս մեծ դուռն, և ասոր

արեւելեան կողմը մի և նոյն ձեւով և մեծութեամբ հիւսուած ուրիշ դուռ մ'ալ, Հայոց ազգի սեփականութիւն էր, և զրան վրայի փոքր գոնակի բանալին ևս Հայոց ձեռքն էր, բայց յետոյ ամբողջ դուռը բաժանորգութեան կարգն և փոքր գոնակի բանալին ևս Յունաց ձեռքը անցաւ: Ս. Յարութեան մէջ Հայոց Տեսչի սենեկի զրան բովի 38 աստիճաններով կ'ենուի Վերնատունը, ուր կայ մեր ազգին սեփական եկեղեցի, յորում կը կատարուին գիշերային և տունջեան ժամերգութիւնք: Ունի երկու սեղաններ, Աւագն՝ խաչելութեան և երկրորդը Երաշխաւոր Ս. Աստուածածնի անուամբ: Այս տեղս Երկրորդ Գողգորայ ևս կը կոչուի, վասն զի յիշատակարանք կը ծանուցանեն թէ Եգիպտացի Մարտիրոս պատրիարքը, չը կարենալով Վրաց հետ զլուխ ելնել, սրոնք 1422 թուականէն սկսեալ քանի մը անգամներ Հայոց ձեռքէն առած էին Գողգոթայն, վերջին և չորրորդ անգամ երթալով Եգիպտոս, այս տեղը խնդրեց Սուլթանէն և փոխարէնը վրձարելով ստացաւ, և վերադառնալով յատուկ եկեղեցի մը շինեց 1439ին ու անուանեց Երկրորդ Գողգոթայ, ճիշդ Գողգոթայի զիմացն ըլլալուն համար: Այս տեղն ի հընումն թագաւորաց հանգստարան էր, կ'ըսեն, և հոս՝ երբ ուխտի գային, կը բնակէին թագաւորը և թագաւորագունք: Վերնատունս առաջ այսչափ ընդարձակութիւն չուներ, 1631ին Պարոն Տ. Գրիգոր պատրիարքը Լատիններէն երեք կամար անելով՝ գէպի երկայնութիւնն ընդարձակած է, փոխարէն տալով եկեղեցոյն առջևը եղած պարտիզին վրայի կանթեղաց մին և լատիններու երգեհոնի կից խուցն: Այժմ վերնատունն ունի վեց կամար Ս. Գերեզմանի վրայ, սրոնց իւրաքանչիւրին մէջ կանթեղներու շարաններ, և այս շարաններէ կախուած երեքական կաթեղներ կան միաձեւ, որք կը վառին ազգային եկեղեցական ամէն հանգէսներուն և օտարաց հանդիսին ի պախու սահմանեալ օրերուն: Արեւելեան առաջին կամարին մէջ կախուած են նաև զանկեր, իսկ չորրորդ կամարին մէջ երկաթեայ ու ապխտակեայ կոշտակներ: Վերնատան հարաւային արեւելակողմը փոքր վեր-



նատուն մը եւս կայ Տ աստիճաններով, որ կը ննջեն ձմեռ ժամանակ Ս. Յարութեան մէջ ծառայող հայ միաբանք: Եկեղեցւոյ խաչկալի և պատկերի վրայ յիշատակարաններ կան: — Հայք Իզրայելից սեղան մը ունին Ռեծարափման տեղէն քանի մը քայլ ի հիւսիս՝ աջ կողմը, առաջին կամարի արեւելեան ստրին վրայ հաստատուած: Այս տեղ եկան իզրայել կանայք միաշարաթի առւօտուն Յիսուսի մարմինը խնկելու համար, որ արդէն յարութիւն առած էր: — Իզրայելից սեղանէն 4 մետր դէպի հիւսիսային արեւմուտք կամարակապ նորաշէն մեծ գմբէ-

պատկեր մը՝ Կելզէնկեան գերդաստանէն Սերայիէ լէյպիէ և Սարգիս էֆենտիէ յիշատակ եղած, որ կը ներկայացնէ Քրիստոսի յարութիւնն, որուն առջեւ զգեստաւորեալ կայ Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Այս պատկերի առջեւ մշտաժառ կանթեղ մը կախուած է՝ որ Լուսաւորչի կանթեղ կ'ըսուի: Մեր պատկերին վրայ է Յունաց Ս. Յարութեան պատկերը՝ մարմարինի վրայ քանդակուած, որուն առջեւ մշտաժառ կանթեղ մը կայ. Յունաց պատկերին վրայ ալ Լատինաց պատկերն է նոյնպէս մշտաժառ կանթեղով: — Ս. Գերեզմանին վրայ սուրբ Պատարագ մատուցանելու իրաւունքն մի միայն Հայոց, Յունաց և Լատինաց միաբանութեանց սեփականուած է. ուրիշ որ և է ազգի միաբանութիւն իրաւունք չունի պատարագելու, բայց բաւական տարիներէ ի վեր Յոյնք իրենց պատարագելու կարգն երբեմն Ռուսաց կուտան: Ս. Գերեզմանի գմբէթն հաստատուած է 12 սիւներու և կամարներու վրայ՝ զոյգ զոյգ խորսխեալ, սեանց բարձրութիւնը 10 թաւափ է, և չորսական թիւ մէկ մէկէ հետո. գմբէթն կապարսպատ և ապխտակամած է: Գմբէթի սիւներու միջև 36 աշտանակներ և նոյնչափ կանթեղներ կան կախուած, որոնց 12 աշտանակներն և



301. Երուսաղէմ. — Ս. Յարութեան տաճարը:

թին ներքեւ կըրածեւ սրահակի մը մէջ է Տեանն մերոյ փրկչին Յիսուսի Քրիստոսի Ս. Գերեզմանը: Թէպէտ արտաքուստ միացեալ յարկ մը կ'երևի, սակայն ի ներքուստ երկու մասի բաժնուած է կրկին գմբէթով: Ս. Գերեզմանի դրսի դրան երկու կողմերը բարձրիկի քարաշէն դարանաձեւ սեքեր կան, որոնց վրայ դրուած են երեք զոյգ միջակ մեծութեամբ կերտարարած աշտանակներ: Առաջին կճեայ աշտանակներն Յունաց, երրորդը Հայոց և երրորդը Լատինաց են: Ս. Գերեզմանին առաջին դուռը յարեւելս կը նայի. դրան անմիջապէս վրան կայ Հայոց

12 կանթեղներն Հայոց են, նոյնչափ ալ Յունաց և Լատինաց: Ս. Գերեզմանի առջեւի զեղեցիկ քարերով յատակուած փոքր հրապարակն, երեք ազգաց ընկերովի իրաւունքն է: — Ս. Յարութեան տաճարի մեծ գմբէթն կառուցուած է 18 սիւներու վրայ, որոնցմէ 1, 2, 3 թիւ կրող սիւներն և կամարները Լատինաց, 4, 5, 6, 7, 13, 14 թիւ կրողները Յունաց, 8, 9, 15, 16, 17, 18 թիւ կրողները Հայոց և 10 ու 11 թիւ կրող երկու սիւներն ալ իսպառաց են, միայն 12 թիւ ունեցող սիւնն՝ որ Զոյգ սիւն կ'ըսուի, երեք ազգաց կը վերաբերի, որոնք



առանձին պատկերներ ունին: Այս սինե-  
րու վրայ խրաբքանչիւր ազգ մեծազիր և ու-  
կեզօժ շրջանակներով պատկերներ ունին և  
անոնց առջեւ կանթեղներ կախուած են:  
Հայոց սեփական 18 թիւ սեան վրայ կախուած  
են Ղազարու Յարութեան և Քրիստոսի Չազկ-  
ման պատկերները: Միւս սիններու վրայ  
Հայոց ունեցած պատկերներն են՝ փուշ Պա-  
կի, Խաչեղութեան, Թովմայի Քրիստոսի  
կողին մէջ նայելը, Ս. Մեսրոպայ, Ս. Սա-  
հակայ և Քրիստոսի խաղաղութիւն տալն:  
Գմբէթի չորս անկիւնները նկարուած են  
չորս Աւետարանչաց պատկերները. — Ս.  
Գերեզմանին կից արեւմտակողմը ժամանա-  
կաւ Հայք մատուռ մ'ունէին, զոր յետոյ  
խաւսոց տուած են, և այժմ իրենց ձեռքն  
է, փոխարէն Էջիպատսի մէջ եկեղեցի մ'առ-  
նելով: — Խաւսոց մատրան զիմաց է Հայոց  
սեփական Յովսէփ Արեւարացի, որ երեք  
մասերու բաժնուած է. առաջինը՝ նախագաւիթ  
մ'է, երկրորդը՝ մատուռ մ'է Ս. Առաուա-  
ծածնի, յորում պատարագի սեղան եւս կայ  
և պատկերին վրայ ՌՄԿԻ թուականաւ յի-  
շատակարան, երրորդը՝ գրեթէ ժայռի մէջ  
փորուած մութ տեղ մ'է, ուր առանց լոյ-  
սի անհնար է մտնել. այս խորշի մէջ է,  
բոս աւանդութեան, Յովսէփ Արեւմտացոյն  
գերեզմանը: — Ս. Յարութեան տաճարին  
մէջ Հայք ունին նաեւ, միայն իրենց յա-  
աուկ, Սուրբ Լուսաւորիչ եկեղեցին: Շինուած  
է չորս սիններու վրայ, գմբէթի կեդրոնէն  
կախուած է մեծ ջահ մը: Ունի երկու սե-  
ղան առանձին գասով բաժնուած: Աւագ սե-  
ղանը Ս. Լուսաւորչայ, իսկ միւսն՝ որ ա-  
ջակողմն է Ս. Յովհաննու Մկրտչի: Եկե-  
ղեցիս զարդարուած է զանազան պատկեր-  
ներով և զարդերով: Սեղաններու վրայ կան  
արձանաղրութիւնք, մին՝ ՌՃՂԷ և միւսն՝  
ՌՃՂԷ թուականաւ: Աւագ սեղանին ձախա-  
կողմը պատուհանաձեւ փոքր տեղ մը կայ,  
սակէ կը նայուի Գիւտ խային մէջ. աւան-  
զարար կ'ըսուի թէ Հեղինէ գշտոյն աստ  
կ'աղօթէր, երբ իրեն հրամանաւ խաչափայ-  
տը դանելու համար գետինը կը փորէին  
գործաւորք: Գիւտ խաչի այլն եւս սեփա-  
կանութիւն է երեք ազգաց: — Ս. Գողգո-  
թայ՝ Ս. Խաչը կանգնուած տեղն է, որուն

վրայ փրկիչն մեր խաչուեցաւ: Այս սրբա-  
վայրը Հայոց սեփական էր, 1422-39 թուա-  
կաններուն վրացիք ասին, և ապա անցաւ  
Յունաց ձեռքը. շատ պայծառ է և զանա-  
զան գեղեցիկ նկարներով, ոսկեզօժ ու ար-  
ծաթապատ պատկերներով և հարիւրաւոր  
կանթեղներով զարդարուած. յատակն ալ  
ամբողջ մարմարինով ծածկուած է: — Ս.  
Յարութեան տաճարի մէջ Հայոց ունեցած  
գլխաւոր սրբավայրերու հետ, ընդհանուր  
կերպով ծանօթանալէ վերջ ակնարկ մ'ալ  
տանք Պապ-Էլ-Սոլթ գոնէն ու պարսպէն  
գուրս եղած Սուրբ Աստուածածեայ Տաճա-  
րին, որ կը գանուի Գեթսեմանի ձորին հիւ-  
սիսային ծայրը, յորում է նաեւ սուրբ կու-  
սի գերեզմանը: Ասոր առաջին հիմնադիրն  
եղած է Աբգարու Հեղինէ գշտոյն և յետոյ  
Մեծն Կոստանդիանոս և իւր մայրը մեծամեծ  
նորոգութիւններ ընելով՝ տաճարս կրկնայար-  
կով ու գմբէթով զարդարեցին, որ մինչեւ  
եօթներորդ դար կանդուն մնաց, բայց վերջը  
վերին յարկը ու գմբէթը բոլորովին քանդուե-  
ցաւ և եղաւ ժամանակ մը որ տաճարս ան-  
տէր և աւերակ մնաց: Յետոյ Պաղեստին  
խաղաղելով, Հայք և Յոյնք ընկերութեամբ  
ժառանգեցին սրբավայրս: 1300 թուականին  
Հեթում Բ Էրուստղէմ եկած ժամանակ,  
ինչպէս ուրիշ տեղեր, նոյնպէս ալ այս սուրբ  
տաճարի մէջ նորոգութիւններ ընելով Ս. կու-  
սի գերեզմանին արաւաքին որմին կից արեւ-  
մրտեան դրան բով սեղան մը կանդնել  
տուաւ՝ արձանաղրութեամբ և յիշատակա-  
րանաւ, որոնք մինչեւ ցայսօր կը մնան:  
Տաճարիս մէջ Հայք և Յոյնք որոշեալ սե-  
ղաններ և մասեր ունին: Ս. Յովսէփայ Աս-  
տուածահօր սեղանն, որուն ներքեւ է սըր-  
բոյն գերեզմանը, Հայոց սեփական է: Ս. Աս-  
տուածածնի գերեզմանը, որ փորուած է  
ժայռի մէջ և վրան գմբէթով մատուռ մը  
շինուած, երկու հաւասար մասի բաժնուած  
է. հիւսիսային մասը Հայոց և հարաւայինը  
Յունաց յատկացուած է: Ս. Գերեզմանի  
զբսի կողմն, արեւմտեան պատին կից է  
Հայոց սեփական Աւագ Սեղանն, որ մեր վի-  
րը յիշած Հեթում թագաւորի շինել տուածն  
է: Հայք Ս. Թաղէոսի և Բարթողիմէոս  
սի յատուկ սեղան մ'ալ ունին գերեզմանի



Հիւսիսային կողմը պատին մէջ՝ առանձինն լայն կամարով մը, որուն Աւետման Սեղան ալ կ'ըսեն: Տաճարի արեւատեան թեւին մէջ ալ է Հայոց Ընծայման Սեղանն:

Ս. Յակոբայ վանուց հարաւային կողմն և քաղաքին պարսպէն դուրս է Հայոց Ս. Փրկչայ վանքն, գրեթէ քառորդ ժամու հեռաւորութեամբ: Այս վանքին և եկեղեցւոյն տեղը, ինչպէս ամէն ազգեր կը վիպեն, կայիափայ քահանայապետի առնն է. ուր Տէրն մեր Յիսուս Քրիստոս մասնութենէն յետոյ բերուելով, հարցաքննութեան ենթարկեցին քահանայապետին զիմացը: Այս այն տեղն է՝ որ Պետրոս առաքեալը երեք անգամ ուրացաւ Քրիստոսն. «Թէ ոչ զիտեմ զայրն» ըսելով. և Հինգշաբթի զիշերն այս տան մէջ անցուց Յիսուս հազար ու մէկ նախատանաց համբերելով: Վանացս եկեղեցւոյ գրան հարաւային կողմը եղած սեղանն շինուած է յանուն Ս. Չարչարանաց: Ս. Փրկչայ եկեղեցին սիրուն զիրք մ'ունի և առանց սիւնի է. մէկ սեղան միայն ունի, որուն վէմն է Յիսուսի Քրիստոսի Ս. Գերեզմանի կափարիչն, զոր հրեշտակը շրջեց ու վրան նստաւ: Այս վէմը որ գրեթէ կէս բուրակի ձև ունի, ամբողջ սեղանը կը ծածկէ, և երեք տեղէ բաց թողուած է համբուրելու համար: Ասոր վաւերականութիւնն կը հաստատեն նաև ուրիշ քրիստոնեայ ազգերը և ուխտի ու երկրպագութեան կուրան: Աւագ սեղանին ձախ կողմը փոքր դուռ մը և ներսը՝ ուր հազիւ երկու հոգի կրնան կենալ, փոքրիկ սեղան մը կայ որ Ս. Բանա կը կոչուի: Աւագ սեղանի ետեւի կողմն ալ պահարան կամ աւանդատուն մը կայ, որ Ս. Երրորդութեան սեղան մը ունի. այս պահարանի դուռը շատ ժամանակէ հետէ հիւսուած էր և ներսն ալ աւերակ: 1886 թուականին, թաւաւացի Տ. Պետրոս վ. Պաւլեանի սեչուութեան օրով, անոր աշխատութեամբ և ջանիւք, դուռը բացուեցաւ և ներքին կողմը նորոգուելով, սեղանն եւս վերբարտին կանգնեցաւ: Ս. Փրկչայ վանուց գոյութիւնը մինչև Քրիստոնէութեան առաջին դարը կ'ընէ և Հայոց ազգի սեփական կալուածք եղած է իւր հիմնարկութենէն ի վեր. երբեմն լքեալ թողուած և երբեմն պայծա-

րացած: Չորեքասաներորդ դարուն մէջ, Յովհաննու Արծիշեցոյ աշակերտներէն ոմն Կարապետ Տոսպեցի ուխտի գալով Երուսաղէմ անօրինական Ս. Տեղեաց և տեսնելով վանացս խզճ վիճակն, յեզրպատու կ'իջնէ, այն տեղի սուլթանէն կրկին անգամ ծախու կ'անէ վանքն և վերադառնալով յԵրուսաղէմ, կը նորոգէ զայն և միաբանութիւն հաստատելով կը պայծառացնէ: Այնուհետեւ Ս. Աթոռոյն Պատրիարքներն յաջորդաբար պէտք եղած նորոգութիւններ ըրած են: Վանացս եկեղեցւոյ գաւթին մէջ է գերեզմանատունն Ս. Աթոռոյն պատրիարքաց, վաստակաւոր եպիսկոպոսաց և վարդապետաց, ինչպէս կը ցուցնեն տապանաքարերու արձանագրութիւնք, որոնցմէ զիսուորաց անուանք և մահուան թուականն յիշենք. պատրիարքներէն՝ Պարոն Տէր Գրիգոր (+ 1645), Ասատուածատար (+ 1671), Յովնանեկ (+ 1697), Միկեայ (+ 1704), Գրիգոր Շղթայակիր (+ 1749), Կարապետ (+ 1768), Թեոփրոս Խորենացի (+ 1761), Պօղոս Վանցի (+ 1775), Յովակիմ Իսովածին (+ 1793), Թեոփրոս Վանցի (+ 1819), Գաբրիէլ Նիկիովպացի (+ 1840), Կիրակոս (+ 1850), Յովնանեկ Կոլոս, Պետրոս կաթողիկոս Կիլիկիեցոց (+ 1728), Հանեկ վարդապետ (+ 1733), և այլն: Հոս թաղուած են նաև Պօղոս պատրիարք Ազրիանապոլսեցի, Յովնանեկ պատրիարք Զմիւռնիացի (+ 1860), Յակոբ Կ. Պօլսի պատրիարք (+ 1862), Ետայի պատրիարք Թաւաացի (+ 1886): — Երուսաղէմի մասս սրբազան և յիշատակաց արժանաւոր վայրերէ մէկն ալ է Զիթենեաց յուր կամ Ս. Համբարձում: Սրբավայրիս բակը բոլորաձև է և ձիշգ կեդրոնն է արդի մատուան ութանկիւնի, 6-7 մետր արամագծով և արաբական ձևով գմբէթով մը: Մատուռին մէջ Քրիստոսի համբարձման օրը թողուած ունատեղւոյն նշանը կ'երեւի ժայռի վրայ գրորմուած: Ամբողջ բակը պարսպապատ է, ներքին կողմը զատ զատ քարէ սեղաններ շինուած են երեք ազգի սեփական: Գոնէն սկսեալ ամբողջովին Հիւսիսային կողմը և արեւելեան կողմի պարսպին կից երեք առանձին սեղանները Հայոց են: Ս. Համբարձման օրը բոլոր քրիստոնեայ ազգերը



մեծ հանդէսներ կը կատարեն ասա: Համբարձման ընթացքին վրայ Զեյթուն անուամբ Արարացոց գիւղ մը կայ. այդ գիւղի արեւելեան կողմն է Ռուսաց նորաշէն վանքն ու եկեղեցին: Զանգակատունը շինած են 1886 թուին 50 մետր բարձրութեամբ: Այս վանքի և եկեղեցոյ տեղը 1868ին գնեցին Արարացոցմէ, և 1871ին շինութեան ձեռնարկելով, պեղմանց միջոց նախ այր մը գտան 9 խորշերով սրանք զերեզմաններ էին, սրանց վրայ կային միւսիսն քարերով զարդեր և նոյն քարերով երեքին վրայ հայերէն տառերով Զոյիկ, Շուշան և Մարիե անուաները: Այլին դրան առջեւ գտնուած է նաև ուրիշ քառակուսի ձևով զերեզման մը, որուն մակերեւոյթը միւսիսն քարերով զարդարուած և նկարուած է և ունի չորս տողով հայերէն յիշատակարան մը: Այլին մուտքին հիւսիսակողմը որմին վրայ եւս կան երեք խաչքարեր, առանց թուականի և արձանագրութեան: Յետոյ գտան սոյն գամբարաններու վերի կողմը ընդարձակ սրահ մը, որուն յատակին վրայ միւսիսն քարերով շինուած քառակուսի մէջ, կան զանազան զեղեցիկ նկարներ, սրանք են՝ ձուկ, աքաղաղ, սող, դասն, ոչխար, լեմն, կիտրոն, և այլն, և հայերէն գրերով յիշատակարանի մը հետեւեալ մնացորդը. «Այս դիր և երաներոյ Շուշանկայ մարև Արարացոց. Հոսի ժր»: Յիշեալ սրահի մօտ ուրիշ տեղ մ'ալ գտան, նոյնպէս յատակը միւսիսն քարերով զարդարուած և հայերէն յիշատակարանի մը հետեւեալ մնացորդով. «Վասն ազարից և յարկոչրեան թեւոյ, Արատու և Մարիան»: 1883 տարոյ սկիզբները այս ընդարձակ տեղոյն վրայ հին եկեղեցոյ փրատակներն եւս գտան, առանց պայշելու յատակին հնութեանց ասոր վրայ կառուցին հոյսիտայ, փառասոր, խաչածեւ և դմբէթաւոր եկեղեցի մը: Եկեղեցոյ շուրջը, ամբողջ զեռինն, որ բաւական ընդարձակ է, շրջապատեցին, որ այժմ գեղեցիկ վանք մը եղած է: Վերոյիշեալ հնութիւնները և հայերէն յիշատակարանները լաւ կերպով կը պահպանուի Ռուսներէն: Տ. Երայի պատրիարքը՝ Ռուսաց Արշիմանարիտ Գ. Անտանին թոյլտուութեամբ, այս հնութիւննե-

րը և յիշատակարանները, զարդերովը ու նկարներով, համահասար չափով և գոյնով ճիշտ օրինակները իզաներկով հանել տուաւ և շրջանակի մէջ անցնելով Ս. Յակովբեանց վանոց Պատրիարքարանի սրահին մէջ կախել տուաւ: 1892 տարոյ զեկտեմբեր 19 ին եւս, Շուշանկան արձանագրութեան մեծ սրահէն բիշ հետու, դանուցաւ մի և նոյն պատկանելութեամբ սրահ մը, հանդերձ նուրբ միւսիսն նկարներով և հայերէն յիշատակարանով մը: Այս յիշատակարանաց զերն, եթէ ճիշդ է հնագիտաց և պատմագիտաց կարծիքը՝ Մետրպեան գրերու գիւտէն անմիջապէս յետոյ կը համարուին, և ըստ այնմ այս հին շինութիւնք տասն և չորս դարու հնութիւն ունին: Այս հնութեանց գտնուած տեղն, կը կարծուի թէ մեր հին 70 վանքերէն Պակոյայ վանք ըստածն է, որ Ս. Համբարձման արեւելեան կողմը կ'իյնար: — Երուսաղէմի մէջ կան ոչինչ թուով կաթողիկեայ Հայեր, սրանք ունին փոքրիկ մատուռ մը: — Կը վերջացրենք սուրբ քաղաքին մեր ազգի վերաբերեալ վայրերու նկարագրութիւնն, զոր քաղեցինք Մեծ. Տրդատ վ. Պաշխանի, 1894ին հրատարակած Սուրբ Երկիր գրքէն: Փափագողք՝ նոյն գրքի մէջ կրնան գտնել ընդարձակ տեղեկութիւններ, նաև օտար ազգաց սրբավայրերու նկատմամբ. ինչպէս նաև սրբազան տեղեաց մէջ կատարուած հանդէսներու, թափօրներու, արարողութեանց և սովորութեանց վրայ, մանրամասն ծանօթութիւններ: Քաղաքին Հայոց պատրիարքաց յաջորդութեան վրայ գիրք մը հրատարակած է Ի. Կ. Պոլիս 1872ին Ս. Յակովբեանց ուխտի միաբան Բանարաս վ. Գանձակեցին: Երուսաղէմի պատմութիւնը գրած է Հաննէ (Յովհաննէս) վարդապետը, որ երեք անգամ տպուած է, առաջինը՝ 1727ին յերուսաղէմ, իսկ երկրորդ և երրորդը՝ Կ. Պոլիս 1763ին և 1782ին: Քաղաքին վրայ գրած են բազմաթիւ օտարազգի հեղինակներ. իսկ ազգային հրատարակութիւններէն յիշենք նաև Տեօփիսեակ Տեղիք, տպ. Կ. Պոլիս. Ստարոգրաչիւն սրբոյ քարտիկ Երուսաղէմի, տպ. Երուսաղէմ, 1859. Ռոյբեցոյց Ս. Տեղեաց, տպ. Երուսաղէմ, 1872: Եւլն:



**ԵՐԻՒՏԱԿՔ.** — Կը յիշուի այս տեղւոյս անուամբ հայկահոյոս Այրարատայ ամրոցընկալ հայկահոյոսներու շարքին մէջ՝ ԻԳ Երուսակաց:

**ԵՐԱՆԱԿԱՅ.** Տես ԳԵՂԱՐԿՈՒՆԻ:

**ԵՐԻՒՏԱԿՔ, ԵՐԻՒՏԱԿՔ ԿԱՄ ԹՈՒՆԱԹ.** ԳՂ. TOKAT. Յն. Ευδοξια. — Գլխուոր քաղաք համանուն գաւառի, Սերաստիոյ կուսակալու լեռան ներքեւ: Կ'իյնայ 34° 16' արեւելեան երկայնութեան և 40° 21' հիւսիսային լայնութեան մէջ, բարձր է 650 մետր, Թոսակը կամ Թոգաղը սա: Իրիտի օժանդակ գետակի ձախակողմը, ճնշուած է լեռներու և ժայրերու մէջ. Սերաստիայէն 75 հազարամետր հեռու է հիւսիս-արեւմտեան կողմը: Քաղաքս իւր անունն ստացած կը կարծուի Քրիստոսնէութեան ԳՐՂ գարու մէջ, Թէպոս կայսեր մօր Էրզրոսիս կայսրուհւոյն անունէն: Էրզրոսիս ունի բաւ Վ. Քիւնէի 6000 աուն և 29890 բնակիչ, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահճատակներ . . . . .	18250
Հայք Լուսաւորական . . . . .	9000
» Կաթուղիկէ . . . . .	1300
» Բողոքական . . . . .	150
Յոյնք . . . . .	750
Հրեայք . . . . .	400
Այլ և այլք . . . . .	40
<hr/>	
Գումարն . . . . .	29890

Քաղաքիս Հայք անանձին թաղերու մէջ կը բնակին և ունին մեծ ու փոքր եօթը եկեղեցիներ, որոնք նշանաւոր են պայծառ շինուածով, ճորս զգեստներով, արծաթի և ոսկի զարդերով ու անթմներով. ոմանք աւելի հարուստ են գրամագլխով և եկամուտներով: Ս. Երրորդորդիւն, Ս. Միկաւ և Ս. Աւտուածածիկ գրեթէ իրարու կից են, իսկ Ս. Լուսաւորի: և Ս. Կարապետ զատ թաղերու մէջ. Ս. Գեորգ և Ս. Քառասուներ քաղաքին երկու թեւոց ծայրերը շինուած են: Մայր եկեղեցին է Ս. Աստուածածին՝ որուն մօտ շինուած է Առաջնորդարանը: Հայք ունին հինգ վարժարան, Վարդանեան, Վարդուհեան, Ս. Աստուածածինի, Ս. Երրորդութեան և Ս. Գէորգի անուամբ: Վիճակիս հանդուցեալ առաջնորդներէն Գէորգ կայս-

կոպոս 6000 դրշ. և Յակոբ կայսկոպոս 10000 դրշ. կտակած են՝ կէսն վարժարանաց և կէսը աղքատաց համար. Երուսակէմի Տ. Ետայի պատրիարքն ալ վանքին կալուածներէն բանի մը կտոր շէնք նուիրած է տեղւոյս վարժարանաց, որոնցմէ տարին 2000 դրշ. կ'ստանան: Կաթուղիկէ Հայք ունին յատուկ եկեղեցի մը և վարժարան: Բողոքական Հայք ժողովարան մը և նախակըթարան: Հոս հաստատուած են նաև լաւին Յիսուսեանք, և ունին եկեղեցի մը ու վարժարան: Յոյնք ունին մէկ եկեղեցի և մէկ նախակըթարան. յունարէն չեն գիտեր կամ սակաւ, հայերէն կամ թուրքերէն կը խօսին և վաճառականութեան մէջ բաւական ծաղկեալ են: Տեղւոյս ամենահարուստ գաւազարը կը կազմեն Մահճատականք, և ունին բազմաթիւ մեծ ու փոքր մղիկիթներ, որոնցմէ գլխաւորն է Ալի Փաշա ձավխի, որուն գաւթին մէջ ութը հաս մարմարիտն սիւներ կան խարտիսները թափածու պղնձէ, առոնց վրան ալ քարաշէն վերնատուն սը՝ որ մղիկիթին մէջ կը նայի: Երկրորդն է Մէյտակ ձավխի, որուն զիմացք մեծ հրապարակ մը կայ, կը կոչուի նաև Սուրբաբի: Էրզրոսիոյ նշանաւոր շինուածքները կրնան համարուիլ երեք թիւնադիտակ կամ Մեարեակ ըստածները, որ խիստ հին, ամբողջ ու մաքուր պահուած են: Բուն թիւմարխանէ ըստածին երեսը բոլոր տաճկական փորուածքներով զարդարուած է. տար չորս կողմը եղած սենեակներէն մէկուն մէջ տապանի ձևով գերեզմաններ կան, գրսի մեծ դրան վրայ ալ երկու տախտ կայ փորուած: Երկրորդը իջևան է և առաջնոյն պէս զարդարուն. միայն սա երկու կարգ սենեակ ունի վրայէ վրայ շինուած և յախճապակիով պատած: Երրորդը փոքր է և աւելի նուազ զարդարուն: Ասոնք երեքն ալ քաղաքին բանուկ տեղը մէկ թաղի մէջ շինուած են իրարմէ բիշ հեռու: Այս տեղէն բիշ հեռու պարտիկ մը մէջ սրածայր գմբէթով մահարձան մը կը ցուցնեն իբրև գերեզման Լէնկիթիմուրի որդւոյն: Նշանաւոր է քաղաքիս Գալխակ (պղնձի հալոց). մեծ և երեսպական սճով սուլթան Մահմուտի ժամանակ, շինուած գործարանը. բոլոր մերձակայ սահմանաց



պղնձի հանքերը հոս կը հալեն և զանազան տեղեր կը զրկուին: — Արեւմտեան կողմէն ապառաժուա լեռան ծայրը կը գրանուի հին, կիսաւեր և անշուք բերդը, որուն մէջ կայ մեծագործ գեանուզի ջրամբար՝ բայց իջնելու ճամբան և սանդուղները աւեր են: Բերդին վանդակազատ երկաթէ զրան ձախակողմը ներսէն կայ յունարէն արձանագրութիւն: Զրեբու կողմանէ առատ է Եւզոսիա Պրուտայի նման և գուցէ անկէջ ալ աւելի. ջրերը կը բզխին Պեկզատ բուսած ախաւքէն, և գեանափոր ջրանցքներով կը բաժնուին քաղաքին փողոցներ ու տները: Եւզոսիայ մէջ կան 12 հասարակաց բաղնիք և 40 ազրիւրներ: Օլը ամառը սաստիկ տաք է և ձմեռը ցուրտ, ամառ ասնն բնակիչները պարտէզներ կը բաշտին ու կը զուարճանան տեսակ տեսակ բնախր այգիներուն և պազատու ծառերու շքին տակ: Տները թէև բնդհանրապես փայտէ և հում աղիւսով շինուած են և արտաքին տեսքով անշուք, սակայն ներքուստ բոնալ՝ շքեղ ու ճոխ կա՛հ կարասիներով զարդարուած, ասիական պերճութեամբ, երուպական խիտքիչ է: Տարազներն ևս աւելի ասիական են բան երուպական: — Եւրոպացի ճանապարհորդներէն քաղաքիս առաջին ստորագրողներէն մին է Թուրքերֆոր գալլիացին, որ շատ գովեստով կը խօսի վրան: 1825ին քաղաքս մեծ երկրաշարժ ունեցաւ և շատ փնտուեցաւ: — Եւզոսիացի Հայոց մեծ պարծանքն է իրենց հայրենակից ու անմահ յիշատակաց արժանի մեր ազգային բարերարը՝ Աղա Սամուէլ Մկրտիչ Մուշատ աշուտական պարոնը, որ իր հօրը հետ վաճառականութեամբ Հունգարիա երթալէ վերջ հանդիպեցաւ Վիննաիկ Ս. Ղազարու վանքը, ու իրեն ազգասիրութեան յարմար միջոց տեսնելով մեր միաբանութեան վախճանն ու ջանքը, երբ Հնդկաստան գնաց և հսն իր բնական հանճարովն ու ջանքով հարստացաւ, 1815ին կաակով Միխիթարեան միաբանութեան թուրք յատուկ գումար մը, որուն եկամուտով կրթուած են և կը կրթութուն ազդիս գաւակները: Ուրիշ պարծանք մ'ալ կը համարուի Եւզոսիայ բարեխշտակ Հ. Մաաթէոս վ. Գարապաշեան, որ Մեծին

Միխիթարայ ասննազգիին էր, բաջ աստուածարան և նորոգիչ հայկարանութեան: Քաղաքէս ունեցեր ենք վերջին պարոց մէջ նաև բանի մը ժողովրդական բանաստեղծներ, ինչպէս Խաչատուր Գալստեան, Սանփանոս վ. և այլն: — Քաղաքիս գերեզմանոցները թուով 32 են և կը բաժնուին այսպէս. 20ը՝ Մահմետականաց, 9ը՝ Հայոց, 2ը՝ Յունաց և 1ը՝ Հրէից: Այս 32 գերեզմանոցներէն հնագոյնն է ՀայոցՔառասուն Մանկանց եկեղեցոյն վրամայր գանուսղը: Բազմաթիւ հնագոյն գերեզմաններու մէջ է



302. Մուրատ:

նաև Կոմանացի Պօզոս անունով անձիւր, որ մեռեր է 965ին (?) և տապանադրին համեմատ քարակոփ էր, ժողովրդական աւանգուտիւն այս անձը կը համարի Թուոսեղր-սուչի վրայ ձգուած գեղեցիկ քարաշէն կամրջին ճարտարապետը: Պօզոսի տապանաքարը գարուած է բարձրաքանդակ ծաղիկներով որոնց մէջ է քանդակուած նաև իր գէմբը: ԵՆԳՈՒԿԻԱ գաւառն կ'իյնայ Արաստիոյ նահանգի հիւսիսային կողմը, 33° 16' և 35° 14' արևելեան երկայնութեան և 39° 53' և 40° 49' հիւսիսային լայնութեան



մէջ: Սահմանքն են հիւսիսէն՝ Տրապիզոնի նահանգը, արեւելքէն՝ Գարահիսար-Շարքի և Սերաստիոյ գաւառները, հարաւէն՝ վերջինս և Անկիւրիա, արեւմուտքէն՝ նոյնպէս Անկիւրիոյ գաւառը և հիւսիս-արեւմուտքէն Ամասիոյ գաւառը: Տարածութիւնն է 10000 քառ. հզրմ: Բաժնուած է 4 գաւառակներու և 45 վիճակաց, ունի 1155 զիւղ: Բուրը գաւառին բնակչաց թիւն Քինէ կը հաշուէ 208800, որոնց մէջէն 40000ը հայ:

Եւզոկիոյ շուկան ձօս է, բայց անկանոն և խանութները ցիր ու ցան: Քաղաքին և գաւառին զլիսաւոր արհեստներն են՝ պղնձագործութիւն, սոսայինկութիւն, ներկարարութիւն, կառուարպագործութիւն, կառուարգործութիւն, բրտութիւն և կաշեգործութիւն: Երբեմն քաղաքին հայ բնակչաց մեծ մասը պղնձագործ էին և ամէն տեսակ պղնձի անոթներ շինելով կը զրկէին այլ և այլ կողմեր ու լաւ վաստակ կ'ընէին, բայց այժմ վաստակը պակասած է: Աւելի ծագկած է կտակելինաց և քողերու նուրբ ապագրութիւնը, այս գործարանաց մէջ այժմ 1500 աշխատաւորք կան: Այս արուեստի արտադրութիւնը ժամանակաւ աւելի կը փնտռուէին, բայց հեղհետէ մուս գործելով արտաքին նոյն տեսակ ապրանքներ՝ որոնք թէև ոչ նոյնպէս նուրբ, սակայն իրենց աժան գնովը տեղական ապրանքի վաճառման արգելք կ'ըլլան: Քաղաքի և շրջակայից մէջ տասնէ աւելի կաշեգործարաններ կան 500է աւելի աշխատաւորներով, որոնք կօշիկներու և մուճակներու կաշի կը պատրաստեն: Այս կաշեգործարաններէն մին միայն կը պատկանի կաթնուղիէ հայու մը՝ նախկին աշակերտ վենետիկոյ Միխիթարեանց, որուն արտադրութիւնք կը համարատաստանեն արդի եւրոպական արուեստին: Բրտութիւնը մեծ նշանակութիւն մը չունի. կը պատրաստեն տեղական պիտոյից համար զանազան անոթներ և զինոյ մեծամեծ կարասներ. այս արուեստին աշխատող կան մօտ 200 անձ և վեց գործարան: Ոստայնանկութիւնը և ներկարարութիւնը յոռոջապէմ վիճակի մէջ են: Ամէն տան մէջ կանայք և աղջկունք կը հիւսեն ձեռագործներ սպիտակ բամբակէ և յետոյ կարմիր ներկելով կը վաճառեն: Քա-

ւառին և քաղաքի զտարանաց մէջ տարին առ նուազն 100000 հոխայ օղի կը պատրաստեն: Խւրաքանչիւր այգեգործ իւր տան մէջ օղի կը քաշէ: Երկրի բերքերուն գաղափար մը կրնայ տալ մեր վարը զրած ցուցակը. խի վաճառականական շարժմունքն ալ կը յայտնեն առանձին զրուած արտաձուլման և ներմուծութեան տախտակները: Եւզոկիոյ գաւառի երկրագործական բերքերէն տարեկան կը ստացուի միջին հաշուով.

Յօրեն . . . . .	40000000	հօխայ
Գարի . . . . .	10000000	»
Հաւար . . . . .	1150000	»
Վարակ . . . . .	100000	»
Եզեպտացորեն . . . . .	10010410	»
Կորեակ . . . . .	6340000	»
Բրինձ . . . . .	90000	»
Բակալ . . . . .	15500	»
Լուբիա . . . . .	2000000	»
Ոսպ . . . . .	1000000	»
Սիսեռն . . . . .	2000000	»
Պատիայ . . . . .	215000	»
Խաղող . . . . .	1000000	»
Տանձ և խնձոր . . . . .	2000000	»
Զանազան պտուղներ . . . . .	3000000	»
Աւաճառի (ձէհրի) . . . . .	100000	»
Գաղի խէժ . . . . .	3200	»
Մեղրապ . . . . .	5000	»
Երխտոս . . . . .	1000000	»
Անխեռն . . . . .	1000	»
Ափիսն . . . . .	2500	»
Խաշխաշի հունտ . . . . .	100000	»
Կանեփի թել . . . . .	100000	»
Մամ . . . . .	3500	»
Մեղր . . . . .	700	»
Պրօն (թիֆթիկ) . . . . .	41500	»
Նորգենի (Mahaleb) . . . . .	40400	»
Նուշ . . . . .	200000	»
Չամիշ . . . . .	500000	»
Գինի . . . . .	180000	»
Ուուփ . . . . .	819000	»

Գումարն... 82746110 հօխայ

կամ գրեթէ 100 միլիոն հազարազրամ:

Տարուան մէջ միջին հաշուով կենդանիներէն առաջ կու գան.

Էջ և կով . . . . .	18333	զլուխ
Զի . . . . .	9166	»
Էշ . . . . .	4000	»
Ուետար և այծ . . . . .	173389	»

Գումարն... 204888 զլուխ կենդանի:



Եւզոկիա և իր շրջակայ գիւղերն ու կըր-  
կին վանքերն ևւ 1896 տարւոյ ազեատալի  
դէպքերուն ենթակայ եղան: Քաղաքի մէջ  
ժամանակաւ խիտ հարուստ հայ վաճառա-  
կաններ և տարազազործներ կան եղեր, ու  
րոնցմէ սմանք սնանկացած և մէկ մասն ալ

միւսն՝ Ս. Յովակիմ Ալեանայի վանք: Վեր-  
ջինն կառուցուած է ընտանկողի մը վրայ,  
պարսպապատ է և ունի երկու դուռ, մին կը  
բացուի դէպի հիւսիս և միւսն՝ յարեամուտ:  
Վանքի մէջակըը շինուած է քարաշէն տա-  
ճարը. արեւելեան կողմն է ուխտաւորաց

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒՍՆՔ ՎԱՃԱՌԱՅ	ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ կամ Կ շ ի ո	ԱՐԺԷՔՆ Ֆրամկող
Յարեն . . . . .	30000 տկոչի .	300000
Գարի . . . . .	600 »	4800
Սիւեան . . . . .	1000000 հզրդր .	150000
Ոսպ . . . . .	500000 »	76000
Աւածահրի . . . . .	1253 »	1150
Ափինն . . . . .	500 »	18200
Խաչխաչի հունա . . . . .	20000 »	10000
Գազի խէժ . . . . .	15075 »	28750
Կորդենի . . . . .	40000 »	15000
Մեղրապ . . . . .	852 »	1840
Կանեփ . . . . .	50000 »	34500
Պտուղներ . . . . .	2000000 »	230000
Կանաչեղէնք . . . . .	1000000 »	120000
Խաղող . . . . .	50000 »	16500
Կարապ . . . . .	40000 »	40000
Մսմ . . . . .	2778 »	2990
Մեղր . . . . .	300 »	900
Բուրդ . . . . .	150500 »	120000
Պտու (թիֆթիկ) . . . . .	36000 »	64000
Ճորգու . . . . .	50000 »	24010
Գինի . . . . .	10000 »	5000
Ուխար . . . . .	? »	60000
Չի . . . . .	? »	30000
Աթու մորթ . . . . .	50000 կտոր	75000
Կովու . . . . .	? »	24000
Էղան . . . . .	? »	48000
Ուխարի . . . . .	25000 »	45000
Գոռան . . . . .	? »	30000
Կապաստակի . . . . .	6000 »	2220
Ջրշան . . . . .	50 »	1250
Սամարի . . . . .	500 »	2500
Սամարի . . . . .	400 »	3680
Աղուեսու . . . . .	1000 »	23000
Շինութեան փայտ . . . . .	? »	7000
Գորգեր . . . . .	? »	200000

Գումարն . . . . . 1822090

գաղթած են ուրիշ երկիրներ: Քաղաքի ա-  
րեւելեան ծայրն է հայ բոշաներու թաղն,  
որ գրեթէ գեղի մը երեւոյթ ունի: Եւզոկիոյ  
առաջնորդական վիճակի հայաբնակ գիւղե-  
րու նոր վիճակագիրն չունենալով, կը գնինք  
1879ին պատրաստուածը: — Եւզոկիա ու  
նի երկու վանք, մին՝ քաղաքէն չորս ժա-  
մու ճանապարհ հեռու Պիղզեի գիւղի մօտ  
Ս. Յովնան Ոսկերեան կամ Ս. Նշան, և

Բնաշխ. Բառարամ

ՆԵՐՄՈՒԾՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒՍՆՔ ՎԱՃԱՌԱՅ	ՎԱՃԱՌՈՂ ՏԵՂԵՐԸ	ԱՐԺԷՔՆ Ֆրամկող
Երինձ . . . . .	Թոստա-Պոյապատ .	92026
Օճառ . . . . .	Անթապ-Անախք .	28750
Լեղակ . . . . .	Մարտիկա . . . . .	12500
Երկամ . . . . .	Շուեա-Ռուսիա . . . . .	75670
Անագ . . . . .	Մարտիկա . . . . .	7027
Չէթ . . . . .	Գիլիս-Մեարիլենէ . . . . .	5610
Պողպատ . . . . .	Շուեա-Ռուսիա . . . . .	1993
Քարիւղ . . . . .	Պաթում . . . . .	48000
Մսմ . . . . .	Մարտիկա . . . . .	2070
Ապակեղէն . . . . .	Գերմանիա . . . . .	12175
Անելինի ներկ . . . . .	Մարտիկա . . . . .	13800
Կարբուրէտ . . . . .	Փարիզ . . . . .	6900
Շարք . . . . .	Թրիեսթ-Մարտիկա . . . . .	51750
Սուրճ . . . . .	Մարտիկա . . . . .	74520
Բամբակ . . . . .	Ատանա-Խարբերդ . . . . .	184000
Լուցկի . . . . .	Թրիեսթ . . . . .	36000
Թուղթ . . . . .	» . . . . .	36000
Մանր երկամեղէնք . . . . .	Գերմանիա . . . . .	12000
Կաշի . . . . .	Մարտիկա . . . . .	20000
Հնդիկ պաստառք . . . . .	Մենչըթըր-Ռուսիա . . . . .	155000
Գալիքթի կտաւ . . . . .	» . . . . .	180000
Չուխայ . . . . .	Գերմանիա-Ռուսիա . . . . .	95000
Ֆէս . . . . .	Թրիեսթ . . . . .	15000
Կարմրիւս . . . . .	Մարտիկա . . . . .	30000
Էղն . . . . .	Կարս-Կարին . . . . .	95000
Գամէշ . . . . .	Պաղատա . . . . .	98000
Ռում . . . . .	Աւարիա-Ամերիկա . . . . .	6900
Աւքու . . . . .	Աւստրիա . . . . .	2815
Գոնեակ . . . . .	Մարտիկա . . . . .	3200
Օղի . . . . .	Չանազան տեղեր . . . . .	13000

Գումարն . . . . . 1414106

Թաղն՝ 16 միայակ սենեակներով: Տաճա-  
րին հարաւը շինուած է միարանից թաղը  
12 սենեակներով, վերնայարկի մէջ կան  
երկու սենեակներ իւր հիւրանոց կամ դրօ-  
սարան միարանից: Տաճարի հիւսիսային  
կողմն վերին յարկը կառուցուած է կանո-  
նաւոր շէնք մը՝ ճեմարան կամ վարժարան,  
այս յարկին ներքեւն է սեղանատուն, խո-  
հանոց և մատան: Վանքս ունի ազրիւք,  
շատրուանով պարտէզ և աւազան: Միարա-  
նից և ուխտաւորաց սենեակներու ներքեւն  
է ընդարձակ ամբարանոցը, ուր կը պահեն  
արմտիք, ալիւր, գինի, խոյ, պանիր և այլ



նպարեղէնք: Վանքիս հիւսիսային մեծ գրան հանդէպ շինուած են անասնոց ախոռները և տուն մը՝ զոր Չիֆրլիկ կ'անուանեն: Վանքիս հիմնարկութեան ժամանակն յայտնի չէ. կայ միայն յիշատակագրութիւն մը

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԵՒԿՈՒԿԵԱՅ

ՀԱՅԱՐԵԱԿ ԳԻՒՂՈՐԷՑ

ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ	ՏԱՅՔ	ՕՏԱՐՔ
Թագադրայտ . . . . .	262	—
Էաթմըշ . . . . .	374	—
Գէտաղաղ . . . . .	308	—
Չիֆրլիկ . . . . .	326	—
Պօլիս . . . . .	200	234
Պէսկինճէր . . . . .	291	—
Վարաղ . . . . .	39	171
Էնսիղ . . . . .	60	95
Կրիգորիս . . . . .	245	—
Գուրջի . . . . .	31	195
Կէտրա . . . . .	9	—
Կէրսի . . . . .	18	—
Պիղէուի, հն. Պիճեուի . . . . .	34	340
Հէրէք աւան . . . . .	1126	4702
Աղապաղը . . . . .	79	—
Չօղշար . . . . .	92	—
Էլյաղայ . . . . .	113	—
Սարը Գայեան . . . . .	63	—
Սախար Չալ . . . . .	30	—
Նիկոսար քաղաք . . . . .	2053	3705
Ղափու Աղղի . . . . .	360	—
Չիլէ քաղաք . . . . .	2012	16688
Գումարն . . . . .	8125	26130

1841ին գրուած, յորմէ կը յայտնուի թէ 1659ին նորոգուած է. երկրորդ անգամ՝ եւս նորոգուած է 1710ին, փոսաւոր խորաններով և պատշաճաւոր սենեակներով: Նոյն յիշատակագրութիւնէն կը յայտնուի նաեւ վանքիս զանազան անդամներ այլազգիներէն քանդուիլն և աւարի անուուիլն: Վերջին նորոգողն եղած է Խզմիրցի Գէորգ եպիսկոպոսը 1828ին, որուն արձանագրութիւնը քանդակուած է տաճարի գրան ձակատի վրայ: Այս նորոգութիւնը հիմնովին եղած է բոլոր սենեակներով, շրջապարսպով և արտաքին շինութիւններով: Տաճարի գրան գիմաց է Գէորգ եպիսկոպոսի գերեզմանը՝ մուծ մարմարիոն քարով, որ մեռած է 1832ին: Վանքս ունի բաւական լաւ և շատ անօթներ ու կահ կարասիներ. շէնքերը կանոնաւոր շինուած և լաւ պահպանուած են.

երբեմն նախանձելի վիճակի մէջ կը գտնուէր ուսումնական վարդապետներով և բարեկարգ վարժարանով: Ունի բիշ թուով գրչագիր մատեաններ և բաւական հարուստ է տօպագիր գրքերով: Վանքի սեփական հոգեբը շատ պողարեր չեն: Եկամուաներն են տարեկան ափիսնէ, ծխախոտէ, ալաժահրիէ, պողիններէ, քաղաքի մէջ եղած երկու խանութէ, վաճառուած բուրդէ, ուխտաւորաց նուէրներէ, և այլն: Վանքս ունի իւր մշակներն, եղ, կով, գոմէշ, էշ, ոչխար և այծ: Ներկայ վիճակագրութիւնն չունիլնք: Վանքս իւր անուան յատուկ աճանխոմբութեան օրէն գատ, գարնան և ամբան եղանակաց մէջ միշտ կ'ունենայ ուխտաւորներ, որոնք շատ ատեն կը մնան հոն օգափոխութեան համար, վասն զի շատ լաւ գիրք ունի և շրջապատեալ է այլիկներով ու ծառուղիներով: Այս վանքէն գրեթէ <sup>1</sup>/<sub>4</sub> ժամու ճանապարհ հեռու է Յուսնաց Կեաքի գիւղը և փոքր մենաստանը, ուր կառուցուած է Ս. Աստուածածնի տաճար մը:

Ս. Յովհան Ոսկերեանի վանքը, ըստ անուանութեան և ըստ ձեռագիր յիշատակարանաց, հիմնարկուած կը համարուի Վաղարշապատի Սենեքերիմ թագաւորի երեք որդիներէն: Արքայորդիք մէկ մէկ խորան կառուցած են իրենց յիշատակին, աւագ խորանն՝ Ս. Նշան, որուն անուամբ ևս կը կոչուի վանքն, միւսներն կը կոչուին Ս. Գրիգոր և Ս. Կարապետ: Երեսներէն իբր չորս տարի վերջը Սենեքերիմ թագաւորը կոմանայէն բերել տուած է Ս. Յովհան Ոսկերեանի տապանաքարը և զետեղած է Ս. Նշանի տաճարի ձախ կողմը որմին կից: Այս տապանաքարը նշաւերական և պաշտելի հնութիւն մ'է. թէ՛ տապանը և թէ՛ կափարիչը մի և նոյն կապտականանչ գունով մարմարիոնէ շինուած: Մասնաւորապէս ծննդաբերութեան և ուրիշ խնդրուածոց կատարման համար ուխտի կու գան հոս ոչ միայն Եւրոկիայէն և իւր գիւղերէն, այլ և Ամասիայէն, Չիլէէն, Հէրէքէն, Նիկիսարէն և այլ տեղերէ: Ուխտի օրերն են Ս. Աստուածածնի և Ս. Խաչի տօները և մեծ պահոց Աւագ ուրբաթը: Վանքիս՝ երբեմն երբեմն Յոյները սպեր են տիրանալ, առարկելով թէ ի սկզբան մերն



է եղած, բայց չեն յաջողած. վասն զի ոչ միայն արձանագրութիւն մը և նշան մը չէ գտնուած իրենց, այլ և զիւզին ծերունի թուրքերը աւանդութեամբ միշտ վկայած են Հայոց վանք լինելը. կարծողներ կան թէ՛ նոյն իսկ Պիղէոսի թուրքերն ալ յառաջագոյն հայ եղած են: Երբք խորաններու հիմունք և սրմունք հնագոյն են. բայց փոքրիկ լինելուն համար՝ 1842ին Յակոբոս պատարարքը նորոգեր է Ս. Նշանն և Ս. Գրիգորը և միջնորմն վերցնելով իրարու միացուցեր է. իսկ Ս. Կարապետը նոյնութեամբ կը մնայ: Հին ժամատունը կամ գաւիթը՝ որ հողով ծածկուած և նոսմ շէնք մ'է եղեր, յիշեալ Յակոբոս սրբազանը փլուցեր և կամարածեւ պայծառ եկեղեցի սը շիներ է հանգերձ պատարագամատոյց սեղանով և բեմով, անուանելով Ս. Յովհանն Ոսկերեւան: Այս նորաշէն եկեղեցոյս աջակողմեան գասին միջէն կը բացուի Ս. Գրիգորը և Ս. Նշանը մանկու գուռ. իսկ ձախակողմեան գասէն Ս. Կարապետի մատրան գուռն: Տաճարիս զրան վրայ կայ բնի մը սողով ստանաւոր արձանագրութիւն մը. և անկէ վար կայ շինութեան հետեւեալ յիշատակարանը. «Շիկեցաւ Ս. Յովհանն Ոսկերեւանի տաճարս բոլոր շրջապատ պարսպօր և ամենայն շինուածովք, Եւրոկիոյ և վիճակաց նորս ազգիս Հայոց բարեպաշտ օրհնեալ ժողովրդոց տրովք և ողորմութեամբ: 1842. ՌՄԿԱ»: Տաճարին հարաւակողմը կը բարձրանայ կրկնաշարի գեղեցիկ շէնք մը՝ 14 սենեակներով: Բոլոր սենեակները ճաշակի յարմար, մաքուր և կանոնաւոր կահաւորուած են. մասնաւորապէս առաւելութիւն ունի առաջնորդարանը կամ ինչպէս կ'ըսեն՝ վեհարանը, որուն կահ կարասին եւս շքեղ է. հոս կ'ընդունուին պատուաւոր հիւրերը: Վանացս սուրբ տաճարին և միւս շինուածոց մաքրութիւնը, կանոնաւորութիւնը, անօթոց և կահ կարասեաց առատութիւնը, նիւթական վիճակը, կարգաւորեալ թանգարանը, ծառայից, մշակաց, ուխտաւորաց և վարդապետաց զոհունակութիւնն, կը զարմացնէ այցելու մը: Տաճարի զրան հանդէպ փոքր զանգակատուն մը կայ, ուր կախուած և երկաթի և բնկուզենի կոշտակներ, անոր

կից է մասնատուն, որուն տակ մշտահոս աղբիւր մը կայ: Տաճարին ետեւ փոքրիկ զրախա մը կայ, ուր կը գտնուին պաղատու ծառեր, բանջարեղինաց ածուներ, մեղուաց փեթակ: Գրախար մանկու գրան կից է վանացս իսհանոցը ու մառանը: Ուխտաւորաց թաղը տաճարի հիւսիսակողմը առանձին շէնք մ'է 23 սենեակներով, որուն բակին մէջ կը հոսի աղբիւր մը: Վանքի պարսպէն գուռս մեծ զրան զիմաց շինուած են ախոսները և Չիֆրիկ բուած շէնքը 12 սենեակներով և երկու խանութներով: Ասոր կից է մարագն և կալաւեղն: Կալաւեղնոյն կից բարձր բլրակի մը վրայ է վանականաց և շինականաց գերեզմանատունն: Վանացս արտորայք՝ որ շուրջանակի առուններով կ'ոռոգուին, շատ բարեբեր են և մեծ յարգ ունին իրենց առատ արգիւնաբերութեան պատճառաւ, մանաւանդ ծխախոտի զաշտերը համբաւաւոր են իրենց արտազրած ծխախոտի առաջին աստիճանի պատուականութեան համար: Եւրոկիայէն մինչեւ վանքս եղած ճանապարհը գուարձալի է. ուղեորը նախ կ'անցնի արգասաբեր և պտղալից պարտիզաց միջէն. յետոյ այգիները կը յաջորդեն ժամուան մը ճանապարհ, վերջը ցորենի, խաշխաշի, ծխախոտի, և այլ բերքերու արտորայք, որոնց մէջտեղէն կ'անցնի ոլորտապտոյտ իրիս գետը՝ երկու կողմանց մշակուած ակերը բերելով: Յառաջ երթալով կը հանդիպի Գրգըր-բօրիսագ (կարմրահող) բուած արախն, որուն մէջ, աւանդութեամբ կ'ըսուի, թէ վախճանած է Ս. Ոսկերեւան, և մարմինն փոխադրած են կոմանաւ Քիչ մ'ալ հետեւ կը տեսնուի Ս. Թաշաւե կոչուած բար մը, որուն համար աւանդութիւն կայ թէ Գրիգորիս զիւղի լեռնէն թռելով հոս ինկեր է Ս. Գրիգոր սքանչելագործի հրաշքով: Գրիթէ մինչեւ այս բարը կ'երևին հին կոմանայի աւերակաց հնաբերը և այգիներ, իսկ բուն կոմանան՝ բլրածեւ աւերակոյտ մ'է: Առկէց ալ առաջ մինչեւ Ս. Ոսկերեւանի վանքը, ճանապարհը աւելի լեռնային կրնայ ըսուիլ, ամէն կողմէ ունենալով հրաշալի և ուշագրաւ տեսարաններ: — Նոր Հայաստան, 289-293: Ճաւնապարհորդ. Խ Բարեղան, 10-12: Տեղոր.



Հատ, 59-61: Թորոս Աղբար, Ա 80-130 վ. Գրիկ, Ա 703-724: Բագմալիկ, Գ. 6-9: Եւ այլն:

ԵՒԵՂԻ. Տես ԲԱՂԻՔ:

ԵՒՊԱՏՈՐԻԱ. Գղ. EUPATORIA. Ռ. *Eupatoria*. — Գլխաւոր քաղաք Համանուն գաւառին, Ղրիմու թերակղզւոյն հարաւ արեւմրտեան կողմը. Սիմֆերոպոլէն 68 հզրմ. հեռու, հրախուարեման կողմը: Բնակիչը կը հաշուուին մօտ 20000, ուստ, յոյն, կարայիմ, թաթար, հայ և հրեայ: Ամսօներն 5-6000 հոգի, աւելի հայ և ուսւընասնիքներ՝ Ռուսաստանէն հոս կու գան ծովու և օդափոխութեան համար. վասն զի քաղաքին օդը սքանչելի է և ծովը շատ օդակար. մանուսնդ յօղացաւի բուժիչ Սասրի լճովը՝ համայն Ռուսիոյ մէջ անուանի եղած է, ամէն եկող բժշկուած է, մինչև անգամ անգամաւոյժներ ու կաթուածահարներ առողջացած են: Կան հիւրանոցներ և առուներ՝ որոնց վարձքը, ամառը խիստ ծանրագին է: Ամբողջ ծովկերքը լի է մաքուր տուներով և տարուէ տարի նորանոր շէնքերով կը զարգարուի քաղաքս: Ի հնումն թաթարներէն Կեօզկով կը կոչուէր և Եւպատորիա անունն զրուեցաւ 1784ին Ռուսաց կայսրուհի Եկատերինա Բէն: Թաթար խաներու ժամանակ, սա եղած է Ղրիմու ամենարարգաւած քաղաքը ու նաահանգիստը: Նշաւաւոր էին հին հինգ մեծ դոներով բերդը և բազմաթիւ մզկիթներն՝ որոնցմէ ոմանք տակաւին կը մնան, և նշանաւոր է մին 1552ին կառուցուած՝ Կ. Պուլի Ս. Սոփիայի նմանութեամբ և շատ զեղեցիկ ճարտարապետութեամբ: Թաթարաց ուրիշ քաղաքներու նման պարսպապատ էր, բերդն ունէր լայն խրամ, զոր յետոյ Ռուսները լեցուցին և բերդը բանդեցին: Քաղաքին մէջ խրաքանչիւր ազգ ունի իրեն եկեղեցին, մզկիթն կամ ժողովարանն: Կան վաճառատուններ, պագարներ, բաղնիքներ, և այլն: Հ. Բժշկեան՝ իւր այցելութեան միջոց քաղաքին մէջ 90 տուն հայ գտած է, որոնց թիւն այժմ աւելի նուազ է: Կը պարապին վաճառականութեամբ և ունին Ս. Նիկողայոս անուամբ մեծ ու զեղեցիկ եկեղեցի էր: Կան նաև քանի մը տուն կաթուղիկեայ Հայք

և ունին մատուտ սը: Եւպատորիա՝ քաղաքի մը յատուկ ամէն տեսակ հասարակաց շինութիւններ և զրօսանաց վայրեր ունի: Գլխաւոր տաւարոյ նիւթն է ազրը, որ մեքէակայ ազային լճերէն կը հանուի տարին 16 միլիոն փութէն աւելի. կ'արտածեն նաև ցորեն, գարի, կաշի, բուրդ, և այլն: — Ճանապարհ. Ի Լեհաստան, 283-287:

ԵՒՔԱՐԱ կամ ԷՅԵԿԻՐԷ. — Չուա հայաբնակ գիւղ, Կեսարիայէն երեք ժամու ճանապարհ հեռու և Ս. Կարապետի վանքին 10 վայրկեան մօտ: Բնակիչը 420 տունէ աւելի են. ունին փառաւոր եկեղեցի մը Ս. Ստեփանոսի նուիրուած, զեղեցիկ զանգակատունով և զմբէթով 1871ին շինուած: Ռունին երկու վարժարան, ազայոցը՝ Թորոգմեան կը կոչուի և ունի 130 աշակերտ. իսկ աղջկանցը՝ Ազապեան, և ունի 40 աշակերտուհի: Հայախօս են և զարմանալի զաւաստարարաւ մ'ունին: Հայրենիք է զիւր Գոհաոր Նահապետ Ռուսինեանի, որ Կ. Պուլի մէջ ազգային պաշտօնավարութեամբ և օրէնսդրութեամբը նշանաւոր էր: Գիւղին մէջ Ս. Սարգիս և ուրիշ անուններով ուխտասեղիներէ զատ, կայ նաև Ս. Գեորգ անուամբ մատուտ մը, որ փորածոյ է փոքր խցիկով և խորշերով. ունի խորան մը և զուս՝ զոր կը փակեն և տարին անգամ մը բանալով, Ս. Գեորգի տօնին պատարագ կը մատուցանեն:

ԵՒՐՈՊԱ. — Հին աշխարհի երեք մասերէն աւելի յառաջագէմը. տարածութիւնն է 9732250 քո. հզրմ. և բնակիչը 37803800: Այս աշխարհի զանազան աէրութեանց մէջ զազթոզ և բնակող հազարաւոր Հայոց վրայ կը խօսուի իրենց կարգին:

ԵՓԵՍՍՍ. Տես ԳՈՒՇ ՍՍԱ:

ԵՓՐԱՏ. Գղ. EUPHRATE. Ռ. *اتر*. Ռ. *Ephratos*. — Հայաստանի գլխաւոր գետերէն մին, որ Ս. Գրոց մէջ կը մականուանի Մեծ գետ, Ազաթանգեղոսէն՝ Եփրատական գետ, Երզնկացիէն՝ Գետ Եղեմարադիս: Բրդխեղով Հայոց լեռներէն, կը միանայ Տիգրիսի հետ և ձեւացնելով Շար-էր-Այսպ գետը կը թափի Պարսից ծոցը: Գետս կը բղխէ երկու զանազան տեղերէ, ինչպէս յայտնի կը զնէ նաև վարդան աշխարհա-



գիրը ըսելով. «Գեան Եփրատ յԵկեղեցաց գաւառին է, և մի ահկն ի յԱրզրում է, և Երկրորդ ահկն ի յԱրճէշ է. ի Սուրբ Ոսկե- նից ելանէ և անցանէ ընդ Տարօն և գնայ ընդ Ասորեստան»): այս պատճառաւ աշխարհ- հազարութեան ետեւը սպուած չորս գետերու ստորագրութեան մէջ, Եփրատայ ականց վը- րայ գրուած է. «Ելանէ ի Հայք ի Բագ- րեանդայ, և ի Կարնոյ լեռանց մօտ ի յԱրճն քաղաք»): Բագրեանդ ուրիշ տեղ է և Կարին ուրիշ, բայց ասով կ'ուզէ ըսել, թէ երկու այլ և այլ տեղեր ունէր իրեն ա- կունքները, մին Բագրեանդայ կամ մանա- ւանդ Ծաղկոտն գաւառի մէջ, որ սահմանա- կից էր Բագրեանդայ և միւսը Կարնոյ լեռանց մէջ: Դոյն բանը կ'ուզէ յայտնել նաև Խո- րենացին (Գ. ԿԳԾ) Կարնոյ քաղաքին գրից համար ըսելովն. «Այ կարի ի բացեայ տե- ղեացն՝ ուր Եփրատայ մասինն ինչ բղխն ազբիւրք ականց»): Եփրատայ այս երկու գլխաւոր ճիւղերու ընդհանուր ընթացքը գրեթէ զուգահեռական է արեւելքէ ա- րեւմուտք: Հարաւային ճիւղն է Արածանի որ այլազգիներէն Մուրատ կը կոչուի և կը բղխէ Տիւաթինի հարաւային կողմի Ծաղ- կանց լեռներէն, որուն նկարագիրն արդէն բրած ենք Արածանի անուան ներքոյ: Այս ճիւղին քանակն աւելի առատ է և ունի բազ- մաթիւ օժանդակներ: Երկրորդ ճիւղն՝ հիւ- սիսայինը, կը բղխի Կարնոյ մերձաւոր լեռ- ներէն, որ սովորաբար ծանօթ է Եփրատ ա- նուամբ, թէպէտև այս գետական անունն գոր- ծածական չէ տեղացի այլազգիներէն, որուն Գարս—սու (Սեւ—չոք) անունը կու տան: Այս ճիւղն եւս նկարագրած ենք Գարս—Սու անուան ներքոյ: Թողլով բազմաթիւ օտար- ազգի և ազգային գրիչներու նկարագիրն Եփրատայ, ինձ քաղցր է ի մէջ բերել Հայոց Դահապետի հետեւեալ տողերը. «Եփրատ գետ մեր աշխարհին բարձրագոյն գաշաա- գաւառն թափ ու թափ սահելով, քանի որ կ'իջնայ՝ թէ՛ ջրերուն շատութեամբը և թէ՛ երկրին ցածնալովն՝ ուժովնալով, այս երկու Հայոց (Մեծ և Փոքր) սահմանաց մէջ ամե- նէն աւելի ոյժ կը բանեցընէ, այդ անտի- տաւրեան ընակառոյց պարսպաց հանդիպե- լով, ժայռք և ջուրք գլխադէմ կամ մէջ

ընդ մէջ կը գարնուին կը կուտարին, և այն կակուղ ջուրերն սնուպարին սպառած քա- րերու յաղթող կ'երեւան. կը փորեն կը խո- րեն գանոնք, իրենց ճամբայ կը բանան, ի հարկէ ի սկզբան նեղ և զժուարին, զոր մեծամեծ ժայռք և կոշկոտք կարծես հա- կառակելով արգելուլ կը ջանան. Եփրատայ ալիքն ժամերով կը կուտին, ու փրփրալով քարէ քար գարնուելով փշրելով ու մրմնալով առաջ կ'անցնին»): Կապան Մատենէն բիշ մը վեր, Եփրատայ երկու ճիւղերը կը միա- նան և այնուհետև Եփրատ հզօրացած կ'իջ- նէ գէպի հարաւ և ապա գէպի արեւելքը գառ- նալով լայն և ընդարձակ գաշաբուր մէջէն կը մտնէ յԱսորեստան և ի Բարբելն, ուր Տիգրիսի հետ Միջագետքը ձեռացնելով, յուսթի և յալթական ալիքներովը՝ վերջա- պէս կը միանայ իր գաշնակցի (Տիգրիսի) հետ, և մինչեւ Պարսից և Արարիոյ սահ- մաններուն մօտենալով՝ կ'անհետանայ Պարս- կային ծոցի մէջ: Եփրատ երբեմն կը յարգէ սաստիկ անձրեւներէ և ձեան հալած ջուրերէն առատանալով, սակայն Դեղոսի հանդոյն կանոնաւոր չէ իր յարսութիւնն: Զգալի կ'ըլ- լայ մարտի սկիզբները, և աստիճանաբար առատանալով՝ մինչեւ մայիսի վերջերը իւր առատութեան վերջին կէտին կը հասնի, գրեթէ չորս մետր սովորականն աւելի բար- ձրը: Եփրատայ և Տիգրիսի ջուրց քանա- կութիւնն բազմաթիւ, Տիգրիս՝ Եփրատայ կրկնապատիկը ջուր ունի և աւելի խոր ու երազնիւթաց է քան գԵփրատ: Ստարբոն և ուրիշ հին մատենագիրներ եւս կը յիշեն Եփրատայ առատանալը, որուն համար Ա- սորեստանի մէջ յասուկ փոսեր կը բանա- յին: Գետոյս նաւարկելի լինելն կը յիշեն Պլինիոս, Երոպոսոս և Ստարբոն: Յասուկ ճարտարապետներու յանձնախումբ մը բըն- նելով Եփրատայ նաւարկելիութիւնն՝ որուն գլուխն պիտի լինի Պիրէճիկ, 1893ին ա- ւարակելու համար հարկաւոր ծախքը հանած են 1430000 ֆրանկաց, ոչինչ գումար մը, որուն շնորհիւ ապահով նաւարկութիւն պի- տի ըլլայ Եփրատայ վրայ փոքրիկ շոգենաւ- ներով և պիտի միանայ Պարսկային ծոցը Միջերկրականի հետ, Պիրէճիկէ Հալէպ-



Ալեքսանտրեստա շինուելիք երկաթուղիով: Եփրատայ վերին կողմերը կը նաւարկեն փոքր սասիակայատակ նաւակներով. իսկ Պիրէճիկէն մինչև Հիլլէ, Քեդէք կոչուած լաստերով, զոր կը շինեն գերաններ մէկ մէկու կապելով երկու կարգ, մէկ կարգը երկայնութեամբ և միւս կարգը լայնութեամբ գնելով. գերաններու մէջանդ մնացած քառակուսիներուն մէջ կը կապեն օդով ուսած տիկեր: Լասար այս կերպով պատրաստե-



303. Եփրատ:

լով ձեռքերնին ձող բռնած անտառնոց կը նաւարկեն և կը կառավարեն անոր ընթացքը. ծայրը կայ նաև սաստակ մը զեկի տեղ: Եփրատայ վրայ ի հնումն եղած են և այժմ ալ կան կամուրջներ: Չորս կամուրջներէն մին կարնոյ շամբին մէջ է, բարաշէն և բազմակամար, որ Գունիկի գիւղի անտամբ կը կոչուի Գունիկի կամուրջ. երկրորդն՝ նոյն շամբին վար քարաշէն. երրորդն՝ Բենկեան գիւղի յիմաց փայտաշէն և չորրորդն

ի կամախ փայտաշէն: Գետս ունի նաև այլ և այլ նեղուցներ: Եփրատայ ձկները համեղածաշակ են. Հայաստանի մէջ ունի գանազան տեսակներ, որոնք կը կոչուին Թեփուշ, Գեղիկ, Կարապետիկ, Մոխ և Ընչառ: Յոր ձուկ՝ որ կը սնանի մաքուր ջրով և գարնան Եփրատայ պլտորած միջոց կը փախչի մաքուր առուակներու մէջ, և հոն արգելքներ գնելով բնակիչք զիրաւ. Կ'որսան. կը գանուի նաև ձկան տեսակ մը մարդաչափ և աւելի մեծութեամբ, զոր կեռ կը կոչեն. կը գանուի նաև Սագակ և ուրիշ ձկներ: — Անցեալ գարու մէջ և մինչև մեր ժամանակները Եփրատայ գետահովիտն վրայ հրատարակուած են գանազան լեզուներով այլ և այլ հանդէսներու կամ գրքերու մէջ բազմաթիւ գիտնական ուսումնասիրութիւններ, — Նոր Հայաստան, 16-22: Հնասխոս. Հայաստանի, Ա 123-135: Նշմարք, Ա 3-4: Բազմակեղ, ԼԳ 133. ԼԶ 233: Գաղղ. Նոր Աշխրհքր. Բաւարսն: Մասխ, ԼԳ. 416-418: Եւ այլն, և այլն:

ԵՔՄԱԼ. Տես ԵԿՄԱԼ:  
 ԵՅՁՂԱՏ. ԳԴ. YUSGAT. — Գլխաւոր քաղաք Անկիւրիոյ նահանգին համանուն գետաօրին. առաջնորդանիստ է և կիլիկիոյ կաթողիկոսութեան ենթակայ: Ծինուած է ընդարձակ ձորի մը մէջ, Նօնուարու և Սորուզ-Օրուզ անուն լեռանց կողերուն վրայ գեղեցիկ գիւրքով: Աս հասարակ շէնքերը եւրոպականի հասեւտութեամբ կառուցուած են իւրարմէ անջառ. զուրսէն շէնքերը ներկուած են սպիտակ կրով և աանիքները կղմկնարով ծածկուած են: Երկու հարիւր տարուան քաղաք է Եօզգաս՝ մասնաւորապէս անուանի Չափան-օղլու անուն թուրքէ մը շէնցուած է, որուն անուամբ կանգնուած մզկիթը քաղաքին միակ երեւելի շէնքն է, շառ գեղեցիկ ու հոյակապ: Քաղաքին բնակչաց թիւն թէև Վ. Քիւնէ 15000 կը գնէ, սակայն մօտ 20000 լինելու է, որոնցմէ զբիթէ 9000 հոգի հայ են, բազկացած 2000 ընտանիքէ: Հայք վաճառականութեամբ, զարրնութեամբ, գերձակութեամբ և այլ արհեստներով կը զբաղին և յառաջացած են ըստ արժանոյն: Կան նաև սակաւաթիւ կաթուղիկէ Հայք, որոնք ունին Ս. Աստուածա-



մայր անուն եկեղեցի մը: Բողոքական Հայք 20-30 տուն են, և հակառակ իրենց նուազութեան ունին ժողովարան մը և կանոնաւոր երկսեռ վարժարան, ուր կը յաճախեն 100 Լուսաւորչական հայ աշակերտներ: Մահ-մէտականք 3000 տուն են. կան նաև 300 տուն ֆոյնք: Քաղաքիս տուններն, խանութներն ու շուկայն շատ վայելուչ են և բարեձև: Խանութներուն ու վաճառատանց շատերը քարուկիր են: Թրքաց բնակարանները Հայոց և Յունաց բնակարաններէն բաժնուած են. բայց Հայոց և Յունաց թաղերու մէջ տեղ տեղ կը գտնուին նաև թրքաց տուններ, որոնք չեն ուզեր բաժնուիլ իրենց պապերէն մնացած բնակավայրերէ և կամ իրենց քրիստոնեայ գրացիներէ: Օրն և ջուրը խիստ առողջապահիկ. ձմեռները սաստիկ ցուրտ, իսկ ամառը չդանդաւելու չափ տաք: Զուրը հարաւային կողմի թաղերու մէջ աստա, իսկ հիւսիսային թաղերու մէջ սակաւ է: Նշանաւոր է Շէքեր-Փուռնարը անուն աղբեր ջուրը, որ արդարեւ շաքարի նման քաղցրահամ և մաքուր է. նաև Անկես ֆեհես աղբեր ջուրն նշանաւոր է թեթեւութեամբն. այս երկու աղբիւրներն հիւսիսային կողմն են և ամրան կը նուազին: - Եօզղատի գաւառն կը գտնուի Գասթեմունիի, Սիբաստիոյ կուսակալութեան, և Քիր-Շէհիի ու Կեսարիոյ գաւառաց մէջ. բնակիչները, ըստ վ. Քինէի, են 279897 հոգի, բաժնուած հետևեալ կերպով.

Մահմետականք . . . . .	242989	հոգի
Հայք Լուսաւորչական . . . . .	26989	»
» Կաթողիկէ . . . . .	1510	»
» Բողոքական . . . . .	542	»
Յոյնք . . . . .	4870	»
Պահմացիք . . . . .	997	»

Գումարն... 279897 հոգի:


Կը բաժնուի Եօզղատ, Չորուժ, Սոնկուրու, Աղ-Տաղ-Մատեև և Պոդաղրայեսև հինգ գաւառաց, և կ'ստորարժանի վեց գաւառակներու: Բացի բազմաթիւ թրքաբնակ զիւղերէ, կան 42 հայ զիւղորայք, յորս բնակող Հայերէն շատերը հայախօս են և ունին յատուկ գաւառաբարբառ մը: Ասոնք

ամէնքն ալ գաղթած են Սիբաստիոյ վիճակ Կէմէրէքէ, Սիբաստիոյ զիւղերէ և այլ տեղերէ. սակայն յայտնի չէ թէ ճիշդ գաղթած են: Եօզղատի զիւղերու վիճակապրութիւնն ձեռքերնիս չհասնելով չենք կարող աստ գնել. 42 զիւղերէն հազիւ մէկ երրորդ մասին մէջ վարժարաններ կան, մեծ մասն աղքատութեան պատճառաւ զուրկ մնացած են զպրոցէ: Քաղաքին մէջ Հայք ունին ևրեք վարժարան, որոնք կը կոչուին Մայր վարժարան, Վահանեան և Խորէնեան. աշակերտներու և աշակերտուհիներու թիւն է միահամուտ 832: Եօզղատի ամբողջ առաջնորդական վիճակի մէջ Հայք ունին 43 եկեղեցի: Գաւառիս մէջ շատ տեղեր կան, որ հինաւորց յիշատակներ կը կրեն. հին փորագրութիւններ, մարմարեայ և ազնիւ քարերէ սիւներ, խորհրդաւոր բարձրաքանդակներ, բեւեռաղբեր, և այլն: Կան նաև երեք ջերմուկներ. որոնցմէ մին կը կոչուի Թէրգիլիի. երկաթային է և օգտակար է յօղացուի, թեթեւ կաթնուածի և ուրիշ բանիւր հիւանդութեանց: Երկրորդն է Պուրմալը, որ առաջինէն աւելի ազդու է և ստողջարար: Երրորդն է ֆեօհէի ջերմուկն, որ ս' է և ստողջարար յատկութեանէն զուրկ է և միայն ֆեօհէն օգտփոխութեան զացողները, զբօսանքի համար մէջը կը մանն: Գաւառիս մէջ կան և տեղ տեղ յաճախ կը տեսնուին հայ մաղաղործներ կամ բոշաներ, թափառաշրջիկ և անդատական: Ասոնց մէջ գտնուած հարուստն արաքուստ որոշել զրեթէ անհնար է: Ամէնքն ալ ցնցոսի հագուստներով կը փայլին. խիստ բաւականաւելք, չարքաշ և չուստ կենցաղ մ'ունին. ասոնց հարստութիւնը բնոզանբապէս ջորի է. նշանաւոր պայտարներն իսկ ասոնց չափ չեն ճանչնար այս կենդանւոյն յատկութիւնները: Ասոնց կանայք, հարսուներ և ազջկուներ թափառական Քրդաց կիներէ աւելի առկուն են, և համբերատար, ու ամէն բանի մէջ իրենց արանց հնազանդ: - Եօզղատ գաւառի գլխաւոր բերքերն են. զխտոր, մեղրապ, սփիւն, ալժաժհի, պրօն, բուրդ, ցորեն, համար, գարի, և այլն: Ալմախք շատ առատ և բնախր են. ասրուսան մէջ բնոզանբապէս 1000000 քիլէ արմախք կ'արտա-



ծուին: Իսկ ուրիշ բերքերէն, ինչպէս բուրդ ափիսն, գաղի խէժ, տարին 800000 օսմանեան սահիի արտածութիւն կ'ընէ. այս հաշուին մէջ են նաեւ Կեսարիայէն և Քիր Շէհիրէն եկած նոյն տեսակ բերքերը: Եօզղատ տարեկան տօնավաճառ մ'ունի, որ կ'սկսի յունիս 15ին ու կը տեւէ մինչև յուլիսի վերջը. երեքշաբթի օրերն քաղաքին մէջ խոր մասնաւոր տեղը, իսկ չորեքշաբթի և հինգշաբթի օրերն տեղւոյս հարաւային արեւելեան կողմը ըննապաշտի

քով ու վարկով: Այս ամս մէջ կան ուսեալ ազնուարարոյ զպրոցատէր և կրօնատէր անգամք: Հայք ունին նորահաստատ Աղբաւաստիբայ ընկերութիւն մը, որրոց, աղբաւասաց, անօգնական այրեաց ու թշուառաց օգնելու նպատակաւ: — Եօզղատ քաղաքը թէպէտ անուանի զբօսավայրեր չունի, սակայն Սօղուզ-Օրուզ անուն լեռան վրայ կը գտնուի անտառակ մը, որ 1500էն աւելի մայրի, սոճի ծառերով շրջապատեալ է. Մեղմէր-Կուսար աղբիւր մ'ունի, որուն ջուրը շատ մա-



304. Եօզղատի ընդհանուր տեսարանը:

վրայ, բիւրատր անձինք թուրք, բուրգ, չէրքեղ, հայ և յոյն վաճառականներ, ասիական շատ գաւառներէ օտար զրամասեալք մեծ գումարներ կը բերեն, կը գնեն արջառ, ոչխար, ձի, ջորի. այս տօնավաճառը՝ մեծաւ մասամբ՝ չորքրտանի շահարեբ անառնոց կը պատկանի: Մեր ազգայիններէն արմրեաց վաճառականութեամբ զբաղողաց գլխաւորն է Փափազեան տունն, ասիական շատ գաւառներու և Եւրոպոյի ծովեզերեայ քաղաքներու ծանօթ՝ իր զրամական ուժովն, ընկալածակ գործառնութեամբ և բարձր գիր-

քուր պաղպաղուն ու սկանակիա է. քաղաքապետութիւնը 80 լիրա ծախք ընկելով հովանոց մը կառուցանել աւուած և ճանապարհը խնուցիով յարգարած է. Սօղուզ-Օրուզ բուռած տեղը գառի վեր լեռ մը լինելով զբօսանաց և օպտիոսութեան համար հոն գնացողները յառաջ մեծ զփուտութիւն կը կրէին: — Վ. Քիլեկ, Ա. 292-299: Սոչրնակ, 1901 թիւ 784: Եւ այլն:

ԵՕԹ ԳՈՒՌ ԿՈՆՈՆՈՍ. Տես ԿՈՆՈՆՈՍԻ ՎԱՆԵ: ԵՕԹՆԱՂՔԻԻՐ. — Միտիթար Ապարանեցի



կը յիշէ այս անուամբ զիւզ մը, որ հայ-  
րենիք էր ժԳ գարու մէջ ապրող Հայրապետ  
անուն վարդապետի մը:

ԵՕԹՆՓՈՐԱԿԵԱՆ ԲԱԳԻՆՔ. — Փայտակա-  
րանի հին գաւառներէն մին: Տես ԲԱԳՈՒ:

ԵՕՄԷՁ. — Գիւղ Կեղիի (Չորրորդ Հայր).  
ունի 30 տուն հայ և 13 տուն մահմէտա-  
կան: Հողագործ են:

ԵՕՂՈՒՆ ՕՂՈՒԽ. — Հայաբնակ զիւղաքա-  
ղաք Անտիոքի Սուէյաիյէ գաւառակի. Ան-  
տիոք քաղաքէն 4-5 ժամու ճանապարհ  
հետու: Ամրացած է երկու ահագին լեռնե-  
րու մէջ. մէջտեղէն կը վազէ առատահոս  
գետ մը: Ունի առատ և ընտիր ամէն տե-  
սակ պտուղներ, ինչպէս նաև նարինջ և լե-  
ման: 600 տուն բնակիչներէն միայն 60  
տունը են հայ կաթողիկէ և բողոքական:  
Ժողովրդեան մեծ մասն շերամաբուծութեամբ  
կը զբաղի. ոմանք մետաքսէ ճամկաւոր շա-  
լեր, փողկապներ, և այլն, կը գործեն ու  
կը վաճառեն: Շատեր ալ սանաթ կը շինեն  
փայտէ և սկրքէ: Տեղուոյ Հայր ունին Աղ-  
գային վարժարան մը՝ 32 աշակերտներով:

ԵՕՆՃԱՍՈՒ. — Գիւղ Այրարատոյ Բա-  
ղրեսանդ գաւառի Գարաղիլիակի վիճակի մէջ:  
Գիրքը գեղեցիկ է. ունի 53-60 տուն հայ  
բնակիչ, մեծ մասամբ 1880 թուականի  
զարթնականութենէն վերադարձած, որոնք ի  
սկզբան թէև ազգաս վիճակ մ'ունէին, սա-

կայն իրենց երկրի բարեբերութեան շնորհիւ  
10 տարուան մէջ բաւական հարստացան,  
բայց վերջին տարիներու մէջ ամէն ինչ կո-  
րուսին: Եօնճալու իր բնական զիրքովը և  
յարմարութեամբը կարաւան իջեւանելու վայր  
է. զիւղի ետեւի կողմն վրայ կայ ընդար-  
ձակ գերեզմանատուն, որուն արեւելեան  
կողմը անկուած են բազմաթիւ բարախ և  
ուռի ծառեր. ասոնք քիչ տարուան մէջ ա-  
ճած և անտառ դարձած են, առտ ջուր  
ունենալուն պատճառու: Այս ծառաստանը  
հակեալ լինելով զիւղի արտօրէից և Արա-  
ծանիի վրայ, հիանալի տեսարան կ'ընծա-  
յէ: Գիւղիս երթասարդները վարժած են  
միշտ Տփղիս երթալ՝ մշակութեամբ պարա-  
պիլ և զբամ շահիլ: Գիւղս ունի Ս. Աս-  
տուածածիկ անուամբ եկեղեցի մը: Եօնճա-  
լու՝ կը նշանակէ աուուսանոց, այժմ ևս  
այստեղ աուուսը լաւ կ'աճի, որուն համար  
կարաւանը հոս գաղար կ'առնէ: Հաւանա-  
կան է կարծելն թէ Եօնճալու բլլայ հին  
Առաշխանոց զիւղն: — Բարբեւանդ, 260-  
261:

ԵՕՆՃԱՍՈՒ. — Հայաբնակ զիւղ վերին  
Պուլանրիսի. ունի 1400 բնակիչ, բաժնուած  
153 տան, յորս կան նաև քանի մը տուն  
բողոքական հայ: Ունին եկեղեցի մը և վար-  
ժարան: Գիւղս թէպէտև ծառաստան չէ,  
սակայն ունի գեղեցիկ տեսարան:



— ԶԱԿ. — Հայարնակ գիւղ Զաւարբի Ախալքալաք. ունի 380 բնակիչ, բաժնուած 40 տան:

ԶԱԿԱՄ. — Գեաակ Արցախի կողմ գաւառի մէջ, որուն գաւառերը կը կազմեն նոյն գաւառի միջին մասը: Այս գետոյն անուամբ ժամանակաւ ձեւացած են կողմ գաւառի երկրորդ մասը կազմող կրկին Զակամները՝ վերին և Ստորին անուամբ: Զակամ գետակի հովիտն իրրեւ երկրաբան գաւառի շարունակութենէն մասձ է լիններու մէջ: Հովիտս կը ներկայացնէ հեռուոր հնութեանց հետքեր և բեկորներ, աւերակներու թափուած բարեր, հին և կողիա խեցեղէն անօթներու կտորներ, և այլն: Այս հովտի Ստորին Զակամի մէջ են հին խաղիաղ բազալի աւերակները. կան նաեւ գետակի աջ ու ձախ կողմերը եկեղեցիներու աւերակներ և հանգստարաններ: Երկու Զակամները միասին Աղուանից Երայի կաթուղիկոսը կ'անուանէ Ամիրչաւ Ծատիկու: Իսկ Առաքել պատմիչ կը յիշէ վերին Զակամ՝ ըսելով. «Մեքքիսեթ եպիսկոպոսն ի վերին Զակամայ»: Վարդան աշխարհագիրն եւս կը յիշէ Զակամ ըսելով. «Գանձակ կանձա է իւր զիճակիսն և Զակամով, ..»: Արցախի Քուստի գաւառի Հախում գիւղի տաճարի մէջ պահուած, և ՌՁԲ (= 1633) թուին գրուած աւետարանի վր յիշատակարանի մէջ եւս կը յիշուի. «Գրեցաւ սուրբ աւետարանս և ի գան և ի նեղ ժամանակիս, ի լաւ, ըն-

տիր արինակէ ի յերկիրս վերին Զակամ, ի գիւղս՝ որ կուչի Ծարար բեկ...»: Արցախ, 60:

ԶԱԿԱՇ. — Գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, գրած ենք նաեւ Ակոչ ձեւով:

ԶԱԿԱՅ. — Գիւղ Բարձր Հայոց Սպեր գաւառի մէջ:


ԶԱԿԱՍ. — Եղծայ լեռանց Հայաստանի հարաւ արեւելեան կողմը: Վանայ և Որմիոյ ծովակաց մէջ կ'երկնան Պարսից կողմերէն գէպի արեւմտեան հիւսիս, և Հայաստանը կը բաժնեն Պարսկաստանէն: Օտարազգի հին գրիչներէն կոչուած է նաեւ Զարխու:

ԶԱՂԱՍԱՍ. — Հայարնակ գիւղ Սիւնեաց Սոգր գաւառի մէջ, Գեղամայ ծովակի հարաւ-արեւելեան ափունքը: Բնակիչք [695 հոգի են, բաժնուած 83 տան, որոնց նախնիք զաղծած են Մշոյ, Պուլանբոյ և Մանազկերտի գաւառներէն. ունին Ս. Աստուածածիկ անուամբ եկեղեցի մը: Գիւղս շամբուս և եղեգնուս լճակի մօտ լինելով, օդը այնչափ լաւ չէ: Կը խմեն ծովի փոսակար ջուրը. ամառը թէև ունին աղբիւր, բայց ձմեռը ձիւնով ու սառուցով կը ծածկուի: Այս գիւղացիք վարելահող չունենալու պատճառաւ՝ ձկնորսութեամբ կը պարապին: Գիւղիս արեւմտեան կողմը և շրջակայքը կան հին տներու և եկեղեցւոյ աւերակներ, որոնց մօտ նաեւ խաչքարեր ու գերեզմաններ. հոս կայ նաեւ ձիւր բնական մեծութեամբ արձան մը: — Զազալու գիւղի մէջ 1883



Թուին գանուեցաւ ինն ասողով բեւեաւան  
պատմական արձանագրութիւն մը Ճարտու-  
րիս ԲԵ :

գիւղ եւ բերդի մնացորդներ կան, որ կը կո-  
չուի նաեւ 'Քեօրօղոս' գիւցազնացած եւ հըռ-  
չակուած զոյ բերդովի անուամբ:



305 • Չաղաղուի բեւեաւան արձանագրութիւնը :

ԶԱՂԱՐԱՆ. — Գետակ Այրարատայ ճա-  
կաք գաւառի մէջ. աջակողմեան օժանդակ  
էջրասխայ:

ԶԱՂԻՆ կամ ԶԵՂԻՆ. — Այրարատայ  
Բառն (Ստորին) գաւառի մէջ այս անուամբ

ԶԱՂՅՆՔ. — Կը յիշուի այս անուամբ  
գիւղ Այրարատայ Բազրեւանդ գաւառի մէջ:

ԶԱՄԱՆ. — Աւերակ գիւղատեղի Սիւնեաց  
Սոգբ գաւառի մէջ, ինակ լերան հարաւ ա-  
րեւելեան կողմը, գեաեզրի մօտ:



ԶԱՄԱՆԳԻ կամ ԻՍՄԻԳՈՒԻ. — Լեոնային կիլիկիոյ մէջ արեւմտեան օժանդակ Սարոսի, կը բղխէ Գալի—տաղ լեոնէն և կը ձեւացնէ ձորահովիտ մը:

ԶԱՄԻՅՂ. — Գիւղ Չարսանճաղի խողող գաւառակի: 10 տուն հայ կայ՝ Ս. Միևս անուաւր եկեղեցիով:

ԶԱՅԻՄ. — Գիւղ Ալբարատայ Վանանդ գաւառի Չարիշատ վիճակի մէջ, կարուց զեռոյն ձախակողմը: Հոս՝ 1877ին, Ռուսները զըրին իրենց բանակը կարար պաշարելու համար, ուր և մնաւ անոնց Չիւքայէֆ զօրավարը, վիրաւորուելով մայիսի 16ին կուսին մէջ, նոյն տան մէջ՝ ուր քսանուերեք տարի առաջ, նախընթաց Ռուս և Թուրք պատերազմին, մեռած էր Օրպէլեան զօրավարը: Գիւղիս բնակիչք հայ են 255 հոգի, բաժնուած 29 տան:

ԶԱՆԳԵԶՈՒՐ կամ ԶԱՆԿԵԱԶՕՐ. — Հայոց տիրապետութեան ժամանակ այս գաւառս կը կազմէր Սիւնեաց աշխարհի մէկ մասը՝ այժմ կ'իյնայ Գանձակի նահանգի մէջ: Սահմաններն են արեւելքէ և արեւելահարաւան՝ Ճիլղայիլի և Շուշիի գաւառները, հիւսիսէ Չուանշիրի գաւառը, արեւմուտքէ և արեւմրտահարաւան՝ Շարուր—Տարաղաղղի և Նախիջևանի գաւառները, և հարաւէն ու արեւելահարաւան Երասխ գետը: Այս ընդարձակ գաւառը կը բռնէ 13732 քառակ. մղոն տարածութիւն և կ'ստորաբաժանուի չորս ոստիկանական մասերու՝ Սիւխան, Չանգեղուր, Ղափան և Մեղրի: Բուն Չանգեղուր գաւառամասի սահմաններն են հիւսիսէն Չուանշիրի գաւառը, Մուխտաբեան, Գեղիս, Չիլգեազ, Ալաղայա լեոներով. արեւելքէն՝ Շուշիի գաւառը, Ղըրիս—ղըզ լեոնաշղթայով, Սարի—պապա, Քիրս, և Չիարատ լեոներով. հարաւէն՝ Մեղրիի ոստիկանական շրջանը, Քիւչիւկ շայով և Գիւմպէզ լեոնով. արեւմուտքէն՝ Սիւխանու ոստիկանական շրջանը, Քարահունջի և Շնհէրի ձորերով, Ալա—կեօլ լճով և Խմայրատ գաղաթով: — Չանգեղուրի գաւառը կը ներկայացնէ Նախիջևանի և Ղարաբաղի լեոնաշղթաներու մէջ ընկած հոսվիտ մը, որուն բարձրութիւնն է 1200 մետր և ժամանակ մը Սեւանի պէս լիճ է եղեր, որ Բարկուշատ և Հազար գետերու

միջոցով դատարկուեր է: Այս ջրամբարի կեդրոնը կը բարձրանայ Խշղու կամ Քաշալ—տաղ կոչուած լեռը, 11695 ոտնաչափ բարձրութեամբ. շրջակայ հարբուղիներէ ժայթքած և նախկին լճի յատակը քանի մը ոտնաչափ բարձրութեամբ նստած մոխիրը և լաւան, գետերու միջոցով տարուելով ձեւացեր են խոր ձորեր: Չիւքաբարի դարատափերը, որ ծածկուած են հացահատիկներու արտերով կը ցցուին կանաչ հովիտներու մէջ մոխրագոյն, կանաչ, կապոյտ և մինչև անգամ բաց կարմիր քարաժայռերով, որոնց վրայ տեղացող անձրեւը, շաբարի պլնու և կոթողներու ձեւ տուեր է. ասոնք տեղ տեղ կը կազմեն քարախան հողակոյտեր, որոնցմէ մէկ քանին իրենց ծայրերը ունին քարերու խոշոր հատորներ: — Չանգեղուր՝ սաստիկ լեոնոտ է, բազմաթիւ մեծ ու փոքր լեոններ գանազան ուղղութեամբ միմեանց կարելով կը ձեւացնեն մեծ ու փոքր ձորեր ու հովիտներ, որոնց միջով կը հոսին վտակներ ու գետակներ: Ամենամեծ գաղաթը Խշղուն է, որ կը բարձրանայ գաւառիս արեւմտեան սահմանը: Լեռի լեռ մ'է, երկու բարձր գաղաթներէ ձեւացած, որոնցմէ բարձրագոյնը 11625 ոտնաչափ է: Ասոր հարաւակողմը կը ձգուին Ռշ—բախարաբի լեոնները, որ մէկ մէկէ բաւական հեռու և բոլորովին առանձին կանգնած երեք գաղաթներ են: Ասոնց մօտ կը գտնուին նաև Եաւ—բախա (7519), Տաշ—բախա, Շիշ—բախա (7327) և Ռշու—բախա (6698) գաղաթները: Հարաւային սահմանի մօտ գտնուող լեոններն են Ղարբաւ—բախա, մին՝ Մաղանջուկի մօտ (4557), միւսը Մաղմաղակ (3353) լեռան մօտ (3340), Աւրղղ—տաղ (4131), Բաշարեա (4347): Արեւելեան կողմն է Տէյ—տաղ լեոնաշղթան, Ելիլու (7066), Սալուղակ (7083), Սարի—բարա (7574), Ֆիւղեան (7903), Չիլեազ, Գալի—տաղ, Սարի—եօխուշ, Ղըրիս—ղըզ լեոնաշղթան (7324) Ղըր—դարս գաղաթով, Գալիկ—դուշ, Գիւրու—տաղ (6916), և Ալաղայա (7672). հիւսիսային կողմը՝ Չիլիկի, Չիլղեա (7777), Գեղիս, Մախտաբեան լեոնաշղթան (11651), Գալի—տաղ (11907) և Գեալիկ—դալա (11002): Ներքին լեոններէն նշաւ



ԱՇԽԱՏԱԿՆԵՐԻ ԶԱՆԿԵԶՈՒՐԻ ԿՈՒՍՈՒՒՄ

Հ Ա Յ Ա Ր Ե Ն Ա Կ Գ Ի Ի Ղ Ո Ր Է Ի Յ

ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՅ				Հ Ա Յ Ք		
Ա. Վ Ի Ճ Ա Կ				ՏՈՒՑ	ՆՈՒՑ	ՕՍՈՐ
ՏՈՒՑ	ՆՈՒՑ	ՕՍՈՐ	ՏՈՒՑ	ՆՈՒՑ	ՕՍՈՐ	
1	Ագր-բնա	42	365	—	—	—
2	Աւելու.	79	562	—	—	—
3	Աւելութեան	111	1088	—	—	—
4	Անդեղակոթ	179	1631	—	—	—
5	Բնուհիս	36	282	—	—	—
6	Բանակոթ	178	2060	—	—	—
7	Գարագիլիսէ	69	680	37	—	—
8	Գարագիլիսէ (Գարեհիկ)	43	379	—	—	—
9	Գետաձաղ	33	265	—	—	—
10	Գուշէի (Թաղաբնա)	69	481	—	—	—
11	Գարագիլիսէ	42	333	110	—	—
12	Կարգի	41	418	1	—	—
13	Կրիցաթումբ	25	222	—	—	—
14	Լճեհ	27	211	—	—	—
15	Լոր	37	384	—	—	—
16	Խոտ	134	909	—	—	—
17	Հալիճոր	66	534	—	—	—
18	Մարա	76	821	—	—	—
19	Շաղառ	125	1214	1	—	—
20	Շնաձաղ	61	562	—	—	—
21	Շնէր	186	1509	—	—	—
22	Ռոչ	125	904	1	—	—
23	Պարեկ	39	360	2	—	—
24	Սուարանց	21	269	1	—	—
25	Տաթև	192	1865	8	—	—
26	Տանձառափ	31	312	1	—	—
27	Տլորս, Տլուս	60	563	22	—	—
28	Բարաշունջ	104	976	1	—	—
ԱՄՐՈՂՆ Ա ՎԻՃԱԿԻ ՄԷՂ			2231	20159	185	—
Բ. Վ Ի Ճ Ա Կ				ՏՈՒՑ	ՆՈՒՑ	ՕՍՈՐ
1	Աւելուիբնա Ա.	76	643	20	—	—
2	Աւելուիբնա Բ.	99	883	—	—	—
3	Արախ	15	134	—	—	—
4	Գարե-տէրեփ	337	2631	—	—	—
5	Գորէս (Գանդեղաբ)	459	3142	1	—	—
6	Գաշբնա	58	600	—	—	—
7	Խնածախ	188	1465	50	—	—
8	Խնձորեկ	613	4219	—	—	—
9	Խոզնաւար	57	509	36	—	—
10	Կէրեղուր (Կոռնձոր)	219	1334	—	—	—
11	Հարար (Խարալ)	184	1004	—	—	—
12	Հերու	58	446	—	—	—
13	Մարաջուկ	23	263	—	—	—
13	Մինքեհ	47	453	23	—	—
15	Ռեւանապառ	37	317	—	—	—
16	Տեղ	472	3159	—	—	—
ԱՄՐՈՂՆ Բ ՎԻՃԱԿԻ ՄԷՂ			2892	21202	130	—
ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՅ				Հ Ա Յ Ք		
Գ. Վ Ի Ճ Ա Կ				ՏՈՒՑ	ՆՈՒՑ	ՕՍՈՐ
1	Ագարակ	76	969	—	—	—
2	Ախտախանա	26	279	—	—	—
3	Աղահոր	67	700	—	—	—
4	Արճուհեհիկ	98	855	—	—	—
5	Արջաձոր	57	510	—	—	—
6	Զէրփ	59	592	—	—	—
7	Խոտանան վեր. և Ներք.	42	446	—	—	—
8	Մեղրեշան	23	258	—	—	—
9	Նորաշինիկ	62	421	10	—	—
10	Չափու	38	394	—	—	—
11	Սեւաբար	84	694	—	—	—
12	Միրքեղաղ	28	290	—	—	—
13	Վճանիս	36	382	—	—	—
14	Տակնառակու	22	236	—	—	—
ԱՄՐՈՂՆ Գ ՎԻՃԱԿԻ ՄԷՂ			718	7026	10	—
Դ. Վ Ի Ճ Ա Կ				ՏՈՒՑ	ՆՈՒՑ	ՕՍՈՐ
1	Ագարակ	17	142	—	—	—
2	Ատաղօր	99	795	—	—	—
3	Բաղաւիրջ (Բեխեւրջի)	38	324	—	—	—
4	Բանխու	33	365	—	—	—
5	Բեխ	29	267	—	—	—
6	Բուհրուտ	23	242	—	—	—
7	Գեշտին (Գաշտան)	28	238	—	—	—
8	Լիշի (Շեշիբնա)	48	364	—	—	—
9	Կարեք (Քեղաւոր)	30	315	—	—	—
10	Կաւարա	54	453	—	—	—
11	Կէճանան (Փաջարանց)	46	465	—	—	—
12	Կուսկուճ (Ռեակուճ)	48	507	—	—	—
13	Կուրխ	23	190	—	—	—
14	Մալփալան	41	281	—	—	—
15	Մեղրի	167	947	—	—	—
16	Շաշիբնա	27	267	—	—	—
17	Շիկանոյ	84	744	—	—	—
18	Չարասին (Ճարեհ)	38	351	—	—	—
19	Պառաւառուն	41	332	—	—	—
20	Վաղրափար (Պուղափար)	19	176	—	—	—
21	Վանք	34	292	—	—	—
22	Վեշապան	43	385	—	—	—
23	Քիլիսարեհնա	19	154	—	—	—
24	Քուրթեհնա	36	442	—	—	—
ԱՄՐՈՂՆ Դ ՎԻՃԱԿԻ ՄԷՂ			1065	9038	—	—
Համագումար Զանգե- զուրի գաւառի				ՏՈՒՑ	ՆՈՒՑ	ՕՍՈՐ
			2892	21202	130	—
			6906	57425	325	—



նաւոր են, հիւսիսէն գէպի հարաւ՝ Քէշիշ-րափա (7560), Զուդարար, Քեադիր-դաւ (10492), Ախրայար, Ղապան-կեաղղ (7016), Ղուրեան-բարա (6124), Արաւ-շառի (4456), Վէակիլ (6006), Պիրչան (4794), Զիրախի բաշի (6099), Էհրանաւ րափասի (6364), Եպղրափա (6298), Տեղ (5180), Ղրղր-բողազ-դարի (11059), Հոչաւ (6342), Լաշին (8328), Եպղրուզ-տաղ (5410), Զամեն-գեով (5294), Գաւ-մեկիք (6761), Բիգովչի-դարի (8448), Քեչար-տաղ (10648), Զայրուն (6287), Ղազի գիշրան բաշի (7450), Ղամիշ-բա-փա (4449), Տօրիսան-եայի (4490), Գաշ-րեւո-եայ (6824), Մագնագակ (3843), Բեզվիկ տաղ (3656), Քարանուէ-րափա (5535): — Զանգեզուրի մէջ մեծ լճեր չկան. զլիւսուորն է Ղարա-կեօ լճակը. միւս լճակ-ներն են. Ղալեր-կեօ, Ղաղի-կեօ՝ որ ամ-բողջապէս եղէզով ծածկուած է, Օրոշեար, Արակեօեար, Զիֆտլի լճակ, Շենք-կեօ և Ուշրափա կեօ: Այս բոլոր լճակները կը գոյանան գարնան հալուող ձիւներէն և ա-մառ կը նուաղին ու կը քաշուին: — Գա-ւառիս ամենանշանաւոր գետն է Հագարու գետ՝ որ իւր աջ ու ձախ կողմերէն կ'ըն-դունի ոչ սակաւ վտակներ. նշանաւոր է նաև Գորիսի գետը: Զանգեզուր ունի նաև ջրվէժ մը Քարահունջ գիւղի հիւսի-սային կողմը, որ կը վիժէ մօտ 16 սաժէն բարձրութենէ և գեղեցիկ տեսարան կ'ընծայէ. ժողովուրդը ջրի հանած ձայնէն ջրվէժս Շրա-սան կը կոչէ: — Թէև Զանգեզուրի ոստի-կանական բաժնի մէջ չկան մշակուող հան-քեր, սակայն տեղ տեղ յայտնուեր են հան-քեր, որոնք թերեւ ժամանակին շահագոր-ծուին: Ասոնցմէ նշանաւոր են Քարահունջ գիւղի երկաթի և կաւճի հանքերը, Գաուա-լիի պղնձի հանքը՝ որ կ'երևի թէ ի հոռմն շահագործուած է, Խնձորեօիկի աղի և պղնձի հանքերը ու Հաճի Սամլուի պղնձի և հանքա-յին ձիւթի հանքերը: Բաւական հարուստ է հանքային ջրերով, սակայն ոչ մէկն ալ կանոնաւոր կերպով չեն շահագործուիր: Գա-ւառիս կլիման ընդհանրապէս անոջարար է և տեղոյ բարձրութեան համեմատ փո-փոխական. մինչդեռ բարձրաւանդակներու

վրայ ցուրտ է, Հագարի և Բարկուշատի հովիտներու մէջ սաստիկ տաք է: Բարձ-րաւանդակներու վրայ ձմեռը կը տևէ 6 ա-միս և թէպէտ շատ խիստ չէ, բայց սաս-տիկ ձիւն կու գայ և բուք կը լինի: Ուշ-թափալարի բարձրաւանդակի վրայ այնպէս խիստ կը լինին այս բուքերը, որ Գորիսի և Սիսիանի մէջ հազորակցութիւնն կ'ընդ-հատուի բանի մը ամիս: Դեռ հին ժամա-նակներէն այս տեղերը բարձր քարեր ցցուած են և մեծ ծառ մը թողած են ճանապարհի եզերքը՝ սրպէս զի բքէն բռնուած ուղեւորը կարողանայ ճանապարհ գտնել. բայց պար-ձեալ գրեթէ ամէն տարի զոհեր կը պա-տահին: Գարունը և աշունը անձրևային են և ամպամած: Յաճախ տեղացող անձ-րեւները թէև կը նպաստեն բուսականու-թեան աճման, սակայն ցորենին կը փա-սեն, ցօղունը աճեցնելով թոյլ չեն տար լաւ հասկ բնելու: Օդի խոնաւութենէն բնա-կիչներու մէջ շատ տարածուած է սկրա-ցաւը: Հագարի և Բարկուշատի հովիտնե-րու մէջ երբեմն այն աստիճանի սաստիկ սոթ կը լինի, որ մարդ գժուարաւ կրնայ շունչ աննել: — Գաւառամասիս աւելի Հա-ճի Սամլուի կողմը ծածկուած է խիտ անառ-ոտով, ուր կը գտնուին զլիւսուորապէս՝ կաղ-նի, բոխի, հաճարկի, հացիկի, ցրանի, սզնի, նարնջափայտ, և այլն: Պաղատու ծառերէն թէ՛ անտառները և թէ՛ այլիները կը գտնուին խնձորենի, տանձենի, սալորե-նի, կեռասենի, թթենի, և այլն: Արտերու մէջ կը ցանեն զանազան տեսակ ցորեն, գարի և հաճար: Ընտանի կենդանիներէն աւելի կը պահեն՝ ոչխար, այծ, կով, էշ, ջրի, ձի: Վայրենի կենդանիներէն անտառ-ները կը գտնուին նապաստակ, եղնիկ, այ-ծեամն, աղուէս, գայլ և երբեմն արջ: Վայ-րենի թռչուններէն կը գտնուին՝ աղաւնի, կարաւ, տատրակ, փասիան, լոր, բաղէ, բուէճ, շահէն, արծիւ, և այլն. բնտանիներէն զլիւսուորապէս կը պահեն՝ հաւ, տեղ տեղ ալ հոգկահաւ, սագ և բաղ:

Զանգեզուրի ոստիկանական շրջանը կ'իշ-նայ համանուն գաւառի արեւելահիւսիսային կողմը և ամբողջովին կը բռնէ նախկին Հա-բանդ գաւառը, որ կ'ստորաբաժանուի երեք



մասի Բարիուշաայ ձոր, Չագեձոր և Աղազէճք: Բարիուշաայ ձորը՝ այժմեան Շնհէրի ձորն է, Չագեձորը՝ Գորիսը իւր շրջակայքով, իսկ Աղազէճքը՝ այժմեան Մազաուզը: Այս հին անուաները ընդհանրապէս ալ չեն գործածուիր և ամենուն տեղ կը գործածուի Չանգեղուր անունը: Հ. Ալիշան՝ Չանգեղուր անունը ծագած կը համարի Չա-

բագմաթիւ ծակերու կամ արհեստական բարայրներու պատճառաւ: Չանգեղուր անուան ստուգարանութեան մասին ժողովրդական աւանդութիւն մ'ալ կայ, զոր յիշած ենք Գորէսի նկարագրութեան վերջը: — Չանգեղուրի շրջանը սաստիկ շնոնոտ լինելով և հազորդակցութեան ճանապարհներ չունենալով ինչպէս այժմ, նոյնպէս և անցեա-



306. Չանգեղուրցի հայ կիներ ամուսնի ձեռքիմ ջուր կը լեցնէ:

ղեձոր անուան աղաւաղումէն, իսկ վերջինս Չագ նահապետի անունէն. հաւանական կարելի է համարել այս ենթադրութիւնը, բայց կարծողներ կան նաեւ որ Չագեձորը յառաջ եկած է ոչ թէ Չագ նահապետի, այլ Ծակերու-ձոր անունէն, որովհետեւ այժմ եւս, Գորիսէն քիչ մը բարձր գտնուող ձորը, ուր եղած է խիստ հին ժամանակները բնակութիւն, կը կոչուի Ծակերու-ձոր, տեղւոյն

լի մէջ շատ անձանօթ մնացիւր է, այնպէս որ միայն հատուկօր տեղեկութիւններ կարելի է գտնել մատենագրաց մօտ, որոնք ամփոփ գաղափար չեն տար գաւառիս պատմական զարգացման մասին: Նորագոյն պատմութենէն ալ յայտնի են Մելիք-Հլուէինեաններու, Մելիք-Բարխուդարեաններու, Մելիք-Հայկազնի և Մելիք-Փարամազի տիրապետութիւնները, որոնք իրրեւ մելիք կառու-



վարեր են, առաջին տնօրէն Գորիսը, երկրորդը՝ Տեղը և Խնձորեսկը, երրորդը՝ Խնածախը և չորրորդը՝ Խնձորեսկը իրենց շրջակայքով: Զանգեզուրի կեդրոնատեղին և գլխաւոր աւանն է Գորիս: Առանձին առիտակով կը ներկայացնենք Զանգեզուր գաւառի հայաբնակ գիւղերու վիճակագիրը: Այդ գիւղերէ գառ գաւառիս մէջ կան ուրիշ ոչ սակաւ հայաձայն կամ հայերէն անուններով գիւղեր, որոնց բնակիչք այժմ այլազ-

աւարներ տեղերէ եկած վերաբնակուած են այս տեղ, որովհետեւ բարբառներով իրարմէ կը տարբերին: Այսպէս առանձին բարբառով կը խօսին. ա. Գորիս և Քարահանը յ. Խնձորեսկ և Մինքէտ, գ. Տեղ, Կոսնձոր և Արախ, դ. Հարար, և. Խոզնաւար և Խնածախ, զ. Շնհէր և Խոտ, է. Հալիձոր: Բնաւորութեամբ Զանգեզուրցիներ կոպիտ է, կասկածոտ, ծածկամիտ և խորամանկ: Կրթութիւնը կը պակաս այս տեղ, նոր սե-



307. Զանգեզուրցի հայ ընտանիք:

Զանգեզուրցի հայ ընտանիքի մասին տեղեկութիւններ:

գիւղեր են: Ամբողջ գաւառի բնակչաց թիւն է 323997, բաղկացած բազմութեան կարգաւ՝ հայ, թաթար, բուրգ և սուս ազգութիւններէ: Զանգեզուրի շրջանի վանքերու մէջ նշանաւոր է Ծիծեռնավանքը:

Գաւառիս հայ բնակչաց մեծագոյն մասը բնիկներ կը համարուին, իսկ փոքրագոյնը՝ Պարսկաստանէն 1828 թուին եկած գաղթականներ են. բայց բնիկ համարուածներն ալ, ինչպէս կ'երևի, հին ժամանակները

բունդէ շատ բշերը զգրոց կը յաճախեն, և այս տարիկանական ամբողջ շրջանի մէջ միայն չորս տարրական պետական զգրոց կայ: Բարոյականութիւնը բաւական բնկած է և կը շարունակէ զգալի կերպով բնիկը, և այն՝ շնորհիւ Բագուի կործանիչ ազդեցութեան: Ամէն տարի գաւառէս հազարաւոր հոգով և մարմնով առողջ երիտասարդներ, անտեսական պատճառներէ ստիպուած և մասամբ ալ Բագուի հարստութեան և վա-



յեղքներու հրապոյրէն գրաւուած, կը զիմեն Ռազու, բայց ցաւալին այն է, որ ընդհանրապէս քանի մը տարիէ վերջ ֆիզիքսպէս և հոգեպէս փճացած կը վերադառնան հայրենիք, դանազան ախտերով ապականուած: — Զանգեզուր գաւառամասի բնակարանները արհեստական քարայրներ են, որոնք տեղական բարբառով քարտակ կը կոչուին: Հին ժամանակները գրեթէ բոլոր բնակարանները այդ տեսակ այրեր եղած են, իսկ այժմ կան և կը շինուին նաև կանոնաւոր տներ: Հեղազեաէ ժողովուրդը զուրս կու գայ քարտակներէն, կը շինէ կանոնաւոր երկյարկանի տներ և քարտակները կը գործածէ իրբև գոմ կամ խոտնոց: Գաւառիս հայ բնակիչները ընդհանրապէս, թէ՛ աղամարդիկ և թէ՛ մանաւանդ կանայք շատ աշխատասէր են: Առ հասարակ կանայք կը կատարեն հեանեալ աշխատանքները, երևիտները խնամել, կերակուր եփել, հաց թխել, ճախարակ մանել, շալ՝ դուլբայ՝ կապերս և գորգ գործել, իզ և պանիր շինել, կարել, կարկասել, ջուր բերել, և դաշտային թիթեւ աշխատութիւններ, իսկ աղամարդիկ՝ վարել, հնձել, փայտ բերել ու կտրել, անասունները դարմանել, բեռնակրութիւն ընել, արելի կարել, կան նաև արհեստներով պարագայներ: Գաւառիս բնակչաց զգեստուց և զարդուց, ինչպէս նաև ընտանեկան բարուց վրայ փափաղոզը՝ անզեկութիւններ կրնան գտնալ, Ե. Լալայեանի, 1898-9ին թիֆլիս հրատարակուած, Զանգեզուրի գաւառ գրքի մէջ, յորմէ քաղած ենք այս սեղեկութեանց մեծագոյն մասը:

ԶԱՆԳԻ. Տես ՀՐԱԶԳԱՆ:

ԶԱՆԿԵԱԶՈՒՐ. Տես ԶԱՆԳԵԶՈՒՐ:

ԶԱՆԿԵԱՆ. — Գիւղ Պարսկաստանի. ունի քանի մը տուն հայ, որոնք զուրկ են ամենայն կրօնական արարողութիւններէ:

ԶԱՆԿԻ. Տես ՀՐԱԶԳԱՆ:

ԶԱՆԿԵԶՈՐ. — Աւան Այրարատայ կողմիս գաւառի մէջ, կընդհատի գետակի մօտ և Բայաղիկի արեւմտակողմը: Քաղաքի մօտ լինելով երբեմն շէն և բարդուած լինակ ունեցեր է: Վերջին Ռուսաց և Թուրքաց պատերազմին պատճառաւ և Քրդաց ասպատակէն աւերեցաւ: Այժմեան լինակն ան-

ժանօթ կը մնայ: Հ. Ինճիճեան՝ զիւղիս մէջ կը յիշէ՝ բրդաձեւ շինուած մը և եկեղեցի: Այժմ՝ գերեզմաններու մէջ կը տեսնուի աւերակ մատուռ մը, և տապանի մը քարին վրայ ԶԻԱ (== 1272) թուականը:

ԶԱՆԿԻ ՊԱՍԱՐ. — Վերջին գարուց մէջ այլազգիներէն այս անուամբ կոչուած է կոտայք (Արարատ) գաւառի ստորին մասը, Երեւան քաղաքէն սկսեալ՝ մինչև Երասխ գետը:

ԶԱՆՔԱՆԱԿԵԱՆ. — Գետակ Սիւնեաց Ազահէճք գաւառի. ունի շատ օժանդակ աղբիւրներ կամ վտակներ:

ԶԱԶՈՒՐԱՐԱԿ. Տես ՍՈՂԻ:

ԶԱՊ ՄԵՄ. — Գետա Տիգրիսի զխաւոր օժանդակներէն մին է, որ յունարէն Լիգոս՝ այսինքն Գայր և Զերպիս ալ կը կոչուէր. կը բղխէ Ամէսիոյ հիւսիսային լեաներէն, վանայ նահանգի հարաւային կողմի ջուրերն ևս կը սկզբնաւորեն այս գետս, ինչպէս նաև Եէհրիզուր նահանգէն բղխած ջուրերը: Երջայտոյտ և արագ ընթացքով առաջ երթալով, Մուսուլէն օր մը վար, Հաախէ քաղաքին մօտ՝ Թօփրաք-գալիի առջև կը թափի Տիգրիսի մէջ: Գետէս բիշ հետու է Փոքր Զայր ըսուած վտակը:

ԶԱՊՈՒԽ. — Այլազգարնակ զիւղ Սիւնեաց Ազահէճք գաւառի. որուն անուամբ ևս կը կոչուի Հագարու աջակողմեան օժանդակն Աց-օղրակ գետ: Նշանաւոր է զիւղս պողատու ծառերով:

ԶԱՌ ԿԱՄ ԶԱՐ. — Գիւղ Այրարատայ կոտայք գաւառի: Ունի 921 բնակիչ, բաժնուած 113 տան, որոնցմէ 40 տունը Հայրց են, իսկ մնացեալը թաթարաց: Հայք ունին Ս. Կարապետ անուամբ պայծառ եկեղեցի մը:

ԶԱՌԱԳԱՐԱԿ. Տես ԳԵՂԱՐՔՈՒՆԻ:

ԶԱՌԱՅ. — Գիւղ Տիգրանակերտի Լճէ գաւառի Հէյնէյ գաւառակի. 5 տուն հայ կայ: Տես ԶԱՐԱՅ:

ԶԱՌԱՓ. — Գիւղ Աղուանից Հօղի գաւառի մէջ. զիրքն արեւելահայկաց է. օղն, կլիման և ջուրն պատուական: Այգեւտ է, զլիաւոր բերքերն են՝ ցորեն և զինի: Ունի 760 տուն հայ, բաժնուած 140 տան. իւր իւր նախնիք ամբողջապէս գաղթած են:



չեն և Զորերը գաւառներէն, ունին Սորբ Գեորգ անուամբ եկեղեցի մը: — Գիւղիս հաւրաւարեմանան կողմը կայ Հին գերեզմանաւան և Ս. Յովնանէս անուամբ Հին ու փոքր եկեղեցի մը՝ փայտաշէն ծածկով, որ այժմ ուխտատեղի է: Բնմի ժողովրդահայրաց երեսը գրած են երեք մեծ, Հին և անարձանաղիր խաչեր: Գերեզմանատան մէջ քարի մը վրայ գրուած է. « Այս է տապաւ Իրախոռոյի որդի Մովսէսիս րվն ՈՄԻՍԷ »:

ԶԱՌԻՆՃ. Տես ԶԱՐԷՆՃԻ:

ԶԱՌԻՍ. — Աւերակ գիւղատեղի Արցախի վարանդա գաւառի մէջ:

ԶԱՌԻՍՏՈՒՆ. — Հայաստան՝ բայց այլազգարնակ (40 տուն) գիւղ Սիւնեաց Շահապօնը գաւառի մէջ:

ԶԱՌԻՍՈՒԿ. — Զորերը գարու կիսուն այս անուամբ Ասորոց վանք մը շինուած է Եփրատայ մօտ (Մեղիտինէ): — Նոյն անուամբ գետ մ՛ալ կը յիշուի Սամուշատի և Մեղիտինէի մէջտեղ:

ԶԱՎՈՒՏԻՍ. Տես ԶԱՌՈՒՐՏԵԱՅ:

ԶԱՏՈՅ. — Գիւղ Այրարատայ Բագրեւանդ գաւառի, Եքմաշի հարաւակողմը 2 ժամ հեռու, Արածանիի աջ ափին վրայ: Գիւղիս բարձրը՝ բլրան մը վրայ կը գտնուին հայկական ընդարձակ գերեզմանատուն, խաչքարեր և եկեղեցոյ մը աւերակը:

ԶԱՐ. Տես ԶԱՌ և ԾԱՐ:

ԶԱՐԱՅ կամ ԶԱՌԱՅ. — Սերաստիոյ աւրելեան կողմը 12 ժամ հեռաւորութեամբ գիւղաքաղաք մ՛է գրեթէ Հինգ հարիւր հայ և թուրք տուներէ բաղկացած: Հայք մօտ 300 տուն են և կը բնակին մասնաւոր թաղերու մէջ: Ունին Ս. Լուսաւորիչ անուամբ Հին եկեղեցի մը և Արշակունեան անուն վարժարան մը: Կան նաև քանի մը տուն հայ Բողոքականք:

ԶԱՐԱՆՅ. — Սակաւարնակ Հայոց գիւղ վանայ շրջակայքը, ունի Ս. Սարգիս անուամբ եկեղեցի մը:

ԶԱՐԱՊԻԱՆԵՆ. — Քրդարնակ գիւղ Այրարատայ Արեղէնը (Արեւել, Ստորին Բասեն) գաւառի մէջ, որուն անուամբ գետ և ձոր եւս կայ:

ԶԱՐԱՒԱՆԿ. Տես ԶԱՐՈՒԱՆԿ:

ԶԱՐԲԱՂ, ՆԵՐԲԻՆ. — Գիւղ Նոր Զուղայու

(Պարսկաստան) Պուրվարի գաւառակի: 30 տուն հայ կայ, աւանց եկեղեցոյ և վարժարանի:

ԶԱՐԲԱՂ, ՎԵՐԻՆ. — Գիւղ Նոր Զուղայու (Պարսկաստան) Պուրվարի գաւառակի: 61 տուն հայ կայ, ունին եկեղեցի և վարժարան:

ԶԱՐԳԱՐԱՆ. Տես ԶԱՐԿԵԱՐԱՆ:

ԶԱՐԳ. — Ըստ Թ. Արծրունեոյ, Արաւշէս Բ, երբ աւարտեց Արտամատ քաղաքի շինութիւնը, « և անմաշելի անկասկածելի զամրոցն պարաստեաց, կոչեաց զանուն ամրոցին Զարդ, այսինքն Պայծառութիւն, ի վերայ պայծառայարգար պատրաստութեան շինուածոյն »:

ԶԱՐԳԱՆԱՇԷՆ. — Հայարնակ գիւղ Գանձակու, Շուշիի գաւառի մէջ: Ունի 816 բնակիչ, բաժնուած 130 տան:

ԶԱՐԻԱՐԵԱՅ ՈՎԻՏ. — Մոկաց աշխարհի Հին Արղաստովիտ գաւառը այսպէս եւս կոչուած է:

ԶԱՐԻԱՐԻՉ. — Գիւղ Խարբերդի (Զորերը Հայք) առաջնորդական վիճակի մէջ. 60 տուն հայ կայ, ունին Ս. Խաչ անուամբ եկեղեցի մը:

ԶԱՐԻԱՐԻՉԻ ՎԱՆՔ. — Կը գտնուի Զարգարիչ գիւղի և Իշմային մօտ, ուտաի կը բղխէ առատ ջուր: Այս վանքը՝ իր պարսպներով, խցերով և տաճարով աւերակ էր բոլորովին, բայց վանահայր Կարապետ վարդապետը († 1889) բաւական վերանորոգեց: Ունի շատ արտ, այլի, ծառ և 24 գիւղ թեմ: Ս. Տաճարը Ս. Արղմսէնի նուիրուած է:

ԶԱՐԻՈՒՆԻ ԿԱՇՏ. — Գաշաս կը գտնուի Աղուանից աշխարհի մէջ, ուր նահատակուեցաւ Եղիշէ առաքեալը:

ԶԱՐԵՀԱՒԱՆ կամ ԶԱՐԵՀՈՒԱՆ. — Պարսկահայոց Հին գաւառներէն մին:

ԶԱՐԵՀԱՒԱՆ, ԶԱՐԵՀԱՒԱՆԿ կամ ԶԱՐԵՀԱՎԱՆ. — Հին քաղաք Այրարատայ Բագրեւանդ գաւառի մէջ, Բագուանի մօտ: Առաջին անգամ կը յիշէ Բուզանդ՝ Արշակ Բ՛ վտարանդութենէն վերջ, Պարսից սեղոյս տիրելն պատմելով. « Անուին զքաղաքն Բագրեւանդայ Զարեհաւան, և խաղացուցանէին անախ Հինգ հազար երկ հայ և ութ



հազար երդ հրեայ, և զքաղաքն ի հիմանց տապալէին յատակէին»: Ուր քիչ վերջ Շապուհ թագաւորը գալով « յաւերս քաղաքին, և հրաման տայր զամենայն այր ի չափ հասեալ կոխան առնել փղաց, և զամենայն կին և զմանուկ հանել ընդ ցից սայլից. հազարք հազարաց և բիւրք բիւրոց սպանան. և զկանայս ազատացն և նախարարացն զփախուցելոցն՝ հրաման տայր ամել յասպարէզն որ էր ի Զարեհաւան քաղաքի... գործել զանօրէնութիւն»: Ուրչափ որ պատմիչը բոլորովին կործանած, աւերած կը յիշէ քաղաքս, սակայն և ոչ գար մը վերջը (450ին), դարձեալ կը յիշուի Զարեհաւան՝ իբրև գիւղ, ուր ընդդէմ Պարսից Վարդանայ հետ միաբանողները, կոտորեցին Պարսից մոզերէն զմանս: Կը յիշուի Զարեհաւան երկու հարիւր տարի վերջն ալ (իբր 655) թուին, Արաբացոց առաջին արշաւանքներու ժամանակ, որոնք Յունաց զօրքերէն անգամ մը նեղուելով հոս ապաստանեցան: — Այս գիւղէն էր հայրենեօք թ գարու վերջերը Սմբատ՝ Թոնդրակեցի ազանպաւորներու առաջնորդը, ինչպէս կը վկայեն Ասողիկ և Գր. Մազիսարոս, ԺԱ դարու կիսուն: Այնուհետև մեր նախնեաց գրքերու մէջ շի յիշուիր Զարեհաւանի անունը: Ինչպէս գիտնականք կը կարծեն, մեր մասնազիրներէն առաջ քաղաքս յիշուած է Պողոմէոս աշխարհագրէն, Բ գարու կիսուն մէջ, և գրուած է այսպէս Ζαρούαγα, Zaruana, և նոյն ժամանակները քաղաքիս մէջ կային նաև բազմաթիւ Հրեաներ, ու բարգաւաճ վիճակի մէջ էր վաճառականութիւնն: Գր. Մազիսարոս Զարեհաւանը կը դնէ Ծաղկոսն գաւառի մէջ, և այս՝ կամ շիոթմամբ և կամ Ծաղկոսն Բագրեւանդայ սահմանակից լինելով, սահմանաց վրայ փոփոխութիւն եղած է ի վերջոյ: — Եօթներորդ դարուն, Ս. Թաթլոյ վարուց պատմիչը կը յիշէ տեղս իբրև քաղաքագիւղ, և կը գրէ Զարեհաւանի. « Ի Զարեհաւանի քաղաքագիւղն յաշնանային ժամանակն՝ հոգն կարիճ բիւեաց որպէս գաւառ. խածանէր զմարդիկն, և հազիւ թէ աղբէր ոք, և մեծ սագնապ հասուցանէր. խորհեցան թողուլ զգեօզն, և եկեալ ի սուրբ տեղիս (Թաթլոյ վանաց), և զգիշերն հըսկե-

ցին. և այդոցն տեալ զսուրբ նշխարն՝ գիւմեցին ի Զարեհաւան. շրջեցան ընդ սահմանս սաղմուսիք և արտասուօք աղաչելով զԱստուած. և Աստուած շնորհեաց զիւր ողորմութիւնն: Էւ յայնմ օրէ մինչև ցայսօր ոչ ոք և տես կարիճ ի Զարեհաւանի, և ոչ մի, և սրախութեամբ օրհնեցին զԱստուած, և ուխտեցին ի սուրբ տեղիս՝ յետուն գրիւ ցրեան ամ յամէ, զոր և ցայժմ ամենայն ուխտեալքն հաւատով անխափան կատարին»: Այժմ անձանօթ կը մնան Զարեհաւանի տեղակներն, որոնք արդարև քննութեան կը կարօտին: — Ստորգր. Հայտ. 410-411: Այրարատ, 41, 517:

ԶԱՐԲԻՏԱԿԵՐՏ. — Միւնեաց Բաղք գաւառի հին գիւղերէն մին:

ԶԱՐԶԻՊԻՎ. — Այլազգաբնակ գիւղ Միւնեաց Սոգք գաւառի. որուն մէջ կայ քայքանուած եկեղեցի մը, սեղանոյն առջև գրուած են երկու ծագկանկար պատուական խաչքարեր՝ միոյն վրայ քանդակուած՝ «Կակեկեցաւ տարբ խաչս Աստուան, րվ. ԶԿԳ. (1514):

ԶԱՐԲՆՃԻ կամ ԶԱՌԻՇՃ. — Գիւղ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, Պօղաօղան գիւղի հարաւային կողմը՝ 10 վերստ հեռու, բաւական ընդարձակ սարալաշտի մը վրայ, որ շրջապատուած է բլուրներով: Աւելի հեռունները, հիւսիսային կողմն է Արագած, արեւելեան կողմն՝ Մասիս, հարաւային կողմն՝ Կաղզուանի լեան ու Ալաւաճա՝ իրենց կատարները կը ցուցնեն: Մերձաւոր բլուրները զանազան անուններ ունին. արեւելեան կողմը Ղարլանի ձորն ու Մատատայի բլրակներն են. հարաւային կողմն՝ Սարայի թէփէ, հիւսիսային կողմն՝ Զարբնճի թէփէ և արեւմտեան կողմն Աթաշի թէփէ: Գիւղիս մէջ աղբիւր չկայ և Արագածէն կու գայ առուակ մը: Զարբնճիի մէկ կողմը լճակ մը շինած են, ուր ժողովուած ջուրը թէ՛ մարդոց և թէ՛ անասնոց համար կը գործածուի: Եկեղեցին՝ գիւղի հիւսիսային կողմն է, որ շինուած կը համարուի Անիի ժամանակ և կը կոչուի Սուրբ Խաչ: Անշուշտ արդի հայ բնակիչներէն նորոգուած է, վասն զի Հ. Ալիշան իր Շիրակին մէջ կործանած վիճակի մէջ կը յիշէ



եկեղեցիս փոքրիկ և խաչաձև, անսին և կամարներու վրայ գմբեթաւորեալ: Ամբողջապէս շինուած էր կարմիր կոփածոյ քարեբոլ, և հիւսիսային թևին վրայ կար աննշան արձանադրութեան մնացորդ մը: Ունի 397 հայ բնակիչ բաժնուած 55 տան, սրնք գաղթած են Բամբակաձորէ, Բասենէ և ուրիշ կողմերէ: Գիւղս 1886ին քրդաբնակ է եղեր. Տ. Գէորդ Հայրապետի միջնորդութեամբ Վուրդերը հանուեր և զիւզն Հայոց յանձնուեր է կառավարութեան կողմէ:

ԶԱՐԹԱՂ. — Գիւղ Նոր Զուղայու (Պարուկաստան) Գեամարա գաւառակի: 12 տուն հայ կայ. չունին ոչ եկեղեցի և ոչ վարժարան:

ԶԱՐԻՇԱՍ. — Այրարատայ վանանդ գաւառի հիւսիսային մասը առանձին վիճակ մը կը ձեւացնէ և կը կոչուի այս անուամբ, չի զիտցուի ո՞ր գորէն սկսեալ: Մեր նախնիներէն իրրեւ շէն յիշուած է Զարիշատ և ոչ վիճակ, և զանազաներու համար Ազիտովիս գաւառի մէջ գանուած նոյնանուն քաղաքէն, Խորենացին կը կոչէ Զարիշատ վաւակոյ: Ամբողջ Զարիշատի վիճակի մէջ կոյ մօս 60 գիւղ՝ 12382 բնակչօք, ասոնց մէջէն հազիւ 1000 հօգի հայ են, միւսնները մեծաւ մասամբ են թուրք, քուրդ, ռուս, և այլն: — Բուն Զարիշատ աւանը կը զբաւնուի համանուն Զարիշատայ գետ և Գմբեթի գետակի խոնորոց անկեան մէջ: Այս՝ Հայոց ամուր քաղաքաց նման գիրքովը և անուամբը, թէև այժմ ողորմելի գիւղ մ'է (ուստարնակ), սակայն կը թուի թէ ի հընումն բաւական նշանուոր վայր մը եղած է: Հ. Ալիշան՝ կը համարի լինել զաստակերտ Արտաշէն Բ՛ Զարեհ որդւոյն, Բ գաւրու առաջին կիսուն, որ հօրմէն զինուորական կողմակալ գրուեցաւ հիւսիսային Հայոց: Զարեհի անուամբ կը կարծուի թէ նախ աւանո կոչուեր է Զարեհաշատ, որ յետոյ եղեր է Զարիշատ: Այժմեան աւանդութիւն մ'ալ կ'ըսէ, թէ Զարուսի գիւղոյի մը անուամբ կոչուեր է աւանս և վիճակը: — Զարիշատէն էր Տիրոսի քահանայ, որդի Մովսիսիան, որ ինչպէս կը թուի, իմաստուն և ճարասան մէկն էր, զոր Ս. Մես-

րոպ և Հայոց եկեղեցւոյն ուխար, ազաշատը զրկեցին Պարսից վումս թագաւորին, որ զՄեծն Սահակ իրեն աթուր դարձրնէ: Զարիշատ աւանի անունն շատ ժամանակներէ ի վեր զազրած է յիշուել և միայն վիճակն ծանօթ է: Հին մեծութեան ի յիշտտակ կը մնայ միայն ամայի քառակուսի ամրոց մը: Զարիշատի տեղը այժմ Ռուսաց զիւղ մը կայ կրեւապերնիյէ անուամբ, և ունի 344 բնակիչ, բաժնուած 63 տան: — Այրարատ, 106-108:

ԶԱՐԻՇԱՍ. — Հին արքունական քաղաք Տուրուբերանի Ազիտովիս գաւառի, որ կառուցուած է Զարա կամ Զուրա անուամբ մէկէ մը, կամ ի յիշատակ անոր: Խորենացին Գնէլի թագումն կը պատմէ ըսելով. «Իջուցեալ ի պաշտն Աղւոյովիս զգին Գրնելոյ՝ թաղեաց յարքունական քաղաքին Զարիշատի»: Բուզանդի գրածին համեմատ (Գ. ԾԵ), Հայոց Արշակ Բ թագաւորի ժամանակ, Պարսիկները քաղաքս կործանեցին, «Անուին և զքաղաքն մեծ Զարիշատ, որ էր ի գաւառին յԱլուհովիս, յո երբ Հրեայս, և ծո երբ Հայոս, և զնա ի հիմանց քանդեալ ապականէին»: Բայց դարձեալ շինուեցաւ, վասն զի Թովմաս Մեծոփեցին կը յիշէ զայն իրրեւ զիւղաքաղաք ԺԵ վարու մէջ:

ԶԱՐԹՈՒ ՇԷՆ. — Հայաբնակ գիւղ Աղուանից Շամախու գաւառի, հիմնուած է Սաղիան գիւղի հիւսիսակողմը: Բնակիչք 22 տուն են, որոնց նախնիք 1830ին գաղթած են Նոր Զուղայի Ղարղուն, Ֆերեայ և Ղաբաղան գիւղերէն: Եկեղեցի չունենալով՝ հագեւոր պէտքերը կը կատարեն Սաղիանի վանքի մէջ:

ԶԱՐԿԵԱՐԱՆ, ԶԱՐԳԱՐԱՆ. — Գիւղ Շամախու Գարգաման գաւառի. հիմնուած է կալկաս մեծ լեռնաշղթայի հարաւահայեաց լանջի վրայ: Աբանչելի է օդն և ջուրն, կլիման և տեսարանը: Տեղական բերքերն են՝ ցորեն, գարի, կորեկ, հաճար, բակլայ, խաշխաշ: Նշանուոր են տանձն ու խնձորք: Պարզի ժամանակ տանձենեաց և խնձորենեաց պարտէզներէն անպակաս են արջերու վահմակներ, մանաւանդ գիշերը: Բնակիչք ամբողջ հայ են 1009 հօգի, բաժնուած 103



տան: Ունին Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը: — Գիւղիս մօտ բլուրի մը վրայ անտառի մէջ խաչասեռ անուամբ ուխտատեղի մը կայ:

**ԶԱՐՈՒԱՆԳ, ԶԱՐԱԽԱՆԳ ԿԱՄ ԶԱՐԵԽԱՆԳ.** — Պարսկահայոց հին դաւառներէն մին, այսպէս կոչուած է Զրուանայ անուամբ: Հին դաւառի այժմ կը համարատարանէ Սարնաստ:

**ԶԱՐՊ.** — Տիգրիսի օժանդակ գետ կը գրէ Ինճիճեան՝ որ է անշուշտ մեր ի կարգին նկարագրած Զայ գետը:

**ԶԱՐՊԻԱՆԷ.** — Այս անուամբ գետ մը կայ Ալլարատայ Արեղեանք (Արեւել, Սառլին Բասեն) գաւառի մէջ: Նոյն է Զարայ-խանէի հետ:

**ԶԱՐՍ. Տես ԵԱՐՍ:**

**ԶԱԻ.** — Այս անուամբ գետ մը կը յիշէ թ. Արծրունին կործէից Որսիրանք գաւառի մէջ. «Եւ զօրքն որ եկեալ էին զհետ Գուրգենայ, եկին հասին ի ոահմանս երկրին՝ ուր կայր Գուրգէն զօրօքն իւրովը, և բնակեցան յեզր գետոյն Զաւ կոչեցեալ»:

**ԶԱԻԱԶՐԻ ՎԱՆՔ.** — Կը յիշուի Սիւնեաց Երնջակ գաւառի մէջ:

**ԶԱԻԷ.** — Արցախի հին դաւառներէն մին, որուն այժմ կը համարատարանէ Ղազախ գաւառը:

**ԶԱԻԻԹԱ.** — Աւան կործէից Ալլարատ գաւառի մէջ. բնակիչք Քաղզէացի են:

**ԶԱՌՈՒՐՏԵԱՅ ԿԱՄ ԶԱՎՈՒՐՏԻՍ.** — Գիւղ Տրապիզոնի, հայ և մահադանական բնակչօք: Հայք 40 տուն են և ունին Ս. Սարգիս անուամբ եկեղեցի մը և վարժարան մը՝ 30 աշակերաներով: Հողագործ ու հովիւ են:

**ԶԱՔ. Տես ԶԷԿ:**

**ԶԱՔԱՐԱՊԱՏ.** — Կը յիշուի Ալլարատայ Արագածոտն գաւառի մէջ:

**ԶԱՔԱՐԻ.** — Գիւղ Քարձը Հայոց այժմեան Կամախ գաւառի մէջ. 50 հայ բնակիչ ունի:

**ԶԱՔԷԻ ՎԱՆՔ. Տես ԵՂՈՒԿ:**

**ԶԱՔԱԹԱԼԱՅ.** — Գլխաւոր քաղաք (կովկաս) համանուն նահանգին. Ալազանի հովտէն 26 և Նոխիէն 120 վերստ հեռու: Ունի մօտ 300 տուն բնակիչք, որոնց մեծ մասը իրը 200 բնասնէք հայ են, ամէնքն ալ գաղթած զանազան տեղերէ, մանաւանդ

Աղաշիտէն, սկսեալ 1815էն: Ունի Ս. Գեորգ անուամբ եկեղեցի և արքունական տալայոց ուսումնարան ու օրիորդաց դպրոց: 1870 թուին քաղաքիս հայ երիտասարդները Պ. Մ. Քոչարեանցի ջանիւք հաստատեցին Հայկական բնթերցարան մը, որ 1873 թուին ունէր մօտ 200 կառք գրեանք: Հայոց մեծ մասը վաճառականութեամբ և փոքր մասը՝ արհեստով, շերամագահութեամբ ու այլևզործութեամբ կը պարսպին: Մնացեալ 100 տունը ուսու, վրացի և լեհ են. բանի մը մահադանական եւս կան, առանց ընտանեաց, ու վաճառականութեամբ կը զբաղին: Քաղաքս կը գտնուի Տաղատանէն զէպի հարաւ արեւելք ձգուող լեռներէն կազմուած անտառապատ ձորակի մը մէջ, որուն երեք կողմերը պարսպի պէս կը բարձրանան անտառաշատ լեռներ. բարեխառն կլիմայի ամէն աստիճանի և միանգամայն ցուրտ կլիմայի ամէն աստիճանի կը զարգարին այս լեռներու ստորոտները, լանջերն ու կատարները. շագանակի, կաղնի, արքայակաղնի, ընկուզի, հինի, շլորի, ինձորի, թեղի և այլ ծառեր շար ի շար կանդած են միւս մեանց ետեւ: Տեղ տեղ կ'երևին ամենազեղեցիկ սյուրակք և ծմակք, զորս կ'ոտոգեն բաղմամբիւ աղբիւրներ և վտակներ: Անտառաց մէջ լի են՝ արջ, գայլ, աղուէս, ճագար, եղնիկ, կաքաւ, լոր, փասեան և այլ տեսակ կենդանիներ և թռչուններ: Գեղեցիկ է քաղաքիս զիւրքը, տները միայրիկ, հասարակ՝ բայց վայելուչ տեսքով. ունի ծառազարդ ուղիղ փողոցներ: Չաքաթալայի ամէն կողմերը կը գտնուին մաքուր ջրոյ հսրեր և աւազաններ: Քաղաքին կեդրոնը զանուած մեծ աւազանի և հրապարակի մօտ են Հայոց եկեղեցին և ուսումնարանը: Նշանաւոր է ամբողջը: Քաղաքիս անուան համար կը պատմուի թէ ժամանակաւ Չաքար և Թալայ անուն երկու եղբարց մին՝ Չաքար, հիւսիս արեւելեան կողմը ճար զիւղի մէջ կը բնակի եւ զեր, իսկ Թալայ՝ հարաւակողմը Թալայ զիւղի մէջ, և թէ այս երկու անուանց միացմամբ յորջորջուեր է երկու զիւղից մէջ գրանուած քաղաքն՝ Չաքարթալայ, և հետզհետէ զործածուելով՝ ր տառն ոչնչացեր է: — Չաքաթալի նահանգը կը պարունակէ 100



զիւզ՝ չորս վիճակաց մէջ. բնակչաց թիւն է 74800՝ երկու սեռը միասին, մեծ մասամբ լեզվի, թուրք, ենդլիով և այլ ազգերէ : Վաճառականութիւնն զլիաւորարար Հայոց ձեռքն է :

ԶԱՔԱՐ—ՔԷՅՅ. — Հայաբնակ փոքրիկ զիւզ Նիկիովիոյ գաւառի, Պարտիզակէ երկու ժամու ճանապարհ հեռու : Կառուցուած է բլրոյ մը վրայ, որ շրջապատեալ է անտառային լեռներով : Այլ անտառներէն զիւզացիք կը պատրաստեն առաղձ, տախակներ, տաշեր, դուշեր և կը վաճառեն շրջակայքը. ձմեռնային վտակափայտը եւս այլ անտառներէն կը կտրեն : Գիւղս ունի բնակարձակ պարարտարօտ մարդագետներ, մօռէն գետակ մը կ'անցնի, օգն ու ջուրն կազուրիչ ու առողջարար են : — Գիւղէն մէկ ժամ հեռու կը գտնուի Վարդապետիկ Աղբիւր կոչուած ջուրը, որուն համար աւանդարար կ'ընեն, թէ Պարտիզակցի Յովհաննէս անուն մենակեաց և մաքրարարոյ վարդապետ մը բրկեցուցած էր իր գաւազանով : — Կէս ժամ հեռու գէպի արեւելք, Սուրբ կոչուած սեղ մը կայ, որ հնութեան հետքեր կը նշմարուին : Զաքար—քէօյի բնակիչք զաղթած են Տրապիզոնի կողմերէն, մանաւանդ Օրտուէ ու Կիրասունէ, 80 տարի յտառջ՝ թուով 70, և հեռոցեանէ շատցած են. 1895ին՝ 150 հոգի էին, 50 տան բաժնուած : Այս զիւզացոց լեզուն շատ մաքուր է. դրար սճեր ու ստացուածներ կը գործածեն, և ոչ երբէք օտար բաներ : Ունին փոքրիկ եկեղեցի մը, որուն զրբերն, պատարագի սպասներն ու զգեստներն նուիրած ու հայթհայթած է Տ. Յովհաննէս Աւագ քահանայ Մկրտան :

ԶԱՔԻՆ ՆԱՀԱՏԱԿ. — Այս անուամբ կիւսակործան փոքր եկեղեցի մը, հանգստարան և զիւղասեղի կայ Կիւլտանի (Արցախ) Գառի-Քեկանց կիսաւեր վանքի հիւսիսային կողմը, Պարանպատ անուն անտառի մէջ, ինչայի ձախ կողմը :

ԶԲԵԼ. — Արցախի Ծար գաւառի զիւզ, որուն բնակչք թէեւ այժմ այլազգիներ են, սակայն մէջը գետ կան հայկական մնացորդներ : Գիւղիս արեւմտեան կողմի ձորէն կը վազէ մեծ աղբիւր մը :

ԶԵՐՈՒՆ. Տես ԶԷՅՐՈՒՆ :

ԶԵՐԵԱՅ. Տես ՎԱՅՈՅ ՉՈՐ :  
ԶԵՄԻ ԶԱՅ. — Գետակ Սիւնեաց Հարանգ գաւառի. ունի գեղեցիկ և արգասաբեր հովիտներ :

ԶԵՆԱՎՍ. — Դազար Փարպեցի կը գնէ զիւղս Տայոց մէջ, ըսելով. « Երանելին Արաւհամ երէց՝ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն որում անուն էր Զեւակս » :

ԶԵՆՆԱԿ. — Գիւղաքաղաք Քրդաց (Վան) Խօշապ քաղաքէն 4 ժամ հեռու. մօռէն կ'անցնի Խօշապ գետը : Ունի փոքրիկ քաղաշէն բերդ և պատուական այրեստաններ :

ԶԵՏԻՆ ԿՈՒՄ ԶԷՅՐՈՒՆ. — Հայաբնակ զիւզ Այրարատայ Քաղրեւանգ գաւառի, վազարչակերտի հարաւ արեւմտեան կողմ 3 ժամ հեռու : Կախ ունէր 60-65 տուն հարուստ բնակիչներ. իսկ այժմ հազիւ 30 տուն ունի. միւս մասը 1877ի պատերազմին զաղթած է Ռուսաց բաժինը : Ունի բերրի հողեր, ամենալաւ մարդագետներ : Լեռնային մասի մէջ առանց ջրելու ցորենը կ'ածի, իսկ զաշտային մասը ջրաբեր լինենելով՝ առատութեամբ ցորեն, գարի և կրտաւաս կ'արտադրէ : Զեւական կարաւանի ճանապարհի վրայ կը գտնուի և վաճառականութիւնը լաւ զիբքի մէջ է : Ունի նորաշէն եկեղեցի մը : Զեւականի զիբքը շատ գեղեցիկ է և բիչ սը հակեալ է յարեւելք. արեւելեան կողմի տեսարանն է Ալաշկերտի և Գարաբըիլիէի դաշան, Սինակ, Կպատ և Մասիս լեռները, Ղլիճ-կետուկ և Ծաղկանց լեռներու հիւսիսային և Զրարաշիի հարաւային կողերը : Կան նաեւ սառն աղբիւրներ և քանի մը ջրաղացներ՝ որոնց առուներու եղրն կը զարգարեն հինաւորք բարտի ծառեր, որոնք զիւղին յատուկ գեղեցկութիւն կ'ընծայեն : Գիւղիս գերեզմանատունը նշանաւոր չէ, բայց արեւելեան կողմը յայտնուած է 2-3 կանգուն հոգի տակ ծածկուած հին ու բնդարձակ գերեզմանատուն մը : Գուրս հանած քանի մը սրբատաշ խաչքարներու նշաններէն կ'երեւի՝ որ արձանազրուութիւն ունեցող քարեր եւս գուրս պիտի գան : Զեւականի Հայոց թիւը թէեւ փոքր է, սակայն բաւական ինքնապաշտպանութիւն ունին. ճանապարհի վրայ լինելով՝ միշտ աւազակներու հետ ընդհարումներ ունեցած



են, որով և զինագրեցու վարժուած: — Բազրեանդ, 89-93:

ՁԵՐԴԻ (Չարդ). — Ի հնումն հայարնակ՝ և այժմ այլազգարնակ զիւղ Աղտանից Հարճւանք գաւառի:

ՁԵՐԴՇԱՏ. Տես ՍՈՒՐ:

ՁԵՐՏ. — Գիւղ Գօրի (Տփղիս) քաղաքէն 20 վերստ հեռու, գէպի հիւսիս արեւելեան կողմը. 178 տուն բնակիչ կայ, որոնցմէ 105ը Հայոց և մնացեալք՝ վրաց են, որոնք ունին փոքր եկեղեցի մը: Հայք՝ 1885ին փառաւոր եկեղեցի մը շինեցին: Գիւղիս բնակիչք կը պարսպին երկրագործութեամբ և այգեպանութեամբ: Հողը բարերբ է. առատութեամբ կը բուսնին ցորեն, գարի, և զիւրացորեն և սխտոր. քանի մը տեսակ պտուղներ ևս կան:

ՁԵՐՈՒ. — Բերդ Սիւնեաց Չորք գաւառի Բաղարբըղ վիճակի մէջ, Բաղարբըղի մօտ, երկու գետակաց խառնուրդի անկեան մէջ: Հոս Ասրաւսզ Ղուչի խանն կամ Պարսից կողմնապահը, զօրաժողով կը լինէր բնույժմ Գաւիթ բէկի, որ իրեններով արշաւելով Ղարաշիմէն զիւղէն, «պաշարեաց զբերդն Չեու, այլ գծուարին եղև առնուլ զայն. զի էր բարձրաբերձ և անառիկ յոյժ. յետ բաղիւնոյն զայն աւուրս երկուս՝ Միխիթար սպարապետն և Տէր Աւետիքն զբոհ առեալ ի վեր խաղացին, իսկ նոքա ի պարսպէ անտի զոտսա ի բաց մերժեցին. բայց Տէր Աւետիսն խորանօք ի յամուր անդր ելանէր, և զզլխաւորն նոցա ձերբակալ առնէր: Յայամ վայրի զօրքն ամենայն որք շուրջ զբերդուն էին՝ ի պարսպացն ի ներքս զեղանէին, և սուր ի վերայ եղեալ զամենեւեան զոտսա առ ետեղ սատակէին. և ի նմին աւուր յամբողջ անդ կոտորեցին ի թուրքացն արս 4000. և ի սոցանէ մեռան սակաւ քումնք»: Բաֆֆի բերդիս պաշարման և ամանն իրպասանութիւնը շատ երկար կը նկարագրէ, մտահընար հանգամանքներով: Այժմ ամայի է Չեու բերդը, ինչպէս նաև համանուն զիւղը: — Չեու անուամբ գետակ մը ևս կայ Սիւնեաց մէջ: — Սիւսկան, 293:


ՁԵՆ կամ ՁԱՔ. — Սակաւարնակ զիւղ Ստորին Բասկնի (Ալյարաս): Դոյն անուամբ գետակ մը ևս կայ:

ՁԵՅԹՈՒՆ, ՁԵՅԹՈՒՆ կամ ՈՒՆԵՆԱ. ԳՂ. ZÉI-TOUN. — Ձահան գետի լեռնահովտի մէջ ամենէն կարեւոր վայրն է Ձէյթուն, որ թէև չի յիշուիր Կիլիկիոյ պատմիչներէն, բայց հաւանական է թէ Ֆրոնտսի և Արեգնի հետ մի և նոյն վիճակը կը կազմէր: Ձէյթուն մեր քաջակորով զիւցպանց բնակավայրը՝ լեռներու մէջ հաստատուած աւան մ'է, որ մանեղու համար, սէտք է անցնիլ անձուկ ձորակներէ և գծուարակոխ շաւիղներէ: Ձէյթունը կիլիկիոյ Հալէպի կուսակալութեան տակ և Մարաշի գաւառի մէջ: Ձէյթուն՝ ըստ արդի աշխարհագրական բաժանման Մարաշի գաւառակներէն մին է, որուն սահմանը հիւսիսէն՝ կը հասնի մինչև Երիձէկ զիւղը կամ Էսեկե-տէրե-պօղաղը՝ Ձէյթուն աւանէն 10 ժամ հեռաւորութեամբ, արեւելքէն՝ Մարաշնա տաճկարնակ զիւղը՝ 9 ժամ հեռու, հարաւէն՝ Արեգնի Երսեկեակը հայարնակ զիւղը՝ նոյնպէս 9 ժամ հեռու և արեւմուտքէն՝ Չուրշուր-իխար (Կաւէյի) տաճկարնակ զիւղը՝ 10 ժամ հեռու: Ձէյթուն՝ ծովու երեսէն 3500 ոտք բարձրութեամբ լեռնային երկիր մ'է, որուն զլխաւոր լեռներն են, հիւսիսէն՝ Չըրըզ, Պերխո, Մաղ-տալ, Արսա-տալ և Եւտի-գարտաչ, արեւելքէն՝ Պերգիկոյ, Մավրըլ և Աւագ, հարաւէն՝ Կիւրե-տին լեռը համանուն բերդով մը, արեւմուտքէն՝ Սօրախ-տեպե լեռը: Այս լեռներէն նշանաւոր է Պերխո իւր բարձրութեամբը, իսկ Չըրըզ՝ որ Ջրիկի աղաւաղութիւնն է, այսպէս կոչուած է, կողին վրայ բղխող փոքրիկ աղբիւրի մը պատճառաւ, բուսաբերութենէ զուրկ և լեռի աղառած է, ասոր համար ի հնումն Այրած լեռ կը կոչուէ եղեր. լեռանս հատած տեղը, որ տեղական բարբառով Գերձեր (Գարձայր) կը կոչուի, կը բնակին 30 տուն հայ: Այս լեռները բնական պարիսպ մը ձեւացնելով Ձէյթունի շուրջը, անառիկ տեղոյ մը հանգամանքը տուած են անոր. ժողովուրդն ալ զիսցած է միշտ օգուտ քաղել իր զիրքի առաւելութենէն, բայց այնու հանգերձ՝ բաղաւառամբ Հաձիկի՝ կ'ըսէ, Ձէյթունի հեղինակը, Ձէյթունի զիրքը այնքան անառիկ չէ: Ռէնեցի կարապետ կաթողիկոսը 1727ին, աւանս քաղաքացիոյ կ'անուանէ և հետեւեալ նկա-



բազիրը կ'ընէ. « Որ շինեալ կայ ի մէջ եւրից մերձակայ լեռանց Պազնկայ, Այրածոյ և Կանկոսոյ, ընդ գոգացեալ ներ ձորում բարերերի, ուր լինի այգի, ձիթենի, նոնենի, թզենի, և այլն, և ամենայն բոս կարգի, այլ և բանցակ և մետաքս՝ որ է ապրշում, և հանք երկաթի. որ բմնէ զջուր բարեհամ կարկաշուն փոքր գետոյն որ հոսի ի լեռնէն Պրիտոյ, որ թարգմանի ցուրտ, վասն մշտագիւտ ձեանն որ ի նմա : Ասացեալս գեօղ ունի զրժկարար չարն Զերմոյ, և

ներ՝ մեծ մասամբ միտներէն ձեացած. աւսնցմէ յիշենք, Աւագ-Կեօիկ, Չարօղ-քօր, Սախօր-եգե, Անկըզով (Բնկազեկ), Քեշ-տաղ, Ղանաղ, Չախօր, Կարմր, Շեկեկ, Արաւը, Ղափխըղ, Սաղիր, Գրախօիկ, և այլն : Գրախօիկ՝ իր կարգին յիշած չլինելով ասաբունք, որ կը գտնուի Ֆրնուզի Ս. Կարապետի վանքի հիւսիսային արեւմտեան կողմը Չ ժամ՝ հեռուորութեամբ և արդարեւ ճրջմարիտ գրախօ մ'է՝ իւր բազցրարոյք ծագիկներով և պաշարագեղ բոյսերով : Աման



308. Զէյթունի ընդհանուր տեսարանը :

գորանշելի եկեղեցին Ամենափրկչին » : Զէյթունը թէև լեռնային բարձրաւանդակի վերայ է, բայց ձորանիստ գիրք ունենալով կլիման բարեխառն և առողջարար է, և թէև տեղ տեղ բարձր ու ցած գիրքերուն համեմատ կը տարբերի, սակայն ընդհանրապէս օգտակար և կազդուրիչ է, այնպէս որ ժողովուրդը ամառ ատեն առ հասարակ տանիքներու և այլ բացօդեայ տեղեր կը գիշերէ : Վերոյիշեալ լեռներէն դաս՝ Զէյթուն իր շուրջը ունի բազմաթիւ փոքր լեռ-

տեղացիք լեռանս գլուխը կը բարձրանան իրենց հօտերով և արջատներով : Այս լեռներու մէջ կան բազմաթիւ ու կարեւոր քարայրներ, իսկ ստորաւաները՝ գեղեցիկ արօտատեղիներ՝ ինչպէս Ֆրնուզ, Էրեզ-օղլու, Գանկը-արաղը, Գօրգմազ, Չաւտօր, և այլն : Ասոնց մօտ կը գտնուի նշանաւոր Սիւլիկիլիկօյ (սղրուկի-լիծ) : — Զէյթունի շուրջը կը հոսին այլ և այլ գետակներու ջրեր. Պերիտ լեռան ստորաւան հոսող ջրերէն կը կազմուի Շուղուր գետակը՝ որ աւանի արեւմտեան



կողմէն կ'անցնի և կը հասի գէպի հարաւ՝ սեւ աղբիւրն ալ մէջը ունենալով, ստոր վրայ Զէյթունի սահմանին մէջ կան երկու կամուրջ, մին՝ կարսի կամուրջ անուամբ, որ կը տանի Սուրէնեան թաղը, իսկ միւսը Շուշրի կամուրջ՝ 35 մետր բարձրութեամբ, զոր շինել տուած են Պալճեանը, կը տանի

**ՎԻՃԱԿԱԳԻՐ ԶԷՅԹՈՒՆԻ**

ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ԳԻՒՂՈՐԷՅՑ

ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՅ	ԲՆԱԿԻՉՔ		Զէյթունի հասցի թիւն ժամերը
	ՀԱՅՔ	ՕՏԱՐՔ	
Զէյթուն կամ Զէյթուն . . .	17600	240	
Պէշէն . . . . .	40	480	3
Քէյթէն . . . . .	—	164	4
Սարը կիւղէլ, կամ Քիւրէճիկ . . .	60	560	5
Գաղազ թէփէ . . . . .	—	480	8
Գանտիլ, Գանալ . . . . .	—	160	10
Չափթիկ . . . . .	—	280	9
Քիւրթիլ կամ Քիւթէլի . . . . .	—	400	8
Աւելար . . . . .	40	990	10
Գարամանլը . . . . .	—	400	9
Պէյթէմուր . . . . .	24	800	11
Գարաթութ . . . . .	—	790	11
Լըրիճէր կամ Լանտէրէ . . . . .	16	400	7
Թոմպաք . . . . .	—	360	11
Մալաթիա . . . . .	—	280	9
Սըյալի . . . . .	—	320	10
Թանուր . . . . .	—	240	5
Հաճի աւրէ . . . . .	320	160	4
Տօնկէլ . . . . .	—	160	6
Չուզուր հիսար (Կանի) . . . . .	—	400	12
Ֆրնուս . . . . .	2400	—	6
Մշիալ կամ Աւաղ-կալ . . . . .	2800	—	3
Աւաղալ-Արեգին . . . . .	3200	40	5
Յէնկ կամ Խէպի . . . . .	144	—	3
Աւաղզան-Աղբէստեանք . . . . .	56	—	4
Տէճնիւրէր կամ Տօնիկներ . . . . .	—	240	3
Մարթաւար կամ Ղալճենք . . . . .	280	—	2 1/2
Եղիսլէր-Աւաղներ . . . . .	160	—	—
Բիւնենքեր կամ Թէրեճ մասալ-լէսի . . . . .	320	—	1/2
<b>Գումարն . . . . .</b>	<b>27460</b>	<b>8344</b>	

Էրզրուական թաղը: Չոր գետակ կոչուածը Սաղ-տալը լերան աղբիւրներէն ձեւացած է, Պերզնիկայ լերան ստորոտի ձորէն հոսելով, հիւսիսէն գէպի հարաւ կ'երթայ և յարեմաւս խտորելով կը միանայ Շուշուրի հետ, Զէյթունի թերակղզոյ մը ձեւ տալով: Չոր գետակի վրայ ձգուած են երեք կամուրջ՝ Պաղ աղբիւրի կամուրջ, Ս. Պօղոս


Պետրոսի կամուրջ և Կոտորածի ձորի կամուրջ: Զանաճ գետը Զէյթունի հարաւային արեւելեան կողմէն կ'անցնի, 5 ժամ հեռուէն: Անտօղ՝ հարաւային արեւմտեան կողմը 2 ժամ հեռու, Տարսիսեցը ձոր՝ արեւմտեան կողմը 8 վայրկ. հեռու, Թերթի՝ 8 ժամ հեռու, Սու-չարը 6 ժամ հեռու, Անի ձոր՝ 3 ժամ հեռու: Ասոնք՝ Շուշուրի և Ֆրնուրի գետակին հետ միասին գէպի հարաւ հոսելով կը թափին Զահան գետը:

Զէյթուն աւանը ունի իրար վրայ թառեւրած և բարձրացած 1500 տուն՝ ամբողջովին հայ, կային նաեւ 24 տուն թուրքեր, որոնք 1896ին գաղթեցին: Հայոց մէջ կան 300 կաթնուղիկեայք և 400 բուզուրակներ: Վ. Քիւն Զէյթունի գաւառակի մէջ կը գնէ 39 գիւղ և 24023 բնակիչ: Մեր ունեցած Աղբային Պատրիարքարանի երեսնամեայ վիճակագրութենէն, ինչպէս կը տեսնուի, Զէյթուն նոյն ժամանակ ունէր 28 գիւղ և ամբողջ գաւառակի Հայոց թիւն էր 27460 և Մահմետականաց 8344: Իսկ Զէյթունցին՝ իր 1900ին հրատարակած զրքի մէջ, Զէյթունի հայ և թուրք զիւղերու թիւր կը գնէ 32 և բնակիչը 21500, որոնցմէ 18500ը հայ, իսկ մնացեալը թուրք: — Զէյթունի աղբիւրներէն նշանաւոր է Պաղ-աղբիւրը (Պօղ-աղբը), որ իր աւաններ համեմատ խիստ պաղ է, ստոր շէնքը Գարս-Պօյաճի անուն Մարաշցի գաղթական մը շինել տուած է մարմարիւնէ, երեք բերնով, կամարակապ և շքեղ բանականերով: Փարթեկ աղբիւրը կը գտնուի Ս. Աստուածածնի վանքի մօտ, ջուրը խիստ պաղ, առատ և մարտեցուցիչ է: Նանտակ աղբիւր՝ կարսի կամուրջի և Զէյթունի մէջ տեղն է, ստոր մօտ ժամանակաւ սպանուեր է Յակոբ անուն Մարաշցի կոշիակար մը, և աակէ բնդունած է անունն: Այ աղբիւր՝ աւանէն կէս ժամ հեռու գէպի արեւմուտք, որ զրօսավայր է Զէյթունցոց: Սուս-աղբիւր (սուխի աղբիւր), արեւմտեան հիւսիսակողմը մէջ ժամ հեռու, ցուրտ և առատ է ջուրն: Էտի-գարսաչ (եօթն եղբայր), նոյն անուն լերան ստորոտէն եօթն ակէ կը բղթէ: Այրան-Գուսարը՝ 8 ժամ հեռու, Պէրիա լերան ստորոտէն կը բղթէ, որու



Ջուրը կաթի նման սպիտակ է ու փրփրուն: Նշանաւոր է նաեւ խեստ-աղբը: Զէյթուն ընտանի և վայրենի կենդանիներէն ունի կով, եղ, այծ, ձի, ջորի, էշ, ընթանց մէջ՝ գայլ, արջ, վարազ, կուզ, աղուէս, նապաստակ, վերէ (եղջերու), էօշէկ (վարշակ), որուն մտքը մինչև 2-3 հարիւր գահեկանի կը վաճառեն: Գետերուն մէջ կան պատուական կարմրախայտ, գեղին պորտ

րի, սոպ, սիսեւ, լուրիս, ոչոսն, եգիպտացորեն, բլիշնէ, շոգամ, գետնախնձոր, բողկ, ճակնդեղ, զոռոզխոտեր (ազատքեղ), սոսեպին, պատնջան, խաղող՝ որ մինչև 21 տեսակ կը համրուի, որոնց մէջ խիստ նշանաւոր է ընկուզի մեծութեամբ բազաւորի խաղող կոչուածը, զանազան տեսակ խրնձորներ, սալոր՝ հաւկթի մեծութեամբ, թուզ, պատուական տանձ ու գեղձ, նուռ, սեր-



309. Քառէս արտապուած է Զէյթունցիի համայնութեամբ:

և օձաձուկ, նաեւ շնջրոկ (ջրչուն): Թռչուններէն կայ ուս կոչուած գեղեցիկ տեսակ կաքաւ մը՝ որ միայն Պէրիս լեռը կը զբառնուի. կան նաեւ հասարակ կաքաւ, ասաբակ, աղաւնի, սազ, սոխակ, կկու, արծիւ, բազէ, հաւբալ, բազ, սարեակ, ազոսա, մեղուաթռչուն, ճագող, խրվ՝ որ խայտ թռչուն մ'է, մաճնապուր՝ որ սպիտակ մեծ թռչուն մ'է, ճուճը, և այլն: - Երկիրը թէև ըննային և քարուտ է, սակայն խր փոքրիկ գաշտերու մէջ կ'արտապրէ ցորեն, գա-

կեիլ, կեռաս, թուժ, ընկոյզ, աղտոր (սուճախ), սամբը, ունկումբը, ալոճ, ախորժաւ համ ձիթապտուղ, նուշ, սիստակ, մարենի, շինկիբոր կամ աճուռ, վարունկ, ձմերուկ. ունի նաեւ ընտիր ու պատուական մեղր, որ շատ անգամ իբրև նուէր կը զրկուի հետաւոր սեղեր: Վայրի ծառերէն յիշենք՝ ինկենի, լուսուն դրուինէ, ճապկի, բաղիկնոց, մայրի, փիճի, գէ (գիհի), բեւեկնի, կազնի, թեղի, թրուի, սոսախ, մաթուրը, բարախ, ուսնի, սոսի, թմրի, մազաքի,



ցրդի, փշափի, և այլն: Նշանաւոր է Զէյթուն նաեւ բազմաստեակ ծագիկներով, Հաւաքնեխա գերմանացին 1865ին, միայն Պէրիտ լեւան վրայ 200 տեսակէ աւելի գանազան տեսակ բոյսեր և բազրարայր ծագիկներ գտաւ: Նոյն լեւան վրայ կը գանուի նաեւ կէյիկ կեօյեկի (միւշկ) կոչուած ախորժաճոս ծագիկը՝ որ չորնալէն բոսն տարի վերջն ալ իր հոսը կը պահէ: — Բերքերուն մէջ ամենէն առատը խաղողն է, որմէ կը պատրաստեն ընտիր գինի, չամիչ, պաստեղ, սուփ, շարոց, օղի, և այլն: Միւս բերքերը նուազ լինելուն պատճառաւ, անհրաժեշտ կարեւոր ցորենն ու գարին կը բերեն Ալպըսթանէն, Էւրօպայէն և Կովկասէն: Հանքերէ աւնի միայն ամինարնտիր տեսակէն երկաթ. կը հանեն Պէրիտ լեւան նահապետական ձեռով և կը շինեն հրացան, ատրճանակ, սուր և այլ գանազան գործիքներ: Կը պատրաստեն նաեւ բնտիր վառօղ: Զէյթունէն կ'արտահանեն միայն չամիչ, մեղր, սուփ, մարթ, երկաթ և առխտակ: — Գլխաւոր արհեստներն են՝ այգեգործութիւն, խաղախորդութիւն, վառօղաշինութիւն, կօշկակարութիւն, համեմազործութիւն, ստաղձազործութիւն, դարբնութիւն, սրմնաշինութիւն, մտալածառութիւն, ջորեպանութիւն:

Զէյթունի նախկին բնակչաց համար աւանդութեամբ կ'ըսուի, թէ ի սկզբան, բաց ի բնիկ Յոյներէ, եօթը տուն Եղեհիայէն գաղթած Հայեր ունի եղեր, ասոնք կառուցեր են Ս. Լուսաւորչի մատուռ մը, որուն վրայ վերջը կառուցուեցաւ արվի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Այս փոքր հաստածին վրայ կ'աւելնան մեծաւ մասամբ Ռւնեցիներ և նոյնպէս Անիէն գաղթող Շէհրճօղեցիներ, որոնց նախկին բնակավայր Շենիրճօղը այժմ ամայի է: Ռւնեցի գաղթականներու պատճառաւ Ռաբիտա եւս կը կոչուի Զէյթուն, մինչդեռ Ռւնիա կը գանուի Ֆրնուզի կողմը, Հիւն-գիւղ կ'ըսուի և 6 ժամ Զէյթունէն հեռու է: Բազրաստուններու անկումէն յետոյ (1045), Անիի գաղթականներէն մաս մ'ալ կու գան Զէյթուն. այսպէս աւանին Հայոց աներու թիւն 700 կը հասնի, և իրենց մէջ բնակած Յոյները վանկրով դուս հայաբնակ կը լինի Զէյթուն: —

Հին գրոց մէջ սովորաբար Զերուս գրուած է աւանիս անունը, իսկ այժմ առ հասարակ Զէյրուս կը գրեն, որուն ծագման մասին, Ս. Սարգսի եկեղեցոյ մէջ գանուած Գանն անուամբ ձեռագիր պատմութեան մէջ, որ գրուած է 1624 թուին, հետեւեալ բացատրութիւնը կը արուի: Երբ գաղթականներու յաջորդաբար բազմանալովը Զէյթունի բնակչաց թիւը աճեցաւ, գառաւոր-կառավարչի մը պէտքը զգալի եղաւ. ուստի արժանաւոր մարդ մը ընտրելու համար ժողովով միաձայն հաւանութեամբ իրենց պետ նշանակեցին Սեք անուն բարձրահասակ հսկայ մը՝ Զէյթունի առաջին հայ բնակիչ եօթը տան սերունդներէն: Սա արդարութեամբ ու անաշատութեամբ կառավարելով ժողովուրդը, մեծ համբաւ հանեց, այնպէս որ շրջակայ գիւղօրէից բնակիչներն ալ, նոյն իսկ օտարազգիք, փոխանակ Մարաշի պէյին գիմելաւ՝ ասոր կու գային, իրարու բռնելով, թէ Սեքին գնացէք. այս յորջորջումը այնչափ կրկնուած է, որ յետոյ տեղոյն անունն ալ Սեքին՝ և ապա Զեքին կամ Զէյրիկի փոխուած է 1545ին: Վերոյիշեալ բացատրութիւնէն տարրեր՝ ուրիշ կարծիք մ'ալ կայ, որ աւելի պարզ և բնական կը թուի. Զէյթունցիք իրենց անկած այրիներու հետ մեծ քանակութեամբ ձիթնիներ ալ անկած էին և աակէ Զէյրուս կոչուած է երկիրն: 1780 թուականին Էօմէր փաշան բոլոր այս ձիթնիները կարել տուաւ իր զօրքերուն, որոնց հետքերը դեռ եւս կը տեսնուին: — Այսպէս Զէյթուն անունն զբերու մէջ եւս ծանօթ է ժՉ գարու մէջէն սկսեալ: Նոյն գարուն վերջերը կը տեսնուի Զէյթունի եւ պիտկոպոսի մը ստորագրութիւնը Գրիգոր ժՉ քահանայապետի ուղղած վկայական թղթի մը մէջ (1586ին): Տարբ տարի վերջն ալ, Յակոբ եպիսկոպոսի համար գրուած ձեռնագրութեան զբքի մը յիշատակարանի մէջ. «Ի Զէյրուսոյ վանքն ի Ս. Աստուածածնի դուսն, յասաջնորդութեան Տէր Իբրուն արհիեպիսկոպոսին»: ժՉ գարու վերջերը և ժԷ<sup>ն</sup> սկիզբը շատ անգամ կը յիշուի վաճառ անուն Զէյթունցի երէցն քաջ քարտուղար, որուն շատեր աշակերտած էին, ինչպէս Յակոբիկ գպիր՝ որ էր «Ի գիւղաւ»



քաղաքէն Զեթունայ», որ Սերաստիա երթալով, օտարութեան մէջ տրամութեամբ կ'ընդօրինակէր գրքեր, երախազիտութեամբ յիշելով իր ուսուցիչները. նոյնը 1608ին կը գրէր. «Ղարիպ էի և սրտիկս արբաւամ... ոչ ոք ի մարդկանէ ի վրայս խնամք չտարան, հանազազ լայի և տարակուսեալ էի. բայց հէմշէհրին իմ Զեթունցի մկտեսի Ասաբին՝ որ էր վաճառական, նա տանէր զիս իւր օտայն և միթիմարէր...»: Վերոյիշեալ Վազան

նասուն Մովսէս վարդապետի հետ ուխտի կ'երթայ Երուսաղէմ, Համիլայ և Զէյթուն. այս մասին կը գրէ Մովսէս վարդապետը. «Անկ (ի Զեթուն) զուխտս մեր կատարեցաք, թէ ի Ս. Փրկիչն, թէ ի Ս. Աստուածածնայ վանքն, և թէ յԱնանիա առարկայն սուրբ աջն, որ ի Զէյթունոյ վանքն կայ, և ուսուցչին մերոյ գերեզմանն (Սահփանոս եպիսկոպոսի), և անպէս զտեղի կալաք աւուրս հարիւր և քսան, յահէ թոր-



310. Իշխ. Ղազար Տէր Մովսէս Խաչուկեան : Իշխ. Աստուածատուր Ենի-Տիւնեա :

երէցը 1625ին կը գրէ. « ի զիւղաքաղաքս Զէթուն, ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի Զօրաւարին և այլ ամենայն սուրբ տաճարաց և սրբութեանց. ի յառաջնորդութեան յայս մեր գաւառիս Տէր Մկրտիչ արքեպիսկոպոսի և Տէր Վարդան եպիսկոպոսի և Խաչատուր վարդապետի»: — Զէյթունցի էր այն անուանի Կարապետ վարդապետը, որ Անկիւրիոյ առաջնորդ եղաւ և յետոյ Էջմիածնի կաթողիկոս (1826): Սա՝ 1705ին իր ձեռ-

գովանց, որ իբրև զառիւծ շրջէին շուրջ զմեզ. բայց յետոյ փախտեալ ճանապարհաւ հազիւ հասաք ի Հաճնոյ վանքն, առ Ովաննէս կաթողիկոսն»: Զէյթունէն հետեւեալ ծանօթ կաթողիկոսները բազմեր են Սոսյ Աթոսի վրայ. Սիմեոն (1539), Ղազար (1545), Խաչատուր Բ մականուանեալ Երամիշա (1570): Բնական ամբուժիւններով պահպանուած քաղաքաւանս՝ որ զրեթէ քառակուսի ձև



մը ունի, բաժնուած է չորս զլխաւոր թա-  
 գերու. ա. Շօփրօեան րաղ (Պօղ-պայիր), ա-  
 րեւելեան կողմը, որուն հարաւն և արեւելքն  
 քերկրով կ'անցնի Չոր գետակը. բ. Եարու-  
 պեան րաղ (Գարկըլար), հարաւային կող-  
 մը. նոյն գետը ասոր ալ հարաւէն կ'անցնի.  
 գ. Էնի-տիւնեա կամ Վերիե րաղ, հիւսի-  
 սային կողմը՝ Քերձէրի ստորոտը, որուն  
 արեւմտեան կողմէն կը հոսի Շուզուր գետը  
 և արեւելքէն Չոր գետակը. դ. Սուրհեան  
 կամ Միշիե րաղ՝ որ Եպուպեան, Շօփրօեան  
 և Էնի-տիւնեա թաղերու մէջանց կ'իյնայ  
 և արեւմտեան կողմէն կը հոսի Շուզուր  
 գետը: Այս թաղերէն իւրաքանչիւրը իր  
 անունն ստացեր է իր վրայ իշխող հայ ցե-  
 ղերու մականունէն, որոնք նշանաւոր հան-  
 զիսացած են իրենց խելքով, բաշտօթեամբ  
 և հայրենասիրութեամբ: Այս չորս թաղե-  
 րու իշխանութիւններէն ամենէն հինն Սու-  
 րէնեան թաղինն է, որ 1545 թուին սկսած  
 է վերոյիշեալ Սեթէն և իր անունն առած  
 է ասոր եզրայր Սուրեկ իշխանի անունէն:  
 Զէյթունի միջնարկերէ տէրն ըլլալով ասոնք  
 մինչեւ ցարդ այնպէ կը բնակին, 30 տա-  
 նէ կը բաղկանան և եօթն ճիւղ սնին. Սու-  
 րեկեան, Սերեան (Սիրեք), Քասիլուեան,  
 Կէյիկեան, Մանտաի վարդիվարեան, Ախ-  
 պաշեան և Թուսիկեան: Եպուպեանց հիմնա-  
 ղիրն է Յակոբ անունով անձ մը, որ 1780ին  
 Զէյթունի վրայ արշաւող Էօմէր փաշան  
 սպաննեց զարմանալի ճարտարութեամբ մը  
 ու տարօրինակ միջոցաւ: Էնի-տիւնեա թա-  
 ղի իշխանութիւնն նախ Ալարսեան ցեղին կը  
 պատկանէր, բայց յետոյ Էնի-տիւնեա Հա-  
 ճի Ղազար աղայի հօր յանձնուեցաւ, բա-  
 զաքաւանի կրօնական և աշխարհական և  
 րեւելիներու հաճութեամբը. սա Կապանի  
 մէջ տիրապետող նշանաւոր թուրք հարբա-  
 աահարիչ մը սպաննեց է 1790ին՝ ազա-  
 տելով հայ հարս մը և ինքը եկեր է Արե-  
 ղին. սպանութիւնը յաջողցնելէ վերջ ըսեր  
 է. «Էնի տիւնեայա կէլաիք = Նոր աշխարհ  
 եկանք», և այս խօսքէն տոնր է իւր մական-  
 անուն: Շօփրօեան թաղի իշխանութիւնն կը  
 սկսի 1800ին հաճի Սահակ աղա Շօփրօեա-  
 նէն, որ բաշտօթեամբն նշանաւոր եղած է  
 Ղալէնաէր փաշայի դէմ մղուած պատերազ-

մի մէջ և գրիթէ ամիս ուր շուվրս (չօրպա,  
 սպուր) կերցուցած է ազբաս ժողովրդեան,  
 և ասիէ ծագումն առած է Շօփրօեան մակ-  
 անունը: Այս չորս իշխանները 1865էն  
 առաջ իւրաքանչիւրը իր թաղին վրայ իշ-  
 խելէ զատ կը տիրէին նաև բանի մը զիւ-  
 գերու. Սուրէնեանը՝ Ղօզլուղազի, Հաճի  
 տէրէի, Թանըրի և Տէօկէլի. Եպուպեանը՝  
 Ալազ-կալի, Խէրէղէճի, Ղուսրի և Գափու  
 գայայի. Էնի-տիւնեա ցեղն՝ Արեղնի, Էկ-  
 լէնճէնքի, Քէթմէնի և Մարը կիւղէի. Շօփ-  
 րօեանը՝ Ֆէնիկի և Տէօնիւրէլէրի: 1865 թուին



311. Իշխան Նազարէթ Սուրէնեան:

կրը թուրք կառավարութիւնը մուտ գատ  
 Զէյթունի մէջ, թէև այս ժառանգական իշ-  
 խանութիւնները վերցան, սակայն միշտ մին-  
 չեւ ցարդ, ժողովուրդը յարգանքով կը վա-  
 րուի իշխանական ցեղերու հետ, մանաւանդ  
 պատերազմներու ժամանակ: Այս չորս իշ-  
 խանական ցեղերու սերունդներէն մնացած  
 են այժմ, Եպուպեան Մկրտիչ աղայի թու-  
 որ Լեւոն էֆէնտի, Շօփրօեան Հազօր (Ղա-  
 զար) աղայի եզրօրորդին Կարապետ էֆէնտի,  
 Սուրէնեան Դազարէթ աղայի զաւակն Կա-  
 րապետ էֆէնտի և Էնի-Տիւնեայեան Աս-



առաձայտը աղայի զաւակն Յակոբ Էֆէն-տի:

Եօթնեւասներորդ զարու առաջին կիսուն կը յիշուին Զէյթունի մէջ հեռեւեալ եկեղեցիները, Ս. Սարգիս, Ս. Հրէշտակապետ, Ս. Յակոբ Մծրենայ, Ս. Աստուածածին, Ս. Կարապետ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Պարսամ և Թեոքորոս: Ասոնցմէ զասշինուած էին յետոյ նաև Ս. Պօղոս Պետրոս և Ս. Յովնանէս՝ որուն մէջ կը պահուէր համբաւուր վասյի Աշեարօնը՝ որ 1884ի հրդեհէն ուրիշ կարեւոր և անդին ձե-

ներ. ա. Ս. Աստուածածին՝ Սուրէնեան թաղի մէջ, բ. Ս. Սարգիս՝ Եղուպեան թաղի մէջ, գ. Ս. Յովնանէս՝ Շօվրօեան թաղի մէջ և Ս. Լուսաւորիչ՝ Ենի-ախնեա թաղի մէջ: Ս. Աստուածածնի եկեղեցոյն մէջ կը պահուէր, գրեթէ եօթը դար յտաջ Համկըլայի մէջ գրուած, մազաղաթեայ և շատ գեղեցիկ պատկերազարդ Աւետարան սր. կը բաղկանայ 776 էջերէ, որոնց ութը՝ յիշատակարան են, սքանչելի կերպով նկարուած են չորս Աւետարանչաց պատկերները: Կաթուղիէ Հայք՝ որոնք 1866-67ին, քաղաքական ազնապի մը հետեւանքով առանձին հասարակութիւն կազմած են; ունին եկեղեցի մը և զպրոց: Բողոքականութիւնը մտած է 1870 թուին Գերմանիկի ամերիկեան միսիօնարներու ձեռքով, ունին ժողովարան և վարժարան Միջին թաղի մէջ. 1881ին վերի թաղի մէջ ալ հաստատեցին կեդրոն մը և սկսան մանուկներ հաւաքել դաստիարակութեան պատրուակաւ և փողոցներու ու կրպակներու մէջ բարոցել: Քաղաքաւանի կեդրոնը Միջին թաղը կը գանուի մեծ շուկայն, ուր կան բաւական թուով կրպակներ. միս թաղերու մէջ ևս կան բանի սը խանութներ: 1879ին շինուեցաւ պարսպափակ մեծ զօրանոց մը Զէյթունի արեւելեան կողմը բլրի մը վրայ, ուր կան թուրք զօրականք և թնկանութեան հսկողութեան համար: - Զէյթուն երկու մեծ հրդեհներ ունեցեր է. մին՝ 1884 տարուոյ սեպտեմբեր 8ին շարաթ երեկոյ մը պատահելով՝ ամբողջ շուկայն, 600 տուն, Ս. Յովնանէս եկեղեցին, զպրոց մը և Բողոքականաց վարժարան սը հրոյ ճարակ եղան և ժողովուրդը անպատսպար, թշուառ և օգնութեան կարօտ մնաց: Ս. Լուսաւորչի թաղի մէջ անկաջոց ծախքով նոր կառուցուած և Կ. Պոլսի Միացեալ Ընկերութեան երկսես վարժարանաց յատկացուած շէնքն ալ այրեցաւ բոլոր գրքերովն ու գոյքերով: Այլ և այլ կողմերէ զրկուած նպաստներու շնորհիւ, բընակարանները և փողոցները բիշ մը կանոնաւորուեցան և հստաշէն աները մեծ մասամբ փայտաշէն եղան: Երկրորդ մեծ հրդեհն պատահեցաւ 1887ի յուլիս 26ին և գրեթէ ամբողջապէս քաղաքաւանս աւերեց,



312. Իշխան Մկրտիչ Նաղուպեան :

ուագիրներու հետ այրեցաւ: Վերայիշեալ եկեղեցիները հին յիշատակարան չունին, միայն Ս. Յակոբ եկեղեցին, որ 1847ին շինուած էր՝ արեւմտեան որմի վրայ փոքր քարի մը վրայ փորագրուած հետեւեալ հին յիշատակարանն ունէր. «Եիևեցաւ տաճարս ի քաշին Հայոց ԶՂԳ, ի նրպերեան (նայրապետութեան) ՏԵ. Սիմեոն կրիկ (կարողիկոսիկ), ի բանակարչրեան Տաճկաց Սոչիմեան Խոնկրարիկ. գոր ի շարժե կործանեալ էր, նոր նորոցեց ձեռամբ մշտեսի Գաբրիէլն»: Այժմ Զէյթունի մէջ կան նորաշէն չորս եկեղեցի-



մոխիր գածընելով 736 տուներ, բազմաթիւ կրպակներ, 5 եկեղեցի, 2 մատուռ, 6 ջր-րազացք, 4 վարժարան և ուրիշ հաստա-տութիւններ. անլուր չքաւորութեան մատ-նուեցաւ ժողովուրդը (3000էն աւելի), որ կը տառապէր արդէն երեք տարի տուաջ պա-տահած նոյնօրինակ աղետի մը աւերմանց պատճառաւ : Կառավարութիւնը նպաստեց թշուառներու և Պատրիարքարանն յանձ-նաժողով մը կարգեց՝ հրկիզուած եկե-ղեցիներու և վարժարաններու ի նպաստ հանդանակութիւն ընելու պաշտօնով : Հրդե-հը գիշեր ատեն ծագելով թուրքի մը տու-նէն՝ ժողովուրդը չկրցաւ փրկել նաև գոյքը ու կարասիքը : Եոյն գիշերը քաջարի հայ երիտասարդ մը օրօրոցի մանկիկ մը փր-կելու համար բոցերուն զոհ գնաց. հետե-ւեալ օրը չորս երիտասարդներ փլատակնե-րու ներքեւ մնացին : Այս հրդեհէն քանի մը օր վերջը, Մըստեր Մարտին անուն ամերիկացի քարոզիչն Ձէյթուն գալով՝ 50 ոսկի ծախք ըրաւ քսան խցիկէ բնակարան ւը շինել տուաւ : Պատրիարքարանի յանձնա-ժողովը յաջողեցաւ լաւ կերպով կատարել իրեն յանձնուած պաշտօնը : Թուրքիոյ մէջ զանազան տեղեր, Մանչեսթրի, Փարիզու և այլ քաղաքներու մէջ բնակող Հայք, ինչ-պէս նաև Ռուսահայք՝ Տ. Տ. Մակար կա-թողիկոսի յորդորական կոնդակի համեմատ, առատօրէն մասնակցեցան հանդանակու-թեան, և քիչ ժամանակի մէջ վերաշինուե-ցան Ս. Լուսաւորիչ, Ս. Յովհաննէս, Ս. Սարգիս և Ս. Աստուածածին եկեղեցիները, մեծ վարժարան մը՝ քաղաքաւանին կեդրոնը հիմնայտտակ եղած Ս. Յակոբայ եկեղեցւոյն գետնին վրայ՝ բարձր ու հոյակապ, որուն նմանը մտտակայ քաղաքներու մէջ չի գրա-նուիր. երկու ծաղկոց՝ արական ու իգական՝ Ս. Սարգսի թաղը և երկու ծաղկոց Ս. Լու-սաւորչի թաղը, վարժարան մը՝ Ս. Աստուա-ծածնի թաղը, երկու աղբիւր, երկու լուա-ցատեղի, և այլն : Այս յանձնաժողովը ցո-րեն և գրամ՝ ալ բաշխեց կարօտեալներուն : Ձէյթունի իւրաքանչիւր թաղի մէջ այժմ կան չորս եկեղեցիներու անուամբ մէկ մէկ մանչերու վարժարան. կայ նաև աղջկանց վարժարան մը և կեդր. նախակրթարան մը.

աշակերաններու ամբողջական թիւն է 340, իսկ աշակերտուհիք 120 են : Քաղաքաւա-նիս մէջ Հայ Բողոքականք բացած են որ-բանոց մը, ուր կը խնամուին 30 հայ որբեր : Ձէյթունցիք՝ թէև քաջ ու կորովի կոխ-ներու մէջ, սակայն ընդհանրապէս բնաւ-րութեամբ ծոյլ են. զարնան և ամբան այ-գեգործութեամբ կ'ըրադին, իսկ ձմեռը սոս-րեայ վատեւափայլը բերելէ վերջ՝ մէկ մէկու տուն հաւաքուելով ժամաւաճառ կը լինին : Ժողովրդեան գրեթէ կէսը անգրագէտ է և սգիտութեան մէջ : Կը պատմուի թէ յան-ցելումն կէս գրիւ կորեակէ ծագած կոխ մը, թաղային պատերազմի փոխուելով՝ երկու կողմանէ հարիւրաւոր մարդիկ մեռած են. թաղային պատերազմներ ի հնումն աւելի յաճախ տեղի կ'ունենային, այժմ ժամանա-կաց բերմամբ աստիճանաբար նուազած են : Վերին աստիճանի նախանձախնդիր են ազ-գային եկեղեցական կանոններու և սովորու-թիւններու պահպանութեան : Ձէյթունի մէջ եղած են ժամանակաւ և այժմ՝ ալ կան մի քանի կրթասիրական ընկերութիւններ : — Ձէյթուն՝ երկու վանք ունի, Ս. Աստուա-ծածիկ և Ս. Փրկիչ. տառջինը արեւելեան կողմն է մէկ ժամ հեռաւորութեամբ, Պեր-զինկայ լեռան կողմն վրայ, ուր կը պահուի Անանիա առաքելոյն Ս. Աջը. ունի 15էն աւելի սենեակ, խոհանոց և պատուական ջուր : Երկրորդը՝ կը գտնուի 2<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ հե-ռու գէպի արեւելեան հարաւ, բարձրադիր և օդաւէտ : Այս վանքը շինուած է, ըստ գրութեան Ձէյթունցւոյն, Ս. Բարդուղիմէոս առաքելոյն աղօթած տեղը, ուր նախ մա-տուռ մը կանգնած են բարեպաշտ քրիստո-նեայք և յետոյ 1829ին Տ. Յովհաննէս եպիսկոպոս Այնթապի առաջնորդը և Ձէյ-թունցի Տ. Յակոբոս եպիսկոպոս, տեղւոյն ժողովրդեան աջակցութեամբ՝ հին մատարան տեղ, Եւզոկիացի ճարտարագետներու ձեռ-քով, գմբէթաւոր շքեղ եկեղեցի մը կառու-ցին, գեղեցիկ նկարներով ու պատկերնե-րով. 1895 ասբոյ գեկաւ. 2ի թրքական կուոյն ժամանակ գմբէթը քանդուեցաւ : Սա ունի զով պատուական ջուր, գեղեցիկ ու հիանալի տեսարան : Ս. Աստուածածնի վան-քի մէջ կը նստի Վանահայր—Առաջնորդն և



քանի մը վարդապետներ. կայ նաև որբանոց մը ՅՅ սաներով, և այցելուք անպակաս են. իսկ Ս. Փրկչի վանքը աւելի ամայութեան մէջ է: Այս երկու վանքերը ունին շատ անպատասաններ, այգի, դուռք և բաւական բնանարած անասուն. տարուէ տարի Աստուածածնի տօնին Գերմանիկէ եկող ուխտաւորները բաւական գրամական հասոյթ կը մատակարարեն: Ռեխաւորները՝ վերագարձին կ'այցելեն նաև Ս. Փրկչի վանաց, իսկ Զէյթունէ գացողները անպակաս են: Հայք ունին հինգ գերեզմանատուն, երեքը քաղաքաւանի մէջ, և երկուքը վանքերու շուրջը: Ս. Փրկչի վանաց առաքելական հաստատութիւն ըլլալուն ապացոյց՝ ժողովրդական հին երգ մը կայ: Զէյթունցիք իրեն նուիրական սրբութիւններ՝ յարգանք կը տածեն նաև հետևեալ քարերուն. Ալքնա-քարտօկ՝ մեծ քար մ'է արեւելեան կողմը՝ 5 վայրկեան հեռու, որուն գագաթը ի հնուց սնկուած է երկաթէ օժեալ խաչ մը: Սուրար-քոր (կլոր քար), արեւմտեան կողմը, նոյն հեռաւորութեամբ. վրան երկաթէ մեծ խաչ մը կայ: Թօզկեց-քոր՝ հարաւային արեւելակողմը: Տափօկ-քոր (տափակ քար), հարաւային կողմը: Պուչխիցիկեց-մօս՝ արեւելակողմը և Ղուշօ (մարտիկ), հարաւային արեւմտակողմը: Այս նուիրագործեալ քարերը, Զէյթունի իրեն անանցանելի պատնէշներ նկատուած են, և յիշատի այնքան բազմաթիւ կոխներու և պատերազմներու մէջ, զէթ անգամ մը թշնամւոյն ստքը այս սահմաններէն ներս անցնելու յանգնած չէ:

Զէյթունի բնական ամուր գիրքը, ինքնապաշտպանութեան մեծ զիւրութիւն սալով, կարծես միշտ ազատասիրութեան հոգի ներշնչեր է անոր բնակիչներուն: Ժամանակի երկար շրջանի մէջ ոչ միայն զիւցազներ, այլ և զիւցազնուհիներ ունեցած է Զէյթուն, որոնցմէ ծանօթագոյն և հնագոյնն է Զարմանուհին՝ Ռուբինեանց Հիթուժ սպարապետի քաջարի ատկինն, որ ամուսնի հետ միասին կը պատերազմի Եգիպտացիներու զէժ և մինչև իսկ կը ձերբակալէ Սուլթանի որդին: Յետոյ, հայ Գրիգոր անուն վասմանիչ մը կ'սպաննէ իր սիրելի ամուսնիը և կ'արձակէ Սուլթանի որդին: Զարմանու-

հին՝ Ռուբինեանց անկուսն վերջ փախաւ Կսկիսնի և Ռշնիոյ լեռները, և այն տեղերը հինգ տարի թափառելէ վերջ, իր Գեւորդ որդւոյն հետ քաջ լինականներէն 300 հոգի հեռն առած, յարձակեցաւ այլազգիներու վրայ և Կապանայ տիրեց 65 տարի: Ասոր գերեզմանը սր կողմը ըլլալը թէև յայտնի չէ, բայց տեղացիք աւանդութեամբ կ'ըսեն, թէ նա Զէյթունի տէրն է եղեր: Այս արխատիրտ և քաջ զիւցազնուհիի յիշատակին՝ շատերը Զարման կը կոչեն իրենց ազգականց անունը և այս անուամբ խոստ շատ կիներ կան Զէյթունի մէջ: Զարմանուհիի որդւոյն Գեորգայ սերունդէն էր Հիթուժ անուամբ ուսեալ քահանայ, որ կը պաշտօնավարէր Միջին թաղի Ս. Աստուածածնի եկեղեցւոյն մէջ, և որուն համար աւանդութեամբ կ'ըսուի, թէ Կ. Պոլիս երթալով յաջողած է ձեռք բերել Սուլթան Մուրատ Գե նշանաւոր հրովառակը, որ այրեցաւ 1884ի հրդեհին ուրիշ անգին հնութիւններու հետ: Այս հրովարտակով որ արուած է 1618ին, Զէյթունը ազատ կը մնար զըլխահարկի սուրբէ և միայն տարեկան 15000 դահեկան սուրբ ւը կու տար Կ. Պոլիս: Այս Սօփիա մզկիթին՝ իրեն ձէթի գին, նոյնչափ ալ իրենց եկեղեցիներուն: Բառարանիս ծաւալն չի ներէր մանրամասն աստ յիշել քաղաքաւանիս հին ու նոր պատմական անցքերն ու պատերազմները, ուստի մենք համոռա ակնարկ մը միայն կու տանք: Զէյթունցիք իրենց ազատ զիւրքովը և արսնութիւններով, մերձակայ թուրք ժողովրդեան նախանձը իրենց վրայ շարժած էին, այս պատճառաւ 1780ին Մարաշի կառավարիչ Էօմէր փաշան բաւական զօրքով եկաւ քաղաքաւանի վրայ և 7 ամիս պաշարեց, բայց արխատիրտ Յակոբ անուն կարիճի ձորատարութեամբ Էօմէր սպանուեցաւ և Հայք յաղթեցին թուրքաց: Էօմէրի յաջորդն Ալի փաշայ ուղևոր իր նախորդին կորստեան վրէժնիկով լինել, 1782ին բազմաթիւ զօրքերով եկաւ Կիւրեսին՝ որուն կիրճը իսկոյն Հայք բռնեցին և թշնամին յաղթուեցաւ. այս պատերազմի մէջ նշանաւոր եղած է ճիկիր հայ իշխանը: Էօմէր և Ալի փաշաներու պարտութենէ վերջ, Զէյթուն շատ



տարիներ հանդիսա մնաց մինչև 1808 թուականը, երբ Մարաշի Գալէնտէր փաշան մեծ բանակով դալով ինն ամիս քաղաքաւանը պաշարեց և ժողովուրդը քանի մը աննշան պատերազմներէ վերջ խոտաացաւ տարեկան 60 քսակ կամ 30000 դահեկան տուրք վճարել թուրք կառավարութեան. սակայն այս խոտուամը չկատարեցին և ընդհանրապէս Սուլթան Մուրատի հրովարտակի համեմատ 15000 դահեկան կը վճարէին: 1819 թուին Եօզղատի բնակալ Չափանօղլուն Հալէպը նուաճելէն վերջ երբ Մարաշէն կ'անցնէր, տեղացի թուրքերու աղաչանքով սղեց Զէյթունն ալ նուաճել, սակայն զօրաց կորուստ տալով յուսակտուր դարձաւ Եօզղատ: 1829ին Կեսարիոյ կառավարիչ Քէօնէ փաշան բազմաթիւ հեծեալներով եկաւ Զէյթունէն 12 ժամ հեռու մինչև Կոկիսան. ուր հասնելով նաև Զէյթունցոց փոքրաթիւ գունդը և այն ինչ պատերազմը սկսեւ էր տաքնալ, Եզղուպեան Հաճի Ասաուածատուր ազան մէկ գնդակով գետին փռեց թշնամոյն զրօշակակիրը և կորակոր փախաւ թշնամին: 1830 թուին Զէյթունի Սուրէնեան թաղի մէջ կային 14 տուն սաճիկ, չորս իշխանները վճոնցին այլ ալլազդիները հեռացնել Զէյթունէ, բայց սոսնք զիշխանց Սուրէնեան թաղը թողլով անցան Եզղուպեանց թաղ և անոնց իշխանին շատ թախանձելով անոր հովանոյն տակ մասն: Ասով կրկպառակութիւնք և վէճք ծագեցան Սուրէնեան և Եզղուպեան իշխաններու մէջ: վէճերը ազեատալի պատերազմի փոխուեցան. Եզղուպեանի միացաւ Շօլքոբան և Սուրէնեանի Էնի-սիւնեա իշխանը և այսպէս ամբողջ Զէյթունը երկու հակառակ կուսակցութեան բաժնուեցաւ: Այս կորստարեր պատերազմը 7 ամիս տևեց, 300 պատերազմի կորիճներ զոճ ունեցաւ, և հուսկ ուրեմն քանի մը պայմաններով հաշտուեցան երկու հակառակորդ կուսակցութիւնները: Այս միակ դեպքն է, որ Զէյթունի իշխաններու տարեգրութեանց մէջ սև բիծ մը կը թողու: Այս ցաւալի պատահարներէն ինն ամիս վերջը Սուրէնեանք յարձակելով թանուր թրքարնակ գիւղի վրայ Հաճի-Խալաֆի-ուշաղիներէն և Գուանազ-

ներէն սպաննեցին 16 մարդ: Ասոր վրայ Մարաշի Սուլէյման փաշան ահալին բանակ մը կազմելով 1832ին եկաւ բանակ գրաւ Զերմուկի գաշար: Զէյթունի իշխանները ամէն անձնական կիրքեր մէկդի թողլով իրարու հետ միացան և զիշխար մը յարձակելով թշնամոյն վրայ չորս կէտերէ լաւ ջարդ մը տուին: Այս պատերազմին ինկան 309 թուրք, իսկ Հայերէն միայն 5 հոգի: Սուլէյման փաշայի յաջորդն թօռուն փաշայ՝ 1835ին, խարգախութեամբ Սուրէնեան Մարտիրոս իշխանը Մարաշ հրաւիրելով բանտարկեց, պահանջելով որ Զէյթունցիք 7 տարի չվճարուած տուրքը ամբողջ վճարեն. բայց Հայք Սուրէնեանի նամակէն իմանալով որ Մարաշի թուրք երեւելիները Գազմա ըստած տեղը զբօսանքի պիտի երթան, յարմար պահուն յարձակեցան անոնց վրայ և ինն թուրք մեծամեծներ գերի բնեցին և շղթայակապ բերդի մէջ բանտարկեցին: Յետոյ թօռուն փաշայ ստիպուեցաւ այս թուրքերն ազատելու համար Սուրէնեան իշխանը պատուով Զէյթուն դարձրնելու: Զէյթունի եկեղեցականներու մէջ ես եղած են անձնանուէր հայրենասէրներ, որոնցմէ հոշակուած է իր բազմաթիւ քաղաքործութիւններով Տ. Ռհան կամ Տէլի Քէշիչ զիւցազնը: Ասոր օրով Եզիպատի Մէհմէմէտ Ալիի աշխարհակալ սրդին Խալաֆի փաշա՝ Փօքը Ասիոյ զանազան մասանց սիրած միջոց, չյաջողեցաւ Զէյթունը նուաճել. սա ի սկզբան սիրով գնաց հայ ընտանականաց հետ և Տէլի Քէշիչի մէջքը թանկալին սուր մը կապեց ըսելով. «Սուլթան Մահմուտ քեզի խաչ տուեր է, ես ալ սուր կուտամ որ ըստ հարկին զործածես երբեմն մին, երբեմն միւսը»: Յետոյ փաշան Մահմէտականներէ գրգեալ որոշեց արշաւել Զէյթունի վրայ. սակայն Տէլի Քէշիչ իր կարիճներով զիւցազնական և արխնահեղ պատերազմի մը զիմադրելով, հարկազրուեցաւ փաշան ամթալից ետ քաշուել: Մինչև 1859 թուականը Զէյթունցիք ունեցան այլ և այլ կոխներ ու յաղթանակներ և զլխաւորաբար թերծիլի թիւրքմէնները հարկազրեցին Զէյթունէ 50 ժամ հեռու Չոքուր-օվա ըստած տեղը փոխադրուելու: 1860 թուականի յունիս



Տին Մարաշի կառավարիչ խորշուս փաշան իրեն նախորդներու օրինակներէն չխրատուած՝ կանոնաւոր զօրքերով զիսեց Զէյթունի վրայ և թուրքիոյ ուրիշ գաւառաց համեմատուրքեր պահանջեց։ Զէյթունցիք իրենց սրուշուած տուրքէն աւելի բան մը չուզեցին ճանչնալ, և միաբան յարձակելով թշնամուոյն վրայ, խայտառակարար ետ դարձուցին։ 1862ին թուրք կառավարութիւնն ուզեց վերջ տալ լեռնաքաղաքիս շարժումներուն, որոնցմով իր պատին կ'արատաւորէր և մեծամեծ զբամական և զինուորական կորուստներ կ'ունենար, ուստի և որոշեց բուլբուլին նուաճել Զէյթունը։ Այս արշաւանաց զուտն էր Աղիզ փաշայ, որ բաւ ու մանց 35000 և բոտ սլոց մինչև 87000 կանոնաւոր և անկանոն զօրքերով եկաւ Զէյթունի վրայ, սակայն հայ կտրիճները 5000 հոգով այս անգամ եւս առանց երկիւղի բաջութեամբ յաղթեցին, և թշնամին ամօթագարս ետ դարձաւ թողլով երկու թնդանթ, զէնքեր և պաշար։ Հաղիւ թէ Սուլթանը իմացաւ իր դունդերուն պարտութիւնը, որոշեց զեռ աւելի բազմութիւն զրբկել, և ոմանց պատմածին համեմատ մինչև 100000 հոգի։ Այնուհետև Պոլսէն Փարիզ Նափոլէոն Գ կայսեր զրկուեցաւ Զէյթունցի պատգամաւոր մը՝ միջամտութիւնը հայցելով, նոյն առեն Զէյթունի չորս իշխաններն և մի քանի ուրիշ անձինք Պոլսի մէջ բանտարկուեցան։ Այս ժամանակ Զէյթունցիք քաղաքական ազատութիւն ձեռք բերելու համար, փափաք ունեցած են հայ հոսովէական հասարակութեան հետ միանալու։ Մէկ կողմանէ Նափոլէոն կայսեր միջամտութեամբ և միւս կողմանէ հայ բարձրաստիճան ամիրաներու միջնորդութեամբ բանտարկեալք կ'արձակուին և Զէյթունի վրայ բալելու համար նոր ճամբայ հանուած զօրքերը ետ կը դարձուին։ Այս թուականիս սկսաւ Զէյթունի ինքնավարութեան հիմքը խախտիլ և օսմանեան իշխանութիւնը աւելի հաստատուեցաւ։ Սակայն Զէյթունը, ինչպէս թուրքերը կ'ըսեն, միշտ ակոսայի ցաւ մ'էր Սուլթանի համար, որ չէր կրնար հանդիսա մնալ, մինչև որ ուրիշ գաւառաց վարչական վիճակին չենթարկէր զայն։ 1865 թուին Զէյթուն մասն ոմն

Սալիհ էֆէնտի իրրեւ գայմագամ և գատաւոր մը ու հազարապետ մը՝ իրրեւ բարենորոգիչ։ Ասոնք սկսան ժողովուրդը նեղել ծանր տուրքերով և Զէյթունցիք քանի մը տարի հպատակելէ վերջ, Տալուտ Նիտազի էֆէնտիի գայմագամութեան օրով, անոր անհանդուրժելի արարքներէն զրգուած վերջապէս կ'յարձակին ու կը քանդեն կառավարութեան պաշտօնատունը և թուրք պաշտօնեաները կ'արաքսեն։ 1875էն 1878 թուականը Զէյթուն անկախ մնաց և իրեն զլխաւոր ունեցաւ Էնի-Տիւնես իշխան Աստուածասուրի հօրեղբորդին Պապիկ փաշայ, որ իր կենաց մէջ 15 տարի շարունակ ազգօգուտ քաջադործութիւններով ըզբաղեցաւ։ 1878 տարուայ հոկտեմբեր ամսոյ սկիզբը, կայսերական հրամանով Մարաշէն մեծ բանակով կու գայ Զէյթունի վրայ Վէյսի փաշան։ Ֆրոնտի վանահայր Նիկոզայս եպիսկոպոսի առաջնորդութեամբ խումբ մը Հայեր կը զիմարեն օսմանեան զօրքերուն։ Պապիկ փաշան ալ իր հրամանաւ տարութեան տակ զանուոզ 400 ի շտի հրոսակներով կ'սկսի պատերազմիլ։ Այս միջոցին կռուով կամ աւելի գաւով Զէյթունցիներէն մօտ 300 հոգի կը ձերբակալուին, որոնց մէջ էր նաեւ Նիկոզայս եպիսկոպոսը, իսկ 150 հոգի լեռներու զուրբ կ'ապաստանին։ Վէյսի փաշայ 250 չէրքեզ կը զրկէ այս փախստականներու վրայ, բայց Չէրքեզներէն շատը կը ջարդուին։ Այս զեպքերը և բանտարկելոց գտն վիճակն, ամէն ջանք գործ գնելով, Ամերիկացի հայասէր միսիոնարն Մըթըր Մոնթքորի, հեռագրեց կ, Պոլսի Անգլիոյ զեսպանին և Բ. Գուրուու Հայոց Պատրիարքարանին։ Բ. Գուրը զեսպանին և պատրիարքի պահանջմանց համուկերպելով հրամայեց որ Զէյթունի վրայ յարձակողները ետ քաշուին։ Ռուս-Տաճկական պատերազմը և Պեռլինի վեհաժողովը աւարտելէն վերջ, Բ. Գուրը մտիկ ընելով բարեկամ խորհրդատուներու, քաղցրութեամբ ուզեց շահիլ Զէյթունի ժողովուրդը։ Նոր բարեկարգութիւններ խոստացաւ։ 1879ին Սուլթան առանձին իրատեով Զէյթուն զրկեց Մազհար փաշան և Նուրեան էֆէնտին, որոնց յետոյ ընկերակցեցան Հալէպի անգլիական



հիւպատոսն Ճերմասյո և Կիլիկիոյ Հայոց Տ. Մկրտիչ կաթողիկոսը, որոնք կայսերական կառավարութեան անուամբ ներուժն շնորհեցին բոլոր Զէյթունցոց և տուրքերը շատ նուազեցուցին: Յետոյ Զէյթունի մէջ զօրանոց մը շինելու խնդիրը յարմարեցուցին, որուն շինութիւնը Զէյթունցիք անձամբ ըրին և կրէր աւարտեցաւ 800 կանոնաւոր զօրք զալով, գայմազամի հսկողութեան զօրծը բաւական զիւրացաւ և այսպէս 5 տարի առանց միջնակէի անցաւ: 1884ի հրկեհէն վերջ, Տէակ փաշան որ կառավարական նպաստը բաշխելու պաշտօն ունէր, սկսաւ նեղել Արեղինցիները տուրքերը կրկնապատելի պահանջելով, որուն դէմ ազատամբեցան և Շամիր — քէշիշեան անուն երիտասարդի առաջնորդութեամբ՝ յունիս 24ին յաղթեցին թուրք զօրաց: Օղզայասիի մէջ եւս Հայք յաղթութիւն մը ըրին 1886 տարուայ սեպտ. 9ին: Հայկական խնդրոյ յուղումը միջոցները կառավարութեան խտուրթիւնները սկըսան աւելնալ քաղաքաւանիս վրայ: Մարաշի կառավարիչ Մալիհ փաշան Զէյթուն կուգայ 1890 տարուայ յունիս 2ին և կը նստի կրկու ամիս: Այդ միջոցին քաղաքային բժշկէն թունաւոր պատուաստ սաանալով կը մեռնին 500է աւելի Զէյթունցի անմեղ մանուկներ: Ժողովրդեան վրայ ամբաստանութիւն, լրահտութիւն և բռնութիւն կը զօրծադրուի: Զէյթունը քանդելու, աւերելու յայտնի նպատակ կը տեսնուի: Վերջապէս Օսման անուն սասիկանի մը սպանուելու առթիւն օգտուելով Մալիհ փաշան զօրանոցէն երեք խումը կանոնաւոր զօրք կը հանէ և քաղաքաւանը հրացանի կը բռնէ: Զէյթունցիք թէև անպատրաստ՝ կը պատասխանեն գնդակներով: Այդ կռիւր (1890, սեպտ. 24) կը տեսէ 3 ժամ և թէև երկու կողմէն եւս մահեր կը պատահին, բայց զօրքերը կը հարկադրուին ետ քաշուելու: Մալիհ փաշան գայրացած՝ Մարաշի, Ալպիութանի և Անարբընի յեաիփ զօրքերէն 3000 հոգւով կ'աւերէ շրջակայ հայ գիւղերը և պաշարման վիճակ հաստատելով՝ մահմէտական հասարակութեան իրաւունք կու տայ Զէյթունցոց կենաց և ինչքերու վրայ: Այս յուսահատական վիճակի մէջ Զէյթուն կ'ընկ-

նուի և 46 հոգի Հալէպի բանար կը զբրկուին: Զէյթունի մէջ խտուրթիւն և տանջանք կը շարունակուին և թուրք պաշտօնեաները անօրինակ կերպով կը կեղեքեն ժողովուրդը: 1895 տարուայ հոկտ. 28ին (ն. տ.) Զէյթունցիք կը պաշարեն զօրանոցը, իրենց հետ էր նաև Աղասի. Հայկելով որ ներսէն թնդանօթի ոռմուր կ'արձկուէին անգապար, 60 ժամու կատաղի պատերազմէ վերջ պահակազօր գունդը, 600ի չափ, իրենց հրամանատարներով անձնատուր կը լինին և բոլոր ռազմածիւրքը կը յանձնեն: Փերուած զօրքերը իրենց բնասնիքով Զէյթունցիներէն լաւ խնամք կը վայելն: Թուրք կառավարութիւնը բազմաթիւ կանոնաւոր զօրաց բանակ և թնդանօթներ կը զրկէ Զէյթունի վրայ և շրջակայ գիւղերը աւերակ կը դարձնէ. հայ գիւղերու բնակիչներէն շատերն ալ Զէյթուն կ'ապաստանին: 1895-1896 տարիներու մէջ Զէյթունցոց թուրք զօրաց դէմ մղած պատերազմներն և յաղթութիւններն մի առ մի սոտ յիշել չենք կարող. փափաքողք կարող են կարգալ նոյն տարիներու Հնչակի համարներու մէջ: Այս միայն բնէնք, որ թուրք կառավարութեան ահապին բանակը յաղթահարեցաւ Զէյթունի գիւղազներէն և յատուկ արտօնութիւններով եւրոպական մեծ սկտութեանց միջամտութեամբ հաշտութիւն գոյացաւ: Այս վերջին դէպքերու մանրամասն պատմութիւնն պիտի հրատարակէ տարույս (1902) մէջ Զէյթունցին՝ տանձին գրքով մը՝ որ պիտի կազմէ իւր արդէն ծանօթ գրուածքին Բ մասը: Զէյթունի վրայ հետաքրքրական և օգտաշատ երկու հատոր խալ լեզուով գիրք մ'ալ հրատարակեց 1897ին, Պէյրութի խաալոյ հիւպատոս, Մեծ. Հենրիկոս Վիթթոյ՝ Անատոլոյ Լատինոյ ծածկանուամբ: Զէյթունի վրայ տանձին գիրք մը հրատարակած է Յ. Յ. Ալլահօլէրտեան 1885ին, յորում տեղագրականէն աւելի կան նաև ազգագրական, բնասիրական, լեզուարանական և այլ օգտակար տեղեկութիւններ: — Սխական, 170-188: Կիլիկիա, 327-342: Ն. Հայտ. 374-376: Եւ այլն:



տական). 6 տուն հայ կայ, տանց եկեղեցւոյ և դպրոցի:

ԶԷՅՆԻՍ. — Գիւղ վանայ Խօջապ գաւառակի, 1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամու ճանապարհ հեռու կասր գիւղէն: 10 տուն եկաւոր քուրդ և 3 տուն բնիկ հայ կայ: Հայք ունին Ս. Աստուածածին անուն եկեղեցի մը, բոլորովին անշքացած և ամայացած է, իր գեղեցիկ դրոց և մօտ 800 տարուան հաստատուն շինուածքին հակառակ: Գիւղս շինուած է բլուրի մը հարաւային կողմուն վրայ. ունի գեղեցիկ տեսարան, լաւ օդ ու ջուր և խոտաշատ դաշտեր:

ԶԷՅՎԱՃՈՒԿ. — Գիւղ Ատրպատականի Սարմատ գաւառի: 10 տուն հայ կայ:

ԶԷՅՎԱՅ. — Հայաբնակ գիւղ Զանգեզուր գաւառի Գ վիճակի մէջ. ունի 502 բնակիչ, բաժնուած 50 տան:

ԶԷՅՎԱՅ. — Այրարատայ Արագածուն գաւառի մէջ կայ այս անուամբ Հայոց մեծ գիւղ մը: Ունի 1062 բնակիչ, բաժնուած 163 տան: Գիւղէս երկու մղոն հեռու արևմտակողմը կը գտնուի Զէյվայ-Թարարոց սրբիչ գիւղ մը՝ 111 տուն բնակչօք: Այս կրկին գիւղերու մօտ քննութեան արժանաւոր տեղեր կան:

ԶԷՅՎԱՅ. — Այսպէս ես կը կոչուի Սիւնեաց Բաղք գաւառի Զեմի-չայ գետակը:

ԶԷՅՎԱՅ. — Գիւղ կարճկանի, սարահարթի մը վրայ: վանայ ծովակը երկու քարնիկէց հեռաւորութեամբ կը տարածուի ասոր առջևը: Այժմ հայկական եկեղեցւոյ ամայի շէնք մը միայն կը տեսնուի և բոլորովին քրքարնակ է:

ԶԷՅՏԻՔԱՆ. Տես ԶԵՏԿԱՆ:

ԶԷՆԿԻ. Տես ՀՐԱԶԳԱՆ:

ԶԷՐՁԸԼ. — Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի: 32 տուն հայ կայ, ունին եկեղեցի մը:

ԶԷՐՏԻԿԷ. — Կարնոյ գիւղերէն մին. 20 հայ բնակիչ կայ, տանց եկեղեցւոյ:

ԶԷՐՐԷ. — Գիւղ Տիգրանակերտի Ալիվանու գաւառակի, Նիբիկերտի հարաւակողմը, գրեթէ 2 ժամ հեռու: Բնակիչք՝ 80 տուն քրդակօս Հայեր են. եկեղեցի և վարժարան չունին: Տարին անգամ մը մերձակայ գիւղէ մը քահանայ կը հրաւիրուի և գիւղա-

պետի տան մէջ ժամերգութիւն և հողեւոր պէտքեր կը կատարուին, մեծ մասն քուրդ լեզուով: Մկրտութեան, պսակի և թաղման համար ալ մերձակայ գիւղի քահանայն կը կոչուի: Տուներն քարաշէն են, օդն՝ առողջ և ջուրն պատուական: Գիւղս Զերթե կոչուած է հողին արդիւնարեութեան համար, զոր՝ բրդերէն ոսկի բնի է, և զերթե՝ սուկեղէն: Գեղեցիկ դիրք ունի, շուրջը կան պարարտարօտ վայրեր, ծառեր, ծառաստաններ, առուակներ և բազմաթիւ գիւղեր:

ԶԷՅԱՆՅՈՋ. — Գիւղ Տրապիզոնի. ունի 60 տուն հայ բնակիչ, Ս. Թորոս անուամբ եկեղեցի մը և Մեհրոպեան անուն վարժարան մը՝ 50 աշակերտներով: Կան նաև սակաւաթիւ Մահմէտականք և Յոյնք: Հողագործ են: 1895 տարւոյ գէպքերու ժամանակ գիւղիս տուներու մեծագոյն մասը կրակի ճարակ եղաւ, բնակչաց մեծ մասը Ս. Փրկիչ վանքը ապաստանեցաւ և փոքրամասնութիւն մ'ալ գիւղի մէջ զէն ի ձեռին ինքնապաշտպանութեան զինեց:

ԶԸՄԱՌԱ կամ ԶԸՄԱՌԱՅ. — Գիւղ Տիւրիի հիւսիս-արեւելեան կողմը՝ հօլաի մը մէջ, 6-8 ժամու ճանապարհ հեռու: Ունի 70 տուն հայ և 30 տուն թուրք բնակիչներ: Գիրքը գեղեցիկ է՝ լերան մը կարծքին վրայ շինուած. առջևը կը տարածուին փոքրիկ դաշտ մը, արտորայք, այլիք և պարտէզք. օդն՝ առողջարար, ջուրն՝ զով ու քաղցրահամ: Բնակիչք ընդհանրապէս հողատէր են. կանայք՝ բարձրահասակ, առեգակազմ և գեղազէմ են: Ունին Ս. Երրորդօրէի անուամբ եկեղեցի մը՝ պայծառ ու նորաշէն, և Նաչեան անուն քարուկի վարժարան մը՝ 60 աշակերտներով: Գիւղս հայրենիք է պատրիարք Յակոբ Նաչեանի, որ իւրանուն վարժարանը և ուրիշ հաստատութիւններ հիմնած է: Զրմատայէն շատ պանդուխտներ կան Կ. Պոլիս և մեծ մասը հացագործ են: Տուները բաւական ճաշակաւոր շինուած են: Կանայք աշխատակից են արանց: Գիւղիս բաւական հասոյթ կը բերեն բազմազարեան հսկայ ընկուզենիներ: Զրմատայի ստորտը կը գտնուի ջինջ լճակ մը հովտուն ծառերով: Կան Ս. Պօղոս-Պետրոս և Ս. Նիկողոսյոս վանքերու վրա-



տակներ և ուրիշ 36 ուխտատեղիներու աւելերակներ՝ որ երբեմն եկեղեցի են եղեր: Այս ուխտատեղիներէն նշանուոր է Վերի վանք ըստածը, որ բարձր զիրք ունի և ուր ընդհանրապէս ամառները կ'այցելեն սգատական սառ ջուրը և ատոյջարար օլը վայելելու համար:

ԶԲՆԶԸՆ. — Գիւղ Տիգրանակերտի Ալիվան գաւառի. 40 տուն հայ ունի և եկեղեցի մը:

ԶԲՈՉԻ. — Հայքանակ գիւղ Այրարատայ Ծիրակ գաւառի արեւմտեան մասին մէջ, Նախճաւանի արեւմտեան կողմը, հրաբուխային կարմիր գեղին քարերով երկրի մը վրայ: Բնակիչք 952 հոգի են, բաժնուած 109 տան:

ԶԻԱՐԷԹ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ գաղտի մէջ, արեւմտեան հիւսիսային կողմը, Մուշէն 4 ժամու ճանապարհ և Առաքելոց վանքէն 2 ժամ հեռու է: Ունի 120 տուն հայ և եկեղեցի ու վարժարան՝ զոր 1885ին հաստատեց Պոլսի Միացեալ ընկերութիւնը: Առջեւն կ'անցնի Արածանին: Գիւղիս անունը Զիարէր (Ուխտաւայր) ըստած է, որովհետեւ կը գտնուի այն լեռան սաքը, որուն վրայ նստած է Ս. Կարապետի վանքը:

ԶԻԱՐԷԹ. — Լեռ Այրարատայ Արագածոտան գաւառի արեւմտեան կողմը, Ծիրակայ սահմանին մէջ, 10000՝ բարձրութեամբ: — Այս անուամբ ուրիշ լեռներ և այլազգայնակ զիւղեր ևս կան:

ԶԻԱՆ. — Այս անուամբ գետակ սը կայ Այրարատայ Մաղկոտան գաւառի մէջ, որուն ձորն ալ կը յիշուի Զիլանայ-ձոր անուամբ և կը թուի, թէ ի հնումն առանձին վիճակ համարուած ըլլայ: Այս կողմանց բուրդ բնակիչք Զիլանցի կը կոչուին: Զիլանայ ձորի մէջ կան ձմարային ջերմուկներ, ուր կը նշմարուին հին մարմարեայ աւազաններու նշխարներ. կան նաև սղոճի հանքեր:

ԶԻԱՆ կամ ԶԵԼՆԱՆ. — Ամայի գիւղ Այրարատայ Բազրեանոյ գաւառի Զարիշատու վիճակի մէջ:

ԶԻԱՆԱՅ ՁՈՐ. Տես ԶԻԱՆ:

ԶԻԳԱԼԷ. — Ամայի և Լքուած բերդ կամ մեծ աշտարակ մը Պաշ Համէնէն օր մը

հետ: Մէջը կը տեսնուին հին կամարակապ շինութիւններ:

ԶԻԼԷ. ԳՊ. ZILÉH. — Եւզոկիոյ գաւառի համանուն գաւառակի գլխաւոր և վաճառաշահ քաղաքն է, Եւզոկիոյ հարաւ արեւմրտեան կողմն 55 հզրմ. կամ 12 ժամու ճանապարհ հետ: Զիլէի զիրքը զեղեցիկ է, կառուցուած կոնաձեւ բլուրի մը վրայ. տուները տարածուած են բլուրին շուրջը, իսկ հին բերդը կը գտնուի գագաթը, որուն պարիսպները քակած ու զօրանոց շինած են: Ունի 4000 տուն բնակիչ, որ կը բաղկանայ հայ, տաճիկ և գնչու հասարակութիւններէ. կան նաև քիչ թուով Յոյներ: Հայք 400 տուն են և գնչուք 40-50 տուն: Վ. Քինէ քաղաքիս բնակչաց թիւն 20000 կը գնէ, հետեւեալ կերպով բաժնուած.

Մահտականք . . . . .	15700
Հաւք . . . . .	4000
Յոյք . . . . .	300
<hr/>	
Գումարն . . . . .	20000

Հայք և Տաճիկը գրեթէ խառն կը բնակին. փոքոցները անմաքուր են, տուները աձեւ, հազուստները աղտոտ: Զիլէ՛ իր զիրքովը ուրիշ քաղաքներու հետ շատ յարաբերութեան յարմարութիւն ունենալով, վաճառականութիւնն լաւ վիճակի մէջ է: Այժմ թէև ոչ այնչափ, որչափ երբեմն՝ նշանուոր էր Զիլէ փակնայիրին, ուր ամէն տարի գեկտեմբեր ամսուն կու գան ոչ միայն շրջակայներէն, այլ և Հալէպէն, Շամէն, Գազախայէն, Կեսարիայէն բազմաթիւ վաճառականներ և մեծ առուտուր կ'ընեն: Քաղաքիս մէջ կը գտնուին ասիական գրեթէ ամէն տեսակ արհեստներ. խաղախորդութիւնը Տաճիկաց ձեռքն է և մեծ շահ կը քաղեն ասկէ, վասն զի շատ տեղեր կը գրկուին հոս բանուած կաշիներէն: Մաղկած է նաև բաւրակէ ճերմակ կտաւ գործելը, որ ընտիր է ու զիմացիուն, շատ տեղեր կը գրկուին այս կտաններէն. այսպէս նաև մանիսա, այժու մազէ և կանեփէ չուաններ, մեծ ու փոքր առպրակներ, և այլ նիւթեր: Վաճառականութիւնը կեսարացոց ձեռ-



քըն է և բնիկները մեծ մասամբ հոգաւէր են: Գլխաւոր բերքերն են՝ ցորեն, գարի, սիսեռ, ափսն և ուսփ: Միջին հաշուով Ձիւլէն տարին 150 հազար լիւրայի սպրանք գութս կը գրկուի: Ձինուորական տեսակէտով նշանաւոր է իր անասիկ կիրճերով և ի հնումն հաշակաւոր եղած է կրկին պատերազմներով: Առաջին պատերազմին Միհր-գաս Եւզրատոր յաղթեց Տրիանոսի՝ Լուկուլլոսի տեղակալին: Երկրորդ պատերազմին մէջ Փանակ յաղթուեցաւ Կեսարէն, որ այս յաղթութեան առթիւ գրեց Հոմերոն նշանաւոր «Veni, vidi, vici = Եկի, տեսի, յաղթեցի» խօսքերը: Սարարն բազաբիս հիմնադիրը կը համարի Շամիրամ: Հայք ունին Ս. Յակոբ անուամբ եկեղեցի մը, որուն բակի մէջ են շքեղ առաջնորդարանը, Ս. Մեսրոպեան վարժարանը, քանի մը սենեակ և գերեզմանոցը: Եկեղեցին ունի յատուկ կալուածներ և վարժատան ծախքը ինքը կը հոգայ: Քաղաքիս Հայոց ազգային սնտուկը, բացի եկեղեցոյն հասոյթներէն, տարուէ տարի 400 օսմանեան լիւրայ եկամուտ ունի զանազան կալուածներէ: Եկեղեցին ունի բաւական թւով ձեռագիրներ:

Քաղաքիս արեւմտեան կողմն իբր տասն վայրկեան հեռու Սիլրիչա անուամբ բլուր սը կայ, որ Պաղլըչա եւս կը կոչուի, ասոր ստորտը տարածուած են շատ այլեւս տաններ, ասրոյջ բլուրը գերբուկներով լի է վերէն վար և նայն իսկ այդիներու մէջ շէնքերու աւերակներ կան: Ասիկ կը հանին երբեմն քարէ սիւներ, խարխիւններ, խոյակներ, գանուած է նաեւ արձան մը՝ զոր փոխադրած են Հայոց եկեղեցոյն բակը: այս արձանը փոքրիկ գիրքով կանգնած պատկեր մ'է, ձեռքը կուրծքին մօտ գաւաթ մը բլուսնած, անտարակոյս այս արձանը քրիստոնէութեան ժամանակէ յտուջ է: Գրամ և սերիշ հնութիւններ եւս կը գանուին այս բլուրի հողերուն մէջ: — Երկու բլուրներ ալ քաղաքին հարաւային կողմը կան քանորդ ժամ հեռու, մեծագոյնը՝ որ Կագի պարս կ'ըսուի, գագաթը և ստորտը՝ ուտի ջուր կը բղխէ, կան մէկ մէկ ուխտական գերեզմաններ: Միւս բլուրը կ'ըսուի Կիւլեր-

ձիկիք (Աղաւնոց): Իսլայիլ տեսէ անուն ուխտատեղի մ'ալ կայ քաղաքէն իբր ժամ մը հեռու, ուր Հայք և Տաճիկը կը յաճախեն: — Ձիւլէի հարաւակողմը երկու ժամ հեռու է Ձիլքեկ բնուած աւերակ վանատեղին, զոր Հայք Ս. Արխատիկս հայրապետ կ'անուանեն, աւերակ է և քարէ սիւն մը կայ կանգուն: Ըստնաները և այլ ախտաժէտներ հոս ուխտի կու գան ու կը բժշկուին, յունարէն գրերով խաչքարեր կը նշմարուին: Բոս աւանպութեան՝ մեր Ս. Արիտակէս հայրապետ նիկիոյ ժողովին երթալուն, հոս եկեր, աղօթքով և հրաշքով աղբիւր մը բղխեցուցեր է, որ ցարդ կայ և Լոյս աղբիւր կը կոչուի, որուն ջրով կը մկրտուին ու կը բուժուին հիւանդները: Ս. Աստուածածնայ գօտին հոս գանուած է, ինչպէս օգոստ ԼԱԻ՞ գրուած է Յայմատուրի մէջ, առանց տեղոյս անունը տալու. «... Յայմանցաւ Ս. Գօտի նորին Տիրուէւոյն մերայ յեպիսկոպոսէն Ձիլիւ ի թագաւորութեան բարեպաշտին Յուստինիանու...»: Ուրիշ շատ ուխտատեղիներ ունի Ձիւլէ որոնց մէկ մասն այժմ թուրքաց ձեռքն է, ժամանակաւ բնութեամբ քրիստոնեայ բնակիչներէն շատերը թրքանալով, իրենց ուխտատեղիներն ալ թրքացուցած են: Ասոր սպացոյց մ'է նաեւ Հայոց հին թագի Ս. Սարգիս եկեղեցին, զոր թուրքերը Գեղե Էօնիւ ելլիս փոխած են այսօր, ուր գեո Հայերը ուխտի կ'երթան: Տեղոյս թուրքերը իրտ բնութեամբ կը վարուին Հայոց հետ, և այդ բնութեան պատճառաւ Ձիւլէի ամբողջ Հայք թուրքերէն կը խօսին: 1895ի գէղեբերուն քաղաքիս Հայոց տուները կուտպուեցան և 200 անձէ աւելի զոհ գացին: — Թորոս Ալլար, Ա 69-79: Էւ այլն:

ԶԻԿԵԱՆ. — Գիւղ Պարսկաստանի Փէրիա գաւառակի. 1880ի վիճակագրութեան համեմատ, ունի 11 տուն հայ և եկեղեցի մը:

ԶԻՄԱՌԱՅ. Տես ԶԻՄԱՌԱ:

ԶԻՆԱԻՌ. Տես ՆՈՐ ՔԵԱՄՈՒԿ:

ԶԻՆՃԻ ՏԵՐԷ. — Գիւղ Կեսարիոյ, ուր Յուսաց վանք մը կայ:

ԶԻՆՃԻՐՎԻ. — Հայաբնակ մեծ գիւղ Այրարատայ Ռերձ և Արած գաւառի մէջ: Ունի 1227 բնակիչ, բաժնուած 108 տան:



Մօտը կան քարաշէն առններու, եկեղեցւոյ ե Ս. Յովնանէն: Մկրտչի անուամբ մենաստանի սը աւերակներ:

ԶԻՆՃԻՐԼԻ. — Լեռ Այրարատայ Նիզ գաւառի հիւսիսային կողմը. 8716' բարձրութեամբ:

ԶԻՉԱՔՍԱ. — Հայաբնակ գիւղ Տրապիզոնի առաջնորդական վիճակի մէջ: Անի թաղային վարժարան մը 25 աշակերտներով:

ԶԻՐԱԿ. — Այլազգաբնակ փոքր գիւղ Սիւնեաց վայոց գաւառի հիւսիսային մասի մէջ: Ասոր մօտ կը նմարուն հայութեան հին մնացորդներ, եկեղեցւոյ աւերակներ, խաչարձաններ ե գերեզմաններ:

ԶԻՐԱՔԼՈՒ. — Հայաբնակ գիւղ վանայ Ականց գաւառակի: Անի Ս. Ստեփանոս անուամբ եկեղեցի մը:

ԶԻՐՈՅ. — Հայաբնակ գիւղ Այրարատայ Բագրևանդ գաւառի Գարա-բլիսի սելի վիճակի մէջ, Ղազի արեւելակողմը ժամ մը հեռու: Կը գտնուի ճանապարհի ձախ կողմն գարի բարձրութեան վրայ, 1880 թուին ունէր 40-50 տուն բնակիչ ե 10 բնասանիքի չափ էղիտիններ: Այս գիւղս միշտ ենթակայ եղած է Քրդաց հարուածներու, տակաւ առ տակաւ բնակիչք ցրուած են ե մնացած քանի մը տան Հայերու գրութիւնն խիստ ցաւալի է:

ԶՄԻՒՌՆԻԱ կամ ԻՉՄԻՐ. Գ.Ղ. SMYRNE. — Փոքր Ասիոյ ծովեզերեայ քաղաքաց զխոյն ե աշխարհիս ամենահին վաճառաշահ վայրն է Զմիւսնիա, որ կառուցուած է Այաբնի կուսակալութեան արեւմտեան կողմը, Եզեան ծովուն վրայ ե համանուն ծովախորշին խորը, Պագոս լեռան սոքը: Լամարթին՝ Զմիւսնիան արեւելքի ստաղ կը համարի, իսկ Փիէո տը Լուսոյ՝ բազմաթիւ տկանատես անձանց տեղեկութեանց վրայ հիմնեալ՝ Զմիւսնիոյ ծովախորշը Մարսիլիայի, Ճենուվայի ե Նափոլիի խորշերէն աւելի սիրուն ե գեղեցիկ է, կ'ըսէ: Նկարչական է քաղաքիս տեսքն, հեռուէն կը տեսնուին կարգ մը բլրակներու ե անոնց ստորոտը շինուած ե կեղեցիկներու գմբէթաւոր յարկերը, աներն, մշկիթներու գմբէթներն ու աշտարակները. իսկ քարափին վրայ վերէն վար շինուած

գեղեցիկ շէնքերը, եւրոպական քաղաքի մը երեւոյթ կ'ընծայեն: Զմիւսնիոյ խորշին մէջ տեղէն ակնարկ մը տալով կը տեսնուին քաղաքին ետեւի կողմը նոճիի մշտագալար անտառակներ, որոնց ետեւը բարձրացած է Պագոս՝ իր աւերակներով: Հարուստագոյր գէպի Եփեսոս կը տարածուին արգասարեր գաշտագեթիներ, որոնց վրայ կարծես կ'իշխէ բարձրածայր Երկու Երբարք (Իքի գարտաշար) լեռը: Հիւսիսային կողմն կը տեսնուին Սիպիլ լեռանց շարքը ե քանի մը գիւղեր: Իսկ հիւսիս-արեւելեան կողմն կը տեսնուին Պուսնագաս ե Հաճըլար գիւղերու ձորերն ու ծործորները: Զմիւսնիոյ ծովն ե երկինքն անոյշ կապուտակ են, օդն այնպէս մաքուր ե յստակ, որ խորշին արեւմտեան կողմը՝ հեռուն ու շուրջը բարձրացած լեռները մերձաւոր կ'երեւան: — Զմիւսնիոյ առաջին հիմնարկողը կը համարուի Տանտագոս Լիւդիոյ թագաւորը: Ի սկզբան Նաւուբոն (Ναυόχον — Նաւանուգիտա) կը կոչուէր. հին քաղաքը զարհուրելի երկրաշարժէ մը բոլորովին տակնուվրայ եղած կը պատմեն մատենագիրքը: Զմիւսնիոյ երկրորդ հիմնարկութեան որոշ թուակննն ալ յայտնի չէ. Հերոդոտոս՝ կամ այն անձն որ իր անուան տակ Հոմերի կեանքը գրած է, քաղաքիս հիմնարկութիւնը թէսէոսի կ'ընծայէ, որ իր կնոջը յիշատակին անոր անուամբ Զմիւսնիա կոչած է: Զմիւսնիա երկրորդ շինութեան վերջ ես աւերեր է, որուն հնագոյն աւերակները ժամանակ ժամանակ գտնուած են ու կը գտնուին: Երրորդ անգամ քաղաքս շինուեր է, հին վայրէն 12000 սոք հեռու, Պագոս լեռան վրայ, պատմագիրներէն ամանք այս երրորդ շինութիւնն կու տան Աղեքսանդրի կամ իր յաջորդաց ե ամանք Լիւզեղեանց: Աղեքսանդրի կամ յաջորդացը շինած կամ վերահիմնած Զմիւսնիան 2100 տարիէ աւելի կանգուն մնալով իր տեղը երբեմն միայն պատահական քաղաքական պատերազմներէ, երկրաշարժներէ, հրդեհներէ փոփոխութիւն կրած է: Աղեքսանդրի մահէն վերջ Անտիոգոսոս իր արժուր Զմիւսնիա հաստատեց: Նոյն ժամանակները քաղաքս ըստ ամենայնի ծովեզած ե բարդուած վիճակ մ'ունէր: Հովմայեցոց



կայսերը միշտ աշխատած են Զմիւռնիան ծաղկած վիճակի մէջ պահել: Քրիստոսի 177 թուականին, սոսկալի երկրաշարժ մը հիմնայաօակ տապալեց Զմիւռնիան, սակայն Մարկոս Աւրելիոս կայսեր ջանքով վերստին նորոգուեցաւ և սկսաւ ծաղկիլ: Շատ դարեր մնաց Հռովմայեցոց կայսրութեան ներքեւ: 1684ին Ճաթաս անուն թուրք ծովահէնն իր բնկերներէն թագաւոր

Զմիւռնիոյ տիրեց, նշանաւոր շէնքերը հարթ յատակ ըրաւ, Ասպետները հեռացուց և հազարաւոր բանտարկելոց գլուխները կտրեց և ինքը մեկնելով իշխանութիւնը յանձնեց Քինէյիաի: 1624ին Սուլթան Մուրատ Բ քաղաքս գրաւեց և Քինէյիաը վճնակելով ուրիշ կառավար մը գրաւ: Այս ժամանակէն սկսեալ մինչև օրս Զմիւռնիա միշտ մնաց օսմանեան կառավարութեան ներքեւ և վերստ



313. Զմիւռնիոյ ընդհամուր տեսարանը:

անուանուելով, յարձակմամբ քաղաքիս տիրեց. բայց չկրցաւ երկայն իշխել: Այնուհետեւ սկսաւ իր փառքը և փարթամութիւնը կորսնցընել: Ամուր՝ 1332ին քաղաքիս տիրեց. ասոր ժամանակ Հոգոսի Ասպետները գալով ծովուն քով կառուցուած զղեակն առին և քաղաքին մէկ մասին տէր եղան: Այսպէս 50 տարի մաս մը թուրքաց և մաս մը Ասպետաց իշխանութեան տակ մնաց, մինչև որ 1402ին Լէնկթիմուր գալով

տին ծաղկեցաւ: Թէպէտև 1694ին, Ահմէտ ԲԵ օրով, ուզեցին վննեակեցիք նաւատորմի գով պաշարել, բայց եւրոպական հիւպատոսներու միջամտութեամբ առանց բան մ'ընելու մեկնեցան: Պագոսի բարձանց վրայ եղած հին ծաղկեալ քաղաքին տեղը կան այժմ ցիրուցան նորաշէն անակներ ու խրճիթներ և հնազոյն կամարներու և այլ շինութիւններու մնացորդներ: Բուն քաղաքը շինուած է Պագոսի կո



զերուն վրայ և ստորաբար: Ստորաբար կառուցուած տուներու տեղը շատ բնդարձակուած է ժամանակ ժամանակ ծովը լեցնելով: Զմիւնիոյ բարափը (որուն շինութիւնը սկսաւ 1868ին և աւարտեցաւ 1880ին) շինուելէ վերջ քաղաքս մեծապէս փոխուած է: Ծովազերաց սալայտասակ փոստընքն և առոր զուգահեռական եղող կրկին փողոցներէն, ինչպէս նաև ուրիշ քանի մը անցուզարձի ենթակայ փողոցներէն զատ, բնդհանրապէս միւս փողոցները խառնաշփոթ, նեղ ու ծուռ են. Հայոց թաղի փողոցները կանոնաւոր են: Եւրոպայէն բնդհանրապէս կրկնայարկ են և շատ քիչ կան երեք չորս զբոստիկան ունեցող տուներ: Երկրաշարժի զիմանալու համար տուները ցած ու յատուկ ճարտարապետութեամբ մը կը շինեն: Զմիւնիոյ ամենաշքեղ շէնքերը կը գտնուին Փրարակաց բուռած փողոցին և բարափանց վրայ, ուր է նաև Ս. Սպարթալեանի ամբողջ մարմարաշէն ճակատով փառաւոր տունը: Զմիւնիոյ մէջ կը լսուին շատ տեսակ լեզուներ, տեսակ տեսակ շեշտերու տակ: Կան բաւական թուով զանազան հասարակութիւններ, որոնք իրենց լեզուն կը

խաւիոյ, Գալլիոյ, Գերմանիոյ, Ռուսիոյ, Ռումանիոյ, Ֆրանսասանի և Ամերիկայի հետ: Մթերանոց է արեւելեան վաճառքներու, ինչպէս նաև եւրոպական ապրանքներու: Սիւէզի պարանոցի բացմամբ թէև Աղեքսանդրիա և Փորթ Սալիա բաւական փաս հասուցին Զմիւնիոյ, Չինի, Ճարսնի և Հնդկաստանի հետ վաճառականական յարաբերութեան մէջ մանկելով, սակայն դարձեալ ներկայիս մեծ դեր կը խաղայ Փոքր Ասիոյ ներքին քաղաքաց բերքերու արտածութեան և եւրոպական վաճառքներու ներմուծութեան գործին մէջ: Երկրի նշանաւոր բերքերն են սքանչելի



314. Զմիւնիոյ նաւանավորատունը:

գործածեն: Քաղաքիս հաստատուն բնակչաց թիւն 200000 կը գնեն: Մահմէտականը՝ 89000 են, Յոյնը՝ 52000, Հրեայը՝ 16000, Հայը՝ 6-7000. Իսկ մնացեալը են հետեւեալ՝ ազգերը Խաւալացիք, Ասարիացիք, Հունդարացիք, Գալլիացիք, Անդլիացիք, Ամերիկացիք, Հոլանդացիք, Պարսիկը, Ռուսը, և այլն: - Վաճառականական տեսակետով Զմիւնիա թուրքիոյ նաւահանգիստ քաղաքներու մէջէն գլխաւորը կրնայ համարուիլ. իր զերքովը՝ անուարական կեդրոնական հրապարակ մ'է և բանուկ վաճառականութիւն ունի Ասարիոյ, Անգլիոյ,

լի և տեսակ տեսակ խաղող՝ մանաւանդ անկուտ տեսակը, նուս, համեղաճաշակ թուզ, մեծկակ չամիչ, զուարթարար և զօրացուցիչ զինի, բալ, քաղցրահամ նարինջ և ուրիշ պտուղներ, ցորեն, գարի, ձիթապտուղ, բակլայ, որոնցմէ ոմանք Եւրոպիոյ և Ամերիկոյ հետ եղած վաճառականութեան գլխաւոր նիւթերն են, ինչպէս նաև փխնը, բամբակը, խոզկաղինը, են: Եւրոպայէն կ'ընդունի բնդհանրապէս ծագիկայ կերպասներ, կաւեիզններ՝ Անգլիայէն, զարդի ազնիւ նիւթեր, կերպասեղէններ՝ Գալլիայէն. իսկ Ասարիայէն ու Գերմանիայէն ապակեղէն



ներ, պատրաստ զգեստներ, և այլն: Զմիռ-  
նիոյ նահանգի տարեկան բերքերու արժէքն  
է միջին հաշուով 142252500 ֆրանկ:  
Արտածուած բերքերու արժէքն կը հասնի  
95 միլիոն ֆրանկաց, իսկ ներմուծուած  
ապրանքներու գինն է 72 միլիոն ֆրանկ:  
Քաղաքիս նաւահանգիստը կը մանան տարին  
միջին հաշուով զանազան ազգաց շոգենաւեր  
և առողջատանաւեր 4000էն աւելի, որոնցմէ  
իրը 2500ը շոգենաւ են:

Զմիռնիա իր մաքուր օդին և ջինջ երկրն-  
քի տակ ունեցած է ու կ'ունենայ երբեմն  
ճարակող հիւանդութիւններ և բնութեան  
աղետարեր հարուածներ: Սոսկալի երկրա-  
շարժներ ի հնուց անպակաս եղած են: Հնա-  
զոյնները թողլով, որոնցմէ մին բուրբոլին  
հիմնայատակ բրած է քաղաքն, և ինչպէս  
յիշեցինք, Մարկոս Արելիոսէն վերտաին շի-  
նուեր է, գնեմք աստ 1688 տարոյ երկ-  
րաշարժին պատմութիւնը, որ զազափար  
կրնայ տալ նաև անցեալներուն վրայ:  
Նոյն տարոյ յուլիսի 10<sup>1</sup>ին, կէս օրէն քիչ  
յառաջ կը սկսի ցնցումն և նախ ծովախոր-  
շին զխնցքը գանուած ամբողջ կը փլչի և  
ծովի ջրերով կը ծածկուի. շուրջը գանուած  
տուներու երեք քառորդը կը տապալին և  
քանի մը ծառ արմատաքի կը խլին. զրեթէ  
միեւնոյն ասան քաղաքին մէջ ցնցում մը  
կը զգացուի և հին մաքրատան պատերուն  
ու ծածկութի մէկ մասն կը փլչի. ամբողջ  
քաղաքը այնպէս կը զզրոյի որ տուներու ե-  
րեք քառորդը կը կործանի, 15-16000 հո-  
գի կը կորսուին. ամէնէն աւելի Մահմե-  
տականք կը փնասուին, վասն զի երկրաշար-  
ժին պատճառաւ տունէ մը հրդեհ պատա-  
հելով և բուն կերպով ճարակելով հովին  
հակառակ ամէն կողմ կը յառաջանայ և  
ամբողջ թաղին մէջ պատ մ'անդամ չի  
թողուր. կ'անցնի նաև Հայոց թաղը և մե-  
ծապէս կը փնասէ, կը լափէ նաև շուկայն  
և այսպէս քաղաքին կէսը, բոլոր բնակչաց  
միերեքները, ինչքերը և կարասիք կ'այրին,  
կ'ոչնչանան, խաները ու միերանոցները  
կ'այրին ու կը փլչին, ի բաց առեալ շու-  
կային մէջ գանուող խան մը. այս խանե-  
րէն ամանց մէջ բնակող 5-600 անձինք  
փրատակաց ներքեւ կը մնան: Գալլիացիք,


Հոլանտացիք և Անգլիացիք, մէկ միլիոն  
գահեկանի գրամ և ինչք կը կորուսանեն և  
տեղացոց վրայ իրենց ունեցած պահանջը:  
Կաթուղիկեաց երեք եկեղեցիները կ'այրին  
ու կը կործանին: Յունաց մեծ եկեղեցին  
բուրբոլին կը փլչի և կ'այրի. կրնով չափ  
կը փլչի նաև իրենց Ս. Գէորգ՝ գերեզմա-  
նատան մասուոր: Հայոց միակ եկեղեցին  
բուրբոլին կ'այրի և կը փլչի: 17 միլիթ-  
ներէ միայն երեքը կանգուն կը մնան՝ փնա-  
սուած: Պաղոս լեռան և Ս. Պետրոսի զը-  
ղեակները քիչ կը փնասուին. քաղաքին մէջ  
բնակելի տան չի մնար: Առաջին ցնցման  
տանն գետինը կը ճեղքուի և սեւ ու ժանա  
ջուր կը բղթէ՝ որ կը կարծուի թէ կ'եռայր.  
գետնի ճեղքերու վրայ շատ անկենդան ձրկ-  
ներ կը մնան, որով կը կարծուի թէ ջուրը  
ծովէն եկած է: Քաղաքէն 3 փարսախ հե-  
սու Ալվաբէջի կողմերը աղբիւրները կը  
ցամքին և նորեր կը բղթին: Շուները փո-  
ղոցները լեցուած անթաղ մեռեալներու զրակ-  
ները իրարմէ կը յափշտակեն. կիթէ շարժը  
զիշերը պատահէր ոչ ոք ոլիտի ազատէր:  
Շատ բարեկեցիկ բնասնիքներ միայն իրենց  
հագած զգեստով կը մնան. շարագործներ՝  
բնդհանուր ազէտն օգուտ քաղելով՝ քա-  
ղաքին մէջ կը ցրուին կողպուտ գանելու  
համար. ցնցումները կը շարունակուին յու-  
լիս 10էն մինչև 31: Կան ոչ սակաւ յի-  
շատակարաններ, բայց բաւական տեղեկու-  
թիւն չեն պարունակեր Հայոց կորստեան  
ու փնասներու վրայ. յիշատակարաններէն  
մին մասնաւորապէս կը յիշէ նորբնայ վար-  
գապետի մը և բահանայի մը Ս. Ստեփա-  
նոսի եկեղեցոյ փլատակաց տակ մնալ ու  
մեռնիլն: Այս շարժէն զրեթէ զար մը վերջ  
1778թուին յուլիս 3ին զարձեալ աւերիչ  
երկրաշարժը տակն ու վրայ կ'ընէ քաղաքս:  
Երկրաշարժներու ժամանակ պատահած հր-  
դեհներէն զաս, եղած են նաև երբեմն եր-  
բեմն կրակներ, որոնք ամբողջ թաղեր և  
հարիւրաւոր տուներ մտիւր զարձուցած են:  
1645 թուի աւերիչ հրդեհն, անթիւ տու-  
ներ և խանութներ լափելով հարիւրաւոր բն-  
տանեաց աէր մարդիկներ մտիւր վրայ նստե-  
ցուցած է: Հիւանդութիւններն ալ քաղաքիս  
մեծ փնասներ հասուցած են, միայն 1812ի



ժանտախտէն 45 հազարէն աւելի մարդ մեռած է: Քառական ասորիներէ ի վեր ազատ մնացած է Զմիւռնիա այս զարհուրելի ախտէն:

Հայր, զլիաւորաբար երեք ժամանակամիջոցին մէջ գաղթած կը համարուին Զմիւռնիա, առաջին անգամ 1380ի միջոցները, երկրորդ անգամ 1610 թուականէն վերջը և երրորդ անգամ 1800ի վերջերը: Առաջին գաղթականները իրենց բնակավայրերը հաստատած են եղեր այժմեան վերին փոքր քաղաքը, որ յատուկ մատուցում ալ ունէին շուրջը գերեզմանոցով: Հաւանորէն 1500ի վերջերը Հայր թողլով իրենց նախկին մատրան վայրը և թաղը, հաստատուած են այժմեան գանուած տեղերին, որ գեղեցիկ և բնորոշ թաղ սը կազմած են, որ իրենց անուամբ Հայոց թաղ կը կոչուի: Այս թաղը 1845 թուին պատահած մեծ հրդեհէն ամբողջապէս այրել վերջ, ներկայ կանոնաւոր ձևին վերածուած է, որ Զմիւռնիոյ ուրիշ թաղերու բազմաթիւ մամբ առաջին տեղին կրնայ բռնել: Ազգային ամենակարեւոր հաստատութիւնները, ինչպէս և

1837ին 6000 ու 1840ին 5000, 1862ին բարձրացեր է 12000ի, 1890ին, թ. ճերմակեան՝ կը գնէ 6683. Իսկ այժմ կը համարուի 12000՝ հաշուելով նաև շրջակայ գիւղերու հայ բնակիչները ու պանդուխտները: Հայր թէև բազարին ընդհանուր բնակչաց թուոյն բով փոքր թիւ մը կը կազմեն, բայց միշտ կարևոր և նշանաւոր դիրք մը բռնած են. թէպէտ թուով բազմացած չեն, բայց միշտ ժամանակին պահանջմանց համեմատ յատուկապէս բլլալու, զարգանալու փոյթ ունեցած են. ազգի մը յատուկ մտովեան կարեւոր ամէն հիմնարկութիւններ



315. Զմիւռնիոյ քարափը և մարտատունը:

կեղեցին, առաջնորդարանը, դպրոցները, հիւանդանոցը, ևն. կը գանուին այս թաղին մէջ կամ մօտերը. զանազան թաղերու մէջ ևս կան բաւական թուով հայ բնասնիրներ. հարուստ գասակարգէն մաս մ'ալ կը բնակի ծովեզերեայ քարափանց վրայ: Քաղաքիս Հայոց թիւը միշտ նոյն եղած չէ, երբեմն երբեմն պատահած հիւանդութիւններէ կամ ուրիշ գէղեցիկէն նստազամ և երբեմն ալ ուրիշ տեղերէ նստեր գալով աւելցած է: 1631ին 90000 բնակիչներէն 8000ը հայ են եղեր, զար մը վերջը 7000ի իջեր է և 1776ին 6000ի. 1812ին և 1836ին նշանակուած կը գանանք 10000 հայ, իսկ

ունին, որոնց վրայ համառոտ տեղաբեր մը կու տանք, բնորոշակ տեղեկութեանց համար փափաքողներու ուշադրութիւնը հրախրելով Հ. Յակոբոս վ. Քոսեանի, Հայր ի Զմիւռնիա և ի շրջակայս գրքի վրայ, յորմէ բազած ենք կարեւոր ծանօթութիւնը: Քաղաքիս մէջ կատարուած զանազան ազգաց և կեղեցիներու մէջ առաջին կրնայ համարուիլ Հայոց Ս. Սահակոս գեղեցիկաշէն եկեղեցին, որ բարձրացած է բազարին զրեթմ միջովայրը: Հոյսակապ տաճարս եթէն գուտունի, որոնցմէ ամենագեղեցիկն է աւագ գուտն, որուն աջ ու ձախ կողմերը պատին վրայ հաստատուած երկու մարմարեայ քա-



ըրբու վրայ կան մաքուր զրերով փորա-  
 գրուած յիշատակարաններ, աջակողմեանն  
 է գաւթի յատակը շինող բարերարներու Պա-  
 շեօղեան եղբարց և կը կը 1885 թուականը,  
 իսկ երկրորդը Պօզոս Բ պատրիարքի մահար-  
 ձանն է 1872 թուականաւ, որուն առջեւն է  
 նաեւ հանգուցելոյն շիրիմը՝ յատուկ արձա-  
 նագրութեամբ: Աւագ զրան ճակտին վրայ  
 կան սրիշ երկու մարմարին քարեր՝ որոնց  
 վրայի արձանագրութիւնները կը յայտնեն  
 հին տաճարի 1688ի երկրաշարժէն կործա-  
 նիլը, 1689ին վերստին շինուիլը, 1845ին  
 այրիլը և գործեալ շինուիլը 1853 թուին:



316. Չմուռնիոյ քարտիկ անսարմալը:

Եկեղեցւոյս զիւանատան արձանագրութեանց  
 գրքին մէջ եղած այլ և այլ յիշատակարան-  
 ներ չեն յայտներ հնագոյն եկեղեցւոյ շի-  
 նութեան թուականը: Երբքին անքը և ճար-  
 տարապետութիւնն սքանչելի է. աչք կը շա-  
 ցընեն, շքեղ ցմբէթն, սոկեփայլ գեղեցիկ խո-  
 րանները, մարմարաշէն բարձր բեմն, մար-  
 մարեայ սպիտակափայլ և միակաուր 10  
 սիւններ՝ հինգ մէկ կոզմը և հինգ միւսը,  
 կամարակապ ձեղունն, բարձրակաւոյց վեր-  
 նատուններն, բազմաթիւ բարձր լուսամուտ-  
 ներն և սպիտակափայլ մարմարեայ յատա-  
 կը: Աւագ խորանը նուիրուած է Ս. Ստե-

փանոս Եախափկային, աջակողմեանը՝ Ս.  
 Յովհաննու Կարապետի և ճախակողմեանը՝  
 Ս. Աստուածածնի: Եկեղեցւոյս թեւերուն  
 վրայ խաչաձեւ պէպի պարակց գուրս ելած  
 երկու փոքրիկ տաճարներ կան, աջակող-  
 մեանը՝ Ս. Բարդուղիմէոս և ճախակողմեանը  
 Ս. Գլխաղիր: Եկեղեցւոյն կոնակը կը բար-  
 ձանայ սիւնազարդ և ցմբէթաւոր զանգակա-  
 տունը՝ երկու զանգակներով: 1878ին եկե-  
 ղեցւոյս մարմարեայ յատակը շինել աւուած  
 է Խաչատուր սրբա Գաւրագոշեան, որուն  
 յատուկ յիշատակարանը կայ սրբին վրայ  
 հաստատուած մարմարեայ քարի վրայ, ու-

րիշ յիշատակարան մ'ալ  
 կայ Խաչատուր սրբա Գա-  
 ղեքեանի՝ որ 1878ին  
 եկեղեցւոյ որմերը ձեփել  
 աւուած է իր ծախքով:  
 Եկեղեցւոյս Ս. Գլխաղի-  
 րի վերնատան պատէն  
 կախուած գատաստանի  
 պատկերը, կրնայ գրչ-  
 խաւոր զարդը համա-  
 բուիլ, որ նկարուած կը  
 կարծուի 1750ին մի-  
 ջոցները, հայ պատկե-  
 րահանէ մը. 1845 թուի  
 հրդեհէն այրած են յի-  
 շատակարանը և հեղի-  
 նակի անտներ: Ս. Ստե-  
 փանոսի եկեղեցւոյ ճար-  
 տարապետը եղած է հայ-  
 ազգի Էօրաէկ Մինասի  
 աշխատակիցն Մելքոն

Էրամեան, որ Կ. Պօլսէն եկած և անխնջ  
 հսկողութեամբ աւարտած է շքեղ տաճարս:  
 Ասոր գերեզմանը եկեղեցւոյ աւագ զրան կող-  
 մը, գաւթի կիսաբոլոր տափնձանի ճիշդ առ-  
 ջեւն է, որուն վրայ կայ 1853 թուակա-  
 նաւ հայերէն և թուրքերէն յիշատակարանս:  
 Ս. Ստեփանոսի արեւմտեան, հարաւային և  
 հիւսիսային կողմն սիւնազարդ և մարմարեայ  
 յատակով գեղեցիկ գաւթի է: — Եկեղեցւոյս  
 պարակցը փամանակաւ զործածուած է իբրեւ  
 գերեզմանոց, ուր կան բազմաթիւ հին՝ 1567  
 թուէն սկսեալ՝ արձանագրութիւններ ունե-  
 ցող ստպանաքարեր: Պարակցը շրջապա-



սող սրմերու մէջ և ի մասնաւորի մեծ զրան աջ ու ձախ կողմերը ներքուստ հաստատուած են բանի մը բարեր՝ Հոսփմաշիցոց ժամանակէն մնացած: Մեծ հրդեհը տապանաբարերու շատերը ապականած է, որոնց մնացորդները յետոյ եկեղեցոյ շինութեան գործածած են: Կան նաեւ Գ և Գ վարերու բարձրաբանդակներ՝ իբր գերեզմանաբար գործածուած: Այս գերեզմանաբարերու մէջ է նաեւ Մեծ Պետրոս Եւսուֆեանի մահարձանը՝ հանդերձ յիշատակարանով: Առաջնորդարանը կը գտնուի եկեղեցոյ պարտէզին արեւմտեան անկեան վրայ, շինուած է 1858ին, արդեամբ Բալուցի Ղազէրեան Խաչատուրի: Հոս կը կատարուին ու կը կարգադրուին բազաբիս Հայոց կրօնական, քաղաքական, կրթական ու ազգային գանազան հաստատութեանց վերաբերեալ գործերն ու խնդիրները: Ազգային վարչութիւնը ունի այլ և այլ ժողովներ՝ Գաւառական, Երեսօրիստական, Կրօնական, Քաղաքական, Ռուսմեական, Տնտեսական, Գաւառատնական, և այլն: Ազգային վարչութեան և ժողովոյ նախագահն է միշտ տեղւոյն առաջնորդը: Զմիւռնիոյ առաջնորդներէն ամենէն աւելի գործունեայ կեանք ունեցած են Պօղոս Թաղթաղեան ( 1872) և Գեր. Մելքիսեղեկ Մարտանեանց՝ որ պաշտօնավարած է նախ 1877էն մինչև 1888 յարում հրաժարած է և իբր 12 ասրի վերջը դարձեալ ստացած է նոյն պաշտօնն ու կը վարէ մինչև ցայսօր. ասոնց ժամանակ հաստատուած են բարեգործական և կրթական հիմնարկութեանց շատերը: Զմիւռնիոյ առաջնորդական վիճակի մէջ 12 եկեղեցի կայ:

Քաղաքիս ազգային կրթական գլխաւոր հաստատութիւնն է Ս. Մեսրոպեան վարժարանը, որուն տեղը ի սկզբան 1799ին զգրոց մը բացուեր է, և ուր Տէր Յովհան Վանանչեցին սկսած է հայ մանկուոյն կրթութեան պարապիլ: Ներկայ վարժարանն հիմնուած է 1825 թուին, Ս. Սահփանուսի եկեղեցւոյն եկամտաներով, ինչպէս կը յայտնէ զրան ճակատի յիշատակարանը: Վարժարանիս շինութեան մեծապէս օգնած են ժամանակին Անդրիոյ հիւպատոսաբանին

Թարգման Պապօեան Գրիգոր ազա և Էջիզեան Ալեախ ազա, որոնց պաշապանութեամբ, և հսկողութեամբ շէնքը կ'աւարտի և հանդիսացէս կը բացուի: Այս վարժարանի ամենափայլուն և ոսկի ասրինները կ'ըլլան 1831-1845ի միջոցները: Մեծ աշուն և համբաւ կը հանէ. օտար լեզուաթատրներ կը ներկայացնեն. հետաւոր վարերէ անգամ կը յաճախեն հոս՝ ուսմանը սորվելու և վարժարանէս ելած աշակերտ-



317. Զմիւռնիոյ Ս. Մեսրոպեան վարժարանը:

ները մեծամեծ պաշտօններու կը հասնին: Տէր Յովհաննէս Վանանչեցիէն վերջ, վարժարանիս զուրկ եղած է Ռուբէն Անդրէաս Բ. Փափազեան: Եզրիպտոսի փոխարքայն Պօղոս Պէյ Եւսուֆեան վարժարանիս զազդիրէն և անդլիրէն լեզուաց ուսուցիչներու համար կատկած է 40000 ֆիւրին: Անդրէաս վարժապետը վախճանելով 1877ին, իրեն երախտապարտ աշակերտները հանգանակութիւն ընելով շիրիմ սը կանգնեցին եկեղեցոյ պարտիզին մէջ: Վարժարանիս վրայ յաջորդաբար աշխատող տեսուչներու



մէջ նշանաւոր հանդիսացած է Մատթէոս Մամուրեան՝ որ երկարժամանակեայ տեսչութեամբը ազգեցելի զիրք մ'ունեցած է, իր օրով կատարուեցաւ (1875ին) վարժարանին առաջին յորեկանը: Վարժարանիս շէնքը 61 տարի ծառայել վերջ, հինցած և անյարմար լինելով սոսոց՝ ապահանջուան սկզբանց, Մեծ. Յովհաննէս Սպարթաբեանի առաջաձեռնութեամբ՝ 1886ին հնոյն տեղը նոր՝ այժմեան շքեղ շէնքը (Թ. Յ17) կառուցուեցաւ, որուն ճակատը կայ յատակ յիշատակարանն: Վարժարանս ունի փորձելու համար բնագրական գանազան գործիքներ և լեզուաբան մը, յորում յատակ պահարաններու մէջ կան մօտ 2000 կտոր հայերէն, գալլիերէն, անգլիերէն, իտալերէն, տաճիկերէն, յունարէն և ռուսերէն կարևոր գրքեր: Ռատմական խորհրդոյ հրատարակած վերջին տեղեկագրի համեմատ, Մեծբուսեան վարժարանս ունի 305 աշակերտ և 17 ուսուցիչ: Զմիւսնիոյ ազգեանց Սուրբ Հոսիոսիան վարժարանը կառուցուած է նախ 1830-35ի միջոցները Մեծ. Յակոբ Սարգսեանի ծախքով: 1845ին աւերիչ հրդեհ հր կ'այրէ նաև այս վարժարանին շէնքը և երկրորդ անգամ կը շինուի կրկնայարկ ու բարակիր, 1849 թուին, ազնուափայլ Հոսիոսի մէջ Տիկին Կոստանդեանի ծախքով: Այս վարժարանը 1884ին հնութեանը և անձկութեանը համար կը բանդուի ազգին հասանելիութեամբ և ամիջապէս սկսելով նորին շինութիւնը, կ'աւարտեն շքեղ յօրինուածով ու հանդիսաւոր բացումն կ'ընեն նոյն տարին: Ունի 200 կտոր հայերէն և գալլիերէն կարևոր գրքերու հաւաքածոյ մը: Աշակերտութիւնը թիւն է 210 և վարժուհիք 9: — Ազգային հաստատութեանց մէջ նշանաւոր է նաև Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը՝ որ Հայոց թաղի հիւսիս արևելեան կողմը կ'իյնայ: Ներկայ հայկապ հիւանդանոցը, ինչպէս զրան վերը գետեղուած բարի մը վրայի հայերէն, գալլիերէն և լատիներէն յիշատակարանն կը յայտնէ, նորոգ կառուցած են ի հիմանց 1879 թուականին, երկու եղբարքն Յակոբ և Յովհաննէս Սպարթաբեանց: Հիւանդանոցիս տեղւոյն վրայ, ինչպէս յիշատակարանն կը յայտնէ, առաջին տե-

ղամ հիւանդաց ապաստանարան շինուած է 1801ին: Բարերար Սպարթաբեանց մահարձանները կը գտնուին հիւանդանոցիս պարտէզին մէջ և ունին յատակ արձանագրութիւններ. հան կայ նաև ազգիւր մը 1879ին նորոգուած, ինչպէս կը ցուցնէ յիշատակարանն: Հիւանդանոց շինուած է բնագրական գետնի վրայ և այսպիսի գլխաւորական հիմնարկութեան մը յատակ ամէն կարևոր մասերն ունի: Շէնքին գանազան մասանց մէջ կը տեսնուին Ս. Գրքէն անուած և ուրիշ յիշատակարաններ: Էկեղեցին նուիրուած է Ս. Լուսաւորչի, որուն արտաքին տեսքը պարզ է. առջևն և աջ ու ձախ կողմերը իրրու գարդ կանդուած են սիւներ. ասանք վեր կը բռնեն եկեղեցւոյն շուրջը հաստատուած հայանաւոր ծածքը: Ունի երկու գուռ. աւագ զրան ճակատը հաստատուած մարմանինն բարի վրայ արձանագրուած են շինութեան՝ որ եղած է 1842ին՝ և նորոգութեան (1879ին) յիշատակարանները: Անսին է ներքուստ և առանց վերնատան. 12 մետր երկայնութեամբ և 7, 50 լայնութեամբ: Աւագ խորանի պատկերն է Ս. Յարութիւն, ձախակողմանը Ս. Էրբրուղութիւն և աջակողմանը Ս. Առաւածածին՝ Յիսուս մանուկը զիրիչ: Գասի ձախ կողմէն գոնով մը կը մտնուի աւանդատունը կամ փոքրիկ սաճարը՝ որ ունի արևելեան պատին վրայ խորանիկ մը՝ պատկերը կը ներկայացնէ Յիսուս և աջ ու ձախը Ս. Յակոբ և Ս. Յովհաննէս առաքեալները: Այս սաճարս ալ կառուցուած է 1879 թուին, Սպարթաբեան եղբարց արկեամբ, ինչպէս կը ցուցնէ, պարտէզին վրայ նայող զրան արտաքին ճակատին վրայ հաստատուած մարմարինն բարի վրայի յիշատակարանն: Էկեղեցւոյն աջ կողմն ալ կայ փոքրիկ մատուռ մը, որ երեք կողմերը սրմեր ունի և առջևի կողմը բաց է, ուր երկաթեայ զարդաձեւ վանդակ մը հաստատուած և ապակեայ փեղկով ու գոնակով զոցուած է: Մատարան մէջ արևելեան պատին վրայ կախուած է սուրբ Լուսաւորչի պատկեր մը ու աջ և ձախ կողմերն ալ սուրիչ երկու պատկերներ: Հիւանդանոցս բնոցհանրապէս 30-40 հիւանդ կ'ունենայ միշտ. տարեկան ծախուց գումարն է



1000-1200 օտմանեան սոկի, որ կը գոյանայ յատուկ կալուածներէ և Ս. Լուսաւորչի եկեղեցոյ մոմի սահկէն: Հիւանդանոցի հոգարարձութիւնը կը խնամէ նաև 10-15 անկարող ծերեր և ասանձին շէնքի մը մէջ կը պահէ 20-25 յիմարներ:

Զմիւռնիոյ մէջ եղած են և կան, Մեարտական և Հոբիաթիան կրթական հաստատութիւններէ զատ, բուսական թուստ բարեկործական հիմնարկութիւններ և բնկերութիւններ, որոնց խրաքանչխրել մրայ համասոս ծանօթութիւններ սանք: Սյուեոց բնկերութիւն՝ աստջին անդամ հաստատուած է 1841ին Մեարտական վարժարանէն ելլող աշակերտներէն, որոնց նոգատակն բլլալով ազգային մտաւոր զարգացումն, Այսրնի, Պայրնարբի, Մանիսայի և Մէնէմէնի մէջ կը բանան զպրոցներ, այս բնկերութիւնը 1845ին հրդեհէին կ'ոչնչանայ: Թէև 1879 թուին վերստին նոյն անուամբ բնկերութիւն մը կ'իլլէ՝ բայց ասանց յիշատակելի արդիւնքի մը, կարճ կեանք մը կ'ունենայ: Արագածուեկոց բնկերութիւնն հիմնուած է 1843ին և սևուած է մինչև 1846 տարին: Այս բնկերութիւնն սոգարան մը եւս բանալով հրատարակած է Հայրեկաակր անունը բաղաբական, բանասիրական և ասևարական օրագիրը: Այս բնկերութեան նման Հառտեկոց Միտրիէն անուամբ բնկերութիւն մը՝ թիբթ մը հրատարակած է 1861-1862՝, և նիթական պիտոյից պակասութեամբ կարճ կեանք մը ունեցած է և բնկերութիւնն քայքայած: Աղբատասիրաց բնկերութիւնն 1861 թուին ունեւոր և ազգեցիկ անձանց նախաձեռնութեամբ, երկար սարդիւնաւոր կեանք մը ունենալէ վերջ 1894 թուին ոչնչացաւ: Բնկերութիւնս ունէր 40 յօդուածէ բաղկացած կանոնագիր մը: Ազ-

բատախեամբ բնկերութիւնն հաստատուած է 1896ին, բազմաթիւ գաւառներէ զազմոց Հայերու օչնելու նոգատակաւ, այս բնկերութիւնը տակալին գոյութիւն ունի և իր գործունէութեամբ կարող է օր մը հաստասրիլ նախօրոյ Աղբատասիրաց բնկերութեան: Քաղաքիս Հայ Բնկերցարանը հիմնուած է 1868ին և արդիւնաւոր տարիներ բոլորած: Այս Բնկերցարանի հիմնուելուն զազաւորն յղացած են Գարեգին Յ. Փափաղեան և Գալուստ Կոստանոյեան հայ գիտնականները: Ատր նոգատակն է ազգին մէջ բնկերցասիրութիւն և ուամունք տարածել, ունի յատուկ կանոններ: Բնկերցարանս ժամանակա-




318. Զմիւռնիոյ Ս. Լուսաւորչեան հիւանդանոցի նակատը:

աւելի փայլուն եղած կը թուի: Իր յիշատակարաններու մէջ կը հանդիպինք Մամբրեան, Չիլինկիրեան, Մսերեան, Սրուանձտեանց, Աղաթն, Սվազեան, Եսայեան, Մարկոսօփ և այլ շատ անուններու, որոնք սովն ջանք բրած են հաստատութեանս յառաջապիտութեան: Բնկերցատանս մէջ եղած են ժամանակներ, որ զրական ասևնախօսութիւններ բրած են: 1896ին բնկերցատան վարչութիւնը Ս. Ստեփանոսի եկեղեցոյ պարտաւելին մէջ յատուկ շէնք մը կ'ունենայ, ազատելով վարձատրութեան նեղութիւնէն: Երակատայց բնկերցարանի շէնքը բաժնուած է



կրկին սրահներու, մին՝ իրր զբառուն, յորում 5000 է աւելի զբքեր կան, և միւսն՝ իրր ընթերցասրահ: Ունի նաև բազմաթիւ անդլիերէն և գալլիերէն զբքեր և ազգային ու օտարազգի լրագիրներ ու հանդէսներ: Ընթերցարանին նիւթապէս և բարոյապէս սպաշարան հանդիսացած են բազմաթիւ ազգային յայտնի անձնաւորութիւններ: Անձնուէր ընկերութիւնն կազմուելով 1873ին, նախ կը կոչուի Ռուսամեասիրաց անուամբ, սա գոյութիւն կ'ունենայ մինչև 1882 թուականը և իր իննամեայ կենաց մէջ բաւականաչափ օգտակար կ'ըլլայ, ոչ սակաւ աշակերտներ

ըէ հաստատուած է 1891 թուին, ասոր ալ նպատակն է նիւթապէս և բարոյապէս որբ աղջիկներ խնամել ու կրթել: 1893ին Հասար և Որբախնամ ընկերութիւններն միանալով բացին աղջկանց որբանոց սը, յորում կը պահուին 36 որբուհիներ: Նոյնպէս օրիորդներէ հաստատուած է Հոփսիմեան կրթատէր ընկերութիւնն 1881ին, ասոր առաջին նսիսագահ եղած է Մ. Մամուրեան: 1888ին ընկերութիւնս կը բանայ մանկապարտէզ մը, որուն երկուս աշակերտաց թիւն այժմ է 64: Ունի յատուկ կանոնադրութիւն և ծրագիր: Ուրիշ մանկապարտէզ մը ևս կայ կըրթատէր ընկերութեան իր նամոց ներքև և ունի 148 երկուս աշակերտներ: Արևելեան Աղուսքը հաստատուած է 1886ին ազգին կարող և ձեռնհաս անձինքներէ, նպատակն է անպամ և բաժանորդ զբուսողներու զբօսանաց միջոցներ հայթհայթել, սեղական և մասնաւորապէս եւրոպական թերթերու ընթերցանութիւնը զխրացընել: Անպամնուրութիւն է մաս 100, ունի յատուկ կանոնագիր: Ռուսամեասեր ընկերութիւնն կազմուած է 1887ին, նպատակն է



319. Զմիւռնիոյ Մ. Լուսաւորչի եկեղեցին:

յաճախած են ընկերութեանս զասարանները և իրենց սորվածին շնորհիւ բիշ շատ ապրուստնին ճարած: Վահան Գոպթնացոյն անուամբ կոչուած Վանանեան ընկերութիւնն սեւած է 1874էն 1878, ասոր նպատակն էր երաժշտութեան սգին արժարծել ազգին մէջ: Հոգատար ընկերութիւնը հաստատուած է 1879ին բազաբիս քանի մը զթատիրտ արիկներէ և օրիորդներէ, ասոր նպատակն է Մեսրոպեան և Հոփսիմեան վարժարաններու աղքատիկ սաներու զգեստ և զբաղան պիտոյք հոգալ, 18 տարի անպարտ գործած է իր նպատակին համաձայն: Որբախնամ ընկերութիւնն ևս հայ օրիորդնե-

կրբեմն երբեմն Մեսրոպեան կամ Հոփսիմեան աշակերտներէն մէկ քանին Եւրոպա զրկել բարձրագոյն ուսմունք սորվելու նպատակաւ, այլ աշակերտները սարաական են քանի մը տարի վերոյիշեալ վարժարաններու մէջ ուսուցչութեան պաշտօն վարել: Մեսրոպեան զբասիրաց ընկերութիւնն հաստատած են 1891ին Մեսրոպեան վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները, որոնց նպատակն է հասակաւոր անուս ազգայնոց գասեր աւանդել, կարդալ, գրել և հաշիւ սորվեցընել: Ընկերութիւնս 1897ին, Եւրոպիոյ մէջ կազմուած «Երիտասարդաց Քրիստոնէական Միութիւն» անուն ընկե-



րութեան 5383րո ճիւղն անուանուեցաւ : Ունի մասնաւոր կանոնագիրք : 1895 թուին Մեծ. Կարապետ Արապեան իր ծախքով շինել կու տայ քաղաքիս Ս. Ստեփանոսի պարտէզի մէջ Արշակունիաց մը, որուն մէջ կան Հիւսնութեան, թիթեղադրութեան և կօշկակարութեան յատուկ բաժանմունքներ : Գրասխրաց ընկերութիւնը հաստատուած է 1896ի գեկտեմբերին և հազիւ տարի մը կեանք ունեցած է : Հաստատողներն էին Հովիտիմեան վարժարանի բարձրագոյն կարգի տնուհիւր. նպատակն էր թշուառներու վիճակը բարւոքել : Ներսեսեան որբասխրաց ընկերութիւնն հաստատուած է 1897ին, խումբ ւը զթասիրա երիտասարդներէ. ունին կանոնագիր և կը խնամեն ու կը կրթեն 50ի չափ հայ որբեր :

Ակնարկ մ'ալ տանք Զմիւռնիոյ ազգային տպարաններու և այլ և այլ հրատարակութեանց վրայ : Քաղաքիս առաջին հայ տպարանն կը բանայ ոմն Մարկոս 1759ին, ուր կը տպուին Մեկնութիւն ժամակարգութեան, Էզնիկ և խորհրդատար մը : 1832-40ի միջոցները կը յիշուի Ս. Մեսրոպեան վարժարանի տպարանը, ուր այլ և այլ գրքերէ զատ լոյս կը տեսնէ նաև Յովհան Վանդեցոյ Ռակերարը : Նոյն միջոցները ամերիկեան և անգլիացի բողոքական ընկերութիւններ՝ Մալթայէն Զմիւռնիա փոխադրելով իրենց տպարանը, հայկական տառերով բայց առձեռներէն լեզուով կը հրատարակեն այլ և այլ աննշան տետրակներ և Շտեմարան պիտանի գիտելոց ամսաթիւթը : 1840 տարւոյն Ստեփանոս Պապօեանցի տպարանի մէջ սկսաւ հրատարակուիլ Արշարյս Արարատեան քաղաքական, բանասիրական և առևտրական օրագիրը, որ 1844 թուին ունեցաւ յատուկ տպարան իր անուամբ և հրատարակուեցաւ մինչև 1886 թուականը : Յարասև և արդիւնալից կեանք ունեցած է Տէպէեան Եզրարց տպարանը, որուն հրատարակութիւնը կ'սկսին 1853ին : Այս տպարանէն լոյս տեսած է Արփի Արարատեան բանասիրական, սուսմեական և անտեսական օրագիրը 1853էն մինչև 1856 թուականը : Հրատարակուած են տպարանէս 80 ի չափ վէպեր և պատմութիւններ, 20ի

չափ գպրոցական զանազան գրքեր և 10ի չափ կրօնական գրքեր : Հոս տպուած են Մ. Մամուրեանի, Գրիգոր Մսերեանի, Տեղւոն Յ. Տէպէեանի, Գրիգոր Զիլինկիրեանի, Մ. Նուպարեանի, և ուրիշներու թարգմանութիւնները. Գ. Պատկանեանի, Խորէն և պիսկոպոս Միթիարեանի և այլոց հեղինակութիւնները : Նոյնպէս հոս լոյս տեսած են Գարուն Հայաստանի թերթը 1862ին, Յուսէրթնարս հանդէսը 1862ին, Կրակի՛ 1862-1867, Միւրթիս՛ 1861-62<sup>1/2</sup> և Գիւնակ՛ 1862՝ հանդէսները, որոնք շատ կարճ կեանք ունեցեր են. ինչպէս նաև Սարգիս Միր-



320. Մ. Մամուրեան :

զայեանի Իրաւունք քաղաքական լրագիրը 1867-8 : 1854 թուին կը յիշուին Թուրակի և Երկասերի տպարանները : Ասոնք հաստատուած էին Մեսրոպեան վարժարանի երկու խումբ կազմած աշակերտներէն, որոնք տպարան բուռելու արժանաւորութիւն չունէին և ամենակարճատև ժամանակ զործած են իրարու մրցակից : Քաղաքիս հայ տպարաններու մէջ ամենէն կտտարեղազործեալը կրնայ համարուիլ Թաթևիկեան տպարանը, որ ի սկզբան 1844ին իբրև վիմագրատուն նշանաւոր եղած է և 1864ին բուն տպագրատուն դասնալով հրատարակած է հայերէն, յունարէն, գալլիերէն, անգլիե-



րէն, խտայերէն, սաճկերէն և երբայեցեբէն լեզուներով այլ և այլ թերթեր, տետրներ, տեղեկագրեր և զպրոցական գրքեր: Courrier de Smyrne թերթն ևս հոս կը տպուի: Տպարանս շատ լեզուներու տառեր, արագա-տիպ մամուլ և զանազան գործիքներ ունի. իսկ վիմագրութեան մէջ ալ մաքրութեամբ և գեղեցկութեամբ մրցակից է ուրիշ ազգաց նոյն տեսակ հաստատութեանց հետ: Կարճատեկեանք մը ունեցած է Գրիգոր Մսերեանի տպարանը 1877էն 1880, ուր ըսյ տեսած է վեցամեակայ Մեոօրա անուն ուսումնական թերթը: Հոսկ ուրեմն իրեւ նորագոյն հաստատութիւն էր՝ յիշենք Մամուրեան տպարանը, հիմնուած 1883ին. այդ թուականէն առջ Արեւելեան Մամուլը կը տպուէր քաղաքիս ուրիշ տպարաններու մէջ: Մամուրեան տպարանը Արեւել. Մամուլէն զատ տպած է ու կը տպէ զանազան զպրոցական գրքեր, տետրներ և տեղեկագրեր:

Տեղւոյս հայ ժողովուրդը իր կրօնական և կրթական ազգային հաստատութեանց միշտ բարեբարութիւն բրած է. այսպիսի բարեբար անձանց շնորհիւ եկեղեցիները, հիւանդանոցը և զպրոցները շինուած և կալուածներու տէր եղած են: 1850 թուականէն սկսեալ նշանակուած կան այդ բարերարներու և նուիրատուներու անունները, անկէ առջ եղող բարերարներու անուններու ցանկ չկայ, թերևս 1845 թուի հըրդեհը մոխիր դարձուցած է ուրիշ արձանագրութեանց հետ: — Զմիւռնիոյ Հայոց մէջ ամէն գասակարգէ անձինք թէ՛ անցելոյն մէջ եղած են և թէ ներկայիս կը գտնուին: Պակաս եղած չեն այնպիսիներ՝ որ տեղական կառավարութեան առջև՝ իրենց զիրքով մեծ ազգեցութիւն ունեցած և օտարներէ մեծ պատիւ գտած են: Քաղաքիս հայն տուած է ազգին՝ կաթողիկոսներ, պատրիարքներ, նշանաւոր եկեղեցականներ, վարժապետներ, գրագէտներ, արհեստագէտներ, վաճառականներ, և այլն: Տեղւոյս Հայերէն Ապրօեան գերդաստանը ի հումմե շատ նշանաւոր եղած է: Աբրահամ (Ապրօ) չէլէպին Պէլիրաւէն կ'ենէ, յԱմսթերտամ կ'երեւի, հոն եկեղեցի կը շինէ ու կը դարգարէ. Մալթա կը մտնէ, կը հասնի Կրեաէ և հոն

եկեղեցի կը գնէ ու ծանրագին կահերով կը դարգարէ. Զմիւռնիոյ մէջ ևս բարեբար կ'ընէ. կը մտնէ Կ. Պոլիս՝ գերիներ կազատէ. կ'երթայ Սօֆիա, հոն ևս եկեղեցի կը հիմնարկէ և վերջապէս կը մեռնի յԱզրիանուպոլիս: Այս գերդաստանի շատախոնքէն զեւ կան և մին՝ Աւրան Ապրօ՝ իշխան Բագրատունի կոչուածը, կը բնակի Նափոլի: Աբրահամ չէլէպին է, որ անձանութեամբ կը մտերմանայ Ռուսաց Մեծն Պետրոս կայսեր, և օր մը Մեծն Պետրոս՝ ի ցոյց իրեն բարեկամութեան՝ անոր յիշատակագիր մը կու տայ, զոր բանալով բնթեմերը կը հասկնայ թէ իր բարեկամն Մեծն Պետրոս է, և այդ գրով հրամայած՝ որ Ապրօեան գերդաստանի ներկայ ու ապագայ սրբաց վաճառքն Ռուսիա մտնելու աանկէս մաքս միայն անուի: Այս յիշատակագիրն Զմիւռնիա է այժմ Ապրօի միւս ճիւղի ժառանգներու քով և մինչև 3000 սոկի առաջարկուած է շատերէ: Անցեալ դարու առաջին քառորդին կը յիշուին Պապօեան և Էքիզեան ընտանիքները, քանի մը տասնեակ տարիներ առջ ալ Սպարթալեան Յակոբ և Յովհաննէս եղբարք՝ մեծ անուն ունէին ամէնուն առջև: Ներկայիս շատեր՝ իրենց հմտութեամբ՝ կառավարութեան այլ և այլ պաշտօններու բարձրացած են: Հայեր պաշտօն կը վարեն հիւպատոսներու մօտ, իրբեւ առաջին թարգման, շատեր՝ իրբեւ առաջին կամ երկրորդ կարգի պաշտօնեայ կը գործեն հանրօգուտ հաստատութեանց և ընկերութեանց մէջ: Հայերը զլիսուարարար նշանաւոր եղած են վաճառականութեամբ. տեղւոյս հայն երկու դար առջ Հոլանդացուց և զեւ աւելի առաջ Պարսկաստանի հետ առեւտրական յարաբերութեանց մէջ էր: Յարաբերութիւն ունի նաև երոսպական զանազան քաղաքներէ զատ Հնդկաստանի, Եգիպտոսի, Գամակոսի, Հալէպի և Ամերիկայի հետ: Արուեստները այնչափ ընդհանուր տարածուած չեն Հայոց մէջ: կը գրտնուին աննշան թուով ժամագործ, սոկերիչ, երկաթագործ, կօշիկակար, աստաղձագործ, զերձակ, վերմակագործ, զեղագործ և այլն: կը գտնուին նաև բժիշկներ, փաստարաններ և հրատարակագիրներ, սրոնցմէ ամանք՝



իրենց մասնագլխավորութեամբ մեծ անուն և համբաւ ունին: Կան քսանի չափ բաւական գրամագլխոյ տէր կալուածատէրներ, իբր քսան առաջին կարգի եւրոպական ձեռագործներու վաճառականներ, բամբակի, ցորենի, թուզի, չամչի և ափիսնի վաճառականաց թիւն է 30: Մանրավաճառք թուով հինգ, նոյնչափ ալ ոսկիթել նիւթեղինաց վաճառական: Տեղոյ սղութեան պատճառաւ զանց կ'ընենք յիշել յանուանէ ոչ սակաւ ազգային գրադէսներ, հրապարակագիրներ և լրագրաց թղթակիցներ: — Ս. Ստեփանոսի եկեղեցւոյն պարակզի գերեզմանոցէն զառ, Հայք ունին նորագոյն գերեզմանատուն մը քաղաքին հարաւորեւելեան կողմը, ԳանՉեշմէ լուսեւոր տեղը, հաստատուած 1884 թուին: Գերեզմանատունս շրջապատեալ է քարաշէն որմով, մէջը կը գտնուի փոքրիկ մատուռ մը՝ Ս. Յարութիւն անուամբ, կառուցուած 1884 թուին, Գեւորց Մ. Սուլզանեանի ծախքով, ինչպէս կը յայտնէ հիւսիսային որմի վրայի յիշատակարանն: Կան բաւական շքեղ շիրիմներ, գամբարաններ և մահարձաններ մարմարին քարէ, նշանաւոր և ամենաշքեղ է Յակոբ Թագուր Զելիկի շիրիմն:

Կաթողիկէ Հայոց վրայ եւս սկնարկ մը տանք, որոնք գաղթած են զանազան ժամանակներ, առաջին գաղթականներն են Պարսկահայքը, գրեթէ մէկ ու կէս դար առաջ, երկրորդն են Անկիւրացիք՝ զար մը առաջ, և երրորդը՝ Կարնայ, Սերասախայ, Տիգրանակերտի և այլ կողմերէ եկածները, անցեալ դարու կէսէն սկսեալ մինչեւ մեր օրերը: Առաջին գաղթականը իրենց հոգեւոր հովիւներու՝ Միաբանոց Եղբարց առաջնորդութեամբ, եկած են Զմիւռնիա հաւանականօրէն 1730-40ի միջոցները. ասոնք ի սկզբուն 40-50 տարի իրենց կրօնական ազգային սովորութիւնները անխախտ կը պահեն, բայց կամաց կամաց անհոգ գտնուելով իրենց սերնդոց աւանդելու ազգային լեզուն ու սովորութիւնները, խառնուած են օտարներու հետ և այժմ կան իբր 150-200 բնականիք, որոնց սերունդը լրաին հասարակութեան մէջ առաջնակարգ գիրք մը բռնած են և միայն իրենց նորացեալ հնչմամբ կը

յայտնուի հայ ծագումն ունենալնին: Պարսկահայք ի սկզբան իրենց հոգեւոր պաշտամանը կը կատարէին Ս. Կռսի նուիրուած մատրան մը մէջ, յորում սեղանի վրայ կանգնած էին հայրենի երկրէն բերուած համակ արծաթեայ՝ Ս. Աստուածածնի արձանը: 1775ին կատարուած նորոգութեանց առթիւ՝ մատուռս ալ կ'անուրի ամբողջովին Ս. Պողիկարպոս եկեղեցւոյն մէջ, և իբրեւ անոր գուրս ելած թիւ մը կը ձեւանայ: Միաբանոց Եղբարց կարգին վերջանալով՝ Կաթողիկեայ Հայք կը մնան առանց հովուի և օտարաց հետ կը ձուլուին: Պարսկահայ գաղթականութեան իբր յուշարար կը մնան տապանաքարեր՝ հայերէն արձանագրութիւններով, ասոնք կը գտնուին եկեղեցւոյն յատակը հոս հոն գրուած կամ գտիլթը, շատերն ալ շինութեանց գործածուած են: — Երկրորդ Կաթողիկեայ Հայ գաղթականք են Գաղատացի վաճառականներ՝ 1790ին վերջը եկած Զմիւռնիա. ասոնք ի սկզբան Պարսկահայոց հետ այնչափ սերտ յարաբերութեան մէջ չէին: Մինչեւ 1828 թուականը, առանց մկրտութիւն, պակ և թագումն կը կատարէին Հայոց տէրակները և առանձին հովիւ չունէին. սակայն իրենց մէջ գրեթէ անպակաս գտնուած են վարպպեաներ և կրօնաւորներ: Այս գաղթականք եւս եկեղեցի և զպրոց չունենալով, կամաց կամաց Պարսկահայոց վիճակակից կը լինին: Ս. Պողիկարպոս եկեղեցւոյն յատակը ծածկող Պարսկահայոց հայերէն գրերով գերեզմանաքարերուն բով կան շատ թուով Գաղատացի Հայոց գերեզմանաքարեր, որոնց վրայ հայերէնի տեղ իտալերէն կամ լատիներէն յիշատակարաններ քանդակուած են: Վիեննայի Միթթարեան Միաբանութիւնը 1840 թուականէն սկսեալ կ'աշխատի քաղաքիս Կաթողիկեայ Հայոց վրայ և 1854ին ունեցած են յատուկ մատուռ մը: Անցեալ դարու կէսէն վերջը երթալով բազմացած էր Գաղատացւոց թիւը, մանաւանդ ուրիշ այլ և այլ քաղաքներէ՝ նորանոր բնասանիքներու Զմիւռնիա գաղթելովը, պատկասելի թիւ մը կազմուած էր: Վերջին գաղթականներու ջանքով և գիմումներով, 1883 թուին քաղաքիս Կթղ. Հայք առանձին ժողովրդագիտութիւն մը



կազմեցին և առաջին ժողովրդագիտան եղաւ Ն. Սահակ Վ. Թոռնեան. որուն յաջորդած են մինչև ցայժմ Վիննայի Միխիթարեաններէն: 1894 թուին, Արեւելաօէր Լեւոն Ք. քահանայապետի մէկ կոնդակին հաւմաձայն, տեղւոյս կիժղ. Հայք՝ լատին իրաւասութենէ բոլորովին անկախ և ազատ եղան, միանալով Կ. Պոլսի կիժղ. Հայոց հոգեւոր իշխանութեան հետ. իրենց առաջին առաջնորդ եղաւ Գեր. Ն. Նիկողայոս Թ. Վ. Ազգերեան: Ասով լատին ծխին յարող ընտանիքներէն ոմանք դարձան և իրենց նախկին ծխին գրուեցան Կաթողիկեայ հայ ժողովրդագիտութեան ցանկին մէջ: Կիժղկ. Հայք 1883ին կը հաշուէին 30 ընտանիք, 1890ին եղան 90 և այժմ են 150 ընտանիքէ աւելի. մեծամասնութիւնը կը կազմեն Գաղատացիները և ապա Կարնեցի, Եւզոկիացի, Սեբաստացի, Կեսարացի, Տիգրանակերացի և Կ. Պոլսեցի ընտանիքները: Ասոնց մէջ կը գտնուին ամէն կարգի և աստիճանի սնձիք. բժիշկ, զեղազօրծ, փաստարան, վաճառական, արուեստաւոր և զանազան վաճառատանց և հաստատութեանց մէջ առաջին կամ երկրորդ կարգի պաշտօնեաներ: Վիննայի Միխիթարեանք ունին վարժարան մը որ ժամանակաւ գիշերօթիկ աշակերտներ եւս պահած է. այժմ ունի 60-70 աշակերտներ՝ հայ, յոյն և լատին: — Զմիւռնիոյ լեռնագարանաց զլխաւորն ու հարստագոյնն յունականն է. որ կան 300000 հատոր գիրք և 200 ձեռագիրք. ասոր մէջ, բազմաթիւ և այլ և այլ զրամներէ գտա կը պահուի Հայոց Լեւոն լեռնագարի ակնոսին յետարանը, որուն վրայ քանդակուած են առիւծի և ոչխարի գլուխներ՝ ծաղկազարդ գրուագիտերով և մէջտեղ կանգնած է Լեւոն՝ գլուխը լծագ և ձեռքը գաւազան. նուրբ ճաշակաւ և բնախր արուեստով զօրծ մ'է:


Այժմ համառօտաւ ծանօթանանք նաև Զմիւռնիոյ շրջակայ Պուշեհապատ, Գորտեյիօ, Գարաբաշ և Կեօզ-Թեյիէ անուն գիւղերու հետ: Պուշեհապատ՝ որ այս գիւղերէն առաջին տեղին կը բռնէ, կ'իյնայ Զմիւռնիոյ արեւելեան կողմը բարձրացած լեռանց շղթային ստորոտը՝ դաշտապետի մը վրայ: Ունի գեղեցիկ և ճաշակաւոր զարդարուն եւրոպա-

կան սարաւեզներ, լայն ու ընդարձակ ծառուղիներ և ջրոյ յասուկ ճամբաներ: Բնակիչներն են Յոյնք, Լատինք և Հայք: Յոյնք ունին մեծ ու փոքր երկու եկեղեցի, Լատինք նոյնպէս երկու եկեղեցի և մատուռ մը. իսկ Հայք՝ որ հազիւ 15-20 տուն կրնան ըլլալ, ունին Ս. Խաչ անուամբ եկեղեցի մը: Հայոց եկեղեցին կառուցուած է քարաշէն 1863ին և աւագ գրան ճակատը ունի յիշատակարան. 1880ին երկրաշարժէ մեծապէս քանդուելով, հաստատուն կերպով նորոգուեցաւ, արդեամբ Եսայիան Յակոբ և Սահիան ազաներու, ինչպէս կը յայտնէ աւագ գրան դիմացը, չորս սխներու միջովայրը հաստատուած մարմարինոն քարի մը յիշատակարանն: Ներքուստ պարզ՝ բայց սիրուն է. յատակը ծածկուած է մարմարինոն քարերով: Աւագ խորանի պատկերը կը ներկայացընէ Ս. Աստուածածին, աջ ու ձախ գտնուած խորաններէն մին Սիրա Յեսուսի և միւսն Ս. Յովհաննու պատկերները: Ունի բանի մը պատկերներ, հանդերձ յիշատակարաններով: Զանգակատունն ալ յիշատակարան ունի. շինուած է 1880ին, եկեղեցիս նորագոյ Յակոբ և Սահիան Եսայիանց ձեռքով: Գիւղս զարոց չունենալով, հարուստներու ազայք կ'երթեւեկին քաղաքին վարժարանները, իսկ աղքատները կը յաճախեն Յունաց գարոցը: Քանի մը տուն Կաթողիկեայ Հայեր եւս կան հոս: — Գորտեյիօ գիւղը Զմիւռնիոյ հիւսիսային կողմէ՝ ճիշդ գիմացը կ'իյնայ: Առաջակողմը կը տարածուի ծովախորշը, կանակը մերկ ու չոր ապառաժուտ լեռներ, որոնց ստորոտը կը տեսնուին այգիներ և պողպատու ծառեր: Իր ընդարձակութեամբը և նորանոր շինութիւններով գիւղաքաղաքի մը կերպարանք առած է: Ծովէն փոքր շոգեխաւերով և ցամաքէն շոգեշարժ կառախմբով հազարակցութեան մէջ է Զմիւռնիոյ հետ՝ որուն կաշարանէն 11 հազարամետր հեռաւորութիւն ունի: Գիւղիս Հայերը բաւական բազմաթիւ են, իբր 150 տուն, և յատկապէս գիրք մ'ունին. կան նաև 10 տուն Կաթողիկեայ Հայեր: Ունին եկեղեցի մը Ս. Աստուածածին՝ կառուցուած, արձանագրութեան հաւմամատ՝ 1871 թուին, Զմիւռնիոյ և գիւղին



բարեւէր ազգայնոց արդեամբ: Վերնատունը շինուած է 1895 թուին, եկեղեցւոյս արդեամբ և ունի յատուկ յիշատակարան: Եկեղեցիս ներքուստ անգարդ է և պարզ: Տեղւոյս Հայերը 1897ին ունեցան բարաշէն, երկու յարկով երկուսու վարժարան մը, որուն ճակատը հաստատուած է յիշատակարան մը, կառուցուած է Ալեքսիքեան ընտանիքէն: Վարժարանս կը կոչուի Սահակ-Վարդուհեան, վարի յարկը մանչերու, իսկ վերինն աղջիկներու յատկացուած է. աշա-

է ապառաժուս տեղ մը, բաղաբէն հեախոան գրեթէ քառորդ ժամու հեաաւորութիւն ունի: Չոր ու բարուս լերանց հողի վրայ շինուած տուները գեղեցիկ տեսարան մը կ'ընծայեն: Բնակչաց մեծագոյն մասն են հայ և հրեայ: Հայերը ունին Պայժառակերպութիւն անուամբ եկեղեցի մը 1843ին կառուցուած. աւագ խորանը նուիրուած է Քրիստոսի Պայժառակերպութեան, իսկ աջ ու ձախ գանուած խորաններէն մին՝ Ս. Պողոկարպոսի և միւսն՝ Ս. Նիկողայոսի: Չախակոյմեան աւանդա-



321. Զմիւռնիոյ Գարաթաշ գիւղի տեսարանը:

կերտաց թիւը 80ը կ'անցնի: Ունին նաեւ Մանկապարտէզ մը 25 աշակերտներով: 1891ին ունեցան յատուկ գերեզմանատուն Ալա-Պէյ անուն գիւղակին կոնակը, շրջապատուած բարաշէն որմով. ունի յիշատակարան, որ կը յայտնէ թէ գերեզմանատունս իր ծախքով գնած և պարսպապատած է Վսեմ. Կարապետ Էֆ. Պալեօզեան, և նուիրած է գիւղիս ազգայնոց: Ասիէ առաջ Հայք իրենց ննջեցեալները կը թաղէին Զմիւռնիոյ մեծ գերեզմանոցը: — Գարարաշ՝ կառուցուած

տան մէջ գեաեղուած է մարմարեայ մկրտարանն, որ ունի 1872 թուականաւ նուիրատուին յիշատակարանը: Որմերու վրայ կախուած բանի մը պատկերներն ալ ունին նորագոյն յիշատակարաններ: Եկեղեցիս երկրորդ անուն մ'ալ ունի Ս. Կարապետ (Գըլխաղիք), որուն պատկերը կանգնուած և արծաթեայ գանազան նուէրներով զարդարուած է: Եկեղեցւոյս պարտէզին մէջ կը թաղէին իրենց ննջեցեալները մինչև 1889 թուականը. իսկ այժմ՝ բաղաբի մեծ գերեզմա-



նոցը կը տանին: Պարտէզի մէջ գտնուած շիրիմներու թուականները 1860էն ասդին են և հիներ չկան: Հայոց վարդանեան երկսեսն վարժարանն կառուցուած է գեղեցիկ զերբով եկեղեցոյ հիւսիսային կողմը: Շինութեան թուականն է 1890. ճակատն ունի յիշատակարան: Երկսեսն աշակերտաց թիւը 100ը կ'անցնի: Գարաթաշի Հայերը ունին նաեւ Մանկապարտէզ մը՝ 60-70 աշակերտներով: Տեղոյս Հայերը 250 տունէ աւելի են, մերձակայ զիղերու Հայերն ալ աննելով, ինչպէս Սարգսեանի, Քարաւրիկայի, որ չկան եկեղեցի և դպրոց, ամբողջին թիւը կը հասնի 320 տան: — Կեօզ-թեփե գիւղն Զմիւռնիոյ հարաւ-արեւմտեան կողմը տարածուող լեռնաբլրակներուն վրայ և ստորտը ծովուն առջեւը շինուած է: Բնակիչք մեծ մասամբ Յոյներ են, իսկ Հայերը ձմեռը հաղիւ քանի որ տուն, ամառը 25-30 ընտարիք կը հաշուին: Զմիւռնիոյ հայ հարուստ գասակարդէն ամանք զիւզս ամանային օգտօնութեան վայր ընտրած են և ունին սեպհական երկիրներ, տուներ ու պարտէզներ: Տեղոյս Հայերը ունին փոքրիկ եկեղեցի կամ մասուս մը Ս. Երրորդորքեան նուիրուած, որ կառուցուած է ամբողջ քարաշէն 1870ին, և պարտէզով շրջապատեալ է:

ԶՄՈՒՂՑ. — Գիւղ Ռումանիոյ Դէզուջ գաւառի, հաղիւ քանի մը տուն հայ բնակիչ մնացած են:

ԶՈՒ Կամ ՖԱԹԻԷ ՊԷՑ ԳԻՒՂ. — Գիւղ Սղերտի. երբեմն բոլորովին հայաբնակ էր և 200 տուն կար. իսկ այժմ միայն 80 տուն հայ և 150 տուն քուրդ ունի: Հայերը եկեղեցի մը ունին, բայց դպրոցէ զուրկ են. կը խօսին հայերէն խորթ լեզու մը:

ԶՈՒԷԹ. — Գիւղ Խարզան կամ Արզան (Աղձնիք) գաւառակի, որուն մէջէն կ'անցնի Արզն անունով վտակ մը, զոր տեղացիք Արզան-սույը կը կոչեն:

ԶՈՒԱՆՑ. — Կարնոյ զիւղերէն մին, արեւմտեան հարաւային կողմը:

ԶՈՒԱՐ Կամ ԶՈՒԱՐԻ ՎԱՆՔ. — Սիւնեաց Արեւիք գաւառի մէջ կայ այս անուամբ հին զիւղատեղի մը. կանգուն է միայն եկեղեցին, որ ուխտի կու գան վարդափառին:

Ղափանեցոց պատմութեան մէջ կը յիշուի իրբեւ աւան, որ զրկեց Պասպ Լեւազու ձորի թուրք զիւղերու կապուար ու կողպուար: Մեղրիի գետն զիւղիս անուամբ Զուար յայ եւս կոչուած է:

ԶՈՒԱՐԹՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ. — Հնապարեան եկեղեցոյս նկարագրութիւնն ըրած ենք Առապարի Ս. Գրիգոր անուան ներքոյ, որ և փափաք յայտնած էինք տաճարիս աւերակները քննելու: Այժմ ուրախութեամբ պէտք է բանք, որ մեր փափաքն իրագործուած է, Լ. Վ. Միսմնի միաբան Հ. Խաչիկ վարդապետի 1900 թուականին կատարած պեղումներով: Յայտնուած են չորս քանդակագարգ գեղեցիկ արձիւներ, խոյակներ, սիւներու բեկորներ, որոնք բաւական որոշ զագափար կու տան եկեղեցոյ հոյակապ շինութեան: Կան հայ, ասորի, յոյն և վրացի արձանագրութեանց հեռքեր. յայտնուած է մոզայիկ խաչի մը մասը և ի միջի այլոց սեպածե արձանագրութիւն մը՝ հաստատուած հիւսիս արեւմտեան դրան մօտ: Արձանագրութիւնս կը վերաբերի Ռուշաս Բե. փորագրուած է կոթողածե որձաքարի սեան վրայ, որ պատուանդանով հաստատուած է եղեր քարի մը մէջ հին խաչքարերու նման: Արձանագրութիւնս 47 սող է: — Այսպէս ամառցիք, ԼԳ. 380-1: Բազմակեց, ԻԹԹ. 20-24: Եւ այլն:

ԶՈՒԱՐԻ ՎԱՆՔ. Տես ԶՈՒԱՐ:

ԶՈՒՆ. — Բերդազիւղ Այրարատայ Բաւսեն (Ստորին) գաւառի մէջ, Գարաուրկան զիւղի հարաւակողմը և Խանի գետոյն եզերքը: Զուին գալէ անուն բերդը կը գտնուի 1750 մետր բարձրութեամբ լեռնաբլուրի սը վրայ. ի հնուց նշանաւոր եղած է իբրեւ Բասեն գաւառի պաշտպանութեան յարմար և ամուր վայր: Ռուսաց և թուրքաց առաջին պատերազմին, թուրքերը յաղթուեցան: Երկրորդ թուրք-Ռուս պատերազմին, 1855ի յունիս 5ին, անգլիացի սպաներէն ու մանք լեռան կատարը ելան բերդիս աւերակները քննելու: Վերջին պատերազմին (1877), թուրքաց Մուխթար փաշայ սպարապետը, նախ բուն բանակը դրած էր Զուին և լաւ ամրացուցած էր զայն ու շրջակայքը. այս պատճառաւ այն ինչ Ռուսները յարձակե-



ցան (25 յունիսի) առաջնորդութեամբ Լուսինա Մեղիքով հայ սպարապետի և Գամալուրի զօրավարութեամբ, թուրքաց առաջնորդ Ֆէյզի փաշան՝ ազգաւ Հունդարացի, քաջութեամբ թշնամուցն դէմ՝ զրաւ. այս պատերազմն Ռուսները Չուխայ անուամբ կը յիշեն, որուն մէջ կորսնցուցին իրր 1000 հոգի, իսկ թուրքերը կորսնցուցին 500 հոգի: — Գիւղիս մտա հասող գետակ մը իր անուամբ կը կոչուի: Զուխի ներկայ վիճակն կը մնայ անծանօթ:

ԶՈՒՆԻ ԶԵՐՄՈՒՎ. — Խորասանի և Մժընկերտի (Այրարատ) մէջտեղ կայ այս անուամբ ինքնարուղի առողջարար ջերմ ջուր:

ԶՈՒՆԻ. Տես ԵՊՆԻ:

ԶՈՒՎԱԼԱ. — Այժմ այլազգաբնակ փոքր գիւղ Սիւնեաց Երնջակ գաւառի, որուն անունը մասամբ կը յիշեցնէ, հին ցանկին Զաւաչրի վանք անուն գիւղը:

ԶՈՒԵԼ, ԶՈՒՅՅԼ, կամ ԶՈՒՎԱՅԼ. — Հին ամրոց Մոկաց Զերմաձոր (Շատախ) գաւառի: Կը յիշէ թ. Արծրունի Գաղկայ կորօր Գուրգենի համար զրաժ առնն. «Անու և զբերդն Զուէ, և զգաւանն կոչեցեալ Զերմաձոր՝ որ է մասն երկրին Մոկաց»: Նոյնը ուրիշ տեղ տարբեր ձևով կը զրէ և կամ բնօրինակոյց կողմէն այլապէս լ. «Վարդան Մաժիկանեան (կ'ըսէ)... խոյս տուեալ գնաց (դ) կողմամբն Մոկաց ի խախտն Տօրոսա կան լերինն ի լիսուրս Զերմաձորոյ, և բնակէ յամրոցին՝ որ այժմ Զարայ վանն անխեղեկ սարութեանն գեղջակարանն»: Ուրիշ տեղ մ'ալ Զուայ կը զրէ նոյն Արծրունին:

ԶՈՒՆԱՍՈՒՆ. — Գիւղ Սիւնեաց Շահապօնք գաւառի, Բջնաղի արեւելեան հարաւակողմը, գետակի մը կղերքը:

ԶՈՒՆԵԼ. — Գիւղ Սիւնեաց Շահապօնք գաւառի:

ԶՈՒՆԵՍ. — Այս անուամբ ջուր և ձոր կայ Այրարատայ Գարեղէնք գաւառի մէջ: Զորի երկու կողմերը կը բարձրանան ժայտեր՝ որոնց գաղաթը կան հսկայ եղեւնի ծառեր:

ԶՐԱՎԱՆ. — Այժմ այլազգաբնակ գիւղ կարնոյ. ի հնումն կը կոչուէր Ծիրանեվանք:

ԶՐԵՍԿ. — Այրարատայ Շիրակ գաւառի մէջ այս անուամբ սուրբ ուխտ մը կը յիշուի, ուր կը պայծառանար ճգնութիւններով



322. Զուարթնոց եկեղեցւոյն աւերակները:

Ը գարու վերջերը Սարգսն Գառնեցին՝ որ ծերութեան հասակին մէջ կաթսօղիկս և զա:

ԶՐՈՒՆԵՆԻՆՅ. — Վանայ շրջակայ գիւղերէն մին, երբեմն զուս հայաբնակ էր և շատ բնակիչներ ունէր, իսկ այժմ սակաւաթիւ Հայեր ունի Բրդերու հետ խառն:

ԶՐԹ. Տես ՍՈՒԳ:

ԶՐԱՆԱՍ. Տես ԶՐԱՆԱՍ:

ԶՐԿ կամ ԶՐԿ. — Այս անուամբ ծանօթ են Ազուլիս վիճակի բնակիչները, որոնք հարազատ սերունդ կը թուին Գողթնեցոց:



Իրենց յատուկ լիզու մը ունին, որ կը կոչուի Զոկերէն: Տես ԱԳՈՒՎԻՍ:

ԶՕՀՐԱՊ ԵԱՅԼԱ. — Այլազգարնակ փոքր գիւղ Այրարատայ վանանդ գաւառի, Զարիշատայ վիճակի մէջ:

ԶՕՀՐԱՊՈՒ. — Գիւղ Այրարատ Մազազ-Ոստան գաւառի: Ունի 36 տուն հայ բնակիչներ:

ԶՕՌՈՅ Ս. ԱՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔ. — Կը գըտնուի Շատախ (Վան) գաւառի մէջ, Կաղպի գիւղի մօտ:

ԶՕՐ ՔԷՇԻՇ. — Գիւղ Սիւնեաց Աղահէճը գաւառի հիւսիս-արեւմտեան կողմը:

ԶՕՐ կամ ԶՕՐ. — Քրդարնակ գիւղ Այրարատ գաւառի, Սուրմալու վիճակի մէջ: Գիւղիս մէջ է Կամրչաձորոյ Ս. Աստուածածնի վանքը աւերակ վիճակի մէջ, ուր կը յաճախեն ուխտաւորներ վարդափառի սօնին և արդիւնքը Ս. Էջմիածին կ'անու: Այժմ Զօրավանք կը կոչուի: Անանիա կաթողիկոսի ժամանակ հիմնուեք է վանքս. 300 միւրան և շատ կալուածներ ունեցեր է: Յետոյ բարբարոսութեանց զոհուեր են միարանները և կալուածներուն տիրեր են թափառական Եղիտի Քուրդերը: 1873 թուին Էջմիածնի կաթողիկոսէն հոս գրկուեցաւ Հմայեակ Վ. Արշարունին, վանքը նորոգելու և զգրոց հաստատելու. յետոյ սաճարն նորոգելով նուիրեցին Ս. Աստուածածնի, և մերձակայ Աղերսանդրապատ գիւղի ասնուաէրներէն՝ Աղերսանդր Մելիք Վրթանիսեանը վանքին իրեն կալուած հող նուիրեց:

ԶՕՐԱԽԱՉ կամ ԶՕԼԱԽԱՉ. — Գիւղ Սիւնեաց Գեղարքունի գաւառի, ի հնումն կը կոչուէր Ակնախառ. այսպէս կը կոչուի մեծ միակուսր խաչքարի սը անուամբ, որուն բարձրութիւնն է իբր 4 մետր և լայնութիւնն 1մ. որ ունի նաև պատուանդան և քանդակներ: Խաչքարս կը զանուի գիւղի միջավայրը, յիշատակարան չունի, շուրջը կ'երեւան

հին շինութեանց մնացորդներ և գերեզմանաքարեր: Խաչքարիս մերձաւոր գերեզմանաքարի արձանագրութիւնն, ՉԾԳ (= 1304) թուականաւ, կարծել կու տայ, թէ երկայն խաչքարս կանգնուած է Հասան իշխանի մը յիշատակին: Եկեղեցին նուիրուած է Ս. Գեորգոյ, որուն շուրջը կան բաւական թուով հին գերեզմաններ: Եկեղեցւոյ մօտ մտարան մը մէջ կայ խաչարձան մը և գերեզման: Գիւղիս արեւմտեան կողմը, սեւ քարէ և միջակ բարձրութեամբ և լայնութեամբ խաչքար մը կայ, Գաւիթ անուն կրէցի մը, ինչպէս կը յայտնէ ճակատի վրայ գրուած ՉԷԱ (= 1342) թուականաւ երկու սոյ յիշատակարանն: Գիւղիս բոլոր շրջապատը, զարդարուած են մեծ ու փոքր խաչքարերով, որոնց ոմանց վրայ կան յիշատակարաններ և քանդակազարդ գրուագներ: Զօրխաչ բարձր զիրք ունենալով սքանչելի է տեսարանն. զիմացը կը տարածուի հալիւսման գեղածիժազ Գեղամայ ծովակը: Գիւղս ունի 1696 զուտ հայ բնակիչներ, բաժնուած 204 տան: — Գեղարքունի, 545-547:

ԶՕՐԱՎԱՅ. — Գիւղ Մշոյ Բանաշէն գաւառակի: 5 տուն հայ և 10 տուն քուրդ բնակիչ ունի: Հայերը ունին Ս. Թորոս անուամբ խանդարեալ եկեղեցի մը:

ԶՕՐԱՎԱՅ. — Գիւղ Տիգրանակերտի, Սալու գիւղի մօտ. 4 տուն հայ կայ:

ԶՕՐԱՎԱՆՔ. Տես ԶՕՐ:

ԶՕՐԱՎԱՐ. — Այս անուամբ կոչուած են մի քանի եկեղեցիներ. ինչպէս Արագածոտն (Այրարատ) գաւառի Ռշոյ Ս. Սարգիս վանքը, Եղիվարոյ եկեղեցին, և այլն:

ԶՕՐԷ. — Գիւղ Տիգրանակերտի Սլիվան գաւառի. 4 տուն հայ կայ:

ԶՕՐԻԿ կամ ՍՕՐԻԿ. — Լեռ Այրարատայ Բասեն գաւառի, յորմէ կը հոսին Այծու գետի աղբերակները:



# Է

ԷԳԷՁՈՐ. — Գիւղ Բարձր Հայոց Սպեր  
զաւարի: Բնակիչք Հայ և թուրք՝ հողագործ  
են: Հայք ունին Ս. Աստուածածին անուամբ  
եկեղեցի մը, բայց գարոցէ զուրկ են: Հայու  
մը ասն մէջ մագաղաթի վրայ գրուած Աւե-  
տարան մը կայ Կարմիր կոչուած: Ամէն  
կողմէ Սպերի Ս. Յովհաննէս վանքը սիւ-  
սի գնացողները այս Աւետարանին ալ սիւ-  
սի կու գան: Տեղացիք կը պատմեն թէ՛  
ժամանակներ առաջ աւագակներ եկեղեցին  
կողոպտելով՝ տարեր են ծանրագին սպաս-  
ներն ու անօթները, որոնց մէջ է եղեր այս  
հրաշագործ Աւետարանը, բայց աւագակները  
չեն կրցեր գայն պահել, և վրայի արծաթ-  
ներն հանելով վերադարձուցեր են. ճանա-  
պարհին ճորտիս գետէն անցնելու ատեն ջու-  
րը կ'իջնայ, և շատ ժամանակ վերջը քանի  
մը անդամ կոյր կ'նոջ մը երազը գալով,  
գիւղացիք կ'երթան ու կը գտնեն գայն ջրին  
մէջ ժայտի սր ասկ, ուրիշ կարմիր ջուր կը  
բղիւէ եղեր, այդ պատճառաւ Կարմիր Աւե-  
տարան կոչուած է. մինչև ցարդ կը շա-  
բունակէ ճորտի մէջէն ուրոյն կարմիր ջուր  
պղպջակել:

ԷԳԷՁՈՐ. — Սակաւարնակ Հայոց գիւղ  
Տուրուբերանի Խորխոռունեաց (Արծկէ) գա-  
ւարի, ունի Ս. Սարգիս անուամբ եկեղեցի մը:

ԷԳԷՊԱՏ. — Հայարնակ գիւղ Այրարա-  
տայ Բասեն (Վերին) գաւարի մէջ, Պատժ-  
վանէն 1 ժամ հեռու, երբեմն վրացի բնա-  
կիչներ կու ունէր:

բնաշխ. Բաւարան

ԷԳԷԿ. — Այսպէս կու կը գրուին քանի  
մը Ագարակ անուամբ գիւղեր:

ԷՁԻՆԷ, ԷՑՆԷ կամ ԻՑՆԷ (Հն. Վիրահա).  
— Գիւղաքաղաք Գարդանէլի կառավարու-  
թեան և Ռոստոմոյի առաջնորդական վիճա-  
կի մէջ, Գարդանէլէն Տ ժամու ճանապարհ  
հեռու գէպի հարաւ: Կառուցուած է գեղե-  
ցիկ ձորի մը մէջ, օդը բարեխառն է և ջուրն  
յստակ, զով ու քաղցրահամ. տեղացիք  
չնորհալի, վատխառն և հուժկու գէմքեր ու-  
նին: Դժանաւոր է Էղինէի գետն, որ այժմ  
Մեհտերես կ'ըսուի, իսկ հին ատեն կը կո-  
չուէր Սկամակոյրու կամ Քաւերու՝ հինբու  
Տրովպա բոսած երկրին մէջ: Այս գետը  
Խղա (Գաղ-տաղը) լեռնէն բղխելով կու գայ  
Սիղէնի հրաւանդանին մօտ, արդի Գում-  
գալէի բովէն ծովը կը թափի. ասոր ջուրը բա-  
մարտողական է: Գիւղաքաղաքիս մէջ կը բնա-  
կին 60 հայ բնտանիք, կան նաև հայ գրն-  
չուներ՝ 28 վրանով: Բնակչաց մեծագոյն  
մասն թուրք են իրր 600 ատն, 150 ատն  
ալ յոյն կայ, իսկ հրեայ 35 ատն: Հայոց  
աստ հաստատուելու թուականին վրայ ստոյգ  
տեղեկութիւն չկայ. միայն սպաղիր հին  
Յայամաւորքի մը ծայրը երեսոց Բաւուցի  
Տ. Մարտիրոս անուն քահանայէ մը ասան-  
գուած իրր 120 տարուան ձեռագիր յիշա-  
տակարան մը, և գերեզմանը գանուոյ Ղա-  
փանլիճքեցի Տ. Թաղէոսի 177 տարուան  
տապանագիրը կը հաւասան թէ՛ 200 է  
տեղի տարիներ առաջ գաղթած են աստ



Հայեր, թերեւս մեծ մասն Գարգանիէ և փոքր մաս մ'ալ զանազան կողմերէ և Կէլ- լիպօլուէ: Հայոց Ս. Գեորգ անուն եկեղեցին որ 1839 շինուած էր, 1889ին վերանորոգուեցաւ՝ 500 սովի ծախքով: Հայերը անին Արամեան վարժարան մը 70-80 երկսեռ աշակերտներով: — Փայտաշէն կամուրջ մը Լչինէ երկու թաղի կը բաժնէ. մին զուս թուրքարնակ է. իսկ միւսն թէև յասկացուած է Հայոց, Յունաց և Հրէից, սակայն բառական թուով թուրք ընտանիքներ ևս եկած բնակութիւն հաստատած են: Երկու թաղերու մէջ ևս յիշատակութեան արժանի շէնքեր չկան. միայն Հայոց թաղի մէջ Արաքնեան Պօղոս աղայի բնակարանը, քարուկեր, հոյակապ և ճարտարասպետական շինուածոյն կզական է: Բազմաթիւ այգիներ և պարտէզներ կը շրջապատեն զիւզաբազաքո: Տեղւոյս Հայերը թրքախօս են. բայց թէ՛ արանց և թէ՛ կանանց մէջ կը տեսնուին հայախօսներ, և երիտասարդներէ ոմանք բարի սովորութիւն բրած են իրարու հետ ա՛մէն տեղ հայերէն խօսիլ և կամ զիշերները պատասութեամբ իրենց մայրենի լեզուն զարգացնելու փոյժ տանիլ: Տեղւոյս Հայերը զորձունեութեամբ և աշխատասիրութեամբ ազգեցիկ են և զովելի. շատերը արհեստիւ կը զբաղին. մեծ մաս մը տուեարով. շուկայի փայլն ու շուքն աւելցնողներն ալ մէկ քանի սպաճոյի հայ վաճառականներն են: Լչինէի Հայերու մէջ կրօնական բաժանումն չկայ. թէև ամերիկեան միսիոնարները քանի էր անգամ փորձեր են հոս ևս հաստատուելու, բայց չեն յաջողեր: — Հայ զընչունիքը զիւզաբազաքիս հարաւակողմն Գազտաղի ճանապարհէն վրայ շինուած Գլղը և Պաղղը թրքարնակ զիւղերու մէջ կը բնակին ձմեռը. կորովի և անձնապաշտպան են. ասոնց ձիերը և արջանիքը ժամերով հետս գաշտերու մէջ կ'արած են և ոչ ոք կը յանգրդնի անոնց պաշելու. մեծ մասն՝ անասնաբոյժ և հողագործ են. այժմ սկսած են հողեր ալ գնել. հայրենի հին աւանդութիւններ պահած են ու կը խօսին հայերէն ազաւզեալ լեզուաւ: Երմբայի ջերմուկ մը կայ Լչինէ Յ ժամու ճանապարհ հետս Կէյրքի-խոթիքի բնուած ծովեղերը՝ Լչիկ խորան-

պոյի աւերակներու մօտ, թհնետոս կզուոյն զխմաց:

ԷԼՄԻ կամ ԷԼՍՄ. — Հայաբնակ զիւղ Այրարատայ կոտայք գաւառի, Չագ զիւղի հիւսիսային կողմը. ունի 70 տուն: Այս զիւղը Խանէ Աթարէկն, Օրպէլեանի գրածի համեմատ, 1250 թուին, նուիրած էր Լիպարիա Օրպէլեանցի: Գիւղիս եկեղեցին Ս. Ստեփանոս՝ շինուած է 1851 թուին, որուն հարաւային զրան վրայի սրբատաշ քարով զանգակատունը, շինուած է ծախիւք Երեւանցի աստիճանաւոր Ազամալ Ազամալեանցի: Էլչառի մօտ բլրակի ծայրը կան հինաւոր բերդի մնացորդներ, և ոչ այնչափ հեռու ձորակի քարափի վրայ, տասն սողով բեւեռածե արձանագրութիւն մը, զոր առաջին անգամ ծանօթացուց 1863ին Գեր. Մ. Սմբատեանց և հրատարակուեցաւ նախ Մոսկուայի Համբաւարեր լրագրի մէջ. որուն վրայ յետոյ զրեցին նաև ուրիշ զիւնականներ. արձանագրութիւնը կը վերաբերի Մենուագայ որդւոյ Արգիտախի:

ԷԼԻԻՆ կամ ԵԼԻԻՆ. — Գետակ Սիւնեաց վայոց ձոր գաւառի. որուն ձորակը Արպեկայ կ'անուանէ Ալիշան, հին Ազոպէն զիւղին անուամբ:

ԷԼԷՆ. — Գիւղ Տիգրանակերտի Պշէրիկ գաւառի. 15 տուն հայ կայ և եկեղեցի մը:

ԷԼԵՄԻ. — Գիւղ Խարբերդի. ունի 30 տուն հայ, Ս. Գեորգ անուամբ եկեղեցի և վարժարան մը:

ԷԼԵՎԻ. — Տրապիզոնէ 8-9 ժամու ճանադարհ հետս զէպի արեւմտեան հիւսիս, և թրիպօլիէ Յ ժամ ասպին ծովեղերեայ մեծ աւան մ'է, Սիւ ծովու զրացի և պահապան լեռնաշղթայից ստորաբ կառուցուած: Արտաքին երկոյթը խիստ անշուք և նախնական է: Կը պատմուի թէ իրը 200 տարի առաջ, ասիկէց 3-4 քառորդ ժամու ճանապարհ հետս զէպի Տրապիզոնի կողմը ծովահայեաց ու սպառաժուտ լեռան սը ճիշդ գառնիւայր կողին վրայ մեծ զիւզաբազաք մ'էր Կէօրէյէ անուամբ, որուն ամայի և աւերակ տեղը տակաւին կայ: Էլչէլի մինչև ցայսօր կառավարական պաշտօնագրութեանց և վիճակագրութեանց մէջ Կէօրէյէ կը կոչուի, հին ու կործանեալ զիւզաբա-



զարին անուամբ: Այդ պատմական գիւղաքա-  
 զարին մէջ մինչև ցարդ կը տեսնուին գեղեց-  
 կաշէն մշկիթներու, եկեղեցիներու, տաճար-  
 ներու, բազմիքներու, ազրիրներու կիսա-  
 փուշ աւերակներ. նոյնպէս կը նշմարուին  
 կոյս կոյս կամ կիսականգուն տուներու,  
 բնակարաններու, կրպակներու ու պանդոկ-  
 ներու աւերակներ: Ըստ աւանդութեան՝ Հին  
 Էլէվի կամ Կէօբէլէ՛ կանգուն եղած ասան  
 5-600 տուն ժողովուրդ ունի եղեր, մեծա-  
 գոյն մասը թուրք, և մնացեալն, յոյն ու  
 հայ: Եթէ ոչ արհեստից ու վաճառա-  
 կանութեան, բայց հոգազորութեան մէջ  
 բաւական զարգացած էին իր բնակիչները:  
 Կործանման պատճառ կը կարծուի երկրա-  
 շարժը, որովհետեւ ամայացած սեղը ապա-  
 սաժուտ ու լեռնային է, և փլատակները  
 ցանուցիր վիճակի մէջ կը գտնուին: — Է-  
 լէվի այժմ 250 տան չափ բնակիչ ունի.  
 40 տուն՝ հայ, 75 տուն՝ յոյն և մնացեալը՝  
 թուրք: Երկրորդ կարգի գոյնագումարիւն  
 է Տրապիզոնի կուսակալութեան ներքոյ:  
 Օդն՝ ձմեռը բարեխառն, զարնան կամ ամ-  
 բան ջերմ ու վառասողջ: Ժողովուրդը կը  
 զբաղի հողագործութեամբ, այգեգործութեամբ  
 և պարտիզպանութեամբ: Արհեստներն են՝  
 հացագործութիւն, կոշիակարութիւն, ներ-  
 կարարութիւն, սոսայնանկութիւն, մանի-  
 սագործութիւն, գերձակութիւն, սրճագոր-  
 ծութիւն, պղնձագործութիւն, և այլն: Ար-  
 հեստները մեծ մասամբ Հայերու ձեռքն  
 են. նոյնպէս շուկային առուտորը: Բեր-  
 բերն են՝ կաղին, ընկոյզ, խաղող, օղի,  
 գինի, տեսակ տեսակ պտուղներ, ցորեն,  
 եգիպտացորեն, այծ, ոչխար ու արջառ: Ա-  
 ւելի կ'արտածեն կաղին ու ընկոյզ, որոնց-  
 մէ տարին 30 հազար կենդանար կը դրկուին  
 Եւրոպա: Ամէն ուրբաթ օր պագար ունի և  
 շրջակայ գիւղերէ բաւական բազմութիւն կու  
 գայ: — Հայերը 50-60 տարիէ ի վեր գաղ-  
 թած են զանազան երկիրներէ. մեծագոյն  
 մասն՝ թիւմպարացի են. գործի մէջ բաւա-  
 կան ձեռներէջ, ժրագլուխ և անտեսագէտ.  
 Ընդհանրապէս հիւրասէր են: Ունին 1869ին  
 կառուցուած բարուկիր ու վայելչաշէն եկեղե-  
 ցի մը, ինչպէս նաեւ վարդանեան անուամբ  
 երկսեռ վարժարան մը 36 աշակերաններով:

ԷԼԷՄ ՏԱՂԻ. — Հայաբնակ գիւղ Ճանիկու  
 առաջնորդական վիճակի. ունի եկեղեցի և  
 Ս. Գէորգեան անուամբ վարժարան մը՝ 45  
 աշակերաններով:

ԷԼԹԻ. — Լեռ Սիւնեաց Գոզմն գաւառի  
 մէջ:

ԷԼԻՆՃԷ. — Այժմ այլազգայնակ (23  
 տուն) գիւղ Այրարատայ Մազազ գաւառի  
 մէջ, համանուն լեռան մօտ, Հաւուց թա-  
 ունն ոչ այնչափ հետու: Ասոր մէջ կը յի-  
 շուի բնութեան արժանի շէն կամ կիսա-  
 տեր եկեղեցի բիզանդական սեով. իսկ մօտն  
 է Ս. Ստեփանոսի վանքը գեղաբանդակ խաչ-  
 բարերով: Վանքին մօտ կայ Ս. Պետրոս  
 Պօղոս առաքելոց նուիրուած մասուտ մը,  
 որուն պատկերի (թ. 323) վրայ կը նշմա-  
 րուին բանդակներու հետքեր:

ԷԼԻԶԱՊԷԹՇԹԱՏ. Տես ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՈՒՍ:  
 ԷԼՄԱ. — Լեռնային Կիլիկիոյ մէջ կայ  
 այս անուամբ լեռ մը:

ԷԼՄԱԼԸ կամ ԷԼՄԱԼՈՒ. — Գիւղ Գաղա-  
 տիոյ կուսակալութեան մէջ. բնակիչներու  
 մեծագոյն մասը մահմեդական են, կան  
 նաեւ 60 տուն հայ և 30 տուն յոյն: Գիր-  
 քը գեղեցիկ չէ և օդն վառասողջ է. սա-  
 կայն ջրաւէտ է և խմելու համար մաքուր  
 ջուրեր կան: Հայոց թաղը շատ կարօտ լի-  
 նելով ջրի, իրենց երեւելիներէն Յարութիւն  
 ապա Նիկողոսեան մեծ ծախք ընելով հինգ  
 ազրիր շինել տուած է: Տեղւոյս Հայերը  
 սերունդ են՝ 1740ին Ալաա խանի բնա-  
 կալութիւններէն խոյս տուած հայ գաղթա-  
 կանութեան մը: Ունին Ս. Լուսաւորիչ ան-  
 ուամբ եկեղեցի և վարժարան մը. ընդհան-  
 րապէս զուրկ են մայրենի լեզուէ: Գիւղս  
 գրեթէ 150 տարիէ հետէ հիմնուած է: Բեր-  
 բերն են՝ ցորեն, հաճար, գարի և եգիպ-  
 տացորեն, բոլոր արանքը թուրքերու սեպ-  
 հական են. վաճառականներու մէջ կան բանի  
 մը հայ և յոյն:

ԷԼՄԱԼԳ. — Այլազգայնակ գիւղ Սիւ-  
 նեաց ճահուկ գաւառի մէջ: Այս անուամբ  
 ուրիշ գիւղեր եւս կան զանազան կողմեր:

ԷԼՄԷՏԻ. — Գիւղ Տիգրանակիրաի Պշէրիկ  
 գաւառի. 22 տուն հայ կայ:

ԷԼՊԵՅԼԻ. — Գիւղ բարային Կիլիկիոյ,  
 Մուղայ սահմանները:




ԷԼՊԻՍ կամ ԷԼՓԻՍ. — Հայաբնակ գիւղ խնուսի (Տուրուբերան), ունի 52 տուն:

ԷԼՊԻՍԱՆ. — Քաղաքաւան Կիլիկիոյ. նկարագրած ենք Արցիստան անուան ներքոյ: Տեղւոյս Հայք ունին Ազգային վարժարան մը՝ 100է աւելի աշակերաներով:

ԷՅՍԱՆ. — Կը յիշուի թուեցը դաւառի մէջ: ԷԿԷԼԼԻԻ. — Լեռ Կարնոյ, Փալան-տէօ-բէնի արեւմտեան կողմը, բաղաբէն 2 ժամ հետո:

ԷԿԻԼ. Տես ԱԿԼ:

ԷԿԻՆ. Տես ԱԿՆ:



323. Էլլինճէի մօտ Մ. Պետրոս-Պողոսի մատուռ:

ԷԼՓԻՍ. Տես ԷԼՊԻՍ:

ԷԼՔՈՎԱՆ, ԵԼՂԱՍԱՆ կամ ԲԱՐՁՁԱՐԻ. — Հայաբնակ գիւղ Այրարատոյ Կոտայք գաւառի: Բնակիչք 518 հոգի են, բաժնուած 62 տան: Եկեղեցին նախրուած է Ս. Յովնանու:

ԷԿԼԷՆՃԵՆՔ, ԷՅԼԷՆՃԷ կամ ԹԷՔՔԷ ՄԱՀԱԼԷՍԻ. — Հայաբնակ գիւղ Կիլիկիոյ, Զէյթունէն կէս ժամ հետո, ունի 320 բնակիչ:

ԷԿՊԷԶ. — Գիւղ Պէրէբէթ-տաղրի. երբեմն 70 տուն հայ բնակիչ ունէր, բայց



վերջերը մնացեր են 27 սուն: Քիլիսէ 12 ժամու չափ հետու է:

ԷԿՐԻ ԶԱՅ. — Գետ Աղտանից, կը բղխէ Աղպուլբախ լեռնէն:

ԷԿՐԻ ԶԱՅ. — Գաշա և արօտներ Նոր Բայազիդ գաւառի մէջ:

ԷՀՆԵՅԻՔ. — Գիւղ Արարկերի, հայ և թուրք բնակիչներով: Հայք ունին Ս. Աստուածամայր եկեղեցի մը և երկուսն վարժարան մը՝ 30 աշակերտներով: Բողոքականութիւնը մուս գտած է: Ընդհանրապէս երկրագործ են:

ԷՀՆԵՇ ԿԱՄ ՆԵՄԵՍ. — Հայաբնակ գիւղ Այնթապի և Եղեռնոյ առաջնորդական վիճակի մէջ, Եփրատայ եզերքը, բարձր գիրքով և զեղեցիկ անտարնով: Հոսմիլայէ գէպի հարաւ 3 ժամ և Այնթապէն գէպի արևելքը 12 ժամ հետու է, հաստատուած ժայռոտ լեռնակի մը կողմն վրայ: Բնակիչք 70 սուն են, կը խօսին թուրքերէն. հարուստ մշակութեամբ, բնագործակ պարտէզներով ու պիտակի անսպառ բերքով գիւրակեաց վիճակ մ'ունին. շատերը սրիշ աւելիքէ եկած հաստատուած են: Ունին եկեղեցի և վարժարան մը՝ 42 աշակերտներով: Գիւղիս բնակիչք ժիր մշակ, ճարպիկ լուզորդ և վարպետ որսորդ են. մեծ ու փոքր՝ արական ցեղին մագերն բոյրովին կ'ածիլ լեն, գազաթին վրայ մաս մը թողլով, նորատակը մաքրութիւն, և աշխատութեան ժամանակ նեղութիւնէ փախչիլ է: ԷՀՆԵՇԻ աբեմտեան բարձունքը Հապիսոյ տաղը կը կոչուի: Հապիսի գաշար և շուրջը գանուած մանր անասունները գիւղիս համար բաւական շահարեւ են: Այս լեռան մէկ ձորակն՝ որ գիւղի հարաւակողմն կը ձգուի, Ս. Սարգիս վանքի անուամբ Ս. Սարգիս տերեսի կ'ըսուի: Այս ձորակն գէպի Եփրատ կը բացուի. իր ձախ կողմի վրայ գանուող քանի մը ընդարձակ քարայրները սւշադրութիւն կը գրաւեն. ասոնք հին ասեն ձիթագործարան են եղեր. իսկ այժմ գիւղացւոց իրր բազմիք կը ծառայեն: Այս ձորակի ժայռերու մէջէն կը բղխի լճիս և սպաղ ջուր մը՝ Ս. Սարգիս փռնարը կոչուած, որ գիւղացւոց միակ ջուրն է: Ս. Սարգիս ասուակին խոխոջն, բարձրաբերձ ապառաժներու թանձր

շուքն, հովասուն ձորակին ցանցառ պիտակի ծառերն, որոնց մէջ կը ցցուի աւերակ վանքի գազաթը, զուարճալի վայր մը կ'ընծային գիւղացւոց և սխառուորներու: Գիւղիս մօտ Եփրատայ ձուածե գետակըղւտն վրայ կը մշակեն Գապիյէ բուսած աւերակ մը խոշոր ու անոյշ սեխ:

ԷՀՆԵՇԻ ծագման պատմութիւնն անորոշ է. բայց հին յիշատակներ, տեղական սովորութիւններ, տարագներ, գիւղին արեւմուտքէն գէպի հիւսիս՝ մինչեւ Հոսմիլայ ձգուող քարաբլուրներու մէջ բացուած մեծ ու փոքր անձաններ, Ս. Սարգիս վանքն, վիճակներ եկեղեցիներ, և մանաւանդ իր բնական գիրքն, որ երկար ժամանակ գոյութիւն պահելու յարմարագոյն և սեպհական տեղերէ մին է, կը հաստատեն թէ պատմական անցեալ մը ունեցած է: Խաչակրաց նշաններ յայտնի են լաթին արձանագրութիւններով: ԷՀՆԵՇ՝ Շնորհալուոյն անուամբ Ներսես եւս կը կոչուի, որուն ժամանակ հո՞ծ բնակիչներով ու շէնքերով աւան մ'էր: Գիւղիս հաստատուած մէջ առաջին անգամ սւշադրութիւն գրաւողն է Ս. Աստուածածին վիճակը եւ կեղեցիներ՝ հիւսիսային կողմը: Ասիկէ առաջ եկեղեցի մը ունեցեր է գիւղս, որուն մնացորդն ցարդ կը տեսնուի աբեմտեան եկեղեցւոյն հարաւային արեւմտեան: Ս. Աստուածածին փոքր է, ունի երկու խորան. աւազանը զետեղուած է եկեղեցւոյն ձախ կողմն, նոյնպէս վիճակներ՝ երկու աստիճան ցած խցիկի մը մէջ և միջնորմով բաժնուած: Եկեղեցւոյն բոյր պատերն ասուակ անասկ խաչերով քանդակուած են. ցած, մութ ու խանաւ է. ոչ պատուհան ունի և ոչ պահարան: Գիւղիս երկրորդ հնութիւնն է Ս. Սարգիս վանքը՝ հարաւ արեւմտեան կողմն՝ Վ. ժամու հեռաւորութեամբ: Այս վանքը գրեթէ փլած է, և միայն կաթոլիկէին հաստահիմն պատերը մնացած, փոքրիկ աւանգատունով մը, որուն արեւմտեան պատին վրայ՝ եկեղեցւոյն մէջ ձեւաւոր և ամուր պոս մը կայ, բայց յայտնի չէ ինչ բանի ծառայած լինելն: Եկեղեցւոյն շուրջը զրանուած և զետնի հաւասարած որմերու աւերակները՝ բաւական մեծ տարածութեամբ վանքիս սահմանը կը գծեն: Այս կիսաւեր



շինուածքին ոճը, քարերու խոշորութիւնը, արտաքին արեւելեան և հարաւային պատե-  
րու վրայի կիսեղծ յունաստա արձանագրու-  
թիւնները ասպացոյց են վանքին հնութեան:  
Կործանման ժամանակն ալ յայտնի չէ, բայց  
աւերակին գիրքն ու տեսքը և խորանին առ-  
ջեւ աճած հինաւորց պիտատիի ծառ մը,  
քանի մը հարիւր տարիներու հնութիւն կը  
ցուցնեն: — Միւս հնութիւնները քարան-  
ձաներ են, որոնք հին ասեն իբրև ա-  
պաստարաններ և գերեզմաններ եղած կը  
կարծուին. այժմ ոմանք արուած են, ոմանք  
իրբև մարազ կը գործածուին և ոմանք ալ  
եկեղեցոյ շինութեան քար կը հայթհայ-  
թեն: Ասոնցմէ մին՝ գիւղէն <sup>3</sup>1 ժամու ճա-  
նապարհ հետեւ Հոսովլայի ճամբուն վրայ,  
Ս. Յակոբ կամ Մէյէյի անուամբ ուխտա-  
տեղի մ'է. ուր այժմ նշանաւոր բան չկայ,  
բայց եթէ ծխտ մըտա մարիներ, ուխտաւոր-  
ներու մամբրէն, ձէթէն թանձրացած նիւթեր,  
փայտեայ զգալներ և վերէն կաթիլթոզ վճիտ  
ջրի ոլոննաձեւ շիթեր: Ոչ միայն հայն,  
այլ և բուրգն ու եզխան ուխտի կ'երթան:  
Մէմէլի անուն առած է այն ջրի կաթիլնե-  
րէն, որոնք քարէ առաստաղին վրայ ծծի  
պատկներու նման ամփոփուելով կը կաթիլ-  
թեն: Ջրի այլ կաթիլները քանի մը տա-  
րի առաջ աւելի առատ են եղեր. արդի  
նուագման համար ցաւելով կը յայտնեն թէ  
չար մը մասն է այն տեղ, և Ս. Յակոբ  
Պատգան բարկանալով՝ իբր պատիժ բիշցու-  
ցեր է ջուրը. բայց յայտնի է թէ այրպիտի  
բարձրարերձ ժայտերու մէջ ջրի առատանա-  
լը կամ նուազիլը անոնց ծծողականութե-  
նէն կախումն ունի: Շատ ուշադրու են յի-  
շեալ այրերը պարունակող լեռը և ասոր  
լեռի երեսին վրայ բացուած քանի մը ծա-  
կերն, որոնք ճիշդ ուխտատեղոյն վրայ կ'իյ-  
նան անմասնելի բարձրութեամբ: Կ'աւանդեն  
թէ այլ ծակերը առաջ չկային. ժայտի խա-  
ւեր ինչաւով՝ յետոյ բացուած են լեռան եր-  
կայնութեամբ գանուող ներքնուղիի մը վրայ.  
գիւղացիք աւանդաբար կ'ըսեն, թէ գանձ  
կայ հոն: Բայց ինչ որ ալ ըլլան այրպիտի  
զբոյցներ, թէ՛ ներքնուղին և թէ՛ այլ նշան-  
ներ կը ցուցնեն թէ յանցելումն այլ տե-  
ղերը անմասնելի չէին: — ԷՀՆԷՇ գիւղի շի-

նութեան ոճն բոլորովին հին է. տուները  
քարաշէն են և իրարու կից. տանիքներն  
լնոցհանրապէս մին միւսին իբր բակ կը  
ծառայէ: Հասկիպի գաշտիկն և Եփրատայ եւ-  
զերքը քանի մը արտեր կը մշակեն ԷՀՆԷՇ-  
ցիք. ունին կիթիլ ըսուած տեսակ մը կո-  
բեկ, ցորեն, գարբի, և այլն: Կան սակերիչ,  
ներկարար, կոշկակար, ջուլհակ: Կանայք  
առ հասարակ մեծ ճարտարութիւն կը ցու-  
ցնեն շինական նաւր սակնագործութեանց  
մէջ: Արանց զբաղմանց մէջ նշանակելի է  
պապենական և պատմական լաստաւարու-  
թիւնը:

ԷՃԱՆԱՆ. — Այսպէս ևս գրուած է Ա-  
ձակե (աես) անունը:

ԷՄԻՐԱՅԻ. — Գիւղ Այրարատայ Գաբե-  
ղէնք գաւառի, Կազգուանայ հարաւակողմը:  
Այս անուամբ գիւղ մ'ալ ունի Խարբերդ,  
ուրիշ մ'ալ Գիւմիւշխանէ:

ԷՄԻՐԻՍԵԼՈՒ. — Յունարնակ գիւղ Այ-  
րարատայ վանանց (Կարս) գաւառի մէջ:

ԷՄՂԻԿ ՏԱՂ. — Լեռնային Կիլիկիոյ մէջ  
այս անուամբ լեռ մը կայ:

ԷՅԷՐՂԻ. — Լեռ Կարնոյ հարաւային կող-  
մը:

ԷՅԻՐԻՍԻՆ. — Հին գիւղ Արցախու, կը  
յիշուի Փիլիպպոս կաթողիկոսի մէկ կոն-  
գակի մէջ:

ԷՅԼԷՆՃԷ. — Հայարնակ գիւղ Էօզդաթի  
35 տուն բնակչօք. ունին եկեղեցի և վար-  
ժարան: Կան նաեւ 10 տուն հայ Բողոքա-  
կանք՝ հանգերձ ժողովարանաւ: Հայկական  
եկեղեցոյ անունն է Ս. Աստուածածին, իսկ  
վարժարանն կը կոչուի Արգարեան: Հոգա-  
գործ են: Տես ԷԿԼԷՆՃԵՆՔ:

ԷՅՊԷՁ. — Հայարնակ գիւղ ծովային Կի-  
լիկիոյ:

ԷՅՐԻՏԷՐԷ. — Գիւղ Չարշամպա գաւառի  
և ճանիկի առաջնորդական վիճակի մէջ:  
Ունի 80 տուն հայ բնակիչ, Ս. Երբորդու-  
րիւն անուամբ եկեղեցի մը և Ս. Երբորդու-  
թեան վարժարան՝ 32 աշակերաներով:

ԷՆԳԱՄԷ. — Այլազգիներէն այսպէս կը  
կոչուի Անկիւրիան:

ԷՆԶԷԼԻ. — Գիւղ Կասպից ծովու եզերքը.  
նախագուսն է Պարսկաստանի: Ունի 15  
տուն հայ, մաստու մը և նախակրթարան:



Մշտակայ քահանայ չունենալով, երբ պէար ունենան Ռէշտ քաղաքէն բերել կու տան, որ զիդէն քանի մը ժամու ճանապարհ հեռու է:

ԷՆԿԻՐԻԻ. Տես ԱՆԿԻՐԻԻ:

ԷՆԹԱՊ. — Այլմասկ անունը այսպէս ես կը գրուի:

ԷՆՏԷԿ. Տես ԱՆԳՈՒԿ:

ԷՆՏԷՐՈՒՆ. — Լեռնային Կիլիկիոյ վիճակ մը:

ԷՆՏԻՋ. — Գիւղ Եւդոկիոյ. 18 տուն հայ և 95 հոգի մահմէտական բնակիչներով: Հայերը ունին Ս. Փրկիչ անուամբ եկեղեցի մը:

ԷՆՏԻՐԱՅ Կամ ԷՆՏԻՐԱՅԻՐԱՅ. — Գիւղ Կեսարիոյ, Թաւազն իբր 1/2 ժամ հեռու. բնակիչներու մեծագոյն մասը յոյն: Շրջակայքը ունի շատ պարտէզներ և այգիներ:

ԷՆՏՈՒՐ. — Գեոակ Արարատականի, կը բղկէ Սըհանու լեռնէն և կը բաժնուի Գաւրի ժու այգեստանները. միայն առատացած միջոց իր մէկ մասը կը թափի Աւրազրուտ գետը:

ԷՆԷԿ ԽԻԱՍ. — Գիւղ Այրարատայ Բասին (Վերին) գաւառի մէջ:

ԷՆԷԿ ԽԱԼԻԱՆ. — Գիւղ Այրարատայ Բագրեանոյ գաւառի:

ԷՆԷԿ ՄԷՏԱՆ. — Լեռնանցք Այրարատայ վանանոյ գաւառի: Այս անուամբ լեռ մը ես կը յիշուի վարածունեաց մէջ:

ԷՆԿԻՋՈՐ. — Կը յիշուի Որբաղէ (Տայք) գաւառի մէջ:

ԷՋՄԷ. — Գիւղ Նիկոմիդիոյ Կէրէ գաւառակի. ձեւացած է Օրթագիւղի բնիկներէ տասն և չորս անձանց բնկերութեամբ 1866ին: Արեւելքէն Օրթագիւղի բարձունքը և արեւմուտքէն Կէյլէյի գաշաավայրն ունենալով մէջ տեղը բնորձակ բլրակներու վրայ հաստատուած է, լայնածաւալ թխաւ տաններով ու այգիներով զարդարուած: Բլրակներու բնորձակութեան վրայ, իրարմէ հեռու, շերամբուծութեան համար կառուցուած 4-500ի չափ շէնքեր կը տեսնուին, ցրուեալ զրից մէջ, որոնց մէջ Օրթագիւղէ իջած 100է աւելի բնատնիք կը պատուարուին: Գիւղին մէջ կայ հայկական փայտաշէն մատուռ մը Ս. Աստուածածնի: 1893ին


ունեցան յատուկ վարժարան մը՝ 80-90ի չափ աղայոց, Եղիշեան անուամբ: Այժմեան վարժարանը կը կոչուի Արամեան-Գայիանեան և ունի 120է աւելի երկսեռ աշակերտներ:

ԷՋՄԻԱՅԻՆ. Գ. ԵՏՄԻԱՅԻՆ. Ռ. ԶԵՄԱԼՅԱՆ. — Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, վաղարշապատու հարաւային կողմն կը գտնուի հնազարեան և հայ ազգի կաթողիկոսներու բնակավայր հոշակաւոր վանքը: Թուրքերը Խչ-Քիլիս (Երեք եկեղեցիք) կ'անուանեն՝ Շողակաթ Ս. Աստուածածնի, Ս. Հոսիոսիմեայ և Ս. Գայիանեայ երեք եկեղեցիներու համար: Տրդատայ սքանչելի դարձն պատճառ եղաւ Հայաստանի պարծանք Մայր եկեղեցւոյ կառուցմանը՝ ի պատիւ Ս. Հոսիոսիմեանց նահատակութեան, ինչպէս որ հրեշտակը Ս. Գրիգորի տեսչեան մէջ ցոյց տուած էր. Ազաթանգեղոս այս մասին կը գրէ. «Էլ մի տեսիլ ահաւոր մարդոյ բարձր և ահեղ՝ որ զառաջնն ունէր և զէջնն ի վերուստ մինչև ի խոնարհ. . . և ի ձեռին խրում ուն մի մեծ սակի. . . ինքն սլացեալ գայր ըստ արագածու նմանութեան արծուոյ և եկն, էջ, և հաս մօտ ի յատակ երկրիս ի շինամէջ քաղաքին. և բախեաց զթանձրութիւն լայնատարած գեանոյ. . . և տեսնեմ ի մէջ քաղաքին մօտ յապարանս արքունի. . . խարխիս սակի», և այլն: Այս տեսչեան նշանակութիւնը հրեշտակը ինքնին բացատրելով Ս. Լուսաւորչի կ'ըսէ. «Արդ զգոյշ լեր աւանդիդ որ բեղ հաւատացաւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, շինեսլիք գառնար անուանն Աստուծոյ՝ որ ցուցաւ ի տեղւոջն՝ ուր սխնն հրեղէն ունէր զսակի խարխին», և կանխեց միանգամայն ըսաւ, թէ «տեղին այն լիցի տաճար Աստուծոյ, և տուն աղօթից ինզրուածոց ամենայն հաւատացեալոց, և աթոռ քահանայութեանն»: Ս. Գրիգոր Լուսաւորիչ, տեսչեան այն սակեղէն ուսով զարնուած տեղը սկսաւ շինել քրիստոնէական մայր տաճարը. որ այժմ ես ծանօթ է և կը կոչուի Իշմակ տեղի, և խորանը՝ Շոքակար Աստուածածին. ասոր շինութեան մասնակցեցաւ նաեւ Տրդատ թագաւորը իր պալատականներով և ժողովրդով և աւարտեց 303



Թուին: Տաճարն և վանքն ևս կը կոչուի Էջմիածին իբր Էջր Միածնի Որդւոյ Աստուծոյ, կամ հոն Էջ (Իջաւ) Միածինն, ինչպէս սովորաբար կը հասկնայ մեր ազգը՝ ուսնաւոր մարդու ահաւոր տեսեամբ յայտնուելով Ս. Գրիգորի, թէպէտեւ մեկնիչ հրեշտակը յայտնապէս Որդին Աստուծոյ չի ցուցընէր, այլ կ'ըսէ. «այս Տեսչութիւնն Աստուծոյ է, որ հայի յերկիր և ապ զորդաւ: ... Այն ահ աստուածութեանն՝ հարթեաց

այս անուամբ կոչած է, քննութեան կը կարտաի: Ալիշանի կը թուի թէ շատ հին չէ այս անուան գործածութիւնն և վերոյիշեալ շարականէն վերջ առաջին անգամ գործածած է Օրպէլեան՝ Վաղարշապատի Ողբին մէջ: Տեղւոյս սրտակի Էջմիածին կոչումն ժեղարէն առաջ չի յայտնուիր, և գրեթէ առաջին անգամ Ալմուսէյն վերանորոգութեան ժամանակ թիւմաս Մեծսփեցիէն կը յիշուի. իսկ նոյն դարու գրոց յիշատակա-



324. Էջմիածնի ընդհանուր տեսարանը:

կործանեաց ընկեաց զմուրթութիւնս յերկրէ»: Բայց Շողակաթին շարականը կը վկայէ թէ ազգիս բրիտաննութեան առաջին դարերէն, այսպէս կը հաւատային տեսեան մէջ երեւցող սքանչելի մարդը ըլլալ Որդին Աստուծոյ, անոր համար և երգեր ևս ու կ'երգեն.

« Էջ Միածինն ի Հօրէ և ըյս փառաց ընդ նմա. Զայնք հնչեցին Սանդարաժեար անդնոց », և այլն:


Առկէց յատկացուած է տեղւոյն Էջմիածին անունը. բայց թէ երբ և կամ ո՞վ նախ

րաններու մէջ միասին կը գրուին Վաղարշապատի և Էջմիածնի անունները: Մայր եկեղեցւոյ հետ շինեցին նաև հայրապետանոց և եկեղեցւոյ սպասարաններու համար հարկաւոր բնակարաններ: Գարձեալ Սուրբ Գրիգորի տեսիլքէն Շողակար կոչուած է խորանն, իբր նոյն տեղը «սին գործեաց լոյսն շողացեալ», ինչպէս կ'ըսէ Ագաթանգեղոս: Մեր յիտապայ պատմիչները սովորաբար կ'անուանեն Շողակար Աստուածածին, Էջմիածին և Մայր եկեղեցեաց: Էջ-



միածին անմիջապես եղաւ Հայոց քահանայապետութեան կամ կաթողիկոսութեան աթոռ, որուն առջին քահանայապետն եղաւ Ս. Գրիգոր 302 թուին. մինչև 453 թուականը 18 կաթողիկոսներ նստան Էջմիածին և նոյն թուին քաղաքական հանգամանքներու ստիպմամբ Աթոռը Գուին փոխադրեցին. այնուհետև մինչև ժեզար զուրկ մնացած Հայրապետական աթոռ լինելէ: - Ի հնումն Էջմիածինը մասն էր վաղարշապատի, բայց բաւական ժամանակ է որ անկէ գատուեր և մի քիչ հեռացեր է: Ամբողջովին պարսպապատ է և բառակուսի ձևով, ունի իբր 275 մետր երկայնութիւն արեւմուտքէ արեւելք և 235 մետր լայնութիւն հիւսիսէն հարաւ. շինուած է Սիմէոն կաթողիկոսէն 1868 թուին. հիմունքը կփածոյ բարերով և վերին մասը աղիւսով. ունի տասն և վեց բոլորշի բուրգեր անկեանց զլուխները և չորս կողմերը սեղ սեղ, սրով ամրացի նմանութիւն ունի: Պարսպին ներսը միջավայրը կայ հաւասարակողմն քառանկիւն մը, շուրջը վանաց զանազան շինութիւնները, և կեդրոնը կաթողիկէ եկեղեցին՝ որուն չորս կողմը ընդարձակ բակ է: Այս քառանկեան և արտաքին պարսպի մէջ կան այլ և այլ կարեւոր շինութիւններ և արձակ վայրեր, ինչպէս կը տեսնուին յատակագծի մէջ: - Պարսպը ունի չորս մեծամեծ և կամարակապ գոններ, մին արեւմտեան հիւսիսային ծայրը որ կը նայի դէպի վաղարշապատ և կը կոչուի Գիւղի Գարպաւ կամ Շուկայի գոռն: Երկրորդը՝ Գռն Գաղարշապատի կը զանուի արեւմտեան հարաւակողմը, որ մեծ բակ մը կը տանի, որուն մէջ աւազան կայ և շուրջը ուխտաւորներու կամ հիւրերու բնակարաններ և ամբարանոցներ. ասոր արեւելակողմն է Գռն Մարի կոչուածը, որ կը հանէ Գաղարշապատի բնդարձակ հրապարակը. նոյն սեղը կը հանէ նաև հարաւային կողմի արեւելեան ծայրէն Գռն կայի բնածը, ուսկից կը բերեն Աթոռոյն կալուածներու արդիւնքը. փոքրիկ մուտք մ'ալ կայ արեւմրաակողմեան հարաւային ծայրը՝ Բարանեաց գոռն կոչուած: Քառանկիւնը մշտնելու համար ալ հինգ գուռներ կան որոնց զլուսաւորն է արեւմտեան կողմինը, կաթո-

ղիկէի մտից գիմաց և կը կոչուի Տրդատայ անուամբ, վասն զի կը համարին թէ այն կողմն եղած է արքունի ապարանքը: Մեծ պարսպի շինութեան յիշատակարանն արձանագրուած է Կալի գրան վրայ, շինարար Սիմէոն կաթողիկոսի անուամբ, համառոտ կերպով, ՌՄԺՀ (1768) թուականաւ: Բուրգերէն ոմանց վրայ կան արձանագրութիւններ: - Էջմիածնի Գրիգորաշէն և Տրդատաշէն տաճարը թէև զանազան ժամանակաց մէջ աւերեցաւ, սակայն աւանդութիւն է, թէ




325. Էջմիածնի կաթողիկէի յատակագիծը:

չափը և ձևը նոյնպէս անփոփոխ մնացած են: Քառակուսի խաչաձև է, կարճ թևերով և միջակ մեծութեամբ, իբր 35 մետր երկայն, 33<sup>1</sup>/<sub>2</sub> մ. լայն և 23<sup>1</sup>/<sub>2</sub> մ. կամ աւելի բարձր, խի զրսի բակով միասին մինչև արեւմտեան գոռն հաշուելով երկայնութիւնն կ'ընէ 42 մետր: Չորս սիւներ խաչաձև խորտիտներով տաճարին մէջտեղէն վեր կը բռնեն գմբէթը: Յայտնի չէ թէ ինչ նիւթով շինուած էր տաճարս Գ գարու մէջ, բայց կը թուի թէ ոչ ամբողջովին քարէ, այլ փայտակերտ, ինչպէս էր նաև երկրորդ ան-



Արևելք



Յ Ա Տ Ա Կ Ա Ջ Ե Ի Է Ջ Մ Ի Ա Ն Ե Ի

1. Կաթնոցիկե եկեղեցի. — 2. Թանգարան. — 3. Շիրիմ Մաքսանալտի. — 4, 5. Դանիել և Ներսես Է կաթնոցիկոսներու շիրիմներ. — 6, 7. Յովհաննէս Ը և Գեորգ Գ կաթնոց. շիրիմ. — 8. Աղբիւր. — 9. Գուռն (Պարպաս) Տրդատայ. — 10. Գու. վեհարանի. — 11. Գու. Սիւննոցոսի. — 12. Ներքնայարկ վեհարանի. — 13. Գանձատուն. — 14. Եպիսկոպոսներու կրկնայարկ բնակարաններ. — 15. Մասայից բնակարաններ. — 16. Միաբաններու խուցեր. — 17. Մոմատան դուռն. — 18. Մամատուն, պարտեզ և բնակարաններ. — 19. Հին վարժարան. Միաբաններու խուցեր. — 20. Զեմարանի եկբ. — 21. Մասայից և անտեսի սենեակներ. — 22. Փուռն. — 23. Տպարան. — 24. Մասն (Շիրախանայ). — 25. Հացոտն և շտեմարան. — 26. Գարպաս Քչուկի. — 27. Տնտեստուն և խոհանոցբ. — 28. Սեղանատուն ամարան. — 29. Սեղան. ձմերան. — 30. Մասննադարան. — 31. Գաղարապատ. — 32. Աւաղան. — 33. Գաղարապատի դուռն. — 34. Լիճ և փոքրիկ աւաղան Ներսիսեան. — 35. Մարի դուռն. — 36. Կալի դուռն. — 37. Աւաղան կենայ. — 38. վեհարանի պարտեզ. — 39. Հին վեհարան (Թանապէ). — 40. Ժողովարան (Սիւննոցոս) և Գիւան. — 41, 42. Բաղնիք և դուռն. — 43. Շուկայի դարպաս. — վեհարան հաստատուած 9, 10, 11, 12. 13 թուոց վրայ:



գամ շինուածն նոյն դարուն վերջերը. վասն զի հաւանօրէն աւերեցաւ կաթողիկէս ուրացոյ Մերուժանէն և Պարսիկներէն, որոնք ի հիմանց քանդեցին Վաղարշապատը, և նորոգուեցաւ Մամիկանեաններէն: Առաջին կամ երկրորդ շինութեան ժամանակէն և հայ տա-



327. Էջմիածնի կաթողիկէի մէջ Ս. Պօղոսի և Թեկղի բարձրաքանդակ:

սից գիւակն առաջ քանդակուած կը թուին երկու յունաստո արձանագրութիւններ և բարձրաքանդակներ՝ ազուցուած հիւսիսարեւելեան որմնոյն բաւական վերը: Առոնցմէ մին՝ կը ներկայացնէ Պօղոս առաքելոյն և թեկղ կուսի պատկերները հանդերձ նոյն սուրբերու անուններով. միւս արձանագրութիւնը, ըստ Պոսէի՝ ննջեցեալներու անուններ և աղօթք կը կրէ. բոլորակի մը մէջ կայ հաւասարաթեւ խաչաձև մը, շուրջը գրուած է յունարէն. «Օգնեա ամենայն աղօթողաց յեկեղեցւոյ»։ վերի երկու անկիւնները կան երկու աղանիներ. խաչին թեւերուն մէջ գրուած է մաղթանք մը Զուիթայի. բոլորակէն դուրս աջ կողմն կը կարդացուի «Տէր ողորմեա ծառայի բում Արքեայ», իսկ ձախ կողմը. «Տէր ողորմեա Ելպիկեայ», վարն ալ կան երեք անուններ Գաւիկ, Տիրեր (Տիրայր) և Գարեգին: Այս արձանագրութիւնները վերջին անգամ ուսումնասիրեց Գ. Յովսէփ Սարցիզովսկի, 1901ին, Էջմիածնի Աւետարանին վրայ գրած միջոց, որուն հայերէն թարգմանութիւնն քաղուածօրէն հրատարակուեցաւ Հանդէս Ամսօրեայի նոյն տարուան ապրիլի և մայիսի պրակնիւրու մէջ, հանդերձ նոր և ճիշդ գծուած պատկերներով: — վազան Մամիկանեանը մարգ-

պանութեան իշխանութեան հասնելով, ինչպէս կ'ըսէ ժամանակակից Ղազար Փարպեցին, «հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց»։ շինուածքի նիւթոյն վրայ թէև խօսք չկայ բայց հաւանական է որ քարաշէն եղած ընի ի միայն տանիքը փայտեայ. վասն զի Սերիոս կ'ըսէ, գրեթէ 100 տարի վերջ կամիտաս կաթողիկոսի համար, թէ Ս. Հոսիոսիմէի եկեղեցւոյն շինութեանէն վերջ, «վերացոյց և զփայտակերտս սրբոյ կաթողիկէին, նորոգեաց և զխախուս որմնոյն, շինեաց զքարայարկսն»։ իսկ Յովհաննէս կաթողիկոս պատմիչը՝ գովութեամբ կ'ըսէ. «Եինէ գնա զեղեցիկարմար և շքնազատես կոխածոյ քարամբք»։ Երկուութեան քարերը հրաբղիային են՝ սեւ և կարմիր և որմերը հաստատուն ու թանձր, այնպէս որ, Մօրիէ Անգլիացին կ'ըսէ, միայն սաստիկ երկրաշարժով կամ ուրաճութեամբ կարելի է




328. Էջմիածնի կաթողիկէի մէջ յունարէն արձանագրութիւն:

զայն կործանել: — Ներսէս Գ Շինողն որ Առապարի Ս. Գրիգորը և Գունայ եկեղեցին շինեց, այս կաթողիկէ եկեղեցւոյս մէջ ալ շինութիւններ բրաւ, բայց յայտնի չէ ինչ մասեր: Անյայտ կը մնան նաև Ե զարու կէսէն մինչև Ժ զար, կաթողիկոսներու Գուին նստած ժամանակ, հանդիպած բուրբ զէպրեր. բայց միայն կը յիշուի թէ



միշտ պատուի մէջ էր վանքս, և զանազան կողմերէ ուխտի կու գային: — Ս. Գրիգոր Լուսաւորչի ժամանակէն հաւանական է որ կաթողիկէի մօտ վանականներու և եկեղեցւոյ սպասաւորներու յատուկ բնակարան կար, և Ասողկայ պատմչի մէկ խօսքէն, Հ. Ալիշան կը կարծէ թէ այդ տեղը կը կոչուէր Սուրբեայ սևապատ, վահան Մամիկոնեանէն առաջ: Վահան՝ եկեղեցին նորոգած միջոց՝ Ղազար Փարպեցի պատմիչը վանահայր զրաւ, ինչպէս յայտնի է պատմութենէն. «կամեցեալ մեծի իմաստութեանն վահանայ Մարզպանին... զնա իւր առաւել մեր-

շինութիւնները: Ղազարէն վերջ մինչև Կիրան, չի յիշուիր վանահայր. իսկ Կիրան, Մովսէս կաթողիկոսի օրով նոյն տեսչութեան մէջ մնաց եօթը տարի, և յետոյ վրաց աշխարհին կաթողիկոս ընտրուեցաւ: Է զարու սկիզբը կաթողիկէի վանաց երէց էր Աբրահամ անուամբ մէկը, որ ի Գուին համանուն կաթողիկոսի ժողովին մէջ զըտնուեցաւ. անկէ վերջ եղած է Յովհան կամ Յովհաննիկ՝ կոմիտաս կաթողիկոսի օրով 618ին, վաղարշապատի եկեղեցիներու նորոգութեան ժամանակ: Ասկէ վերջ Եզր՝ իբրև փակակալ կաթողիկէին, որ վերջը կաթողիկոս եղաւ և իրեն օրով ժամանակ մը նոյն պաշտօնին մէջ կեցաւ Յովհաննէս Մայրափանեցին: Որմէ վերջ չեն յայտնուիր յաջորդներ. թերևս անմիջապէս նոյն տանները Արարացոցմէ աւերեցաւ տեղը, որոնք (637-646) արշաւեցին Հայոց Ոստանի վրայ, և թերևս Ներսէս Շինող՝ ասոնց աւերածները նորոգեց ու կարկանդակեց: Յայտնաւորաց համեմատ, Նունէի Խաչի պատմութեան մէջ կ'ըսուի Սփի սասիկանին համար, թէ աւերեր է «զմեծ կաթողիկէն զվաղարշապատ՝ որ սաի էջմիածին»։ բայց ասոր յիշատակութիւնն ուրիշ պատմիչներ չեն բացարատունեաց Գագիկ Բ վերջին թագաւորն վաղարշապատ այցելած միջոց, տակաւին չէն էր կաթողիկէն, բայց անկէ վերջ անյիշատակ կը մնայ և մինչև այն սասիկանի կը հասնի ամայանալն, որ ՉԳ զարու վերջերը Սիւնեաց եպիսկոպոսը յատուկ ոյր կը գրէ: Բայց վանքս բոլորովին ամայի և անտերունչ մնացած չլինելուն վկայ են նոյն ժամանակները այցելող ուխտաւորներն: Էջմիածնի աթոռոյն նորոգութեան գլխաւոր պատճառ եղած է թոմար Մեծօփեցի պատմիչը, որ շատ երազարանութիւններէ վերջ, մանրամասն կը պատմէ ժողովոյն հանգամանքները և կաթողիկոսի ընտրութիւնն: Կը յայտնէ մի առ մի ժողովին ներկայ եղող բազմաթիւ եպիսկոպոսներ, վարդապետներ, կրօնաւորներ, երէցներ, տանուաւորներ, ևն. այդ եպիսկոպոսներու մէջ կը յիշուի նաև ժամանակին էջմիածնի եպիսկոպոսն Գաբրիէլ: Այս ժողովով վիճակ ելլելով Կիրակոսի, մեծ հանդէսով կը ձեռնադրեն ու կը



329. Էջմիածնի կաթողիկէի հին ձևը:

ձաւոր և սիրելի աննել, շնորհէր նմա զնոյսակայ և զականաւոր տեղին ի Նոր քաղաքի (վաղարշապատ), որում անունն էր Սուրբ Կարողիկէ եկեղեցի, վանօքն, և նորա ընկալեալ զբանն Մարզպանին՝ ինամածէր զտեղին: Պատահեաց նմա կրել տրամութիւն ի վայրապար մարդկանց. զի ի հրոյ քնատեալ փայտակերան եկեղեցոյն», զինքը կը մեղադրէին. այդ պատճառաւ ժամանակ մը Ամիդ գնաց, ուրանդէն զրեց իր անձին ջատագովութեան թուղթ մը և նորէն դարձաւ Համազասպ Մամիկոնեանի բարեխօսութեամբը: Այդ թղթի մէջ Ղազար կը յայտնէ ուսումնատեսաց արեղաներու նախանձը, տեղւոյն վրայ բրած ինամքն ու



նասեցնեն զինքը Հայրապետական գահը: Բայց երկու տարի միայն պաշտօն կը վարէ, վասն զի մի քանի հոգի անվաւեր հրատարակելով ընտրութիւնը, իրեն տեղ գրին Գրիգոր Մակուեցիին: Սա ամոռոյն նորոգութեան միջոց փոյթ բրաւ պապականութեան միաբանութեան և սպասաւորներու անտեսութիւնը. այդ պատճառաւ գնեց Վաղարշապատ աւանը կամ անոր եկամուտները, ինչպէս նաև իր յաջորդները ուրիշ զիւղեր: Այս միջոցները չեն յիշուիր եղած ս և է շինութիւն կամ նորոգութիւն վանաց և եկեղեցւոյն վրայ: Թովմաս Մեծօփեցիին սկսեալ մինչև Առաքել Գալուբեցի 200 տարւոյ ժամանակ, ազգային պատմիչ մը չունենալով, անյայտ կը մնան մեզ տեղւոյս գէպքերը, ինչպէս նաև ուրիշ շատ եղելութիւններ, մինչև ժէ. գարու սկիզբը՝ Շահարասի աշխարհակալութեան միջոց, որ մինչ Հայրապետական ամոռը ծանր պարտքի տակ ընկճուած էր, Այրարատ նահանգին հետ անոր ալ տիրեց: Երբ 1629ին, Մովսէս Գ Սիւնեցիին հասարակաց հաւանութեամբ կաթողիկոս եղաւ, քիչ տարւան մէջ ամոռը պարտքերէն ազատեց և սկսաւ ու բրաւ շատ նորոգութիւններ թէ՛ վանքի և թէ՛ եկեղեցւոյ վրայ. իրեն արժանաւոր հետեւողները և անմիջական յաջորդները Փիշիպոզս Ա և Յակոբ Գ, գրեթէ բոլորովին նոր կառուցին ամբողջ շինուածքը, և պահաններն ալ շինեցին կամ փոխեցին յետագայ կաթողիկոսներն Եղիազար, Նանայետ և աւելի Գագար ու Սիմոն, և գրեթէ հարիւր յիսուն տարի տևեց (1629-1880) Էջմիածնի ամբողջական շինութիւնը. վերջը եղած շինութիւնները մինչև Մակար կաթողիկոսի ժամանակ, յաւելումներ կրնան համարուիլ: Մակար ձեռնարկեց նորոգել կաթողիկէն և վանքի մէկ մասը:


Մովսիսի ընտրութենէն առաջ Դաւիթ և Մելքիսեղեկ կաթողիկոսներու հակառակութեան ժամանակ, 1614ին, Շահարաս խորամանկ խորհրդով և բռնի Էջմիածնէն Սպահան փոխադրած էր Ս. Լուսաւորչի Աջոյն հետ նաև տասն և հինգ քարեր իջման տեղէն և Սեղանէն, երկու քարեղէն մեծ աշտանակներ, և այլն. այս սծով կ'ուզէր

նոր Էջմիածին մը կառուցանել Պարսից մայրաքաղաքին մէջ, որպէս զի գաղթական Հայոց սիրտը սրտայ և զանոնք բնիկ կաթողիկէնն ուժացրնէ. քարերը պահուեցան կամ պուշան Նոր Ջուղայի եկեղեցիները, իսկ հին Էջմիածինը փոխանակ աւերման, սկսաւ վերանորոգուիլ Մովսէսի գալստեամբը: Ականատես պատմիչն Առաքել, հետեւեալ կերպով կը նկարագրէ կաթողիկէի վիճակը. «Ամենեւիմբ ունայնացեալ էր ի ստացուածոց և կողոպտեալ ի զարգոյց. ոչ գիրք, զի ոչ էր անդ ժամասացութիւն կամ ընթերցումն, ոչ զգեստ և ոչ շորջատ, զի ոչ էր ժամակարգութիւն և պատարագ. մինչ զի Գրիստոսի իջման տեղն և սուրբ սեղանն ոչ ունէին զժամկոցս... և մեծամեծ լուսամուտքն զորս ունի՝ ամենն ի բաց կայր առանց վանդակի. ուստի մտեալ ի ներքս թոշանք ընուին զեկեղեցիին ծրարութք, ծղովք և այլօք գոխօք. զոր ամենայն աւուր հարկիւ սրբէաք... իսկ արտաքուստ կուտէ զլուի կաթողիկէին և տանիքն ամենայն և երեսք որմնցն՝ բանդեալք և քարինքն թափեալք, և որմնց յասակաց վէճքն փշրեալք և ծակտեալք. և որ... շորջ զեկեղեցեան շինութիւն եղեալ էր՝ և զարձեալ աւերեալ և ի վերայ միմեանց փլուզեալ էր, այնքան բարձրացեալ էր հողն և մոխիրն, որ յամենայն կողմանց շորջ զեկեղեցեան եօթն եկեալ և ծածկեալ էր զհիմունս և զաստիճանս եկեղեցւոյն որք կան արտաքուստ կողմանէ... Ասացեալ բանքս որք ի մէնջ ցուցանեն զտեղին անբնակ գոլ ի մարդկանէ. և ասեմ զիսկն. ոչ էր ամենեւին անբնակ, այլ գու. համարեաց իրբու զանբնակս. վասն զի կաթողիկոսսունքն անդ յԷջմիածին ոչ բնակէին այլ յԵրևան քաղաքի ի կաթողիկէ եկեղեցւոյն... բայց սեւազլուիք ոմանք սինլքորք և գոհհիկք, որպէս զգեղական հողագործս որք վարձնորդիւք մշակօք բնակէին յԷջմիածին, և զուուրս տարւոյն զբազումս ի գեղորայսն անցուցանէին քան թէ յԷջմիածին»: Այս վիճակին մէջ էր երբ Մովսէս եկաւ և աւերակները մաքրելով կարկատեց տաճարին որմերը և տանիքը. և յետոյ հստազանդ բառակոսի պարբու



պով պատեց. «Եւ ապա ի մէջ պարսպին յարեմանեան կոմն զգարսրատս և զտունս ի պէտս ինքեանց և հիւրոց. և ի հիւսիսային կողմն և յարեւելեան կողմն՝ շինեցին խուցս ի բնակութիւն միարանից. և ի հարաւային

և թրծեալ ազիւսով և կրով և բոսով շինեցին, զեղեցիկ և վայելուչ յորինուածով»։ Մովսէսի աշակերտն և Յովհաննաւորանից առաջնորդ Չաքարիա վարդապետը, մէկ խօսքով կը բովանդակէ անոր շինուածքին գո-



330. Էջմիածնի կաթողիկէին զանգակատունը :

կողմն շինեցին զՍեղանատուն, զՓռնատուն, զՏնտատուն և զՀամբարանոցս ցորենոյ և ալլոց նիւթոց։ Եւ ամենայն շինուածքս այսորիկ՝ միայն պարսպսն ի հողոյ եղև շինեալ, իսկ ալլքն ամենայն լիտեալ քարի

վիտար, ըսելով. «ՉԱթոս սուրբ ի վեր տոեալ՝ հաւասար արար երկնից»։ Մովսէս իր այս բոլոր շինութեանց և նորոգութեանց ծախքերն հայթհայթիւր է ազգին երեսելի և կարող անձանց յօժարակամ նուէրներով։






331. Էջմիածնի զանգակատան կամ Աւագ դուռը:



Պարսից և Օսմանցոց պատերազմի երեսն աւերած կամ երկրաշարժէ փաստած և Մովսէսի պակաս թողած փայտէ շինութիւնները կը նորոգէ յաջորդ ֆիլիպպոս կաթողիկոսը. «բազմանրի վաստակօք զամենայն շինուածսն վերտաին շինեաց». բովանդակ սրբառաշ բարերամբ բաց ի գմբէթէն. սալալաստակեց նաեւ եկեղեցւոյ շրջապատը, և միաբաններու սենեակներու առջև չորս կանդուն լայնութեամբ. նոյնպէս սեղանատան մէջ բարէ շինեց հացկերութի սեղանը և նստարանները: Այս շինարար կաթողիկոսը ուրիշ շատ յիշատակաց արժանի գործեր ևս բրատ. երկու ձիթահանք շինեց պարսպի հարաւային կողմը, Յովհաննու վանքի մէջ եղած դպրատունը հոս փոխադրեց, Սպահանէն Ս. Լուսաւորչի Աջը գործուց. նոյնպէս Չէնկիի առուն բացաւ Սեւանայ

տական զգեստով: Գմբէթն սրածայր է ութթր սիւներու վրայ. ներքուստ կայ շինութեան արձանագրութիւնը և աւարտած տարւոյն թուականը, որ է ՌՃՁ (= 1657): Էջմիածնի զանգակատան մէջ կայ թիւ պէթեան հռչակաւոր զանգակ մը, որուն վրայ կայ թիւ պէթեան արձանագրութիւն մը: — Զանգակատան գմբէթի նման և աւելի պարզ է մեծ կաթողիկէն կամ տանարի գմբէթը, 12 լուսամուտներով և սիւնադարով, շուրջը վանդակապատով, բարձրացած է չորս հաստ սիւներու վրայ, որոնք նորոգուած են Աստուածատուր, Սիմէոն և Գուկաս կաթողիկոսներէն, ինչպէս կը յայտնեն արձանագրութիւնները: Մեծ կաթողիկէն ճիշտ ներքեւ կայ քառասին փոքրիկ կաթողիկէ մը, զոր նախ 1684ին շինեց Եղիազար կաթողիկոսը, հանդերձ պատարապի սեղանով Իջման




332. Էջմիածնի զանգակի թիւ պէթեան արձանագրութիւնը:

ճովէն Հրազդան գետ և Արագած լեռնէն բղիտղ գետակ մը Գասապի հետ միացուց. յետոյ գործով Կ. Պոլիս և Երուսաղէմ գնաց և վերադառնալով 1654 թուին, սկսաւ տանարի արեւմտեան դրան առջեւ քանդակներով զարդարուած զանգակատան շինութիւնը, Անտոն լեւոյի Ապրօեանի ծախքով, և գետ շաւարտած վախճանեցաւ: Ասոր աշակերանս ու յաջորդը Յակոբ կաթողիկոս վերջացուց շէնքը վայելչաձեւ գմբէթով և անուանեց Հրեշտակապետ. ետայրի է և միջնայարիին մէջ կայ խորան և սեղան: Վերէն վար արտաքին կողմը հիմանալի և սքանչելի քանդակներով զարդարուած է. վերի կամարազուլներու երեք կողմերը քանդակուած են երեք պատկերներ, արեւմտեան կողմն Յիսուսի պատկերը, որ իր աջովը կ'օրհնէ մենաստանը, հիւսիսային կողմն՝ Տրդատայ արքայական պատկերը, իսկ հարաւային կողմը, Ս. Գրիգոր լուսաւորիչ՝ հայրապետ

սեղանոյն վրայ՝ որուն վէմը տարած է Շահարաս, և շուրջը բարեխոյ բարձրաւանդակ շինեց՝ որպէս զի սեղանը ամենուն տեսնուի. յետոյ Աստուածատուր կաթողիկոսը վերտաին Իջման սեղանոյ վրայ, վայելչապոյն շինեց կաթողիկէն կճեայ սիւնուն սիւներով. իսկ Արքահամ Բ կաթողիկոսը պղնձեղէն դրուագեալ վանդակներով սեղանը շուրջանակի պատեց, երկբացիկ զոներով արեւմտեան և հարաւային կողմերէն, արեւմտեանին վրայ գրելով ՌՃՁԱ (= 1732) թուականաւ յիշատակարան մը. իսկ միւս դրան վրայ Միքայէլ Կարնեցի պղնձագործը գրած է իր յիշատակարանը: Եղիազար կաթողիկոսը շինեց է տանիքի երեք՝ հարաւային, արեւելեան և հիւսիսային կողմերը զանգակատան նման փոքրիկ գմբէթներ: Իջման սեղանոյ սեղանէն զատ եկեղեցւոյ մէջ կան ուրիշ վեց սեղաններ, որոնց ամենահինն է Աւագ սեղանը, շինուած բեմի վրայ արեւելա-





333. Էջմիածնի թանգարանի մակաար :



Թանկագին սկիհներ, և այլն: Կան բազմաթիւ սկանակուս միթրներ, որոնցմէ մին կը համարուի Լուկիոս Գ քահանայապետին առ Գրիգոր Տղայ զրկածը 1184ին: Այս անգին և պատուական հնութիւններէ շատերը Գէորգ Գ կաթողիկոսի օրով հաւաքուած են. թանգարանի շէնքն ալ նոյն կաթողիկոսը կառուցած է տաճարի կից՝ արեւելակողմը, որուն ճակատը կը ցուցնէ ներկայ պատկերը (Թ. 333): Զոհասներու մէջ աչքի կ'իյնայ նաեւ ասեղնազորութեամբ և խորհրդաւոր նկարներով զարդարուած շուրջառ մը՝ Հինգկատանի մէջ գործուած և բերուած Վրթմանէս եպիսկոպոսի ձեռամբ: Էջմիածնի թանգարանը փակուած է երկաթեայ դռնով, որուն բանալիները երեք են և կը դանուին մին կաթողիկոսի մօտ, մին գանձապետի և մին սիւնահոգական անպամենքու մօտ, առանց այս երեքին բացուիլը անկարելի է: Տաճարի մէջ կան երկու կաթողիկոսական աթոռներ. մին՝ բնիւոյի փայտէ շինուած, շատ գեղեցիկ քանդակներով, և սնի փոքրիկ գմբէթ՝ հինգ փոքրիկ կաթողիկէներով, աւանդաբար կը պատմուի թէ Հսոյմէն բնծայ զրկուած է. միւս աթոռն ալ բնիւոյի փայտէ է բայց աւելի բնորձակ. զարդարուած է մանր ստաւփներով և կրիայի սկիւրի կտորներով. ասոր բոլորաձև գմբէթը հաստատուած է չորս բարակ սիւններու վրայ և սնի չորս փոքրիկ կաթողիկէներ. 1721ին այս աթոռը գրկած են Զմիսանիոյ Հայերը, ունի յատուկ յիշատակարան: Տաճարի բոլոր ներքին որմերը և առաստաղը ներկուած են Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, 1686ին, Յովնաթան ճարտարին ձեռքով. նկարներն են սրբոց պատկերներ, զանազան արարական զարդեր, ծաղիկներ, թռչուններ, ևն.: Կան նաև կտաւի վրայ նկարուած բաւական թուով սրբոց պատկերներ, շատերը Սահիանոս Լեհացիէն և նազաձ Յովնաթանէն նկարուած. հաս մ'ալ զրկած է Քէր Փորթըր Անգլիացի ուղեւորը, որ հիւրասիրուած էր Եփրեմ կաթողիկոսէն, և կը ներկայացնէ Յիսուս մանուկները օրհնելով: Տաճարը ունի երեք դուռ, զիստոր դուռը արեւմտեան կողմը գանդակատան ստորին յարկի մէջ է. միւս երկուքը՝ որ առաջինէն

աւելի փոքր են, հիւսիսային և հարաւային պատերու մէջ են: Կայ նաև ուրիշ դրան մը աեղը Ս. Լուսաւորչի սեղանին մօտ, որուն համար աւանդաբար կ'ըսուի թէ միայն կաթողիկոսներու, թաղաւորներու և անոնց բնաանեաց համար եղած է: Եկեղեցւոյն արտաքին կողմերը և երեսները պարզ և անպաճոյճ են. հիմքերու մօտ շուրջանակի կը պատեն երեք սանդղաձև առախճաններ,



334. Էջմիածնի կաթողիկոսական գոմ:

որոնցմէ վեր որմերու ստորին մասը չորս կարգ քարով նորոգած է Ղուկաս կաթողիկոսը, ինչպէս կը յայտնէ ՌՄԷԳ (= 1784) թուականաւ արձանագրութիւնը: Որմերու ստորին կողմերը շատ անգամ նորոգուած են, այդ պատճառաւ աւելի հին են որմերու վերին կողմերը: Տաճարի շուրջ եղած բնորձակ բակերը նախ սալարկեցան Յակոբ կաթողիկոսի ժամանակ 1658ին, արեւմտեան Յովհաննապետից տառջնորդ Զաքարիա Վաղարշապատեցւոյն, որ շատ նախանձաւոր էր Էջմիածնի շինութեան. սա 1659 թուին վախճանելով թաղուեցաւ գանդակաւ



տան առջև արեւմտեան կողմը, իրմէ պատ-  
 րաստած տապանի մը մէջ: Հարիւր բուն  
 և եօթն տարի վերջ Ղուկաս կաթողիկոսը  
 նորոգել տուաւ այս սալայատակը և իր  
 յիշատակարանն զրեց աւագ դրան հիւսի-  
 սակողմը: Աւագ դրան հարաւակողմն ալ կը

մօտ է նաեւ Պարսկաստանի Անգլիացի զեռ-  
 պան Մաքսանալտի շիրիմը: Միարաններու  
 գերեզմանատունն է վանքի հարաւ արեւ-  
 կելեան կողքը, Ղազարապատի մօտ: Վերո-  
 յիշեալ շիրիմներն ունին տապանագիրներ:  
 Տեղւոյս կաթողիկէ եկեղեցիէն վերջ նշա-



335 • Գէորգ Դ կաթողիկոս:


տեանուի Տփղիսեցի կրպակաւոր և բանուոր  
 նուիրատուաց արձանագրութիւն մը՝ 1682  
 թուականու: Գլխաւոր դրան առջևը և եր-  
 կու կողմերը թաղուած են առանձին տա-  
 պաններու մէջ կաթողիկոսներէն ամանք,  
 Ինչպէս, Ազնբասնդր Ա և Ազնբասնդր Բ,  
 Գանիէլ, Յովհաննէս Բ, Ներսէս Ե, որանց

նաւոր վայրն է կաթողիկոսարանը, որուն  
 առաջինները Պատրիարքարան անունը կու  
 տային, իսկ այժմ՝ վեհապետ կ'ըստի, և կը  
 գտնուի վանքի ներքին բառակուսայն ա-  
 րեւմտեան կողմը և Տրդատայ կամարակապ  
 դրան աջ կողմը զէպի հարաւ: Էջմիածնի  
 առաջին նորոգող Մովսէս կաթողիկոսը նախ



շինած էր նոյն կողմը՝ բայց զէպի հիւսիս, յետոյ իր յաջորդը Փիլիպպոս աւելի վայելուչ կերպով շինեց ներքնայարկին վրայ, իսկ Ղազար կաթողիկոս վերստին շինեց այժմեան զիբքով, ընդարձակ և շքեղ, տասր սենեակներով. հարաւային ծայրը կամաւրայարկ մեծ քառակուսի դահլիճ մը շինելով, որուն հիւսիսակողմը պատշգամ կայ, արեւելակողմն՝ սեղանատան մտից դուռը և արեւմտակողմը Ղազարապատ հանող դուռ մը, որուն վրայ կը տեսնուի Ղազար կաթողիկոսի յիշատակարանը: Գահլճին արեւ-

և այլն. վերին յարկը՝ սարկաւազներու, կղերիկոսներու և այլոց: Հիւսիսակողման արեւելեան ծայրը կը գտնուին ծառաներու և սպասաւորներու բնակարանները: Միաբաններու ճիշդ թիւն չէ կարելի որոշել, վասն զի մերթ կը յաւելու և մերթ կը նստազի, սակայն միշտ հարիւրէ աւելի են. 1685ին Եղիազար կաթողիկոսի օրով, յիշատակագիր մը կ'ըսէ անոր համար. «Տէր Աստուած տացէ սմա յերկար կեանս. զոր (ղէջմիածին) վայելչազարգ վայելչացոյց, և զեղեցիկազարգ պայծառացոյց զսուրբ աթոռս, միարանօք



336. Էջմիածնի Գէորգեամ ճեմարանը:

կըակողմը ուրիշ դուռ մ'ալ բացաւ, որ անկէ ելնէ կաթողիկոսը հանդիսի օրերը սեղանատուն մտնելու համար. այս դրան վրայ ևս արձանագրած է նոյն կաթողիկոսը 1741 թուին: Սիմէոն կաթողիկոսը աւելցուց նաև կաթողիկոսի ձմերային բնակարանը՝ մեծ ու փոքր սենեակներով: Արեւմտեան կողմի հիւսիսային մասը, ամբողջ հիւսիսակողմը և արեւելակողման մէկ մասը, միարաններու երկայարկ բնակարանները կը գտնուին. ստորին յարկը՝ ընդհանրապէս աւագ աստիճանաւորներու, արքեպիսկոպոսներու, եպիսկոպոսներու, վարդապետներու,

մինչև աւելի քան բազմարիւր յետուն այր, մեծ և փոքր, սեւազրուիք և եկեղեցոյ մանկունք» : Վանքի քառակուսոյն արեւելեան կողմը մեծ մասամբ սեփհական է ուսումնարանի. վարժարանը Յովհաննա վանքէն յէջմիածին փոխադրուելով, բաւական բարգաւաճեցաւ ժէջարու վերջը և ժԻԷ սկիզբը. հսն սաս հայերէն զարուսթիւն նաև վարդան Յովնանեան՝ որ յետոյ Լեհահայոց եպիսկոպոս եղաւ : Սիմէոն կաթողիկոսը երկու վարժարան շինեց ամ-

բան ու ձմրան՝ հիւսիսային կողմը, որ ուսուցիչ զրուեցաւ Պետրոս Բերթումեանց կամ Ազամալեան՝ անուանի գիտնական եպիսկոպոսը: Այս վարժարանն յետոյ տեղւոյն խոնարութեան պատճառաւ ձգուեցաւ և անցեալ դարու սկիզբը փոխադրուեցաւ արեւմտակողմը, Տրպատայ դրան վերնայարկը. տարիներ վերջ (1813) Եփրեմ կաթողիկոսի ժամանակ նոր վարժարան շինուեցաւ վանքի արեւելակողմը: Ժամանակի յառաջադիմութիւնն և ժամանց ու գիտութեանց բարգաւաճանքը կը ստահանէին բարձրագոյն ուսումնարան մը, այդ



նպատակի համար արդիւնաշատ Գէորդ Գ. կաթողիկոսը, անձնական և ազգայիններէ նուիրուած մեծ գումարով հիմնեց իր անուամբ կոչուող հոյակապ Գեորգեան ձեւարանը՝ արեւելեան կողմը, մեծահանդէս նաւահատիք կատարելով 1874 տարույս սեպտեմբերի մէջ, բայց գրեթէ ամիս մը վերջը (հոկտ. 16ին) զիպուածով կրակ իյնալով տառը ժամ հրդեհելով շէնքին կէսը այրեց. սակայն շուտով և արիւրաբար վերստին շինեց, կարգեց գիտնական սուսցիւններ զանազան ուսմանց և լեզուներու, յատուկ կանոններով և 80ի շտի աշակերտներով, յետոյ շինեց նաև աշակերտաց ննջարան և հիւանդանոց: Ճեմարանի հիւսիսային կողմը վերին ճակատի վրայ կայ շինութեան յիշատակարան: — Արեւելակողման հարաւային ծայրը՝ Մոսկէ կաթողիկոսի օրէն շինուած էր հացի փուռ, զոր փակտունը կը կոչեն և նորոգուած է Արքահամ Բէ 1731ին, փոան հարաւակողմը Սիմէն կաթողիկոս շինել տուաւ համբարանոց, որ և այժմ կը կոչուի Օշակմանայ ամբար, վասն զի այն զիւզին բերքերը հոս կը պահէին: Ղուկաս կաթողիկոսն ալ ուրիշ արմատեաց կրկնայարկ ամբարանոցներ շինել տուաւ, հարաւակողման արեւելեան ծայրը, Քշուկի կոչուած գրան մօտ, որուն կամարին վրայ արձանապրուած է շինութեան յիշատակարանը՝ ՌՄԼԳ (— 1785) թուականաւ: Ասոնց կից հարաւակողման թեւին արեւելեան մասին մէջ էր մեծ խոնանոցը, վերաշինուած Ղուկաս կաթողիկոսէն, վասն զի զայն կանխաւ 1718ին շինած էր Աստուածատուր կաթողիկոսը՝ Տեառատուն կոչելով, ինչպէս կը ցուցնէ արտաքուստ հիւսիսային որմի վրայի արձանագրութիւնը: Էջմիածնի մէջ առաջին անգամ սպարան հաստատած է Սիմէն կաթողիկոսը 1771 թուին, կար նաև թրդթատուն՝ 1776ին հաստատուած, նախ կը գտնուէր կաթողիկոսի ձմեռնային բնակութեան մօտ, յետոյ փոխադրուեցաւ վերոյիշեալ խոնանոցի տեղը և ի վերջոյ, Մակար կաթողիկոսի օրով, կառուցուեցաւ վանքի արեւելեան կողմը գտնուող մեծ հրապարակի հարաւային կողմը, կանոնաւոր, ընդարձակ, ազատ և սպարան անուանելու արժանի

շինութիւն մի է, իր մէջ կը սպարունակէ առանձին բաժանմունքներ, ձուլարան, մթերանոց, գրաշարներու սրահ, սուպերատուն և բերք ձեռաց և երկու արագատիպ մամուլներով: Մ. Սանասարեան և Յ. Ս. Սնանեանց և թերևս ուրիշներ ալ, սպարանիս ճոխութեան և հարստութեան զլխաւոր պատճառներն եղած են իրենց նպատներով: 1869էն ըսկրտեալ հոս կը ապուի Արարատ ամսագիրը, սուգուած են ու կը ապուուին նաև ուրիշ գրքեր, որոնց մէջ յիշելու արժանի է մեծագիր ձաշոցն: Վանացո հարաւային թեւին ամբողջ միջին և արեւմտեան մասը կը գրաւեն ամարան և ձմերան երկայն սեղանատունները՝ իրարու կից, նշանաւոր ընդարձակութեամբ և քարէ ամուր շինուածքով, մինչ երկու հարիւր հոգի կրնան ընդունիլ: Սեղանատունն ի հոնց կառուցուած և երկուքի բաժնուած էր, ամառնայինը Սիմէն կաթողիկոսը վերստին շինել տուաւ կոփածոյ քարերով, բայց Ղուկաս կաթողիկոսը նոր շինութեամբ աւելի ընդարձակեց, սեղանները ու նոտարանները ամբողջ միակտուր քարերով շինելով և արեւմտեան ծայրը գրաւակաթողիկոսի գահը՝ չորս սիւններով կաթողիկէի մը ներքեւ, որ յետոյ փոխադրուեցաւ արեւելեան ծայրը, միայն հանդիսի օրեր հոն կը բազմի կաթողիկոսը միարաններու հետ: Կրկին գտնելով սակէ կը մշտցուի ձմրան սեղանատունը, զոր ըստ արձանագրին 1713ին նորոգած է Աղեքսանդր կաթողիկոսը: Նոր խոնանոցն է ամրան սեղանատան հարաւակողմը՝ գրեթէ հարաւակողմեան թեւին միջավայրը, անոր մօտ են մասանն, գինեատուն և սանատուն, որոնց ամենուն վրայ ընդարձակ ամբարանոցը, շինուած Ղուկաս կաթողիկոսի օրով, 1788ին, Ջուղայիցի Մարգար Խալաղեանցի ծախքով, ինչպէս կը տեսնուի արձանագրութիւնէն: Երկուսկոսուներու սեղանատունը առանձին է արեւմտեան և հիւսիսային թեւերու անկիւնը, հին շուկայի մօտ: — Հարաւային կողմը ամառնային սեղանատան և Ղազարապատի գրան վրայ, կաթողիկոսարանի մօտ շինուած է Էջմիածնի հարուստ Մասննապարանը կամ Գրատունը, ուր առանձին խնամքով պատրաստուած պահարաններու մէջ պատուարած



են Հին ու նոր ձեռագիրք և սպեալ գրքեր, թէ՛ մնացողաթի և թէ թղթի վրայ, կան գեղեցիկ նկարներով զարդարուած ձեռագիրքներ, աչքի կ'իջնայ ի միջի այլոց փղոսկրեայ կազմով ձեռագիր Աւետարան մը՝ Պարսկաստանէն բերուած. հրաշակերտ է ստոր կողքի վրայի բարձրաբանօրակ նկարն: Մասե նազարանի մէջ կը գտնուին կաթողիկոսներու հրովարտակները զարդարուած կայսերական կնքով: Յակոր վարժապետ Կարինեանի 1863ին ի Տիգրիս հրատարակած ցուցակի մէջ նշանակուած են 2340 ձեռագիր մատենանք, որոնց վրայ յետոյ մինչեւ ցարդ աւելցեր են ուրիշ շատեր: Բոլոր Եւրոպացի բանասէր ուղեւորները մեծ փափաքով խնդրած են տեսնել ու բննել տեղւոյս գրքերը, բայց բիշօր կրցած են տեսնել: 1837ին գրատունը բնդարձակած միջոց՝ գրքերը նիւթի կարգաւ գաստարեցին: 1879 թուին Գեորգ կաթողիկոսը գրատան առջև աանձին սենեակ մը պատրաստել տուաւ, իրբև Ընթերցարան:

Վանացս ներքին բառակուսիէն գուրո և դամ գլխաւոր շէնքերէն մին է Սինհոզոսի կամ Սինոզի տատանը և զիտանատունը՝ արեւմտեան հարաւային կողմը, ուր առաջ Հիւրանոց էր Փոքր Ղազարապատ անուամը: Սինոզը հաստատուած է Ռուսաց կայսեր հրամանաւ 1836 թուին, և գործել սկսաւ 1837ին Կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի օրով. սա իրբև վերահսկող և սահմանիչ է Էջմիածին Աթոռոյն եկեղեցական գործոց տեսչութեան, որուն նախագահն է կաթողիկոսը և անդամները՝ երկու արքեպիսկոպոս, երկու եպիսկոպոս, չորս վարդապետ, հսգարարձու և բարտուգար հանգերձ գրագիրներով, և այլն: — Պարսպի արեւմտեան հարաւային անկիւնը կը գտնուի Քաղնիքը, որուն անուամը կը կոչուի նաև մերձակայ գուր: Արեւմտեան կողմի պարսպէն ներս մեծ մասամը պարաէզ է և ծառաստան և մեծ աւազան մը կայ Վեհարանի գլխաց. ծառատունկներու մեծ մասը և աւազանը՝ Ներսէս Ե՛ն արդիւնք են, որ գրեթէ 30000 ծառ անկեց և կ'ուզէր զեռ հազարներ տնկել Էջմիածնի մէջ: Էջմիածնի նորոգութեան սկիզբէն ի վեր՝ ջրի համար կաթողիկոսները

շատ հող տարած են, և իրենց մեծ և պիտանի վաստակներէն մին կարելի է համարել ջրի գանազան շտեմարանները և ճանապարհները, զորս շինեցին Էջմիածնի մէջ և սահմանները, շատ աշխատութեամբ և ծախքով: Նախ Փիլիպպոս կաթողիկոսը, ինչպէս առաջ յիշեցինք, Արագածայ կիւղէլ տերեւուն վտակը զարձուց զէպի Քասազ, և արքունի հրամանով անոր կէսը սեփհականեց Վաղարշապատի և Էջմիածնի, որուն համար ուրիշ զեղեր յետոյ շատ վիճեցին բայց չկրցան զբաւել: Նոյն կաթողիկոսը վանաց պանայարկի խնամութիւնը ցամբեցընելու համար, ստորերկրեայ ճանապարհ շինել տուաւ: Այս տեսակ ջրի ճանապարհներուն Քանքան կ'ըսեն: Սիմէոն կաթողիկոսը 1768 թուին ուրիշ քանքան մ'ալ փորել տուաւ, յատակի ջուրերը հաւաքելու համար և միացուց հին քանքանի հետ: Գարձեալ Ջուղայեցի Յակոր կաթողիկոսը ջուր բերել տուաւ Քասազ գետէն Վաղարշապատի վարէն և երկրի տակէն անցընելով վանքի հիւսիսային կողմէն հանեց կաթողիկոսարանի պարաէզը և անկէց բարակիր ազուգաներով մինչև Ղազարապատ: Նոյն Յակոր կաթողիկոսը շինած էր նաև ուրիշ ջրի ճանապարհներ և անդատանները ստղելու համար լճակներ: Վերջին կաթողիկոսներէն ումանք ես, ինչպէս նաև Գեորգ Գ, նորագումիւններ ըրին ազուգաներու և քանքանի վրայ: — Էջմիածնի հիւրանոցը՝ որ Ղազարապատ անուամը ծանօթ է, կը գրաւէ գրեթէ հարաւակողման բոլոր շէնքը, շինուած է Ղազար կաթողիկոսէն 1750 թուին, ինչպէս արձանագրուած է հարաւային մեծ գրան վրայ. կրկնայարկ և եռայարկ է և ունի երեսունէ աւելի սենեակներ: Ղազարապատի արեւմտեան մասի վերնայարկի մէջ Պօղոս և Պետրոս Էջմուսնեանք Էջիպատսի փոխարքայի պաշտօնեանները, և Ստեփան Սահակեան՝ անոնց գործակիցը, 1839 թուին երբ սենեակներ նորոգեցին իրենց ծախքով, իրաքանչիւրի արեւելեան կողմը գրեթով մէկ մէկ յիշատակարան: Հիւրանոցը նորոգուած է վերջին անգամ 1879 թուին: Ղազարապատի արեւմտեան մասի մէջ կայ քառակուսի գեղեցիկ պարաէզ և մէջը աւազան. իսկ



**ԱՇԽԱՏԱԿՈՒՄԻ ԷԶՄԻԱՆՆԻ ԳԱՒԱՌԻ**

**Հ Ա Յ Ա Բ Ն Ա Կ Գ Ի Ի Ղ Ե Ր Ո Ի**

ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ				ԱՆՈՒԱՆՔ ՏԵՂԵԱՑ					
Ա. ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ Վ Ի Ճ Ա Կ				Գ. ԱՇՏԱՐԱԿԻ Վ Ի Ճ Ա Կ					
		Հ Ա Յ Ք				Հ Ա Յ Ք			
		ՏՈՒՑ	ՀՈՂԻ	ՏՈՒՑ	ՏՈՒՑ	ՀՈՂԻ	ՏՈՒՑ		
1	Ահաբան	4	33	29	1	Աշտարակ	410	3210	—
2	Արմուտյու (Տանձուտ)	50	372	24	2	Արդեկ	56	1003	—
3	Գուգուհիտան կամ Վուգուհիտան	89	729	—	3	Բերական	106	458	39
4	Գուրուգուլի կամ Վուրուգուլի	111	975	—	4	Գարաձեօրեն	52	424	—
5	Թալին շին	164	1173	—	5	Գարդա-Վանք	24	162	—
6	Թափա-ախյի	61	527	—	6	Գլխիմար	159	1282	—
7	Կեչերի	257	2242	—	7	Գոթա-Խարապա	26	293	—
8	Կեզու	83	697	—	8	Կղիվարդ	202	1350	—
9	Ղըմբղյու	77	616	—	9	Թալիշ	60	482	—
10	Ճափարապատ	139	604	—	10	Խնկի	18	139	—
11	Մարաբը	43	320	—	11	Կարբի	131	1008	—
12	Մաստարա	122	1545	—	12	Կոշ, Կուշ	89	566	36
13	Մուլա պոյեղի	170	1537	—	13	Հանդ-գարա	37	280	—
14	Շահրիար Մեծ	198	1573	—	14	Մուղնի, Մուղնի	38	202	—
15	Շահրիար Փոքր	26	190	—	15	Յովհաննիսյանք	70	507	—
16	Ռոզուն-օպա	105	788	—	16	Տեղեր	44	402	—
17	Սարաբարապատ	234	1688	—	17	Փարպի	91	599	21
18	Տասալու	77	615	—	18	Օշական	274	1916	—
19	Քեպուկարի	62	486	—	ԱՄԵՐԱՅ Գ ՎԻՃԱԿԻ ԱԷՂ		1907	14223	96
ԱՄԵՐԱՅ Ա ՎԻՃԱԿԻ ԱԷՂ		2072	16710	53	<b>Դ. ՊԱՇՏԱՊԱՐԱՆԻ Վ Ի Ճ Ա Կ</b>				
1	Ազն-գայե	44	277	1	1	Ալեքուշակ	163	1412	—
2	Ալիբեկու	92	538	—	2	Աստուածընկալ	27	257	—
3	Աղուանաուսն	104	635	—	3	Ափնաղեղ	111	866	—
4	Այլանյու-Խասախյու	83	537	—	4	Գարանյըղ	45	469	—
5	Այնալը - Այտուբաճման (Վերին)	37	224	—	5	Գարապուլաղ	84	636	—
6	Արտաշար	50	330	—	6	Գարապիլիսե	84	818	—
7	Գոզա	25	171	51	7	Գելալի	57	574	—
8	Չեյլա Հայոց	165	1062	—	8	Գելիսե	117	889	—
9	Էփեկեր	78	648	—	9	Թամեքիլի	96	877	—
10	Խախուն-արի Սարին	182	1273	—	10	Թաղեախյու	49	387	—
11	Խախուն-արի Վերին	71	414	—	11	Խանչալան	44	345	—
12	Խրզնուսոց	94	623	—	12	Խմբիլի	46	535	—
13	Կրամիա կամ րամբայ	55	337	19	13	Հանի Պաղըր	27	297	—
14	Հանիլեր	24	191	19	14	Ղազանիար	144	1216	—
15	Հայիմաղ	133	879	—	15	Ղալախիսե	46	439	—
16	Մարգարա	95	764	—	16	Ղուշեի	29	287	—
17	Մուգաննուց	67	439	—	17	Մուլքի	49	495	—
18	Մուլա Տուրան	25	146	22	18	Մուլա-գասրի	82	776	—
19	Չուլուխի	50	346	—	19	Նորաշեն	13	142	—
20	Սամաղար	144	961	—	20	Շիրազալալ	102	806	—
21	Վաղարշապատ	680	3422	—	21	Չամբրու	112	1022	—
22	Քեօրփալու	161	1070	—	22	Պաղարձըղ	53	491	—
23	Ֆուանկանոց	81	505	—	23	Պաշ-Աղարան	152	1353	—
ԱՄԵՐԱՅ Բ ՎԻՃԱԿԻ ԱԷՂ		2540	15792	112	24	Պիսի	71	692	—
					25	Սաղմոսախանք	10	97	14
					26	Սամաեղիլի	46	426	—
					27	Սաշու	87	616	—
					28	Քոմուր	18	122	11
					ԱՄԵՐԱՅ Գ ՎԻՃԱԿԻ ԱԷՂ		1964	17342	25
					<b>Համագումար էջմիածնի գուտարի</b>				
							8483	64067	286



արեւելեան մասն է ընդարձակ պարտէզ, որուն հիւսիսակողմը՝ արեւելեան պարսպին կից կան ակունքեր, զոմեր և պարտէզներ։ Էջմիածնի կաթողիկոսի հանրածառաւ միապետական իշխանութիւնը, բնաշխարհի և ուրիշ կողմեր զաղթող Հայոց վրայ կը տարածուի. եպիսկոպոսներու թեմերու բազմութիւնը, կաթողիկոսի ընթերակայ արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, այլ և այլ պաշտօնեաները, վանքի միարանութիւնը, հիւրեր, պանդուխտներ, բազմաթիւ մշակներ, սպասաւորներ, և այլն, այս ամէնուն համար հարկաւոր են հարուստ կալուածներ և եկամուտներ։ Ազգիս իշխանութեան օրով, կամ մինչեւ այն ժամանակ, երբ կը պահուէին նախնեաց իրաւունքները, մեծամեծ և բազմաթիւ կալուածներ ունէր կաթողիկոսարանը, որոնց համար ժԲ դարու պատմիչ մը կ'ըսէ թէ կը հաւատարէին արքունեաց կալուածներու, վասն զի ունէր հինգ հարիւր մեծամեծ և շահաւէտ գիւղեր։ Բազմազմի անցքերէ և փոփոխութիւններէ վերջ, Աթոռոյն սեփհական կալուած մնացին միայն հեռեւեալ հինգ գիւղերը՝ երկու կամ երեք դարերէ ի վեր, Վաղարշապատ, Օշական, Մաղիս, Եղիվարդ և Մաստարա. որոնց վրայ երկարօրէն կը խօսի Սիմէն կաթողիկոս Ջաւրա գրքին մէջ ինչպէս նաև Շահխաթունեան։ Ասոնցմէ զաս՝ մերձաւոր գիւղերու մէջ և հետսները ունի ոչ սակաւ կալուածներ՝ այգիներ, դաշտեր, ձիթահանք, կերպակներ (Ալեքսանդրապոլ, Տիգրիս, և այլն), և ժողովրդեան առատ նուիրատուութիւններ աւուրքեր՝ զորս կը հաւաքեն Էջմիածնի նուիրակները որոշեալ ժամանակաց մէջ, բոլոր հայաբնակ վայրերէ։ — Պատմական և մեծ վանքիս և Էջմիածնի աթոռոյն վրայ ձօնագոյն անգեկոթիւններու ցանկացողներ, կրնան գտնել Սիմէն կաթողիկոսի Ջաւրա գրքի, Շահխաթունեան եպիսկոպոսի Ստորադրոյիս կարողիկէ Էջմիածնի անուն գրքի և այլ ոչ սակաւ ցարդ հրատարակուած գրքերու, լրագիրներու և հանդէսներու մէջ։ Յանկալի է որ Էջմիածնի միարաններէն մին հաւաքէր և ձօն կերպով հրատարակէր անգուսնի զանազան քաղաքական և եկեղեցական անցքերը՝ քաղելով գրքերու յիշատակարան-

ներէ և գիւանական գրութիւններէ, որոնց հետ նաև Պարսից թագաւորներու հրովարտակաց պատճէնները, աթոռոյն նորոգութեանէն մինչև Ռուսաց արքայապետութիւնը։ Կարևոր է նաև կաթողիկոսներու ճիշդ շարքը գտնել Էջմիածնի աթոռոյն հաստատութեանէն մինչև ցայժմ։ Շահխաթունեանը իր ստորագրութեան մէջ և ուրիշներ իրմէ վերջ կիրակոս Վիրապեցիէն մինչև այժմեան Տ. Մկրտիչ Ա. իրարմէ տարրեր թիւեր կը գտնեն, վասն զի ոմանք կը հաշուեն նաև աթոռակից կամ փոխանորդ կաթողիկոսները և ոմանք զանց կ'ընեն։ — Երկրի խառնակ վարչութեան և Էջմիածնի վաճառականներու ճանապարհէ զօրս գտնուելուն պատճառաւ ժԷ և ժՁ դարերու մէջ Եւրոպացի ուղեւորներու աչքէ վրիպած կը կարծուի վանքս, և նախ կը համարուի Էջմիածնի առաջին հռչակուելի Ստեփանոս կաթողիկոսի յարեմուտս ըրած ուղեւորութեամբ և ապա Արգարու և իր Սուլթանշահ որդւոյն՝ իրեն Հայոց ազգապետ, երկար ժամանակ Հոսով բնակելով։ ԺԷ դարու սկիզբը Շահարասի աշխարհակալութեամբ Այրարատայ քաղաքական կամ վարչական մեծ յեղափոխութիւններով, զիւրինցան Եւրոպացի գեապաններու, վաճառականներու և քարոզիչներու երթեկեկութիւնը։ Հին ուղեւորներէն յիշենք Թեքլիմանտեր, Թափէնիէ, Շարտէն և արշակարանն Թուրքոս, վերջին ժամանակաց մէջ Էջմիածին ունեցած է բազմաթիւ ազգային և օտար այցելուներ, որոնք զանազան կերպով նկարագրած են դայն, վերջին ու նոր այցելուներու մէջ նշանաւոր է Պ. Լինշ՝ որ բաւական մանրամասն կը նկարագրէ։ — Ներսէս Է կաթողիկոսը 1847 թիւէն սկսեալ Էջմիածնի վանքէն զօրս արեւելեան հարաւակողմը անկիւ տուաւ բերաւոր կազմակերպիչներ և ուսնիւններ՝ 250000 ծառէ աւելի, որոնց մէջ կային նաև 40000 թիթենիներ՝ շերամի համար. այս կաթողիկոսը փորել տուաւ նաև մեծ աւազան կամ ձկնաբոյժ լճակ մը՝ 160 մետր երկայնութեամբ և 60մ. լայնութեամբ, եզերքները քարէ, ջուրը բերելով Շահ-արիս առուէն. կ'ըսեն, թէ կ'ուզէր անկիւ միլիոն մը ծառ։ — Էջմիածնի մօտ՝ արեւելեան կողմը գտնուող



Երևանը՝ Այրարատեան աշխարհի ամուր քաղաքապետը լինելով, շատ անգամներ իրեն կը ձգէր աշխարհակալներ և աշխարհաւերներ, որուն ազեակը և աւերմանց շատ անգամ վիճակակից եղած է նաեւ վանքս։ Էջմիածնի մօտ սաէպ պատերազմներ տեղի ունեցած են Թուրքաց գէմ Պարսիկներէն և Ռուսներէն։ Այրարատ կաթողիկոսը կը պատմէ Թահմազ Դուլի խանի Էջմիածին գալն, 1735 տարույ յունիսի մէջ. սա նոյն տարին Օսմանցիներէն աննելով Երևան քաղաքը, եօթանասուն տարի երկիրը խաղաղացաւ մինչև անցեալ դարու սկիզբը (1804), երբ Ռուսներու հետ պատերազմ բացուելով Պարսիկները Ապղաս-Միրզայ արքայազնայն առաջնորդութեամբ Էջմիածնի շուրջը բանակ դրին հարաւային, արևելեան և արևմտեան կողմէն։ Ռուսաց Յիցիանով զօրափարը բուն բանակը հաստատեց հիւսիսային կողմը, Որ յանկից կոնց կոչուած բլրակի վրայ. յարձակելով ցրուեց Պարսից բանակը, և Էջմիածնի մէջ թողլով հիւանդները, վերաւորները և կարասին, փախտականներու ետեւէն գնաց մինչև Քանաքեռ։ Բայց երբ բանակին մէջ հիւանդութիւն տարածուելով ստիպուեցաւ Երևանայ պաշարումը վերցընել, դարձաւ եկաւ Էջմիածին, անկէ վերայ սպասներէն մաս մը հանգերձ մաս մը միաբաններով, որպէս զի Պարսից զբէտիւրը բուժեան չ'ենթարկուին, տարաւ Վրաստան. ուսկից յետոյ մաս մը դարձաւ։ Նշանաւոր գէպրեր պատահեցան նաեւ Ռուսներու և Պարսից երկրորդ պատերազմի միջոց 1827 թուին, Էջմիածնի սահմանները, որուն պաշտպանութեան համար ուս գունդ մը եկաւ, որոնք գարիլին և զարնուեցան Պարսիկներէն՝ առաջնորդութեամբ Քրայնորի գնդապետին. յետոյ 1833 թուին, Եփրեմ կաթողիկոսը, այս պատերազմի մէջ ընկնողներու վրայ մահարձան և յիշատակի կոթող մը կանգնեց։ 1827-28 տարիներու պատերազմէն վերջ, Այրարատեան աշխարհի հետ Էջմիածինն ալ ուս պետութեան իշխանութեան տակ անցաւ և ազատեցաւ ալլազգիներու տուած նեղութիւններէն։ — Էջմիածին՝ Երևանու նահանգի եօթն վիճակներէն վերջինն է, որուն հայաբնակ գիւղերու ցանկն

գրած ենք առանձին։ — Այրարատ, 209 234։ Հնուրիւնք վաւերից, 9։ Եւ այլն։

ԷՋՄԻԱՅԻՆ. — Աննշան գիւղ վան-Տոսոյ (Վասպուրական) գաւառի Թիմարայ մասին մէջ։ — Այս անուամբ փոքրիկ ապաստան լեռ մ'ալ կայ վանայ հիւսիսակողմը, Սուրբ Սահակայ լեռնէն իրր կէս ժամ հեռու. ուր կը յիշէ Խնճիճեան Էջմիածին անուամբ փոքրիկ վանք մը, որ այժմ անբնակ է։ — Էջմիածին անուն վանք մը եւս կը յիշուի Երզնկայի մէջ, որ այժմ թափ ամայի։

ԷՍԷՆ ՏԵՎԷ. — Չորակ կիլիկիոյ, Զէյթունէ 7 ժամ հեռու, որուն անուամբ եւս կը կոչուի Էրիճէք գիւղը։

ԷՍԿԻ ՄՍՏԷՆ. — Լեռնային կիլիկիոյ մէջ այս անուամբ ծանօթ կապարահանք կայ, Արիշար անուն լեռան ստորոտը։

ԷՍԿԵՆԷԶԻՐ (Հիւ քարաք). — Կուսինայէ 12 ժամ հեռու քաղաքս շինուած է ժայռոտ բլուրի մը ստորոտը. 200 տուն հայկայ, մեծ մասն Կուսինայէ և Սիլիբիսարէ գաղթած, բացի բազմաթիւ հայ պանդուխաններէ. ունի Ս. Երրորդորիսն անուամբ մատուռ մը և Ս. Մարտիկեան ու Ս. Սանդիսեան երկու վարժարան, 221 աշակերաններով. կան նաեւ 40-50 տուն կաթողիկէ Հայեր։ Բովանդակ բնակիչներն են 10000 հոգի, բաժնուած 3000 տան, մեծազոյն մասն թուրք. Յոյներ եւս կան, որոնք Հայոց պէս վաճառականութեամբ և արհեստով կը զբաղին։ Քաղաքիս բերքերն են այժի մաղ, ափսն և մանուսնոյ ծովափրփուր ըսուած քարն՝ որ համբաւուոր է ու մեծ շահու ազդուր։ — Էսկիշէիք, ինչպէս անունն իսկ կը յայտնէ, հին ու պատմական է։ Հոսմայեցիները ու Բիւզանդիոյ կայսերը արած են քաղաքիս անուանի եւ զած է Տօրիք անուամբ և զանազան պատերազմներով, մինչև Օսմանեան արապեաւորութիւնը։ Ընդարձակ զաշտի մը մէջ փոխադրուած է բարձրաւանդակէ մը՝ ուր կառուցուած էր հին Տօրիքն և որուն հնութիւնները ցարդ կը մնան փլիղած պարիսպներով։ Քաղաքիս մէջէն կ'անցնին Գօճասու և Սար-սու գետակները, որոնց վրայ կան հնաշէն կամուրջներ։ Վերջին ժամանակներս երկաթուղին բաւական զարգացոյց տեղւոյս վաճառականութիւնը։



ԷՍԿԵՆԷԶԻՐ. — Հայրենակ զիւղ Շապին-  
Գարահիսարի, 50 տուն բնակչօք: Ունին  
վարժարան Ս, Աստուածածին անուն վանքի  
մէջ 25 աշակերաններով: Հողագործ են:

ԷՍՊԻՎԷԼԷԻԿ. — Գիւղ Բարձր Հայոց Գեր-  
ջան գաւառի: Ունի 40 տուն հայ և Սուրբ  
Գեորգ անուն եկեղեցի մը:

ԷՎԷՐԷԿ Կամ ԱԻՆՐԱԿ. — Գիւղաքաղաք  
Կեսարիոյ, 1700 տուն հայ բնակիչ կայ  
բուն զիւղաքաղաքիս և Ֆէնէսէ կոչուած ա-  
բուարձանի մէջ. Կեսարիայէն 5 ժամու ճա-  
նապարհ հեռու է արեւելահողմն, գեղեցիկ  
և զուարճալի գիրքով, առատ ջրով, և սլա-  
տէզներով շրջապատեալ: Ունի Մերոպեան  
երկեսն վարժարան մը 440 աշակերաններով  
և բնիկըցարան մը՝ որուն հասոյթը վար-  
ժարանին յատկացուած է, այս հաստատու-  
թիւնները կը կառավարուին Մերոպեան ա-  
նուն բնիկերութեան մը ջանքով: Ունին Ս.  
Թորոս անուամբ եկեղեցի: Կան բաւական  
թուով բողոքական Հայեր: Տեղուոյ Հայերը  
կը խօսին աղաւաղեալ հայերէն մը: ԷՎԷ-  
րէկ՝ բաւական լաւ առններ ունի, որոնք  
կառուցուած են պարտէզներու մէջ: Ամէն  
տարի Հայերէն 30-40 հօգի Կ. Պալիս և  
ուրիշ տեղեր կը գաղթեն. կան նաև 400  
տան չափ թուրք և յոյն բնակիչներ: ԷՎԷ-  
րէկ՝ Աւերակ բառին աղաւաղեալն կը կար-  
ծուի, և հաւանական է, որովհետև ԷՎԷրէ-  
կէն 2-5 ժամ գէպի հիւսիս կը տեսնուին  
աւերակ դարձած շէնքերու հին մնացորդներ:

ԷՎԷրէկ բնակով կը հասկցուի իրարու կից  
չորս գիւղերու ամբողջութիւնը. այն է՝ բուն  
ԷՎԷրէկ՝ 8-900 գուս հայրենակ առններով,  
Ֆեհեւէ՝ նոյնպէս հայրենակ 7-800 առնե-  
րով, Թուրք գիւղ՝ թուրքարենակ է 500 առ-  
ններով, Այ-Կրասաւ՝ որ ունի 400 յոյն և  
թուրք բնակիչներ: Ֆէնէսէի մէջ ալ կայ  
Ռուբինեան երկեսն վարժարան մը՝ 420  
աշակերաններով: Գիւղաքաղաքիս մէջ Հայք  
ունին բացի վերոյիշեալ Մերոպեան բնիկ-  
բութենէն նաև Ռուբինեան բնիկութիւն  
մը: ԷՎԷրէկի արեւելեան կողմն, բառորդ  
ժամ հեռու, Խաչիկ յետը բուսած բլուր մը  
կայ բաւական բարձր, որու գագաթի հի-  
սիսային ու հարաւային կողմերը մէկ մէկ  
հսկայ ժայռեր զցուած են: Ամէն տարի

Աստուածածնի տօնի շարքի երկոյ այդ  
երկու ժայռերու վրայ մեծ հրախառութիւն  
կ'ըլլայ. աղայք 2-3 օր առաջ կը սլա-  
բասուին՝ փայտեր և այլ այրելի նիւթեր  
վառելու համար. երկար զցի մը ծայրը կազ  
կոչուած տեսակ մը փշայից և զիւրավառ  
խտաբ կամ ուրիշ նիւթեր վառած՝ ցատկըս-  
տեղով կ'ազազակեն անդալար. «Խաչին լեռը  
կը վառի»: Գիւղաքաղաքէն 15 վայրկեան  
հեռու կայ Էրզրոկ անունով լճակ մը:

ԷՎԼԻՍ. Տես ԱՎԻՐԱՐ:

ԷՎՃԱՆ. — Ինճիճեան կը յիշէ աւան  
Արարատականի մէջ. կառուցուած՝ Սրհան-  
գի ստորաբ. բնակիչք թուրք և բրիտան-  
նայք խան: Ունի խր անուամբ վառակ մը:

ԷՎՃԻՎԱՐ. — Գիւղ Այրարատայ ճա-  
կաք գաւառի Սուրմալուի վիճակի մէջ,  
1277 հայ բնակիչներով բաժնուած 172  
տան: Ունին զպրօց և եկեղեցի մը՝ որուն  
մէջ կայ Ս. Վարդանայ քարք: Շատ ուխ-  
տաւորներ կու գան Գիւս Խաչի տօնին:

ԷՎՃԻՎԱՐ. — Գիւղ Այրարատայ Արաղած-  
տան (Էջմիածնի) գաւառի մէջ, Ունի 648  
հայ բնակիչ, բաժնուած 78 տան, ունին  
Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը:

ԷՏԻՆՃԻԿ Կամ ԿԷՏԻՆՃԻԿ. — Գիւղաքա-  
ղաք՝ Պանարմայէ 1<sup>1</sup>/<sub>2</sub> ժամու ճանապարհ  
հեռու, Չընարը բուսած անուանի նաւա-  
հանգստի հարաւակողմը, չորս լիւանց գօ-  
տիներու մէջտեղ բարձրացած: Հին տանն  
նշանաւոր, ընդարձակ և բազմաբնակ քա-  
ղաք մ'էր. գետ հնութիւններու բնկորներ կը  
տեսնուին: 1000է աւելի տուն կայ. 300ը՝  
Հայոց, 23ը՝ Բունաց և մնացեալը՝ թուր-  
քաց: Ընդհանրապէս լայն ու ընդարձակ են  
տուները. Հայոց տուններու մեծ մասը հա-  
բաւակողմն է, իսկ փոքր մասն մէջտեղը  
և գէպ ի հիւսիս ցրուած: Գիրքը բարձր է,  
և ձմեռը բաւական ցուրտ ու ամառը զով  
կը լինի. ջուրը առատ է ու չափաւոր ա-  
ռողջարար: Գլխաւոր բերքերն են. ցորեն,  
գարի, հաճար, ձիթապտուղ, շուշմայ, վուշ.  
կան ամէն տեսակ միրգեր, որոնց մէջէն  
պղնի է խաղողն. կը գանուին արջառք և  
ոչխարք. այժը նշանաւոր է մեծութեամբ ու  
պարարտութեամբ: Թիթենիները առատ են  
և շերամարտութիւնը բնակիչներու շահուն



զլխաւոր ազրիւրն հղած է: Բնակիչներու մէկ մասն կը զբաղի մետաքսի, ձէթի, բուրդի և այլ այս տեսակ իրաց վաճառականութեամբ, մեծ մասն հողագործ է. կան նաև կօշիակար, երկաթագործ, պայտար, սափրիչ, հացագործ, և այլն: Կանայք և օրիորդներ շատ պարագաներու մէջ արանց վաստակակից են: Բարեկեցիկ բնասանեաց կանայք շար շար սակներ կը կախեն իւրենց պարանոցէն մինչև կուրծքը: Ընդհանրապէս ընկերասէր, հիւրասէր, պարկեշտ, հեղ, արթուն ու հեռատես են: — Հնութիւններու մնացորդներ, աւերակներ, ծերերու վիպտութիւններ և այլ պարագաներ կը հաստատեն, թէ Հայերը 5-6 դարէ հետէ բնակութիւն հաստատած են գիւղաքաղաքիս մէջ, Ռուբինեանց թագաւորութեան ատեն կամ վերջը և կամ պարսկական Հայաստանէն զաղթելով: Երբերու պատմութեան համեմատ՝ հին ժամանակները հայկական երեք եկեղեցիներ կան եղբ, բայց բարբարոս ձեռքեր երկուքը աւերակ զարձուցեր ու անհետ ըրեր են և միայն երրորդը մնացեր է Ս. Յարութիւն անուամբ. 1835ին ի հիմանց նորոգուեր է. 100 քառակուսի կանգուն տարածութիւն ունի. բոլորտիքը քարուկիր և առաստաղը փայտաշէն է, 8 փայտեայ հաստ սիւներու վրայ կը կանգնի. բնին սրբատաշ մարմարոններէ շինուած: Եկեղեցւոյ վերաշինութեան ատեն Ս. Նշանի գերեզմանատունէն բերուած քարի մը վրայ 584 տարուան յիշատակագիր մը տեսնուած է: Եկեղեցւոյ բակին մէջ կայ բաւական բնագարձակ պարաէղ: Ունին Ս. Ղեւոնդեան անուն վարժարան մը: Ընդհանրապէս թրքախօս են: — Գիւղաքաղաքէս 8-10 վայրկինի ճանապարհ հեռու գէպի արեւմուտք է հայկական գերեզմանատունը, երկու արտավարի չափ ընդարձակութեամբ. բոլորտիքը անպարիսպ, խիկ մէջը քանի մը անպտուղ ծառեր կան. մէջտեղը բարձրացող հինաւուրց կաղնիի մը ներքեւ Ս. Նշան անուամբ քարակոյտ սեղան մը շինուած է և զեռ կայ. 180-200 տարի յառաջ, այս կաղնիի ներքեւ կանգնելով եկեղեցական պաշտօն կը կատարեն եղբ: Տեղւոյս Հայերը սովորութիւն ունին եկեղեցւոյ հաստիւն մինչև հինգ տարի

1000-1200 դահեկան տարեթոշակ տալ նորընծայ քահանաներու: Թուրքերը ունին 7 մզկիթ, մեծ և փոքր: Գիւղաքաղաքս՝ կառուցուած է խրատրեյեղ կոչուած բլուրի մը արեւելեան ստորոտին վրայ, կլիման բարեխառն է. ձիթնիներով և թիթնիներով զարդարուած լայնածաւալ դաշտ մը չորս կողմէ կը շրջապատէ: — Ըստ պատմութեան, հսովմէական պետութեան երեւելի քաղաքներէն մին էր, որուն մէջ Միհրդատ և Պամպէտ զօրապետները միմեանց զէմ մեծամեծ ճակատամարտներ մղելով մէկ մասը աւերակ զարձուցած են Կիլիկիոն քաղաքի պաշարումն ստատեացնելու կամ բառնալու գիտամբ: Գիւղաքաղաքիս միջավայրը՝ սրբատաշ քարերով հոյակապ շէնք մը կայ, որ այժմ՝ թուրքաց զօրոց է. ասոր զխնաց կը տեսնուի չընարի-տիպի կոչուած սոսկալի վայրը, որ ի հնունն արիւնկակ մարդկանց զօստատեղին՝ այսինքն կառափնաւայրն հղած է, հազարամեայ ծառ մը կը գանուի հսն, որ 30 ոտք բարձրութիւն 20 ոտք հաստութիւն ունի և իր խորշին մէջ ի հարկին 20 մարդիկ կրնան ազատօրէն պատուարուիլ: Էտինճիկի հիւսիսակողմն կէս ժամու ճանապարհ հեռու է Կիլիկիոն քաղաքի բազմադարեան աւերակը:

ԷՏԻՐՆԷ կամ ԱՒԻՒԱՆՈՒՊՈՒՍ . Գաղ. ANDRINOPE. — Եւրոպական թուրքիոյ մէջ զլխաւոր քաղաք համանուն կուսակալութեան, Մարիցա, Թունճա և Արասս գետերու խոնարհի մօտ, 220 հզրմ. Կ. Պոլսէն հեռու արեւմտեան հիւսիսային կողմը: Պարսպապատ է և բերդաւոր. կառուցած կամ զարդարած է Ալլիբանոս կայսրը. որուն անուամբ կը կոչուի: Բիւզանդական կայսերաց ժամանակ շատ զէպքեր ունեցած է: 1360ին Մուրատ Ա տիրելով, գրեթէ 100 տարի 1362էն 1453 թուականը, օսմանեան թագաւորները հոս նստան: Ռուսները քաղաքիս տիրեցին 1828ին և հաշտութեան դաշն կնքելով հեռացան: Ունի 140000 բնակիչ, թուրք, հայ, յոյն, հրէայ, են: Հայերը իր 1000 տուն են. կը բնակին երկու թաղերու մէջ, որոնք կրկին եկեղեցիներու անուամբ՝ Ս. Թորոսի կամ Թեոդորոսի և Ս. Կարապետի թաղեր կը կոչուին.



այս թագերը մերթ իրենց հին անուամբ Գաղ-իշի և Ար-պագարը եւս կը կոչուին: Ունին արական և իգական վարժարաններ՝ Արշակունեան-Նոբիսիան, Թորգոմեան և Լուսաորջան անուամբ. երկուսն աշակերտներու թիւն է 450. օտար վարժարաններ ալ կը յաճախեն 40ի չափ ազջիկ և մանչ հայ սոգաք: Հայերը չունին այժմ այն հարբուսութիւնները, զոր ունեցեր են երբեմն անցեալ դարերու մէջ, և այդ ժամանակի հարուստները՝ սեղանաւոր ու զբամաէր, եկեղեցոյն կտակեր կամ նուիրեր են շատ կալուածներ: Քաղաքս ունի վեհ պերճութիւն, բայց օդն ու ջուրը առողջարար չեն: Տեղւոյս հայկական գերեզմանատունն դնած է Մեծ. Ապրո շէշէպի և իր մարմինն ալ հոն թաղուած է: Շէշերբու մեծ մասը կառուցուած է նախնի ճարտարապետութեամբ: Նշանաւոր է Սուլթան Սէլիմ Բէ մզկիթը. շատ գեղեցիկ է Ալեքս-իշի անուն գրօսու վայրը: Գլխաւոր բերքերն են զանազան արմըտիք և խաղող: — քաղաքիս Հայերը ունին 1856ին հիմնուած բնկերութիւն մը՝ «Ի սէր Յիսուսի ազբասացելոյն», անուամբ որ հեազհեաէ զարգացած հարստացած է ժողովրդեան նպաստներով: Այս բնկերութիւնը կը խնամէ ազբասները, բժիշկ ու զեղ կը զրկէ չքատը հիւանդներու, և այս բնկերութեան շնորհիւ քաղաքիս մէջ հայ մտաւորացիկ չի տեսնուիր: — Հաւանական կը կարծուի թէ՛ Ալբրանուպոլսի Հայերը զազթած բլլան այն ատեն, երբ Հայերը զուեղազունց կը զազթէին Լեհաստան, Մոլդաւիա և ուրիշ տեղեր: Իսկ ժողովրդեան մէջ աւանգարար կը պատմուի թէ՛ օսմանեան թաղաւորներէն Սուլթան Սէլիմի օրով (1500ին) քաղաքիս մէջ կառավարական հայ պաշտօնեայ մը պուրդարական ծէսով պսակուած է՝ հայ քահանայ զգանուելուս համար, թէև հայ զազթականները միշտ իրենց հեա անբաժան ունէին հայ քահանաներ: Ուրիշ աւանդութեան մը համեմատ՝ քաղաքիս Հայերը եկած են Սուլթան Սէլիմի հրաւիրմամբ, իր շինել տուած համանուն մզկիթին կառուցման իրը որմնադիր աշխատելու համար, և մզկիթին երկարատե կառուցման պատճառաւ՝ հայ գործաւորները ստիպուեր են՝ իրենց բն-

տանիքն ալ փոխադրելով հաստատուիլ, և այնուհետե ուրիշ Հայեր ալ աւելնալով քաղմացիք են: Քաղաքիս Հայերը տակաւին մեծ մասամբ անգլեա են իրենց մտայնի լեզուին. բնագնահարպէս վաճառականութեամբ կը զբաղին և արհեստաւորներ սակաւթիւ են: Արեւելեան երկաթուղիներու երկաթագործարանին շնորհիւ երկաթագործութեան արհեստն բաւական զարգացած է: Տեղւոյս Հրեայք վաճառականութեան մէջ անմրցելի յատաճագիտութիւն ունեցած են և ցարպ ունին: Հայկական Ս. Թէոփորոս եկեղեցին ժամանակաւ Յոյներէ անուեր Հայոց արուեր է, և այս պատճառաւ ցարպ պահուեր է հին անուեր:

ԷՐԱԽ. — Քրդաբնակ գիւղ Բազէշի Մօսկան գաւառակի:

ԷՐԱԽԱՆԵ. — Բազանց՝ Վառակ Մամիկոնէի վրայ գրած ատեն կը յիշէ բերդս Տայոց մէջ. «Ապա երթեալ գաւանէին գնա յիբում գաւառի ի Տայս, յիւր ամուր բերդին, որում անուն էր Երախանի կոչի»:

ԷՐԳԷՃ կամ ԷՐԲԱՋ. — Հայաբնակ գիւղ Արցախի Կիւլստան (Չուանշիր) գաւառի, խոր և հորիզոնը նեղ ձորի մը մէջ, որուն արեւելեան, հարաւային և հիւսիսային կողմերը բարձր լեռներ կան: Օդն, կլիման և ջուրն լաւ են, բնակիչները բնիկ, որանք մեկիքներու հեա դացած են բնակելու Բուխիս և յետոյ վերադարձած են: Ընդամենը 748 հոգի են, բաժնուած 78 տան: Ունին Ս. Սարգիս անուամբ վեց սինիքով բարձրաշէն եկեղեցի մը. մէջը կան մի քանի յիշատակարաններ և հնագոյնն ունի 1450 թուականը: Գիւղիս արեւմտեան սարսափ խոր ձորէն կը հստէ կուրակ գետակի օժանդակ փոքր-կուրակ անուամբ վտակ մը:

ԷՐԳԷՆԾ. — Կը յիշէ Խնճիճեան Արղուինի գեղերու շարքի մէջ:

ԷՐԳԷՉ կամ ԷՐԲԷՉ. — Այժմ այլազգաբնակ գեղեցեղադիր գիւղ Սիւնեաց Վայոց ձոր գաւառի, համանուն ձորակի մէջ: Հարաւային կողմը ունի աւերակ բերդ մը քարաբլուրի ծայրը և գերեզմաններ: Սիւնեաց նոյն գաւառի մէջ Էրգիչ պաշի անուամբ երկարաձիգ լեռ մը կայ:

ԷՐՁԷՆԻ ԶՈՒՐ կամ ԱՊԻ ԷՐՁԷՆ. — Գե-



ասկ Աղձնեաց Խոզու գաւառի մէջ, ունի բաւարէն կամուրջ. օժանդակ է Տիգրիսի:

ԷՐՁԻՆՃԵԱՆ. — Թուրքերէն անուն Էզնկայի:

ԷՐՁՈՒՈՒՄ կամ ԷՐՁՈՒՄ. Տես ԿԱՐԻՆ:

ԷՐՁՈՒՆ. — Գիւղ ծովային Կիլիկիոյ, ծառայէ և ճոխ բուսականութեամբ:

ԷՐԷԿԼԻ, ԷՐԷՅԻԼ, ԱՌԱԿԼԻ կամ ՀԵՐԱԿԼԻԱ.

— Քաղաք շեանային Կիլիկիոյ, Իկոնիոնի կուսակալութեան և Կեսարիոյ առաջնորդութեան համանուն վիճակի մէջ: Կը գրանուին Պուշկար և Գարաճա շեաներու միջավայրը, գալարագուարճ բլուրի մը վրայ: Ունի 20000ի մօտ բնակիչ, մեծամասնութիւնը թուրք: Հայերը 130 տուն են և ունին Ս. Աստուածածին եկեղեցի մը և Ռուբինեան անուամբ վարժարան մը՝ 50 աշակերտներով, կան նաև Յոյներ: Պատմիչները կ'աւանդեն թէ «Լեւոն էսա զԱռակլիա և զԻսաւրիա, և ընդ գանձուց փոխանակեաց բազում ամրոցս և զգեակս»: Հայերը կարճատե իշխանութիւն ունեցած են Առակլիի վրայ, բայց արեւելեան սահմանները երկար ժամանակ պահած են իրենց ձեռքը: Սուլթան Քէյքաուս պատերազմ մղեց Առակլիի համար: Հիմուսի օրով Հայոց ձեռքը շէր բազարս: Էրէկլի կը համարուի հին Կիւրիստան, որ Կապադովիայի թեմ էր: Քաղաքս Կիլիկիոնի ձմերանոց եղած է, երբ նա կուսակալ էր Կիլիկիոյ և երկիրը կը պաշտպանէր Հայերու և Պարթեաներու դէմ: — Սխուռակ, 153-176:

ԷՐԷՄԷՐՈՒ. Տես ՀԷՐԷՄԷՐՈՒ:

ԷՐԷՅԻԼ. Տես ԷՐԷԿԼԻ:

ԷՐԷՆՃԻԿ. — Գիւղ Չարշամբայի՝ բարձր բլուրի մը վրայ հաստատուած. բնակչաց մեծ մասը հայ են:

ԷՐԷՐԻՆ կամ ԵՐԵՐԻՆ. — Հայաբնակ գիւղ Վան-Տոսոյ գաւառակի թիմարայ մասին մէջ: Ունի 100 տուն, Ս. Սահակայ աննշան վանք մը, եկեղեցի մը և գոթոց: Գիւղիս մէջ կը գտնուին խաղողի բանի մը այգիներ: Էրէրինի մօտ է Ամուկ բուռած բերդը, Վանայ ծովակի եզերքը: Գիւղս կը գտնուի Խաչկատար լեռան հիւսիսակողմը, որ այժմ Էրէրեայ սար կը կոչուի: Այս բլուրի սրահն

մէջ, Ս. Սահակայ վանքի գէմն է Բագեկից ամայի վանքը:

ԷՐՐՆԿԱՆ կամ ԵՐՐՆԿԱՆ. — Գիւղ Վասպուրականի Ալլրակ գաւառի, Ս. Բարթեղիմէոսի վանքէն 1½ ժամու ճանապարհ հեռու: Ունի 60 տուն. 45ը՝ հայ, իսկ մնացեալը՝ քուրդ: Հայերը ունին կոփածոյ սեւ, բայց բնախր քարէ շինուած, փոքր պատահաններով միմին եկեղեցի մը՝ Ս. Ստեփանոսի նախրուած, որ կը կրէ հայկական ՌճՊԹ (= 1660) թուականը: Ունի նաև ծագկոց մը: Գիւղիս մէջ Ս. Սարգիս և Ս. Ծիրանաւոր անուններով երկու հին եկեղեցիներու տեղերը կը տեսնուին, որոնք շրջապատեալ են բազմաթիւ տապանաքարերէ: 6-650 տարուան անյիշատակագիր թուականներ կը նշմարուին տապանաքարերու վրայ: Բոս աւանդութեան՝ 200-250 տարի յառաջ գիւղիս հայ բնակիչները 500 տուն էին. այս աւանդութիւնն հաւանական կ'ընեն իր շրջապատին մէջ գտնուած հին աւուրց տուներու փլատակները: Երբնկան ունի հոգային ընդարձակ կալուածներ և խաշնարածութեան համար շատ արդատարեր վայրեր. միայն թէ ջրոյ քիչ մը նուազութիւն կայ: Տեսարանը լաւ է և երեք կողմերէ հեռու որ մերձաւոր լեռներէ շրջապատեալ: Չմեռը ստոտիկ ցուրտ կը փչէ լեռներու միջավայրերէն, այնպէս որ գիւղէս 10 վայրկեան հեռու երբեմն մարդ կը գտնուի կամ բուրբ բնուելով կը խեղդուի: — Արեւմտեան կողմը, 1½ ժամու ճանապարհ հեռու, կան երկու լայնայատակ լեռներ, որոնց մին՝ Մայայրս կը կոչուի, գազաթը կայ անձանօթ սուրբի կամ ճգնաւորի մը գերեզման, և միւսն՝ Մայանկիս սար: Այս երկու լեռներու արեւելեան ստորոտը շինուած է Աստուածածին անուամբ փոքրիկ՝ բայց կոկիկ ու գեղեցիկ կաթողիկէով վանք մը, որ ցարդ հաստատուն և կանգուն կը կենայ: Կ'աւանդեն թէ գրեթէ երեք դար յառաջ այս վանքը ունեցած է կանոնաւոր միարանական ուխտ և հացի համար մեծամեծ ամբարներ, ինչպէս կը հաստատեն վարպայ վանքի մէջ պահուած ձեռագիրները: Այս վանքը ուխտատեղի է կողմանցս հայ գիւղացիներու. Աստուածածին աօնին խոն



բազմութեամբ կը դիմեն և հանդիսաւոր տօն կը կատարեն:

ԵՐԻՁԱԿ կամ ԵՐԻՁԱԿ. — Գիւղ Տուրուբերանի Տարօն գաւառի, Մշոյ գաշտի մէջ: Ունի 50 տուն հայ և քանի մը տուն բուրգ բնակիչներ:

ԵՐԻԿ-ՏԷՐԷ. — Գեառակ քարայրն Կիլիկիոյ, օժանդակ Կալիկապոսի:

ԵՐԻՃԷՔ. — Գիւղ Ձէյթունի, Էսէն-տէրէ կոչուած ձորակի ստորոտը: Բնակիչք այլազգի են. Ձէյթունէն հետո է 7 ժամ:

ԵՐԻՇՏԷՐ (Էրաշտ էր). — Հայարնակ գիւղ Տուրուբերանի Տարօն (Մուշ) գաւառի, Խաս-գիւղի արեւելեան հարաւային կողմը, <sup>3</sup>/<sub>4</sub> ժամու ճանապարհ հետո: Ունի 50 տուն բնակիչ, եկեղեցի և վարժարան:

ԵՐԻԱՆ. Տես ԵՐԻԱՅՆ:

ԵՐԻԵՆԱՆՅ. — Գիւղ Սինեայ Բաղը գաւառի, Բարկուշատի վիճակի մէջ:

ԵՐԻԻ. Տես ԵՐԻԻ:

ԵՐԻՈՎ. — Այլազգաբնակ գիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի թաւիշ վիճակի մէջ. Տեղեր գիւղէն մըն մը հետո:

ԵՐՃԷ ԿԷՏԻՔ. — Լեռ Կիլիկիոյ, 5000 ոտք բարձրութեամբ:

ԵՐՃԻԷՇ. Տես ԱՐԳԷՈՍ:

ԵՐՃԻՇ. — Ազաւաղեալ անուն Արճէշի:

ԵՐՄԷՆԷԿ. — Գլխաւոր քաղաք համանուն գաւառակի, Ատանայի կոտակալութեան մէջ: Գաւառակն ունի 63 գիւղ՝ 27000 բնակիչներով. իսկ քաղաքն 8000 բնակիչ: Կառուցուած է 1300 մեար բարձրութեամբ լեռներու մէջ և 120 հազարամեար հետո է Սիլիկիայէն, հիւսիս-արեւմտեան կողմը: Նշանաւոր է այգիներովը ու ճոխ բուսաբերութեամբ: Էրմէնէկի՝ հին ժամանակները ծանօթ էր Գերմանեկուպոյիս կամ Ժերմա-եթի անունով, որուն աւերակները կը շրջապատեն այժմեան քաղաքը: Էրբեմն եղեր է Խասրիոյ մայրաքաղաք և եպիսկոպոսանիստ: Ժամանակ մը ատոր բնակիչները վասնդաւոր յիւզակներ էին և իրենց մեծաբանակ աւարառութիւնները կը պահէին Տորոսի ծեր-պերու մէջ: Էրմէնէկի բերպը շինուած լիւնելով 1800 ոտք բարձր լեռան մը գաւաթը՝ ձորեղբի վրայ, անմատչելի է. հսն կը տեսնուին այժմ՝ քարափոր սենեակներ


և հոսովէական շինութիւններու մնացորդներ: Քաղաքին արեւելեան կողմը գերեզմանատեղի է հին խաչադրոշմ նշաններով, շատերը վիմափոր են. կայ նաև մատուռի հետք: Յայանուած արձանագրութիւններէն մին կը կարգացուի այսպէս. «Գերմանիկոս, Հայերու զէմ զրկուած, հիմնեց այս քաղաքը, մեր թուականի 17<sup>րդ</sup> տարին»: Մեր Ռուբինեանները Բիւզանկացիներէն վերջ տիրեցին Էրմէնէկի. ԺԲ դարու վերջերը բերպատէրն էր Հալկամ իշխանը, որուն ձեռքն էր նաև Լամար և Անամուր: Գրքըճ Ասլանի կոտորածէն ազատած 700 խաչակիրները հոս ազատանամ էին: Ժամանակ մը քաղաքին սահմաններու վրայ, թաթարներու արշաւանքէն փախած՝ հաստատուեցան թիւրքմէնները: Իկոնիոնի Սուլթան Ալայէտաին Քէյքոպատ, տեղւոյ տիրեց 1228ին: Յետոյ տիրեցին Գարամանները: Էրմէնէկի շրջակաները կան անմատչելի բարձրութեամբ վիմափոր անձաւներ՝ որոնք ազատանաւրան և թաքստոց եղեր են: Կը պատմին, իբր 17 տարի առաջ, կոտալարական պաշտօնեայի մը խնդրքով երկու բոշաներ մտեր են այս անձաւներու մէկի մէջ, հսն տեսեր են ընդարձակ վիմատաշ սրահ, և հաւաքեր են զանազան հնութիւններ, զբահ, սազաւարտ, զէնք, մատանի, զբամ, և այլն: Սխառան, 280-291: Կիլիկիա, 268-271:

ԵՐՄԷՆԻ ՔԷՅՑ, ՀԱՅ-ԳԻՒՂ, կամ ՀԱՅՈՑ ԳԻՒՂ. — Չուա հայաբնակ գիւղ Պանարբմայի. ունի իբր 200 տուն, Ս. Սարգիս եկեղեցի և Ս. Մեսրոպեան անուամբ երկուս վարժարան մը: Հիմնուած է Մարմարայի ծովափանց վրայ Պազարաչ անուն նաւահանգրտաին բերանը. Պանարբմայէն ծովով <sup>3</sup>/<sub>4</sub> և ցամաքով 2<sup>1</sup>/<sub>2</sub> էն 3 ժամու ճանապարհ հետո է: Գիրքը լեռնային՝ երեք կողմերէ բարձր լեռներով շրջապատեալ: Կլիման բարեխառն է. ունի պատուական և քաղցրահամ ջուրեր, զոր նաւերով և էշերով կը կրեն Պանարբմայի Հայերը: Բնակիչները կը զբաղին բարահատութեամբ, երկրագործութեամբ, շերամարտծութեամբ, ձկնորսութեամբ և ամիսագործութեամբ: Գիւղս երեք դարէ հետէ հիմնուած է հին Կիլիկիան քաղաքի գերեզմանատեղւոյն վրայ. շրջապատեալ է 30ի շափ



յոյն ու թուրք զիւղերէ, որոնք կը բարձրանան Կիլիկիոնի թերակղզւոյն վրայ: 1888 թուին սոսկալի կարկտախառն փոթորիկ մը և զիւղիս առուակի յորդումը 16 սուն և մէկ սրճարան կործանեց և երկրագործներու փնտսեց: Գիւղիս հիմնադիրն եղած է Պարոկաստանի սահմաններէն գաղթուց Տ. Կոստանդ քահանայ Կոստանդեան: Ասոր թոռան թոռն Սուբխաս Կոստանդիանով, 1878ին 90 տարեկան և ողջ, պատմած է թէ իր մեծ հաւն Կոստանդ քահանայ իբր երեք վար յառաջ զիւղին վերի կողմի լեռան վրայ առաջին բնակութիւնն հաս-

տնն, և այլն, անասուններն են եզն, գոմէշ, այծ, և այլն: Այս ամէնը հաղիւ կը բաւէ բնակչաց, վասն զի վարելու և սերմանելու ընդարձակ հող չունին: Հայերէն չեն զիտեր, արք և կանայք ընդհանրապէս թուրքերէն կը խօսին: Կանայք կը գործեն իրենց հանդերձեղինաց վերաբերեալ կտան և կը հիւսնն փսխթ: Ի հնումն երկու եկեղեցի ունէին, երկուքն ալ Ս. Սարգիս անուամբ, հին եկեղեցին զիւղէն իբր կէս ժամու ճանապարհ հեռու՝ վերի լեռան ստորաբար շինուած է, ուր այժմ միայն մատուց մը կայ, որ՝ հտանականաբար Տ. Կոստան-



337. Էօշքայ եկեղեցին Քիւսիսայիմ կողմէն:

առաեր և քաջութեամբ նուաճելով իր վրայ յարձակող յիւզակները, յաջողեր է բնտանեօք հանդերձ խաղաղութեամբ ապրիլ. յետոյ լեռան սարաւանդն և գէպի ծովեզրն յարմար գասելով հոն փոխադրուեր է: Գիւղիս զերեզմանատան մէջ կայ Տ. Կոստանդի զերեզմանն անշուք, անթուական և առանց յիշատակարանի: Հայոց զիւղի արեւելեան և արեւմտեան կողմերը կան զեղեցիկ և պաղաւէտ պարտէզներ, արտորայք և ահանակիտ վտակներ. երկիրն ամէն տեսակ բանջարեղէն ու մրգեղէն յառաջ կը բերէ, մանաւանդ ձմերուկ: Բերքերն են ցորեն, գարի, բրինձ, ձիթապտուղ, լուբիա, սի-

զի օրով շինուած է. իսկ արդի եկեղեցին՝ որ զիւղին մէջ հիւսիսային արեւմտեան կողմը գէպ ի բլուրն ի վեր է, հաւանականաբար իբր 200-220 տարիէ ի վեր հիմնեալ է. 1858ին հիմնն նորոգ շինուած է, ամբողջ բարուկիր և հոյակապ, հաստատուն որմերով և սիւներով. բնին ու դրան շրջանակն սրբատաշ մարմարիտներէ. ներսի դրան վրայ օսմանեան անբունեաց ճարտարպետ Պայեան Կարապետ Ամիրայի յիշատակադիրը կայ, որով կը յայտնուի թէ ինքն իր Անտոն ազա որդւոյն միջոցով մեծապէս նպաստած է վերաշինութեան համար: — Գիւղին արեւմտեան կողմն լեռան մը



սասորտան է գերեզմանատունը՝ իրը 1<sup>1</sup>/<sub>2</sub> արտավար ընդարձակութեամբ, ամբողջ գերեզմանաքարերը եկեղեցւոյ շինութեան համար գործածուած են, պարիսպ չունի. մէջը կանքանի մը վայրի ծառեր և մօտը շինուած է 1862ին ազրիւր մը: Սոյն գերեզմանատան վրայ բարձրացած լինները Գափոս-տաղի կը կոչուին. այս լիններէն կ'եջնէ տեսակ մը որձաքար և կոփուելով կ. Պոլիս կը փոխադրուի: Գերեզմանատան կից Յ արտավար ընդարձակութեամբ բանջարեղինաց զեղեցիկ պարտէզ մը կայ՝ որ ազգային սեփականութիւն է: Ս. Սարգսի եկեղեցւոյն աւագ սեղանի դրօշ պատին վրայ զետեղուած է միակտուր եռակամար խաչքար մը, որուն իւրաքանչիւր կամարի մէջ մէկ մէկ խաչ քանդակուած է և մէջտեղի խաչին վրայ արձանադրուած է. Յիշատակ և առրբ խաչս Միրձանին, ձախ կողմինին վրայ՝ Յուսեփին, աջակողմեանին վրայ՝ Նաբիձանին. կ'երևի թէ վերի մատուռէն բերուած է այս խաչքարը:

ԷՐՄԷՐՈՒ. Տես ՀԷՐԷՄԷՐՈՒ:

ԷՐՏԱՐԻՆ. Տես ԱՐՏԱՐՈՅՆՔ:

ԷՐՏԷՊԻԼ. Տես ԱՐՏԱԻԼ:

ԷՐՔԱԶ. Տես ԷՐԳԷՃ:

ԷՐՔԷՆԵԶ. — Մարաշու գաշաի մէջ հասող եօթը գետակներէն մին:

ԷՐՔԻԼԷՂ. — Գիւղ կեսարիոյ, զէպի արեւմուտք 2<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ հեռու, լիբան մը կուշտը շինուած. զիրքը բարձր, օգտօտն. այդիներով և պարտէզներով զարդարուած: Երբեմն ունէր բաղմաթիւ Հայեր, որոնք յետոյ զողթիւղով այլ և այլ տեղեր, այժմ մնացեր են 25 տուն, և թրքախօս են. ունին Ս. Գևորգ անուն եկեղեցի մը և վարժարան: Գիւղիս մէջ կան նաև 1000ի չափ մահմետական և 450 յոյն:

ԷՐՔԶԼԷՐ. — Լեռ Այրարատայ Շիրակ գաւառի արեւմտեան մասին մէջ:

ԷՐՔԷԿ. — Հայաբնակ զիւղ Բարձր Հայոց Գերջան գաւառի, 30 տուն բնակիչներով: Ունի Ս. Թորոս անուամբ եկեղեցի մը:

ԷՐՔԷԿ. — Գիւղ Եօզղատի, հայ և թուրք բնակիչներով: Հայերը 320 տուն են և ունին եկեղեցի ու վարժարան:

ԷՅԶԷՐԼԻ. — Գիւղ Ատանայի Բայաս գաւառի, Չորը-Մարզուանէն 10 րոպէ ճանա-

պարհ հեռու: Ունի 300ի չափ տուն, որոնց 250ը Հայոց են և մնացեալն թուրքաց: Հայերը թրքախօս են. ունին հոյակապ եկեղեցի Տիրամօր անուամբ և վարժարան. կան նաև 15 տուն բողոքական Հայեր: Գիւղս ունի շուկայ, պարտէզներ, արտեր, ծխախոտի վարչատուն: Ամանները հոս կը փոխադրուի Բայասի զայմագամութիւնը:

ԷՅԶՊԷԿ. — Գիւղ Բարձր Հայոց կարնոյ գաւառի մէջ, 20 տուն հայ և 10 տուն մահ-



338. ԷՅՅՐԱՅ եկեղեցւոյ հարաւային կողմը:


մէտական հոգադորձ բնակիչներով: Հայերը ունին Ս. Թադէոս ու Բարրուշիսեոս անուամբ եկեղեցի:

ԷՅՅԻԿՔԻԼԻ. — Լեռ Այրարատայ կողմ վիս գաւառի հիւսիսային կողմը. 1630 մետր բարձրութեամբ:

ԷՅԵՔ. — Թորթումայ (Տայք) լճին գլխոյն մօտ՝ հարաւային կողմը, զէպի արեւմուտք փոքրիկ վտակի մը եզրերը կը գտնուի զիւղս և կէս ժամ հեռու ալ նոյն անուամբ ամայացած վանք մը: Գիրքը զեղեցիկ ու զուարճալի է, բարձր լիններու սասորտը,



սարատափ ըլուրի մը վրայ, ճոխ բուսակա-  
նութեամբ զարդարուած: Վանքի շինութիւն-  
ները կործանած են և մնացեր է միայն հոյա-  
կապ եկեղեցին: Շինուած է գեղնագոյն փայ-  
լուն քարերով, խաչաձև, 34 մետր երկայն  
և 22 մետր լայն թեւէ թեւ: Չորս մեծա-  
մեծ բուրձաձև սիւներ կը վերցընեն շրջա-  
բուր զմբէթը, որ Հայոց ու Վրաց եկեղե-  
ցիներու սճով վարի կողմը լայն կըլոր է,



339. Էօջբայ եկեղեցոյ արեւմտեան  
պատուհան:

վերը երթալով կը սրանայ և կոնաձև կը  
վերջանայ: Գմբէթը հուսկեամբը փլեր է,  
և այլազգիները շէնքը իրենց մզկիթ գարձը-  
նելով, անշնորհք և տգեղ կերպով ծածկած  
են զմբէթի զլուխը: Գմբէթի շուրջը ներսէն  
սրահակի պէս պարահլու տեղ կայ: Սիւնե-  
րու հաւասար բարձր կամարներ կը բռնեն  
եկեղեցոյն բուր ձեղունը: Արեւելակողմն  
է կիսաբաղրակ խորանն, երկու կողմէն ալ

նեղ ու կրկնայարկ աւանդատուններ. թեւե-  
րուն քովերը երկերկու փոքր սենեակներ  
կան, իսկ եկեղեցոյն վարը երկու կողմը  
աւելի մեծ սենեակներ: Երեք կողմէ ալ գոնե  
ունի, մեծ դուռն է արեւմտեանը, որուն առ-  
ջեւ քառակուսի և նեղ գաւիթ մը կայ կիսա-  
կործան կամարներով: Գրտէն հարաւային  
կողմի վրայ կիսաքանդակ քարէ պատ-  
կերներ կան լայնազգեստ մարդկանց, որոնք  
կը թռնին եկեղեցոյն շինողները, վասն զի  
անոր զաղափարն ալ ձեռքերնին է, ուրիշ  
կողմի քանդակներէն և զարդերէն դատ՝ իտ-  
րանին եզերքը նկարէն պատկերներ ալ կան:  
Արձանագրութիւնները կարմիր ներկով զըր-  
ուած են և ոչ փորուած, դեռ շատը անեղծ  
մնացած. մեծաւ մասամբ վրացերէն են: Ա-  
ստնցմէ կ'իմացուի որ շինողներն եղեր են  
Աարնիսեհ կիւրասպազատ, Բազարատ իշ-  
խանաց իշխան և Գաւիթ Մազիսարոս, ա-  
մենքն ալ Ժ գարու առաջի կիտուն ապրող:  
Եկեղեցիէն իբր քարընկէց մը հեռու քա-  
րաշէն սենեակ կամ սրահ մը կայ ութ սիւ-  
ներու վրայ բարձրացած, որուն ձեղունը  
ընկած է և կը կարծուի թէ վանքի խոհա-  
նոցն եղած ըլլայ. քովն ալ ուրիշ սենեակ  
մը կայ: — Նշմարք, Գ 85:

ԷՕՏԷՄԻՇ. — Քաղաք Չմիւսնիոյ կու-  
սակալութեան և առաջնորդութեան ներքեւ,  
կառուցուած է Չմիւսնիոյ հարաւ-արեւելեան  
կողմը գեղեցիկ ու բարեբեր գաշաի մը վը-  
րայ: Աւանդաբար կըսուի թէ հին ատեն  
գեղեցիկ ազարակ մ'էր այդ գաշար. մօ-  
տակայ գիւղէ սը հեռագհեաէ գաղթականներ  
գալով արտեր գներ և բնակութիւն հաս-  
տատեր են արտերու մէջ, և թէ այդ ար-  
տերու գիները վճարուելուն համար՝ ժողո-  
վուրդն սկսած է այդ նոր բնակավայրը կո-  
չել Էօտեմիշ (վճարեալ): Էօտեմիշի առա-  
ջակողմը տարածուած գաշտագետինը կը  
հասցընէ ցորեն, գարի, կանեփ, բամբակ,  
ծխախոտ. ունի նաեւ այգիստաններ, ձիթե-  
նի, թղենի, խնձորի, տանձի և ուրիշ պրտ-  
զատու ծառեր. կլիման բարեխառն և մեղմ  
է և ջուրն լաւ: Չմիւսնիայէն երկաթուղիով 4  
ժամ հեռու է: Բնակիչք 18000 են՝ թուրք,  
յոյն, հայ և աննշան թուով հրեայ: Յոյները  
550 տուն կը հաշուին, ունին երկու եկե-



ղեցի, հիւանդանոց մը և երկու վարժարան. վաճառակ սնութիւնը ընդհանրապէս իրենց ձեռքն է: Հայերը 180 տուն են, որոնց նստիւնիք երեք հարիւր տարի յառաջ մայրենի երկրէն գաղթած են Պերկի անուն քաղաքաւանը որ Էօսէմիշէն 1½ ժամ հեռու է և յետոյ, գրեթէ 150 տարի յառաջ, և կած հաստատուած են քաղաքը: Ունին Ս. Հոփսիսիմե եկեղեցի մը՝ կառուցուած 1805ին, փոխանակ հնոյն՝ Ռեզուե սօղազ անուն փողոցի ծայրը: Քարաշէն է, ունի երկու դուռ, որոնց ձեկատար կան յիշատակարաններ: Աւագ գրան երկու կողմն, ինչպէս նաև կողմնակի գրան աջ ու ձախն հաստատուած են գեղեցիկ բարձրաբանդակ խաչքարեր՝ հանդերձ յիշատակարաններով: Երբքուտ ունի վեց սիւն և երեք խորան. աւագը՝ նուիրեալ է Ս. Հոփսիսիմէի, աջակողմանը՝ Ս. Լուսաւորչի, և ձախակողմանը՝ Ս. Ստեփանոսի: Այս խորաններու աջ ու ձախ կողմերն վերով պատին մէջ հաստատուած են գեղեցիկ քանդակուած խաչքարեր՝ 1805 թուականու յիշատակարաններով: Որմերու վրայ կախուած պատկերներն ևս ունին նուիրատուաց յիշատակարաններ: Եկեղեցիս ունի բաւական սուրբ անօթներ, արծաթեայ սպասներ և զարդեր, որոնց վրայ յիշատակարաններ ևս կան: Եկեղեցեւոյն պարտէզին մէջ կը գտնուի աղջըկանց վարժարանը վարդուհեան անուամբ, ուր կը յաճախեն 100ի չափ աշակերտուհիներ: Մանչերու Ս. Լուսաւորչեան դպրոցը կը գտնուի Ռեզուե սօղազի միջուկայրը, ունի 100է աւելի աշակերտներ: Էօսէմիշի Հայերը ժամանակ մը ունեցած են Բնթերցարան և ուրիշ քանի մը բարեխիրական ընկերութիւններ, որոնք հազիւ քանի մը տարի կեանք ունեցած են. ընթերցարանը կը գտնուի աղջկանց վարժարանի վարի յարկին մէջ: Տեղւոյս Հայերու անցեալը փայլուն եղած կ'երեւի. 25 տարի յառաջ պատահած աղետարեր հրդեհն Հայերու թաղը աւերակ դարձընելով, իրենց յառաջադիմութեան մեծ հարուած մը տուած է և փայլուն վիճակնին նսեմացուցած: Այժմ սովորաբար կը գրադին տեղական արուեստներով, կան բաւական թուով կոշկակար,

գերձակ, զարբին, ատաղձագործ, սափրիչ, և այլն. հայ տիկիներ և օրիորդներ մեծաքսեայ գործուածներ կը հիւսեն: Կը խօսին ընդհանրապէս մաքուր աշխարհաբար, ինչպէս նաև սաճկերէն. աղետները ունին խօսակցութեան յասուկ կերպ մը, որ պարսկահայոց և ուսսահայոց լեզուներու խառնուրդ մ'է: Եշանաւոր են տեղւոյս Հայերը հիւրասիրութեան մէջ: Մեղաք պաշտ անուն փողոցին ծայրը կը գտնուի գերեզմանոցը՝ քարաշէն սրմերով շրջապատեալ, ուր կան երկու աղբիւրներ՝ շինել տուողներու յիշատակարաններով: Գերեզմանատանս մէջ կը տեսնուին բազմաթիւ տապանաքարեր՝ սիրուն զարդարուն քանդակներով. յիշատակարաններէն հնադոյնը ունի ՈՃ (= 1651) թուականը: Էօսէմիշի մէջ կան նաև քիչ թուով բողոքական Հայեր, որոնք ունին աղօթարան ու վարժարան: — Հայր ի Զմիւռնիս և ի շրջակայս, Բ. 67-96:

ԷՕԹԹԻԻՎԻԻ. — Լեռ Այրարատայ Եկղ գաւառի:

ԷՕԹԹԻԻՎԻԻ. — Եղիտարնակ գիւղ Այրարատայ կողմից գաւառի. կողայովաի շամբի արեւելակողմը:

ԷՕՐՏԷԿԼԻԻ. — Գիւղ Սիւնեաց կովտական գաւառի մէջ: Տես ՊՈՐՏԱԿ:

ԷՕՔԻԻՉ. — Գիւղ Տրպայղսնի. ունի 60 տուն հայ, Ս. Լուսաւորչի անուամբ եկեղեցի մը և վարժարան: Հողագործ են:

ԷՕՔԻԻՉ. — Լեռ Այրարատայ Շիրակ գաւառի հիւսիսային սահմանի վրայ:

ԷՖԷՆՏԻ. — Գիւղ Այրարատայ Շիրակ (Աղեքսանդրապոլ) գաւառի մէջ, ունի 160 հայ բնակիչներ, բաժնուած 22 տան:

ԷՖՔԷԲԷ կամ ԷՎՔԷԲԷ. — Գիւղ կեսաբիոյ առաջնորդական վիճակի. քաղաքէն 3 ժամու, Երբղէն և Ս. կարապետի վանքէն ¼ ճանապարհ հեռու, ձորի մը երկու կողերուն վրայ: Ունի 450 տուն հայ և 50 տուն մահմեական: 1888էն սկսեալ կան նաև կաթողիկէ Հայեր և ունին առանձին եկեղեցի ու վարժարան: Հայերը ունին Ս. Ստեփանոս անուամբ եկեղեցի և Թորգոման-Աղապեան երկուսն վարժարան մը՝ 170 աշակերտներով: Գիւղիս աղգայինը մեծ մասամբ երկաթագործ են, կը խօսին հայե-



բէն, բայց ազաւաղեալ և երբեմն թրքախառն: Գիւղս կը բաղկանայ երեք թաղերէ, թուրքերը կը բնակին հիւսիսային ու հարաւային ծայրերը: Շուկային մէջ կան 20-30 խանութ, պէտք եղած սպրանքները միշտ կեւ սարիայէն կը բերեն: Շէնքերը բաւական ճաշակաւոր են: Ս. Ստեփանոս եկեղեցւոյն հիւսիսային արեւմտեան կողմը վայրկեան մը հետու կը գտնուի Ս. Գեորգ անուամբ վիմափոր ուխտական մատուռ մը, մէջը կան 4 փայտեայ խաչեր, 3 պատկեր և փոքր սեղան մը, ուր տարին անգամ մը սուրբ Գէորգայ սօնին պատարագ կը մատուցուի. իսկ ամէն շաբաթ արք և կանայք ուխտի կ'երթան: Նոյնպէս՝ եկեղեցւոյն հարաւային արեւելեան կողմն, վիմափոր մատուռ մը կայ Ս. Սարգսի, փոքրիկ սեղանով, 2 պատ-

կերով և 4 փայտեայ խաչերով. կանայք Առաջնորդաց պահքի ժամանակ եթէ երեք օր ծով պահեն, չորեքշաբաթի երեկոյն կ'երթան մոմ կը վառեն այս մատրան մէջ, ուխտ կ'ընեն և սպա ուղղակի եկեղեցի երթալով Ս. Հաղորդութիւն կ'անուն: Էֆքէրէի հարաւային կողմը փոքրիկ ընծաւազաշտի ւր ծայրը, կը տեսնուին անշէն հիւղակի մը չորս որմերը, որոնց արեւելեանի վրայ կը գտնուի Ս. Եղիայի անուամբ փոքրիկ սեղան մը, ուր ամէն տարի Ս. Եղիայի կիրակի օրը Պատարագ կը մատուցուի և մատաղ մը կ'ընեն, որուն կը մասնակցին գիւղացւոց ամէնքն ալ, հարուստ ու աղքատ: Նոյն օրը շրջակայ գիւղերէն ալ բազմաթիւ երկսեռ ժողովուրդ կը գտնուի:



ԸԶՆԱԶՈՐ, ԸՂՆԱԶՈՐ կամ ԱՅՆԱԶՈՐ. — Հայաբնակ գիւղ Սիւնեաց Վայցց ձոր գաւառի: Բնակիչք 400 հոգի են, բաժնուած 43 տան: Գիւղս թէև հին է, բայց զեւրննուած չեն հնութիւնները, եկեղեցոյն և զերեզմանաւան արձանադրութիւնները:

ԸԼԸՃԱ. Տես ԽԼԻՃԱ:

ԸԽԵՅՈՒՔ. — Գիւղ Արցախի Պաղկանք գաւառի, հիմնուած է սարի մը ստորոտը. բնակիչք 165 հոգի, բաժնուած 20 տան: ԸՂԸՐ ԹԷՓԷ. — Լեւ Սիւնեաց Աղահէճք գաւառի:

ԸՂՆԱԶՈՐ. Տես ԱՅՆԱԶՈՐ:

ԸՂՈՒԵՐՁ. — Հին գիւղ Սիւնեաց Եղուկ գաւառի: Կը յիշուի զիւղս 1574-5 թուին Ս. Ստեփանոս ու Ս. Աստուածածիկ եկեղեցիներովը: — Այս անուամբ զիւղ մ'ալ կը յիշուի Սիւնեաց Հարանդ գաւառի մէջ, որ 12 բնն հարկ կու տար Սիւնեաց եկեղեցոյն:

ԸՂՏԱԶՈՐ. — Գիւղ Կարնոյ, 60 տուն հայ և 30 տուն մահմէտական բնակիչներով: Հայերը ունին Ս. Յակոբ անուն եկեղեցի և վարժարան: Հոգազործ են:

ԸՂՏՈՒ ՔԱՐԵՐ. Տես ՆԵՔՐՈՎՂՔ:

ԸՆԵՄԱՅԵԱՅ ԱՍՏՈՒԱՄԵԱՅԻՆ. Տես ՏԻՐԱՄԱՅՐ:

ԸՆԵՔԱՐ. — Գիւղ Տիգրանակերտի Ալիվան գաւառի Խուլի գաւառակի: Ունի 55 տուն հայ և Ս. Գեորգ անուամբ եկեղեցի մը:

ԸՆԿԸԶԻԿ կամ ԸՆԿՈՒԶԻԿ. — Գիւղ Խար-

բերդի. բնակչաց մեծագոյն մասը թուրք է, կան միայն 4 տուն հայ, սասնց եկեղեցւոյ և վարժարանի:

ԸՆԿՈՒԶԱԶՈՐ. — Սիւնեաց Էրնջակ գաւառի մէջ կը գտնուի այս անուամբ ձոր մը՝ լի բնկուղենիներով:

ԸՆԿՈՒԶԵԿ. — Գիւղ Թորթումայ, որուն մտա բերդ մը կայ Ընկուղիոյ բերդ կոչուած:

ԸՆԿՈՒԶԵԿ կամ ԱՆԿԸԶՈԿ. — Լեւ Կիլիկիոյ, Չէյթունի մտա, արեւելեան հարաւային կողմը:

ԸՆԿՈՒԶԻԿ. — Գիւղ Մշոյ Բանաշէն գաւառակի: 10 տուն հայ կան, Ս. Ստեփանոս անուամբ խանգարուած եկեղեցիով մը, և 8 տուն քուրդ:

ԸՆԿՈՒԶՆԱԿ. — Գիւղ Տիգրանակերտի Խիւան գաւառի: Ունի 60 տուն հայ և եկեղեցի մը:

ԸՆԿՈՒԶՈՒԿ. — Լեւ Այրարատայ Գաւրեղէնք գաւառի:

ԸՆԿՈՒԶՈՒՏ. — Կիլիկիոյ մէջ կը յիշուի ի հնումն այս անուամբ բերդ և վանք մը:

ԸՆԶԱՀԻՅ ՁՈՐ. Տես ԱՆԶԱԽԵԶՈՐ:

ԸՆԶԱՔ կամ ԸՆԶԱՔԱՐ. — Հայաբնակ գիւղ վանայ Գաւաշ գաւառակի: Ունի իրը 30 տուն բնակիչ և եկեղեցի մը:

ԸՆԶԱՔԻԱՐՍ կամ ԸՆԶԱՔԻԱՐ. Տես ԿԱՊՈՒՏԿՈՂ:

ԸՆՃՂԱԿ. — Գիւղ Չարսանճաղի Խոզաղ գաւառակի, ունի 28 տուն հայ, Ս. Սարգիս անուն եկեղեցի մը և 20 տուն թուրք:



ԸՆՃՂԱԿԵՐՏ. Տես ձԱՀՈՒԿ:  
ԸՆՁԻՆ կամ ԱՐԳԵԱՆՅՍ. — Բիւզանդ կը յիշէ զիւրս Այրարատայ մէջ, ըսելով. «Վաղ հասուցանէր ի գաւառն Այրարատու, ի մեծ զիւզն Ընչիճ արքունի որում Արղեանն կուչեն»:

ԸՆՏՐՈՒՆԻՔ. — Անուն նախարական սոհմի և գաւառի. կը թուի բլլալ Վասպուրականի մէջ:

ԸՆԸԳՎՈՒ. — Էն Սիւնեաց Աղաչէճը գաւառի, 10870՝ բարձրութեամբ:

ԸՇՏԷ. Տես ՇՏԷ:

ԸՇՏԿԱՄԱՅՐԻ. Տես ԵՂՎՈՒԿ:

ԸՇԲԷՖԹԵԱՆ. — Սակաւարնակ Հայոց զիւղ Տարսրերանի Տարօն գաւառի, Մշոյ գաշաի մէջ:

ԸՌԵՏԻ. Տես ՎԱՅՈՅ ՁՈՐ:

ԸՌԸՄԲԻ ԽՈՒ կամ ՌՄԲԱՍԱՐ. — Էն Արցախի, յորմէ կը բղխէ Թարթառ գետը:

ԸՌԻՆՏ կամ ԽԻՆՏ. — Այժմ թուրքաբնակ (44 տուն) զիւղ Այրարատայ Արազածոսն գաւառի:

ԸՌԿԱԻԱՅ. — Գիւղ Սալմասա գաւառի. 8 տուն հայ կայ:

ԸՌԻՆԱ կամ ԱՌԻՆԱ. — Պարսկահայոց հին գաւառներէն մին:

ԸՌԻՆԱՁՈՐ կամ ԷՌԻՆԱՁԻՐ. — Գիւղ և ձոր

Սիւնեաց Արեւիք գաւառի մէջ. բնակիչները այլազգի են:

ԸՌՇՏՈՒՆԻՔ. Տես ՌՇՏՈՒՆԻՔ:

ԸՌՈՏՄԱՆՅ. Տես ԿՈՎԱՍԿԱՆ:

ԸՌՈՏՍԱԿ. Տես ՎԱՂԱՐՇԱՊԱՏ:

ԸՌՈՒՇԱՆԱ. — Գիւղ Ագուանից Կոկիսոն գաւառի, շինուած Պողոտազի հիւսիսային կողմի բարձրութեան վրայ, անտառներու մէջ: Օդն և կլիման ծանր, բայց ջուրն առողջարար է: Բնակիչները գաղթած են Խաչենի Խանճը և Վարանդայի Կիշի և Նինկի զիւղերէն. 62 տուն են. սնին Ս. Աստուածածիճ փայտաշէն եկեղեցի մը: Գիւղիս հիւսիսային կողմերը կան հին զիւղերու անդին և հանդստարաններ, որոնց մէջ կան հայկական արձանագրութիւններով խաչքարեր:

ԸՌՈՒՍԹԱԻԱ. Տես ՌՄԻ:

ԸՌՍԿԵԱՀ. — Հին զիւղ Սիւնեաց Բազը (Աճանան) գաւառի մէջ:

ԸՌՍԱԿ. Տես ՀԱԹԵՐԲ:

ԸՌՍՄԱՆՅ. Տես ԲԱՂԲ:

ԸՍՏԻՍԱԿԱՆ ԳԱԻԱՌ. Տես ՀԱԹԵՐԲ:

ԸՍՏՏՈՒ ԵՌՎ. Տես ԱԼՀԱՐԱԿ:

ԸՐԿԵՆԱՆՅ. Տես ԲԱՂԲ:

ԸՐՎԷՆՔ. Տես ՎԱՅՈՅ ՁՈՐ:



ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ



## ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂՂԵԼԻՔ

Լ.Ն.	սիւն	տող	վրիժԱԿ	ՈՒՂԽՂ
2	Բ	18	Ջրաբերդ	Գարդման
117	Ա.	16	Ձիթ	Ձիթ
227	Ա.	10	և Ս. Յովսէփայ	և կրկին Ս. Սահակայ
267	Ա.	4	Սէօհրից	Սէօհրիւլ
344	Ա.	18	Յակովբ	Յովաբ
472-3	Գարդմանայ նկարագրին մէջ կրկին Գարդման գաւառները սխալմամբ միացուցուած են, որոնց մին կը կոչուի Շամախու. Գարդման և միւսն Արցախի Գարդման. կան նաև կրկին Գարդման գետակներ:			
492	էջի մէջ սխալմամբ տպուեր է Ս. Հովսէփմէի վանքի պատկերը փոխանակ Ս. Գայիանէի:			







